

ԼՐԱՏՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԳԻՆԲԱՆԱԿՆԵՐԻ
ԼՍՈՑԻԼՑԻԼՑԻ

2(2)



2023

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LIBRARY ASSOCIATION

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Կիսամյա գիտա-տեղեկատվական հանդես

HERALD

OF THE ARMENIAN LIBRARY ASSOCIATION

A Biannual Scientific-Informative Journal

2023

2 (2)

ԵՐԵՎԱՆ- YEREVAN

2023

Հանդեսը լույս է տեսնում 2023 թվականից
տարին երկու անգամ (էլեկտրոնային)
The journal has been published since 2023
twice a year (electronic)

Հրատարակումը երաշխավորված է
Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից
Publication is recommended by
Armenian Library Association

Խ մ ք ա գ ռ ա կ ա ն խ ո ղ ո Ւ Ր Ղ

Նախագահ՝ *Ռուզան Տոնոյան*

Գլխավոր խմբագիր՝ *Մայա Գրիգորյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Արմինե Հովհաննիսյան*

Անդամներ՝ *Ավագ Հարությունյան, Արարատ քին. Պողոսյան,*

Գագիկ Սուքիասյան, Լուսինե Կիրակոսյան,

Համո Սուքիասյան, Մհեր Ղազինյան,

Միհրան Մինասյան, Նազենի Արզումանյան,

Ռաֆիկ Ղազարյան, Վահե Թորոսյան, Տիգրան Զարգարյան

Editorial Board

Chair: Ruzan Tonoyan

Editor-in-Chief: Maya Grigoryan

Executive Secretary: Armine Hovhannisyan

Members: Avag Harutyunyan, Priest Ararat Poghosyan, Gagik Sukiasyan,

Lusine Kirakosyan, Hamo Sukiasyan, Mher Ghazinyan,

Mihran Minasyan, Nazeni Arzumanyan, Rafik Ghazaryan,

Vahe Torosyan, Tigran Zargaryan

e-ISSN 2953-8092

DOI: 10.54503/2953-8092

Հայերեն բաժնի խմբագիր
Հայերեն բաժնի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան
Գոհար Սարգսյան
Նունե Շահումյան
Ռուզաննա Թումանյան

Editors of Armenian segment
Proofreader of Armenian segment
Editor and proofreader of English
Computer design and pagination

Nelly Hayrapetyan
Gohar Sargsyan
Nune Shahumyan
Ruzanna Sargsyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>



ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի՛ ընթերցող

Կարևորելով գրադարանային ոլորտի ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ Հայկական գրադարանային ասոցիացիան Ձեր դատին է ներկայացնում «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսի երկրորդ համարը:

Հանդեսի առաջին համարը հրատարակվեց 2023 թ. հունիսին և խանդավառությամբ ընդունվեց ընթերցողների ու գրադարանային հանրույթի կողմից: Երկրորդ համարը հրատարակում ենք մեր որդեգրած նպատակին և գաղափարին համահունչ:

Ընթերցողին ներկայացվող համարում հոդվածները ներկայացնում ենք «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մշակութային ժառանգություն», «Գրահրատարակչություն», «Մանկական գրադարաններ», խորագրերի ներքո:

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներին ընդանաջ տպագիր ժառանգության թվայնացումն ու շտեմարանների ստեղծումը գերխնդիր է դարձել: Ներկայում այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները միտված են տպագիր ժառանգության ողջամնացության ապահովմանն ու հանրայնացմանը: Ահա ինչու խիստ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել ինչպես տպագիր և գրավոր մշակութային ժառանգության ուսումնասիրությունը, այնպես էլ այդ ժառանգության թվայնացման և հանրայնացման աշխատանքները:

Հսկայածավալ այս աշխատանքին զուգահեռ գրադարաններն իրենց աշխատանքային զինանոցում պետք է ունենան հասարակության տարբեր շերտերի պահանջները բավարարող գործիքակազմ՝ տեղեկատվության առավել արագ և որակյալ սպասարկման համար: Գրադարանավարները պետք է յուրացնեն տեղեկատվական

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և գործունեություն ծավալելն այս համատեքստում:

Հայաստանյան գրադարաններում աշխատանքային գործընթացները ճիշտ կազմակերպելու համար կարևորվում է միջազգային փորձի յուրացումն ու տեղայնացումը: Ահա ինչու, բացի կոնկրետ և գործնական քայլերից, անհրաժեշտություն է առաջանում թարգմանել մի շարք կարևոր միջազգային փաստաթղթեր:

Այսօր ավելի քան արդիական է գրադարան-հրատարակչություն համագործակցությունը: Գրահրատարակչության ոլորտի ձեռքբերումներն ու խնդիրները ևս համահունչ են ամսագրի նպատակին:

2023 թ. լրացավ Խնկո-Ապոբ անվան ազգային մանկական գրադարանի հիմնադրման 90-ամյակը: Կարևորելով այս գրադարանի դերն ու նշանակությունը մեր հասարակության մեջ՝ «Խնկո-Ապոբ անվան ազգային մանկական գրադարանը 90 տարեկան է» խորագրով ընթերցողին ենք ներկայացնում գրադարանի հիմնադրման պատմությունը, գործունեության առանցքային ուղղությունները և ձեռքբերումներները:

Գրադարաններն այսօր տեղեկատվական կենտրոններ են, որոնց առջև ծառայած են բազմաթիվ խնդիրներ: Կարծում ենք՝ հանդեսի երկրորդ համարը որոշ չափով տալիս է այդ խնդիրների լուծման բանալիները:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՆԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ*

ՀՏԴ: 070(=919.81)(450)+01

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-5

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի
Տեխնիկական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

2019 թ. Գալուստյ Կիլպէնկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունքը», ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հետ համատեղ, առաջարկեց թվայնացնել Մխիթարեան միաբանության Վիեննայի Մենաստանի գրադարանում պահվող հայերեն թերթերի և հանդեսների մինչև 1920 թ. հրատարակված լրակազմերը: Սույն հոդվածի նպատակը հիշյալ գործընթացի առաջին արդյունքների ամփոփումն է:

Ուշադրություն ենք դարձրել և՛ թվային պատճենների բարձր որակի առկայությանը, և՛ մատենագիտական շտեմարանի ձևավորման առանձնահատկություններին, և՛ որոնման ճկուն հնարավորություններին:

In 2019 digitization of the Armenian newspapers and periodicals being preserved in the Mekhitarist Monastery of Vienna started. The purpose of this article is to summarize the results of the project's first stage. During project realization the main focus has been made on having high quality digital copies of the periodicals, to the peculiarities of construction of the bibliographic database and on developing flexible search and indexing algorithms.

* Հոդվածը ներկայացվել է 13.10.2023, գրախոսվել է 07.12.2023, ընդունվել է տպագրության 08.12.2023:

The article was submitted on 13.10.2023, reviewed on 07.12.2023, accepted for publication on 08.12.2023.

Բանալի բառեր¹ հայ պարբերական մամուլ, հայ մամուլի մատենագիտություն, Մխիթարյան միաբանություն Վիեննա, Գալուստ Կիլպէնկեան հիմնարկություն:

Ինչպես հղել¹ Զարգարյան Տ. (2023), Մխիթարեան միաբանութեան Վիեննայի մենաստանի պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 5–29. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5)

How to cite (APA style): Zargaryan T. (2023), Digitalization of the periodicals being preserved in the Mekitarist Monastery of Vienna: Presentation of first phase results, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 5-29. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5)

Ներածություն

Հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը», լույս է տեսել 1794 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում, Հարություն քին. Շմավոնյանի ջանքերով: Այնուհետև հայալեզու թերթեր հրատարակվեցին աշխարհի տարբեր ծայրերում՝ դառնալով հայ ժողովրդի գոյության տարեգիրը, պահպանելով մեր ինքնությունը, մոռացումից փրկելով ազգային կյանքի բազում հիշարժան իրադարձություններ: 1794 թվականից ի վեր Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում լույս է տեսել ավելի քան 6,500 պարբերական¹: Ներկայում պարբերականների թղթային հրատարակությունները, ճիշտ է, իրենց տեղը աստիճանաբար զիջում են էլեկտրոնային համարժեքներին, գործարկվում են լրատվական կայքեր, որոնք շուրջօրյա տեղեկատվություն են փոխանցում իրենց բաժանորդներին, սակայն տպագիր մամուլը (հատկապես մինչև 20-րդ դարի 90-ականների մամուլը) հետազոտողների համար չի կորցնում արդիականությունը: Սրան ավելանում է նաև մամուլի ողջամնացության ապահովման խնդիրը,

¹ Առ 01.12.2023 թ. «[Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ](#)» շտեմարանում հաշվառված է մամուլի 6,556 անվանում:

քանի որ թուղթը մթնոլորտային, քիմիական և տեխնածին գործոնների ազդեցության հետևանքով աստիճանաբար սկսում է խոնանալ և քայքայվել:

Մխիթարեան միաբանության հայ մամուլի հավաքածուն տեսականիով ամենահարուստ հավաքածուներից է, իսկ մամուլի լրակազմերի պահպանվածության և ամբողջականության առումով՝ լավագույններից մեկը: 2019 թ. մի շարք քննարկումներից հետո Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունք»² հանդես եկավ առաջարկով՝ թվայնացնել և հանրությանը ազատորեն հասանելի դարձնել Մխիթարեան միաբանության Վիեննայի Մենաստանի գրադարանում պահվող հայերեն թերթերի և հանդեսների մինչև 1920 թ. հրատարակված լրակազմերը:

Նախագծի նպատակները և աշխատանքի փուլերը

Նախագիծը հետապնդում է երկու կարևոր նպատակ.

ա. Բարձր որակի թվային պատճենների շնորհիվ ձևավորել մամուլի ապահովագրական նմուշներ, որոնցից հնարավոր կլինի ստանալ պահանջվող տպագիր էջերը՝ առանց որակի կորստի:

բ/ Համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ հետազոտողներին հասանելի դարձնել մամուլի լրակազմերի թվային պատճենները՝ դրանով իսկ մեծապես օժանդակելով հայ մամուլի եզակի նմուշների առցանց և բաց ձևաչափով հասանելիությանը:

Սույն նախաձեռնության շրջանակում որպես Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության գործընկեր կառույցներ հանդես եկան Մխիթարեան միաբանության Վիեննայի Մենաստանը³, Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանը⁴:

² Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունք» <https://gulbenkian.pt/en/armenians/> (11.10.2023):

³ Վիեննայի Մենաստան՝ <https://mechitharisten.org/> (11.10.2023):

⁴ Հիմնարար գիտական գրադարան՝ <https://www.flib.sci.am/> (11.10.2023):

Որպես նախագծի համակատարող կառույցներ՝ հանդես եկան «Iron Mountain» ընկերությունը⁵, որը մասնագիտացված է մեծ ծավալի թղթային նյութերի թվայնացման բնագավառում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը⁶, որը տարածաշրջանում առաջատարն է ցանցային և ամպային ծառայությունների տրամադրման, ինչպես նաև բարձր արտադրողականությամբ հաշվողական համակարգերի նախագծման բնագավառներում:

Համահայկական կարևորություն ունեցող նախագծի հաջող ընթացքը ապահովելու նպատակով կատարվեց աշխատանքների բաշխում՝ ըստ հետևյալ խմբերի.

1. Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի Մենաստանի գրադարանի կայքէջի⁷ ստեղծում:

2. Մամուլի նմուշների մատենագիտական նկարագրությունների շտեմարանի ծրագրային միջավայրի ընտրություն՝ հիմնված «Մատենագիտական նկարագրության միջազգային ստանդարտի» վրա:

3. Թվանշային գրադարանի հարթակի ընտրություն, նկատի առնելով այն կարևոր հանգամանքը, որ առաջարկվող լուծումը պետք է ապահովի բառերի և արտահայտությունների որոնում թե՛ մատենագիտական նկարագրության մակարդակում և թե՛ թվանշային գրադարանում ներառված նյութերում:

4. Սերվերային լուծումների ընտրություն այն հաշվարկով, որ թվանշային գրադարանում ամբարվելու են տասնյակ հազարավոր

⁵ «Iron Mountain» ընկերություն՝ <https://shorturl.at/bjpP0> (11.10.2023):

⁶ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ՝ <https://iiap.sci.am/> (11.10.2023):

⁷ Վիեննայի Մենաստանի գրադարանի կայքէջ՝ <https://arm.mechitaristlibrary.org/> (11.10.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

նկարահանված էջեր, որոնք զբաղեցնելու են մեքենայական հիշողության զգալի ծավալներ:

Հաշվի առնելով տեղեկատվության պահոցների նախագծման և շահագործման բնագավառներում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում (ՀԳԳ) կուտակված երկարամյա փորձը, փորձարկված և տեղայնացված ծրագրային լուծումները՝ որոշում կայացվեց որպես մատենագիտական նկարագրությունների շտեմարանի ծրագրային լուծում ընտրել «Կոհա» փաթեթը, որը հաջողությամբ կիրառվում է Հայաստանի գրադարաններից շատերում, պատկանում է «Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի» ընտանիքին⁸ և, հետևաբար, տրամադրվում է անվճար: Այս ընտանիքին պատկանող «Գրինսթոուն» և «Դլիբրա» հարթակների համեմատական վերլուծությունից հետո, որպես թվանշային գրադարանի լուծում, ընտրվեց «Դլիբրա» համակարգը: Թեպետ երկու համակարգերն էլ ակտիվորեն օգտագործվում են ՀԳԳ-ում, մեքենայական հիշողության հսկայական ծավալների հետ աշխատելու պայմաններում, մեր կարծիքով «Դլիբրա» համակարգը ավելի ճկուն և բազմաֆունկցիոնալ է (ZARGARYAN 2020, 67-79): Սերվերային լուծումների պարագայում ընտրությունը միարժեքորեն կանգ առավ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի վրա, որպես կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, ինչպես նաև գիտության և տեխնիկայի տարբեր ճյուղերում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ասպարեզում տարածաշրջանային առաջատարի:

Կայքէջի ձևավորումը վստահվեց դիզայներ Նունե Խուդավերդյանին, ով հաջողությամբ կյանքի կոչեց իր առջև դրված առաջադրանքները:

Այս փուլերը հաղթահարելուց հետո արդիական դարձավ մամուլի մատենագիտական նկարագրությունների շտեմարանի ցուցի-

⁸ Free and open-source software: <https://shorturl.at/rxCIT> (11.10.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

չավորվող դաշտերի ընտրության հարցը: Հայաստանի ազգային գրադարանում շահագործվող «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ»-ի⁹ նախագծման ընթացքում մեր կողմից կիրառված լուծումները և ձեռք բերված փորձը մեծապես հեշտացրեցին ընտրությունը: Որպես «ցուցիչավորվող և արտաձվող» դաշտեր որոշվեց ընտրել հետևյալները.

✓ Խմբագիրներին, արտոնատերերին, հրատարակիչներին նկարագրող 700\$a դաշտը:

✓ Տպարանների անվանումները նկարագրող 650\$a դաշտը:

✓ Տպագրության քաղաքը, երկիրը, մայրցամաքը նկարագրող աշխարհագրական անվանման 651\$a դաշտը:

✓ Նյութի տեսակը նկարագրող 655\$a դաշտը: Նյութի տեսակը կարող է լինել թերթ, ամսագիր, տարեգիր:

✓ Թեմատիկ խորագրերը նկարագրող 650\$a դաշտը:

✓ Ընծայագրերի առկայությունը նկարագրող 650\$a դաշտը:

✓ Դարաշրջանը և տպագրության տարիները նկարագրող 650\$y դաշտը:

✓ Պարբերականի շարժը նկարագրող 653\$a դաշտը: Շարժը կարող է լինել «Շարժ ներքին», այսինքն՝ նույն երկրի սահմաններում մի քաղաքից մեկ այլ քաղաք, ինչպես նաև «Շարժ արտաքին», այսինքն մի երկրից մեկ այլ երկիր: «Շարժ ներքին» և «Շարժ արտաքին» տերմինները հանդես են գալիս որպես «Չվերահսկվող տերմիններ»:

✓ Պարբերականի կյանքի տևողությունը ներկայացնող 583 դաշտը: Սա ոչ հանրային նշումի դաշտ է, արտաձման ոչ մի ձևաչափում չի երևում, սակայն փնտրովի է, և կարելի է ստանալ պարբերականների կյանքի տևողության բաշխումը ըստ ակտիվության տարիների: Նվազագույն արժեքն է 1 տարի: Այսինքն, եթե պարբերականը

⁹ Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ՝ <https://tert.nla.am> (11.10.2023):

ունեցել է տպագրված մեկ թիվ, այնուհետև դադարեցրել է իր գոյությունը, պարբերականի կյանքի տևողությունը դրվում է 1 տարի, հետևյալ ձևաչափով՝ T=1 տարի:

Մատենագիտական շտեմարանի հնարավորությունների ներկայացում

Մխիթարեան Միաբանության Վիեննայի Մենաստանի գրադարանի կայքէջի «Ընդհանուր ցուցակ» բաժնից կարելի է մուտք գործել մատենագիտական գրառումների շտեմարան ¹⁰, իսկ «Թուային գրադարան» բաժնից՝ թվանշային գրադարան ¹¹:

Քանի որ մատենագիտական տվյալների MARC21 ձևաչափը ¹² և դրա հենքի վրա ստեղծված ծրագրային փաթեթները նյութի նկարագրության բոլորովին նոր հնարավորություններ են բացում մատենագետների առջև, իսկ համակարգիչների կիրառությունը «գրելու նոր տարածք» է տրամադրում հետազոտող-մատենագետին, սույն շտեմարանի ձևավորման ընթացքում կիրառեցինք նորարարական մի շարք լուծումներ՝ հիմնված ծրագրավորման HTML լեզվի վրա, որոնք, լինելով նոր խոսք մատենագիտության մեջ, մեզ ծանոթ ավանդական նկարագրությունների համեմատ մեծապես բարձրացնում են գրառումների թե՛ դիտարժանությունը, թե՛ ամբողջականությունը և թե՛ ընթեռնելիությունը:

Այսպես, մամուլի շատ անվանումներ, իրենց գոյության ընթացքում, փոխում են խմբագիրներին, փոխվում են տպարանները, տպագրության չափսերը: Երբեմն անվանումն էլ է կրում փոփոխություններ: Նման փոփոխությունները հարկ է արտացոլել մատենագի-

¹⁰ Վիեննայի Մխիթարյան միաբանության մամուլի մատենագիտական գրառումների շտեմարան՝ <https://vmc.sci.am/> (11.10.2023):

¹¹ Վիեննայի Մխիթարյան միաբանության մամուլի թվային գրադարան՝ <https://shorturl.at/kuxUO> (11.10.2023):

¹² MARC – Machine Readable Cataloguing՝ Մեքենաընթեռնելի քարտագրում:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

տական գրառման մեջ՝ դրա համար օգտագործելով MARC21 ձևաչափի ընձեռած հնարավորությունները:

Բերենք մի քանի օրինակ.

ա. Համաձայն MARC21 ձևաչափի՝ 504 դաշտը նախագծված է «Մատենագիտություն, նշումներ» տեքստի ձևավորման համար: Թիֆլիսի «Մուրճ» ամսագրի պարագայում, պարբերականի մասին տպագրված մատենագիտությանը հղում կատարելու համար HTML լեզվով կատարվել է մի այսպիսի նկարագրություն. «Աղբիւր. Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի. (1889-1907) / Կազմ.՝ Կ. Քացախյան.- Ե., 1977.- 775 էջ»: Արդյունքում, ISBD արտաձման պարագայում, ունեք հետևյալ տեսքը. «Աղբիւր. [Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի \(1889-1907\) / Կազմ.՝ Կ. Քացախյան.- Ե., 1977.- 775 էջ](#)»: Նման կառուցվածքը թույլ է տալիս մատենագիտական գրառումից ուղղակի անցում կատարել հետազոտական նյութին:

բ. Համաձայն MARC21 ձևաչափի՝ 563 դաշտը նախագծված է լրակազմի նկարագրության համար: Օգտագործելով HTML լեզվի այսպիսի կառուցվածք. «Թիւերը կազմուած եւ ամփոփուած են առանձին թղթածրարներում.
 1889 Թիւ 1-6: Դասիչն է 827 L II-5.
1889 Թիւ 7-12: Դասիչն է 828 L II-5.
1890 Թիւ 1-6: Դասիչն է 829 L II-5.
1890 Թիւ 7-12: Դասիչն է 830 L II-5.
1891 Թիւ 1-6: Դասիչն է 831 L II-5.
1891 Թիւ 7-12: Դասիչն է 832 L II-5.
»՝ ISBD արտաձման պարագայում ունեք հետևյալ տեսքը. «Թիւերը կազմուած եւ ամփոփուած են առանձին թղթածրարներում.

1889 Թիւ 1-6: Դասիչն է 827 L II-5.

1889 Թիւ 7-12: Դասիչն է 828 L II-5.

1890 Թիւ 1-6: Դասիչն է 829 L II-5.

1890 Թիւ 7-12: Դասիչն է 830 L II-5.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

1891 Թիւ 1-6: Դասիչն է 831 L II-5.

1891 Թիւ 7-12: Դասիչն է 832 L II-5»:

Տարեթվերը արտաձվում են թավ, որը գրառումը դարձնում է ավելի արտահայտիչ:

գ. Նույն 563 դաշտում կիրառված է HTML լեզվի մեկ այլ կառուցվածք՝ տարեթվից հղում դեպի թվանշային գրադարան, դեպի պարբերականի կառուցվածք: HTML լեզվով կազմած արտահայտությունը հետևյալն է. «Վիեննական Մխիթարեան մենասպանում առկայ են հեղինակ թիւերը.

1889, Առաջին տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)
1890, Երկրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)
1891, Երրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7-8 (Յուլիս-Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)
»:

ISBD արտաձման պարագայում ունեք հետևյալ տեսքը. «Վիեննական Մխիթարեան մենասպանում առկայ են հեղինակ թիւերը.

1889. Առաջին տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)

1890. Երկրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)

1891. Երրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7-8 (Յուլիս-Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)»:

Գունաընդգծված տարիները պարունակում են հղումներ դեպի թվանշային գրադարան: Թվանշային գրադարանից էլ կարելի է անցում կատարել դեպի մատենագիտական շտեմարան՝ սեղմելով «Լրացուցիչ տեղեկություն» դաշտի «սեղմիր այստեղ կապին հետևելու համար» հղումը:

դ. Համաձայն MARC21 ձևաչափի՝ 520 դաշտը նախագծված է «Ամփոփումների» համար: Քանի որ շատ պարբերականներ հրատարակման տարբեր ժամանակահատվածներում փոխում են տպարանները, խմբագիրներին, փոխվում է էջերի քանակը, թղթի չափը և այլն, ապա նպատակահարմար գտանք այս դաշտում արտածել այդ տեղեկատվությունը: «Մուրճ»-ի պարագայում, 520 դաշտի գրառումն ունի հետևյալ տեսքը.

«1889-1900 "ՄՈՒՐԾ" : ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", Մ. Դ. Ռուդինեանցի ՏՊԱՐԱՆ:

1901-1902 ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐԾ" : ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", Տպարան Կրաց. Հրատ. Ընկերութեան:

1903, Թիւ 1-Թիւ 10 ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐԾ" : ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", Արագափոխ Մն. Մարտիրոսեանցի:

1903, Թիւ 11-Թիւ 12, 1904 ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐԾ" : ԳՐԱԿԱՆ,

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", *Տպարան Ա.*

Քույթաթելաձեռի:

1905-1907, ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐՃ: ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", *Տպարան "Հերմէս":*

Ինչպես տեսնում ենք, թե՛ տպարանների փոփոխությունները, թե՛ հանդեսի անվան փոփոխությունները արտացոլված են 520 դաշտում:

Ե. «Վիքիպեդիան», որպես ազատ հանրագիտարան, գնալով իր մեջ է ներառում նորանոր թեմաներ և անձնանուններ: Այդ հոդվածներից շատերը ուղղակի կապ ունեն հայկական գրատպության օջախների, խմբագիրների և տպարանների գործունեության հետ: Այս ամենը նկատի ունենալով՝ մամուլի խմբագիրների անունները կապվել են Վիքիպեդիայի համապատասխան գրառումներ հետ: Այսպես, «Թատրոն» թերթը, որի տերը և խմբագիրը եղել է Հակոբ Պարոնյանը, «Նորմալ դիտում» վիճակում պարունակում է հետևյալ հղումը. «[Պարոնեան, Հակոբ Յովհաննէսի, 1843-1891 \[տէր-խմբ.\]](#)»:

Վ պատկերակը սեղմելուց հետո, անցում է կատարվում մատենագիտական գրառումից դեպի Վիքիպեդիա՝ «Հակոբ Պարոնյանին» նկարագրող գրառումը: «Թատրոն» պարբերականի պարագայում 520 դաշտը շատ ավելի հարուստ նկարագրական նյութ է պարունակում. «**ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.** 1874, Թիւ 1-2, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՄ. Տնտեսան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 3-7, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գավաֆեան եւ Ընկ., Յ. Պարոնեան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 8-9, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գավաֆեան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 10-26, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Միւհէնպիսեան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 27-40, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Միւհէնպիսեան. ՏէՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ս. ԹԷՐԶԻԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 41-42, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. Տիվիթեան. ՏէՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ս. ԹԷՐԶԻԵԱՆ.*

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1874, թիւ 43-47, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. Թօզլեանց. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ս. ԹԵՐԶԻԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1874, թիւ 48-70, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. Թօզլեանց. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1874, թիւ 71- 1875, 87, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնչետեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1875, թիւ 88-125, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնչետեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Գ. Մ. ԷՋԱՃԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1875, թիւ 126, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնչետեան. ՏԷՐ ԼՐԱԳՐՈՅՍ
Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ.1875, թիւ 127-164, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնչետեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ.1875, թիւ 165-175, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Արամեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 176-183, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Արամեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 184-192, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Արամեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 193-199, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 200-211, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յարութիւն Պարոնեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 212-219, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1877, թիւ 220-244, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1877, թիւ 245-256, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ»:

զ. 505 դաշտը, որը, համաձայն MARC21 ձևաչափի, նախատեսված է «Բովանդակության» նկարագրության համար, ամսագրերի պարագայում կարող է ունենալ բազմաթիվ կիրառություններ: Բերենք դրանցից մեկը՝ կիրառված Սանկտ-Պետերբուրգում հրատարակված «Արաքս» ամսագրի համար: «Նորմալ դիտում» ռեժիմում ունենք հետևյալ պատկերը.

«→ Յաւելուած. Վիլլիամ Շեկսպիրի ԼԻՐ ԹԱԳԱՌՈՐ. Թարգմանեց: ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ. 1887, ԳԻՐՔ Ա. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

→ Յաւելուած. Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ ԱՍԵԱ. Թարգմանեց Աղեքսանդր Ծարպուրեան. 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած. ԲԷԼԱ, Լերմոնսկով. Թարգմանեց Յովհաննէս Մալխասեանց. 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը», Լերմոնսկով, Գլոխ II Մակսիմ Մակսիմիչ. Թարգ. 3. Մալխասեանց. Յաւելուած. ԱՐՁԱԳԱՆՔ ՄԻ ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԷՆ, Գիլիգար. 1890, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը» վէպի վերջը, Լերմոնսկով, Թարգ. 3. Մալխասեանց. 1890, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Վաղեմի կալուածապէրեր», Ն. ԳՕԳՕԼ, ԹԱՐԳ. 3. ԱՐԹԱՆԱՍԵԱՆՅ. 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից», Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» ԳԼՈՒԻ Թ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1894-1895, ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» ԳԼՈՒԻ Ժ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1897 [1894-1895], ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» Մասն երկրորդ, ԳԼՈՒԻ Ա, Հիւանդանոց, շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1898, ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ**

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ»:

Նոյն արտածումը, բայց արդեն որպէս ISBD գրառում, ունի հետևյալ տեսքը. «Յաւելուած. Վիլիամ Շեկսպիրի ԼիՐ ԹԱԳԱԻՈՐ. Թարգմանեց: ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1887, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած. Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ ԱՍԵԱ. Թարգմանեց Աղեքսանդր Ծարպուրեան. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած. ԲԷԼԱ, Լերմոնսկով. Թարգմանեց Յովհաննէս Մալխասեանց. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը», Լերմոնցով, Գլուխ II Մակսիմ Մակսիմիչ. Թարգ. 3. Մայխասեանց.

Յաւելուած. ԱՐԱՔՍԱՆՔ ՄԻ ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԷՆ, Գիւլիգար. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1890, ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը» վէպի վերջը, Լերմոնցով, Թարգ. 3. Մայխասեանց. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1890, ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Վաղեմի կալուածապէրեր», Ն. ԳՕԳՕԼ', ԹԱՐԳ. 3. ԱՐԺԱՆԱՍԵԱՆՅ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից», Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» ԳԼՈՒԽ Թ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1894-1895, ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» ԳԼՈՒԽ Ժ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1897 [1894-1895], ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» Մասն Երկրորդ, ԳԼՈՒԽ Ա, Հիւանդանոց: շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1898, ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ ունենալով HTML լեզվով ծրագրավորման հմտություններ և տիրապետելով MARC21 ձևաչափի կառուցվածքին՝ կարելի է ստեղծել մատենագիտական գրառումներ, որոնք շատ ավելի ճկուն են և դիտարժան, քան դրանց գրքային նկարագրություններն են:

Առաջին փուլի արդյունքների հակիրճ ամփոփում

Ներկայացնենք նախագծի մի շարք արդյունքներ, որոնք պետք է հետաքրքրեն մատենագետներին:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ա. «ԾՈ ՎԱՌ» թերթ: Թե՛ Հ. Ռափայել Կարապետեանի (ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924) և թե՛ Բաբլոյանի (ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 171) կազմած մատենագիտական ցանկերում¹³ տպարանը նշված չէ: Թերթի էջերում տպարանի անվանումը առանձին տողով ևս առկա չէ: Թերթելով թվայնացված էջերը, 1930 Դ. տարի, թիւ 3-4-ում նկատեցի հետևյալ նշումը. «...Իսկ գալով «Ծովառ»ի կուսակցական բնոյթ ունենալուն, որովհետեւ «Պայքար»ի տպարանին մէջ կը տպագրուի եւ անոր օֆիսին մէջ կը խմբագրուի...»: Այսինքն, թերթը տպագրվել է «Պայքար»-ի տպարանում: Թերթի նկարագրությունը սա է. «ԾՈ ՎԱՌ : Պաշտօնաթերթիկ ՉՆԳՇՈՅ ԾՈ ՎԱՌ ԸՆԹԵՐՅ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԾՈ՛ Վառ Խմբ.՝ Պ. Փապուճեան. - Շիքակօ, Տպարան Պայքար, 1927-1933.»¹⁴:

բ. **ԴԱՓՆԻ** : TAPNY Արտօնատեր՝ Հ. Ջուանշիր - Ջմիւռնիա : Տպագր. ԹԷԼԼԱԼԵԱՆ, 1919. - 4 երես : (կիսամսեայ) 30 x 22 սմ.

Գ. Լևոնյանի կազմած մատենագիտության մեջ (ԼԵՎՈՆՅԱՆ 1934) այս «Դափնի»-ն միավորվել է «ԴԱՓՆԻ : Կիսամսեայ կրօնաթերթ / Արտօնատեր-պատասխանատու տնօրէն՝ Համայէր Ջուանշիր; Խմբ.՝ Ղեւոնդ Դուրեան. - Ջմիւռնիա : տպ. Քէշիշեան, 1921-1922. - 32 էջ: 21 x 14 սմ.» պարբերականի հետ (տե՛ս ԼԵՎՈՆՅԱՆ 1934, մատենագիտական գրառում թիվ 856): Մ. Բաբլոյանի կազմած մատենագիտության մեջ այս թերթը ևս չի ներառվել, չնայած որ Հ. Ռափայել Կարապետեանի «Լիակատար ցուցակ հայերէն լրագիրներու որոնք կը գտնուին Մխիթարեան մատենադարանին մէջ ի Վիեննա 1794-1921» այդ անվանումը առկա է (ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924, թիվ 238 և 239 գրառումները)¹⁵:

¹³ Բաբլոյանի մատենագիտական ցանկում սույն վերնագիրը նկարագրված է էջ 171-ում, 1574 թվի ներքո: Առկա է թվագրման վրիպակ: Պետք է լինի 1547:

¹⁴ «ԾՈ ՎԱՌ» թերթի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/CJL46> (11.10.2023):

¹⁵ «Դափնի» թերթի մատենագիտական նկարագրությունը տե՛ս

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

գ. Վիեննայի Մենաստանի թվայնացված մամուլի վերնագրերում առկա է «ԺԱՄԱՆԱԿ» անվանումը կրող մի հավելված, որն ուսումնասիրելուց և մասնագետների հետ քննարկելուց հետո եզրակացրեցինք, որ նորահայտ անուն է և, հավանաբար, եղել է, Գոչունեանների ընտանեկան «Ժամանակ» թերթի գունավոր կազմով հավելվածը: Նկարագրությունը սա է. «ԺԱՄԱՆԱԿ / - Իսթամպուլ Վիմգ. Տպգր. Մ. Տէր-Սահակեան, 1932? - 4 էրես ; (գունատր) 31 x 22 սմ.»:

Քանի որ ելքային տվյալները թերթի վրա խիստ աղքատիկ են (ԲԱԲԼՈՅԱՆ 1986), իսկ Մ. Տէր-Սահակեան անունով հրատարակիչ/տպարան գործել է.

(i) Բելգիայում 1928-1929 թթ., ապա տեղափոխվել է Ռումինիա 1930-1931 թթ. և տպագրել է «Գիտություն եւ գիտելիք» հանդեսը, որը բովանդակային առումով ոչ մի աղերս չունի հայտնաբերված «Ժամանակ»-ի հետ:

(ii) 1931-1932 թթ. Ստամբուլում տպագրվել է «Արշալոյս» պարբերականը, որի հրատարակիչն է եղել Մ. Տէր-Սահակեանը, հետևաբար պետք է ենթադրել, որ այս նորահայտ անունը 1932? է, և տպագրված է Ստամբուլում¹⁶:

դ. ՀՆՉԱԿ ԿԱՄ ՀԱԻԱՔԱԾՈՅ ԶՈՒԱՐՃԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ:
Հանդեսի հրատարակության մեկնարկի տարեթիվը թե՛ Հ. Ռափայել Կարապետեանի, թե՛ Գ. Լևոնյանի, թե՛ Մ. Բաբլոյանի և թե՛ Ա. Կիրակոսյանի (ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970) մատենագիտական ցանկերում նշված է 1886: Այս հանդեսը Հայաստանի ազգային գրադարանում առկա է 1887, Գ. Տարի, Հատոր Ե., թիւ 1-ից սկսած և նկարագրված

<https://shorturl.at/fmP38> (11.10.2023):

¹⁶ «Ժամանակ» թերթի հավելվածի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/jyKM3> (11.10.2023):

է «Հնչակ : Տասնօրյա զավեշտաթերթ» անվանումով¹⁷: «ՀՆՉԱԿ» հանդեսի նկարահանված էջերը թերթելիս նկատեցի հետևյալը. հանդեսի հավաքական կազմի վրա նշված է 1886 թ., իսկ երբ սկսվում է հանդեսի թիվ 1-ի կազմը, ապա նշված է 1885 թ.: Կարելի էր ենթադրել, որ սա տպագրական սխալմունք է: Սակայն դա այդպես չէ, քանի որ 1887 թ. համար հանդեսի հրատարակիչները նշել են Երրորդ տարի՝ հետագայում այն փոխելով Գ. տարի: Եթե համադրենք տպագրության տարիները և հատորների թվերը, ապա 1885 թ. ճիշտ է նշված: Այսպիսով, հարկ է փաստել, որ տպագրական սխալ առկա չէ, և տպագրության սկզբնական տարին պետք է համարել 1885 թ.¹⁸:

Ե. Անտոն Սաքսեանի 1886 թ. հիմնադրած «ԾԱՂԻԿ : ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ» պարբերականը բավականին խճճված և բարդ կառուցվածք ունի: Եղել է թերթ, ապա ամսագիր, շարունակվել է այլ անվանումներով, կիսվել է և այլն¹⁹: Մատենագիտական տարբեր աղբյուրներում առկա «ԾԱՂԻԿ»-ի նկարագրությունը շատ հեռու է ամբողջական լինելուց: Սույն պարբերականի նկարագրությունը բավականին լավ է արված Գ. Լևոնյանի մոտ (ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 27, թ. 189 գրառումը): Շտեմարանում նկարագրելիս կատարվել են մի շարք հավելումներ և ճշգրտումներ: Այսպես, Վիեննայի Մենաստանի թվայնացված մամուլի մատենագիտական շտեմարանում արված է պարբերականների հստակ տարանջատում՝ ըստ տպագրության տեսակների: Այսինքն, պարբերականները տարանջատվում են ամսագրերի, թերթերի և տարեգրերի: Այս բաժանումը կիրառված է վիճակագրական հաշվարկների համար, որպեսզի հստակ պատկեր ունենանք,

¹⁷ Որպես անվանում՝ նշված է հանդեսի 1887 թ. Ե. հատոր անունը: 1885-1887 թթ. հատոր Դ.-ն ներառյալ՝ հանդեսի անվանումը եղել է «ՀՆՉԱԿ ԿԱՍ ՀԱԻԱՔԱԾՈՅ ԶՈՒԱՐՃԱՐԱՆՈՒԹԵԱՆՑ»:

¹⁸ «Հնչակ կամ Հաւաքածոյ զարճաբանութեանց» հանդեսի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/inEV9> (11.10.2023):

¹⁹ «Ծաղիկ» պարբերականի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/jkpLS> (11.10.2023):

թե քանի՞ ամսագիր, քանի՞ թերթ և քանի՞ տարեգիր է տպագրվել: «ԾԱՂԻԿ»-ի պարագայում Ա. Չոպանեանը և Ա. Անտոնեանը թերթի փոխարեն տպագրել են ամսագրեր: Այսպես, Ա. Անտոնեանը 1904-1905 թթ. տպագրել է «ԾԱՂԻԿ : ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ» ամսագիրը, և 1904 ժԷ. տարի, Նոր շրջան, թիւ 1, ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔԵՐ սյունակում (էջ 3) առկա է հետևյալը. «Ծաղիկ»ի ներկայ հրատարակությունը որեւէ նիւթական կամ բարոյական կապ չունի Պ. Միքայէլ Շամբանեանի խմբագրութեամբ հրատարակուած նախորդ շրջանին հետ: ...»²⁰: Ուստի, Ա. Անտոնեանի հրատարակած սոյն ամսագիրը, ներառված լինելով «Ծաղիկի» նկարագրության մեջ, նկարագրվեց նաև որպէս առանձին վերնագիր²¹:

Թե՛ «ԾԱՂԻԿ»-ում և թե՛ «ԾԱՂԻԿ : ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ»-ում օգտագործվել են MARC21 ձևաչափի 780 «Նախորդող մուտք» և 785 «Հաջորդող մուտք» դաշտերը՝ գրառումները տրամաբանորեն իրար կապելու համար: Նոյն մոտեցումն է կիրառվել Ա. Չոպանեանի 1895 թ. հրատարակած «ԾԱՂԻԿ : ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ» ամսագրի պարագայում: Որպէս տեր և տնօրեն շարունակել է հանդես գալ Ա. Սաքաեանը, բայց ամսագրի պատասխանատուն եղել է Ա. Չոպանեանը: Այս ամսագիրը ևս նկարագրվել է որպէս առանձին վերնագիր՝ նաև ներառվելով «Ծաղիկ»-ի նկարագրության մեջ²²:

²⁰ Միգուցե Ա. Անտոնեանը արտոնագրային բարդություններից խուսափելու նպատակով, պարզպաես վերցրել է «ԾԱՂԻԿ» անունը, որպէս արտոնատեր հանդես է եկել Անտոն Սաքաեանը, բայց հրատարակել է իր ուրոյն ամսագիրը:

²¹ «Ծաղիկ» հանդեսի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/dwAG8> (11.10.2023):

²² «Ծաղիկ»-ի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/nolj3> (11.10.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ներկայացնում ենք մի հատված այս գրառման 520 դաշտից (տե՛ս նկ. 1), որից պարզ է դառնում, որ 1895 թ. Ա. Չոպանեանի հրատարակությունից (ընդգծված է դեղինով) հետո, «Ծաղիկ»-ի 1896 թ. հրատարակությունն ունեցել է հետևյալ ենթավերնագիրը՝ «ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱՋԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ» և նշվել է որպես 9^{րդ} տարի:

1886 Ա. Տարի Թիւ 1-4, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ

1887 Ա. Տարի Թիւ 5-104, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ

1887 Բ. Տարի Թիւ 105-107, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ

1888 Բ. Տարի Թիւ 108-161, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ

1888 Բ. Տարի Թիւ 162-183, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1888 Գ. Տարի Թիւ 184-185, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1889 Գ. Տարի Թիւ 186-275, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1889 Դ. Տարի Թիւ 276-278, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1890 Դ. Տարի Թիւ 279-329, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ: Խմբագիր-Տնօրէն՝ Յովնան Գ. Փայլազաշեան. Խմբագրապէս՝ Ա. Ա. Սուրենեան.

1890 Նոր Շրջան Ա. Տարի Թիւ 1 (ՍԵՂՏԵՄԲԵՐ 15) - Թիւ 16, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.

1891 Նոր Շրջան Ա. Տարի Թիւ 17-52, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.

1891 Նոր Շրջան Բ. Տարի Թիւ 1-11, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.

1892 Նոր Շրջան Բ. Տարի Թիւ 12-52, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.

1892 Նոր Շրջան Գ. Տարի Թիւ 1-2, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.

1893 Նոր Շրջան Գ. Տարի Թիւ 3-37, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.

1894 Նոր Շրջան Գ. Տարի Թիւ 38-39, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ, Խմբագիր՝ Գրիգոր Պ. Գայսերեան.

1894 Նոր Շրջան Ա. Տարի Թիւ 1 (Մայիս 14)-20, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ, 8 էրես: Խմբագիր՝ Գրիգոր Պ. Գայսերեան.

1895 Նոր Շրջան Թիւ 1-17, ԾԱՂԻԿ : ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Խմբագրապէտ Արշակ Չոպանեան: 24 x 16 սմ, 32 էրես:

1896 9րդ Տարի Թիւ 1-23, ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - 55 x 39 սմ, 4 էրես: Տնօրէն-Խմբագիր՝ Երուանդ Գաբրիելեան

Նկ. 1 Հատված «Ծաղիկ» թերթի 520 դաշտից

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Փորձենք հաշվել տարիները՝ հիմք ընդունելով 520 դաշտում բերված բաշխումն ըստ Ա., Բ., Գ., ... տարիների:

- ✓ 1886 Ա. տարի-1890 Դ. տարի՝ կազմում է 4 տարի:
- ✓ 1890 Նոր շրջան Ա. տարի - 1894 Նոր շրջան Գ. տարի՝ կազմում է 3 տարի:
- ✓ 1894 Նոր շրջան Ա. տարի՝ կազմում է 1 տարի:

Ընդամենը կազմեց 8 տարի:

1895 թ. Ա. Չօպանեանը հրատարակում է իր ամսագիրը, որը նույն թվականին էլ դադարեցնում է գործունեությունը:

1896 թ. Ե. Գարթալեանը շարունակում է «Ծաղիկ»-ի՝ որպես թերթի տպագրությունը՝ նշելով դա որպես 9^{րդ} տարի, այսինքն՝ Ա. Չօպանեանի հրատարակությունը չեն ներառել տարիների հերթական հաշվարկում: Այս փոքրիկ վերլուծությունը ևս հաստատում է վերևում իմ առաջ քաշած ենթադրությունը, որ թե՛ Ա. Չօպանեանի և թե՛ Ա. Անտոնեանի ամսագրերը «Ծաղիկ» թերթի տրամաբանական մաս չեն կազմել:

Նման մոտեցման արդյունքում **երկու հանդես** ևս ավելացավ ամսագրային հրատարակությունների ընդհանուր թվին:

գ. Մ. Բաբլոյանի մատենագիտությունում առկա է մի այսպիսի գլուխ՝ «Հայտարարված, բայց չհրատարակված թերթեր և հանդեսներ»: «ԾԱՂԻԿ»-ի 1899 ժԳ. տարի, 28 օգոստոսի, թիւ 8, կարդում ենք «ԼՈՅՍ՝ ՓՈԽԱՆ ԾԱՂԻԿԻ «Ինչպէս որ ասկէ առաջ յայտարարուած էր, ԾԱՂԻԿ ի մօտոյ պիտի հրատարակուի իբրև օրաթերթ ամէն օր, իր արտօնատիրոջ՝ Անտոն էֆ. Սաքաեանի տրամադրութեան տակ: Թէև ըսուած էր թէ միեւնոյն ժամանակ ԾԱՂԻԿ շաբաթերթն ալ պիտի շարունակուի ըստ առաջնոյն: Սակայն անկարելի ըլլալով միեւնոյն թերթը երկու տարբեր ուղղութեամբ և տարբեր տնօրինութեամբ շարունակել, նախամեծար համարեցի թերթիս ուղղութիւնը փոխելու տեղ անունը փոխել: Ուստի յառաջիկայ շաբաթէն սկսեալ ԼՈՅՍ պիտի հրատարակուի ԾԱՂԻԿի տեղ, միևնոյն ուղղու-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

թեամբ, միեւնոյն պարունակութեամբ, միևնոյն ծաւալով և միեւնոյն պայմաններով: Միմիայն թերթին ճակատը փոխանակ ՇԱՂԻԿԻ՝ ԼՈՅՍ պիտի գրուի... ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ»:

«ԼՈՅՍ» անունով պարբերական, հիմնադրված 1899 թ. մատենագիտական ցանկերում առկա չէ:

Այսինքն, ևս մեկ հայտարարված, բայց չհրատարակված անուն է հայտնաբերվել այս հավաքածուում:

Շտեմարանը որպես վիճակագրական տվյալների աղբյուր

Մխիթարեան միաբանութեան հայ մամուլի շտեմարանի նախագծման ընթացքում, փորձ արեցինք ընտրել ինդեքսավորման այնպիսի կառուցվածք, որպեսզի փնտրտույքը շտեմարանի ներսում լինի հնարավորինս ճկուն և հնարավորինս շատ վիճակագրական տվյալներ տրամադրվեն հետազոտողին: Այս պահին շտեմարանը պարունակում է 195 պարբերականի մատենագիտական նկարագրություն, որոնք ըստ նյութի տեսակների բաշխված են այսպես.

- ✓ Թերթ՝ 93 վերնագիր.
- ✓ Ամսագիր՝ 100 վերնագիր.
- ✓ Տարեգիր՝ 2 վերնագիր:

Խմբագիրների անուններն ինդեքսավորվում են, և ինդեքսավորված անվան աջ մասում երևում է, թե քանի պարբերականի խմբագիր կամ հրատարակիչ է տվյալ անձը եղել: Այսպես, «Մամուրեան, Հրանտ Մատթէոսի (4)» հուշում է, որ Մամուրեան Հրանտը 4 պարբերականի խմբագիր-տնօրենն է եղել: Անվան ցուցիչից կարելի է ուղղակի անցում կատարել հրատարակած պարբերականների մատենագիտական գրառումներին:

Վիճակագրական տվյալների մի առանձին խումբ էլ ներկայացնում են տպագրության քաղաքների և երկրների անվանումները: Կարելի է հեշտությամբ իմանալ, թե որ քաղաքում/երկրում քանի անուն պարբերական է տպագրվել:

Հայ տպագրության պատմությամբ զբաղվող մասնագետների համար, տպարանները միշտ էլ մեծ հետաքրքրություն են ներկայացրել: Շտեմարանը տալիս է հստակ տեղեկատվություն թե՛ տպարանների անունների, թե՛ դրանց գտնվելու վայրի և թե՛ այդ տպարաններում հրատարակված պարբերականների անունների և քանակների վերաբերյալ: Օգտագործվել է հետևյալ ստանդարտացված կառուցվածքը՝ *տպ. «անվանում»*, արդյունքում տպարանների անունները հավաքվում են «Խորագրային» ցուցիչների առանձին տիրույթում: «տպ. "Ա. Յակոբ Պոյաճեան" (6)» գրառումը հուշում է, որ Պոյաճեանի տպարանում տպագրվել է 6 անուն պարբերական, իսկ հետևելով հղմանը, կարտածվեն այդ տպարանում լույս տեսած պարբերականների մատենագիտական գրառումները:

Շտեմարանում ներդրված է կառուցվածք, որը հնարավորություն է տալիս ունենալու հայոց լրագրության պատկերն ըստ հրատարակության տևողության, տե՛ս նկար 2-ը: Վիճակագրական բաշխման աղյուսակից տեսնում ենք, որ 1794 թվականից մինչև 1920-ականներն ընկած ժամանակահատվածում, մամուլի համեմատաբար շատ քանակներ ունեցել են մեկից մինչև վեց տարվա կյանք: Մեկ տարվա կամ դրանից էլ պակաս կյանքի տևողություն ունեցող պարբերականների թիվը ամենաշատն է՝ 48 անուն:


խոսք երախտիքի

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի Մենաստանի հոգևոր հայրերին՝ ցուցաբերած աջակցության համար, հատկապես Հայր Նարեկ Տատուրեանին, ում ակտիվ մասնակցության և շարունակական աջակցության շնորհիվ սույն նախագիծը դարձավ իրականություն: Շնորհակալության խոսքս եմ հղում Հայր Սիմոն Պայեանին, ում ջանքերի արդյունքում մամուլի թվայնացման աշխատանքները մեծապես շահեցին: Անուրանալի է Արհիապատիւ Պողոս Լեւոն արք. Զէքիեանի ներդրումը սույն նախագծի կայացման գործում: Գերապայծառ Հայրը մշտա-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

պես եղել է մեր կողքին, և առանց իր խորհուրդների ծրագիրը մեծապես կտուժեր:

Երախտիքի մեր խոսքն ենք ուղղում նաև Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունք»-ի տնօրեն դոկտ. Ռազմիկ Փանոսեանին և տնօրենի օգնական Շողեր Մարկոսեանին՝ նախագծի առաջին փուլի ֆինանսավորման և ցուցաբերած մշտական աջակցության համար:



Նկ. 2 Պարբերականների քանակներն՝ ըստ կյանքի տևողություն Ամփոփում

Սույն հոդվածում ներկայացվեցին մեր կողմից կատարված ճշգրտումներից և բացահայտումներից մի քանիսը: Իրականում դրանք ավելի շատ են. ունենք բազմաթիվ նոր տպարաններ, խմբագիրներ, շտկվել են մի շարք մատենագիտական սխալներ և այլն:

Մամուլի մատենագիտություն կազմողները հիմնականում օգտվում են տարիներ առաջ կազմված մատենագիտական տպագիր ցանկերից, որոնք, կարծում ենք, թվային դարաշրջանում պետք է

ծառայեն որպես սկզբնաղբյուր, բայց ոչ որպես մեխանիկական պատճենման աղբյուր: Ձեռքի տակ ունենալով մամուլի թվայնացված նմուշները՝ հարկ է դրանք էջ առ էջ թերթել, քանի որ մատենագետին սպասվում են բազմաթիվ անակնկալներ:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԲԱԲԼՈՅԱՆ 1986 – Բաբլոյան, Մ. (կազմ.) (1986), *Հայ պարբերական մամուլը (1794-1980)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 470 [Babloyan, M. (comp.) (1986), *Hay Parberakan Mamuly. Matenagitakan Hamahavak Ts'uts'ak*], Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 470];

ԼԵՎՈՆՅԱՆ 1934 – Լևոնյան, Գ. (կազմ.) (1934), *Հայոց պարբերական մամուլը (1794-1934)*, Երևան, Պետհրատ, XXXI, 228, 3 [Levonyan, G. (comp.) (1934). *Hayots' Parberakan Mamuly (1794-1934)*, Yerevan, Pethrat, XXXI, 228, 3];

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924 – Կարապետեան, Հ. (կազմ.) (1924), *Լիակապար ցուցակ հայերէն լրագիրներու որոնք կը գտնուին Մխիթարեան մատենադարանին մէջ ի Վիեննա 1794-1921*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 79 [Karapetyan, H. (comp.) (1924). *Liakatar Ts'uts'ak Hayeren Lragirneru voronk kgtvin Mkhitaryan Matenadaranin mej (1794-1921)*, Vienna, Mkhitaryan Press, 79];

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970 – Կիրակոսյան, Ա. (կազմ.) (1970), *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 621 [Kirakosyan, A. (comp.) (1970). *Hay Parberakan Mamuly (1794-1967)*, Yerevan, Public Library of Armenian SSR after A.I. Myasnikyan, 621];

ZARGARYAN 2020 – Zargaryan, T., Astsatryan H., Matela M. (2020), Armenian Research & Academic Repository in Action: Towards Challenges of the 21st Century, *Katchar* (Yerevan), 2, 67-79.

**DIGITALIZATION OF THE PERIODICALS
BEING PRESERVED IN
THE MEKITARIST MONASTERY OF VIENNA.
PRESENTATION OF FIRST PHASE RESULTS**

TIGRAN ZARGARYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph. D. (Technical Sciences)

Keywords: Armenian periodicals, bibliography of the Armenian periodicals, Mekitarist Congregation - Vienna, Calouste Gulbenkian Foundation.

In 2019 Calouste Gulbenkian Foundation in close cooperation with Mekitarist Congregation – Vienna and Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia initiated a project – to digitize Armenian periodical and newspaper collections being preserved in the Mekhitarist Congregation – Vienna library.

The library website <https://mechitaristlibrary.org/> presents the periodical and newspaper collections published between 1794 and 1920 from the Vienna Mekhitarist Library. All digitized materials are stored in the databases of the Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia, and are freely accessible to all. The digitization of materials is continuous, and content will be made available in the corresponding databases and websites when ready.

The project also pursues other goals: openness to the international scientific world, access to knowledge for all Armenians and the international scientific and academic community, strengthening of the Armenian language, promotion and development of research work, as well as the promotion of collaboration between inter-Armenian and various Armenian and international organizations.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ . «ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՐՎԵՍ» ՇՏԵՄԱՐԱՆ*

ՀՏԴ: 01(479.25)+681.3+82.035
DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-30

ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

ORCID: [0009-0005-3657-0704](https://orcid.org/0009-0005-3657-0704)

20-րդ դարի վերջից սկսած, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ, առաջնային դարձան էլեկտրոնային շտեմարանները՝ որպես մատենագիտական ինքնատիպ աղբյուրներ: Շտեմարաններում մատենագիտական նկարագրության սկզբունքները էական փոփոխություններ չկրեցին, սակայն տեղեկատվության որոնողական համակարգով դրանք գերազանցեցին ավանդական մատենագիտական ցանկերին: Հոդվածի նպատակն է ընդգծել շտեմարանների դերն ու նշանակությունը տեղեկատվության հավաքագրման և մատուցման գործում:

Ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք շտեմարանների ստեղծման առանձնահատկություններին, որոնման ճկուն համակարգին, բովանդակային շերտերին: Որպես մասնավոր օրինակ՝ դիտարկել ենք «Թարգմանչաց արվեստը» շտեմարանի համակարգման աշխատանքները:

Starting from the end of the 20th century, along with the development of information technologies, electronic databases became primary as original bibliographic sources. The principles of bibliographic description in databases did not undergo significant changes, but due to the information search system, the databases surpassed traditional bibliographic lists. The purpose of the article is to emphasize the role and importance of databases in the collection and delivery of information.

* Հոդվածը ներկայացվել է 03.09.2023, գրախոսվել է 31.11.2023, ընդունվել է տպագրության 04.12.2023:

The article was submitted on 03.09.2023, reviewed on 31.11.2023, accepted for publication on 04.12.2023.

Within the framework of the study, we referred to the features of creating databases, the flexible search system and the content layers. As a private example, we have considered the work of creating and coordinating the "The Art of Translation" database.

Քանայի բառեր¹ թվային պահոցներ, տվյալների շտեմարաններ, մատենագիտություն, բաց հասանելիություն, Վիքիպեդիա:

Ինչպես հղել¹ Մանուկյան Մ. (2023), Մատենագիտությունը թվային դարաշրջանում. «Թարգմանչաց արվեստ» շտեմարան, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 30-38. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-30](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-30)

How to cite (APA style): Manukyan M. (2023), The Bibliography in the Digital Era. "Art of Translation" Database, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 30-38. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-30](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-30)

Ներածություն

Հայ իրականության մեջ մատենագիտությունն իբրև գիտական տերմին գործածական է դարձել 18-րդ դարի առաջին կեսից (ԻՇԽԱՆՅԱՆ 1964, 134): Մատենագիտության նպատակն է ոչ միայն հաշվառել, գրանցել, մշակել ու դասակարգել տպագիր երկերը, այլև ներկայացնել գրքի բովանդակությունը, նրա գաղափարական և գիտական արժեքը, բացահայտել պատմությունը, ճշտել գտնվելու վայրը և ֆիզիկական վիճակը (ԿՈՍՏԻԿՅԱՆ 1968, 3-11): Ունենալով աղբյուրագիտական արժեք՝ այն խիստ կարևորվում է ցանկացած գիտական ուսումնասիրության մեջ:

Յուրաքանչյուր դարաշրջան առաջադրել է մատենագիտական նկարագրության իր պահանջներն ու չափորոշիչները: Տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում այդ պահանջները բոլորովին այլ են: Բնականաբար, այսօր փոխվել են մատենագիտությանն առաջադրված ավանդական ձևերն ու սկզբունքները: Տեղեկատվական տեխնոլոգիաների աճին զուգահեռ ավելացել են համա-

ցանցային ծառայությունների տեսակները՝ ստեղծելով և առաջադրելով նորանոր հնարավորություններ:

Սույն ուսումնասիրության նպատակն է ընդգծել շտեմարանների կարևորությունը արդի շրջանում՝ որպես մատենագիտության յուրօրինակ դրսևորում, ցույց տալ դրանց կազմման հիմնական ձևերն ու սկզբունքները և ընդգծել կիրառելիության սահմանները:

Տվյալների շտեմարան

20-րդ դարի վերջից սկսած տեղեկատվության հավաքագրումը, կուտակումը և տարածումը գերխնդիր էր, որի լուծման կարևորագույն օղակները հանդիսացան գրադարանները, արխիվները, թանգարանները, որոնց առաջադրված աշխատանքի կազմակերպման նոր պահանջների մեջ առաջնային դարձան էլեկտրոնային շտեմարանները՝ որպես մատենագիտական ինքնատիպ աղբյուրներ (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 7-8):

Տվյալների շտեմարանները տվյալների կամ տեղեկատվության կազմակերպված հավաքածուներ են, որոնք պահվում են համակարգչային ընթեռնելի ձևաչափով: Դրանք կարող են լինել հանրային կամ մասնավոր՝ ըստ նպատակային գործածության (ՈՅՈՒՄՈՅ 2020, 18-20: Ավելի մանրամասն տե՛ս ԽԱԶԱՏՐՅԱՆ 2022, 9-19):

Մատենագիտական տեղեկանքի տվյալների տարրերը ներառում են հեղինակի կամ հեղինակների անունները, տպագրված աշխատության անվանումը, ամսագրի անվանումը, էջերի քանակը, հատորի համարը, թողարկման համարը և հրապարակման ամսաթիվը: Առցանց տեղեկատվություն գտնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե որ էլեկտրոնային շտեմարանն է պարունակում այդ տեղեկատվությունը: Տվյալների շտեմարանները նույնականացնելու մի քանի եղանակ կա: Դրանցից մեկը տպագիր և առցանց գրացուցակների օգտագործումն է, մյուսը՝ համացանցի որոնման համակարգերի օգտագործումը:

Տվյալների շտեմարանը մեկ կամ մի քանի թվային տիրույթում պահվող տվյալների հավաքածու է և հանդիսանում է տվյալների պահպանման և կազմակերպման հիանալի միջոց: Դա համակարգչային ծրագրաշարի ձև է, որը նախատեսված է տվյալներն արդյունավետ կերպով պահելու, արտածելու և կառավարելու համար՝ նպատակ ունենալով հեշտացնելու փնտրման գործընթացը: Այն սովորաբար պարունակում է դաշտեր կամ սյունակներ, որտեղ յուրաքանչյուր դաշտ ունի որոշակի տեսակի տվյալներ և երկարություն: Ամենատարածված տեսակներն են՝ տեքստը, թվերը, ամսաթվերը և այլն: Շտեմարանում որոնումը հեշտացնելու նպատակով մեկ կամ մի քանի դաշտեր կարելի է ինդեքսավորել:

«Թարգմանչաց արվեստ» շտեմարան¹

ՀՀ գրադարաններում տվյալների շտեմարանների ձևավորման աշխատանքները սկսվել են 20-րդ դարի վերջից: 2000 թ. Ազգային գրադարանի, Ազգային գրապալատի, ՀՀ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (այուրեւտ՝ ԳԱԱ) Հիմնարար գիտական գրադարանի, Երևանի պետական համալսարանի գրադարանի աշխատակիցներից ստեղծված աշխատանքային խումբը պատրաստեց հայաստանյան գրադարանների ավտոմատացված ցանցի հայեցակարգը: Նախագծին տրվեց «Հայաստանի գրադարանային ավտոմատացված ցանցի ստեղծում» անվանումը (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2015, 3-12): Մրցույթի արդյունքում ընտրվեց իսրայելական ExLibris կազմակերպության Aleph համակարգը, որի հիման վրա ստեղծված Համահավաք էլեկտրոնային քարտարանը դարձավ տեղեկատու շտեմարան՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնողական դյուրին համակարգով: 2017 թ. մի շարք պատճառներից ելնելով՝ այն փո-

¹Թարգմանչաց արվեստ

<http://greenstone.flib.sci.am/gsd/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=fs|grad-col&l=hy&w=utf-8>
(31.08.2023):

խարինվեց Koha ծրագրով (ԱՌԱՔԵԼՅԱՆ 2018, 68): Հետագա տարիներին շտեմարանների ձևավորման ուղղությամբ աշխատանքներն ընդգրկեցին ավելի լայն շրջանակներ: Այսօր հայաստանյան մի շարք գրադարաններում ձևավորվում են էլեկտրոնային շտեմարաններ՝ համապատասխան նախանշված նպատակի և կիրառության:

Շտեմարանների ստեղծման գործում ակնառու է ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի փորձը: Լինելով գիտամեթոդական կենտրոն՝ գրադարանը պարբերաբար թարմացնում է ծրագրաշարերը, տեղայնացնում և հասանելի դարձնում հայաստանյան գրադարանային հանրությանը: KOHA, Greenstone, Dlibra և այլ ծրագրերի միջոցով այսօր գրադարանի կայքէջում հասանելի են թեմատիկ մի շարք շտեմարաններ, որոնցից վերջինը 2023 թ. ստեղծված «Թարգմանչաց արվեստ» շտեմարանն է:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանն արդեն վաղուց որդեգրել է տեղեկատվությունը բաց մատչելիության սկզբունքով մատուցելու քաղաքականությունը: Հենց այս գաղափարախոսության շրջանակում է այսօր թվայնացվում ՀՀ ԳԱԱ տպագիր ողջ ժառանգությունը: Բացառություն չեն նաև գրադարանի ձևավորած էլեկտրոնային շտեմարանները, որոնցից է «Թարգմանչաց արվեստ»-ը: Այն հասանելի է բոլոր հետազոտողներին, ընթերցողներին՝ առանց տարածքային և ժամանակային սահմանափակումների:

Շտեմարանը ստեղծվել է Greenstone² ծրագրի հիման վրա, որը պատկանում է բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի ընտանիքին և լավագույն ծրագրային լուծումներից է:

«Թարգմանչաց արվեստ» շտեմարանը ստեղծելիս առաջնորդվել ենք հետևյալ նպատակով.

1. Ստեղծել մեկ միասնական հարթակ հայ թարգմանիչների համար՝ ներառելով բոլորին:

² <https://www.greenstone.org/> (31.08.2023):

2. Մեկ էլեկտրոնային շտեմարանում համախմբել առ այսօր տպագրված բոլոր թարգմանությունները, որոնք կատարել են հայ թարգմանիչները առանց լեզվական սահմանափակումների:

3. Ամբողջացնել թարգմանված տպագիր ժառանգության մատենագիտական գրառումները:


4. Չխախտելով հեղինակային իրավունքի պահանջները՝ նկարագրություններին կցել թվային տարբերակները:

5. Համագործակցություն սկսել թարգմանիչների հետ՝ նպաստելով գրադարանի հավաքածուների ամբողջացմանը:

6. Իրականացվող աշխատանքներով նպաստել հայ տպագիր ժառանգության ուղղությամբ տարվող հետազոտական աշխատանքներին:

Առաջնորդվելով վերոնշյալ առաջնահերթություններով՝ շտեմարանում ներառվում են տարբեր ժամանակներում գործած հայ թարգմանիչների՝ այլ լեզուներից հայերեն և հայերենից այլ լեզուներ կատարած թարգմանությունները՝ համապատասխան մատենագիտական նկարագրություններով և թվային տարբերակներով (եթե դա չի հակասում հեղինակային իրավունքի պահանջներին): Ներկայում առաջնահերթությունը տրվում է առանձին գրքերին կամ ժողովածուներում տպագրված թարգմանություններին: Հետագայում նախատեսվում է շտեմարանում ներառել պարբերական մամուլում տպագրված թարգմանությունները:

Ընդգրկվում են բոլոր թարգմանություններն անխտիր: Համակարգն ունի որոնման լայն հնարավորություններ՝ ըստ հեղինակների, վերնագրերի, թարգմանիչների, տպագրության վայրի և տարեթվի, հրատարակիչների: Հեղինակների, վերնագրերի, թարգմանիչների դաշտերում նյութերը դասակարգված են այբբենական կարգով: Ներկայացված են յուրաքանչյուր թարգմանիչի թարգմանությունները թե՛ գրքերից, և թե՛ ժողովածուներից:



Առաջին անգամ փորձ է արվել անմիջական կապ ստեղծել էլեկտրոնային շտեմարանի և Վիքիպեդիայի միջև՝ գիտակցելով, որ առավել լիարժեք տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային հարթակը հենց Վիքիպեդիան է³, որն առցանց, բազմալեզու, հանրագիտարանային նախագիծ է, որն աշխատում է վիքի ձևաչափով: Նախագիծը նպատակ ունի տրամադրել ազատ, առավել ամբողջական բովանդակություն, առաջնորդվում է հիմնարար սկզբունքներով, իսկ բովանդակությունը հրապարակվում է Creative Commons BY-SA արտոնագրի ներքո⁴: Վիքիպեդիայում ողջ տեղեկատվությունը ներկայացված է ազատ և առանց գովազդի:

Շտեմարանում յուրաքանչյուր թարգմանչի անվան վրա դրվում է **W** նշանը՝ հղումով, որի վրա սեղմելով օգտվողին հասանելի է դառնում տվյալ թարգմանչի վիքի էջը: Կատարվում է թարգմանչի անհատական էջի խմբագրում, անհրաժեշտության դեպքում տեղադրվում է թարգմանությունների ցանկը: Այս համագործակցության շրջանակում գործում է հետադարձ կապը. Յուրաքանչյուր թարգմանչի Վիքիպեդիայի էջում տեղադրվում է շտեմարանի հատուկ պատրաստված լոգո, որի վրա սեղմելով՝ օգտվողը միանգամից հայտնվում է «Թարգմանչաց արվեստ» հարթակում: Արդյունքում՝ ստեղծվել է շղթայական մի օղակ, որով ապահովվում է և՛ թարգմանչի կյանքի ու գործունեության մասին տեղեկատվությունը, և՛ թարգմանությունների մատենագիտական ցանկը: Եթե թարգմանիչը Վիքիպեդիայում էջ չունի, թարգմանչի հետ համագործակցության արդյունքում ստեղծվում է նաև այդ էջը: Շտեմարանում գրառումները հղումներով կապվում են գրադարանի էլեկտրոնային քարտարանի,

³ Վիքիպեդիա. ազատ հանրագիտարան <https://hy.wikipedia.org/> (31.08.2023):

⁴ Creative Commons BY-SA <https://creativecommons.org/licenses/by-sa/2.0/deed.en> (31.08.2023):

Համահայկական թվանշային գրադարանի կամ համապատասխան կայքէջի հետ: Սա հնարավորություն է տալիս օգտվողին կամ առցանց ընթերցել գիրքը, եթե այն թվայնացված է կամ առցանց պատվիրել գիրքը՝ գրադարանի ընթերցասրահում ընթերցելու համար:

Ամփոփում

Կարող ենք փաստել, որ տվյալների շտեմարաններն այսօր հանդես են գալիս, որպես մատենագիտական ինքնատիպ ձեռնարկներ՝ բովանդակության առավել լայն ընդգրկումով և որոնման անսահմանափակ հնարավորություններով: Դրանք ավանդական մատենագիտության բացասում չեն, այլ տեղեկատվության մատուցման նոր ձևաչափ: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի ստեղծած շտեմարաններից է «Թարգմանչած արվեստ»-ը, որը դարձել է էլեկտրոնային մեծ հարթակ հայ թարգմանիչների և նրանց թարգմանությունների համար:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՌԱՔԵԼՅԱՆ 2018 – Առաքելյան, Ն. (2018), Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային շտեմարանները որպես մատենագիտական աղբյուրներ, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 2(2), 68-84 [Arakelyan, N. (2018), *Electronic Databases of the National Library of Armenia as Bibliographic Sources, Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 2(2), 68-84];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hegh. Hrat., 168];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2015), Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից (Հայացք 25 տարվա անցած ուղուն), *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 3-12 [Zargaryan, T. (2015), From The History of Developing Digital Libraries in Armenia: 25 years of Library Automation in Armenian, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(1), 3-12];

ԻՇԽԱՆՅԱՆ 1964 – Իշխանյան, Ռ. (1964), *Հայ մատենագրության պատմություն (ուրվագիծ)*, պրակ Ա. V-XVIII դարեր, Երևան, ՀՍՍՀ Ա. Մյաս-

նիկյանի անվան հանրապետական գրադարան, 157 [Ishkhanyan, R. (1964), *Hay Matenagrutyun patmutyuan (urvagits)*, prak. A. V-XVIII darer, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 157];

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2022 – Խաչատրյան, Կ., Թումանյան, Ա. (2022), *Տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր*, Երևան, Տնտեսագետ, 192 [Khachatryan, K., Tumanyan, A. (2022), *Tvyalneri Shtemaranneri Kar'avarman Hamakarger*, Yerevan, Tntesaget, 192];

ԿՈՍՏԻԿՅԱՆ 1968 – Կոստիկյան, Հ. (1968), *Մատենագիտության հիմունքները*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 425 [Kostikyan, H. (1968), *Matenagutyan Himunknery*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 425];

НОВИКОВ 2020 – Новиков, Б. А., Горшкова, Е. А., Графеева, Н. Г. (2020), *Основы технологий баз данных*, Москва, ДМК Пресс, 582 [Novikov, B. A., Gorshkova, E. A., Grafeeva, N. G. (2020), *Database Technology Basics*, Moscow, DMK Press, 582].

THE BIBLIOGRAPHY IN THE DIGITAL ERA. “ART OF TRANSLATION” DATABASE

MERY MANUKYAN
Fundamental Scientific Library of NAS RA

Keywords: Digital repositories, Databases, Bibliography, Open Access, Wikipedia.

We can prove that today repositories act as unique bibliographic catalogs, with a wider coverage of content and with unlimited search possibilities. They do not reject traditional bibliography, but act as a new format for presenting information. The "Art of Translation" database created by the Fundamental Scientific Library of the NAN RA is the electronic catalogue, which is already serving the purpose for which it was created, to become a large electronic platform for Armenian translators and their translations.

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ*

ՀՏԴ: 681.3:316+02

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-39

ԱՍՊՐԱՍ ԱՇՈՒԴՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ORCID: [0009-0005-4891-0999](https://orcid.org/0009-0005-4891-0999)

Թվային դարաշրջանում գրադարանները պետք է յուրացնեն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և գործունեություն ծավալեն այդ համատեքստում: Քայլերով ժամանակին համընթաց՝ գրադարաններն իրենց աշխատանքային զինանոցում պարտավոր են ունենալ տվյալ ժամանակաշրջանի հասարակության պահանջները բավարարող գործիքակազմ՝ տեղեկատվության առավել արագ մատուցման համար: Սույն ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք գրադարանների ներկայացման և զարգացման գործում սոցիալական մեդիայի դերին՝ ցույց տալ գրադարան-սոցիալական մեդիա համագործակցության առավելությունները և ընդգծել, թե հայաստանյան գրադարաններում որքանով է այն իրականություն դարձել: Կարծում ենք՝ առաջադրված նպատակն ունի արդիական հնչեղություն:

In the digital age, libraries must appropriate the possibilities of using information technologies and carry out activities in that context. Keeping up with the times, libraries must have tools in their working arsenal that meet the demands of the society of the given period for the fastest delivery of information. Within the framework of this research, we referred to the role of social media in the presentation and development of libraries, to show the advantages of library-

* Հոդվածը ներկայացվել է 08.08.2023, գրախոսվել է 07.12.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023:

The article was submitted on 08.08.2023, reviewed on 07.12.2023, accepted for publication on 11.12.2023.

social media cooperation and to emphasize how much it has become a reality in Armenian libraries. We think the proposed goal has a modern resonance.

Քանալի բառեր¹ տեղեկատվական տեխնոլոգիաներ, սոցիալական մեդիա, սոցիալական ցանցեր, գրադարաններ, հանրայնացում, կայքէջ, միջոցառումներ:

Ինչպես հղել¹ Աշուղյան Ա. (2023), Սոցիալական մեդիան և գրադարանները. *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 39–48. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-39](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-39)

How to cite (APA style): Ashughyan A. (2023), Social Media and Libraries, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 39-48. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-39](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-39)

Ներածություն

Համացանցի տարածվածությունն ամենուր ստիպում է գրադարաններին համաշխարհային տեղեկատվական ցանցում ունենալ ուրույն ներկայություն՝ բլոգերի, կայքէջի, սոցիալական ցանցի ձևաչափով, քանի որ ժամանակակից գրադարանի ընթերցողները ոչ միայն նրանք են, ովքեր գտնվում են ընթերցասրահներում, այլ նաև նրանք, ովքեր օգտվում են համացանցից:

Ավանդական գրադարանը տեղափոխելով վիրտուալ տիրույթ՝ առաջանում են բազմաթիվ հարցեր՝ արդյո՞ք սոցցանցերն օգնում են լուծել գրադարանների խնդիրները, ո՞րն է համացանցում գրադարանի ներկայանալու հիմնական պատճառը, որքանո՞վ է արդյունավետ գրադարանի առցանց գործունեությունը և այլն: Յուրաքանչյուր հարց ենթադրում է պատասխանների շարք, որոնք հանգեցնում են հետևյալ դրույթի առաջադրմանը. եթե գրադարանը ցանկանում է լինել ժամանակակից և ընթերցողակենտրոն, ապա պետք է ուշադրության կենտրոնում պահի սոցիալական մեդիայի ընձեռած հնարավորությունները: Նոր ընթերցողներ ներգրավելու և հին ընթերցողներին չկորցելու համար գրադարանի համար առաջնահերթ

պետք է լինի ընթերցողների ներգրավվումը, նրանց հետ համագործակցությունը և նրանց մասնակցությունը գրադարանային կյանքին:

Սոցիալական մեդիան՝ գրադարանի ներկայացման միջոց

Սոցիալական մեդիան համակարգչային տեխնոլոգիաների ամբողջությունն է, որը հեշտացնում է տեղեկատվության, գաղափարների և մի շարք այլ առաջնահերթությունների ստեղծումն ու փոխանակումը վիրտուալ համայնքների և ցանցերի միջոցով (ՕԴՄԵԲԱ 2011, 63-69): Ներկայում սոցիալական մեդիայի ծառայությունները բազմազան են, բայց ունեն որոշ ընդհանուր առանձնահատկություններ: Նախ՝ սոցիալական մեդիան ինտերակտիվ Web 2.0 համացանցային ծրագիր է: Երկրորդ՝ օգտագործողի կողմից ստեղծված բովանդակությունը, ինչպիսիք են տեքստային հաղորդագրությունները (գրառումները) կամ մեկնաբանությունները, թվային լուսանկարները կամ տեսանյութերը և բոլոր առցանց փոխազդեցությունների արդյունքում ստացված տվյալները սոցիալական ցանցերի բաղկացուցիչ մասն են: Երրորդ՝ սոցիալական ցանցերը օգտատիրոջ պրոֆիլը միացնում են այլ անձանց կամ խմբերի պրոֆիլին՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ առցանց համակարգի զարգացմանը:

Որպես շփման տեխնոլոգիա՝ այն փոքրացնում է աշխարհագրական հեռավորությունը, նպաստում է հաղորդակցման հնարավորությունների լիովին օգտագործմանը, թույլ է տալիս ակտիվացնել հաղորդակցությունը (ՄԵԼՔՈՆՅԱՆ 2015, 14-20):

Սոցիալական մեդիայի մեջ մտնում են սոցիալական ցանցերը, բլոգները, կայքէջերը, ֆորումները, Վիքիպեդիան և այլն, որոնք բոլորն էլ այսօր կիրառվում են գրադարաններում:

Ինչպե՞ս է արտահայտվում սոցիալական մեդիա-գրադարան փոխադարձ կապը:

Տեղեկատվական հասարակության ձևավորման և ամրապնդման համատեքստում տեղեկատվության դերը, որպես ռազմավարական նշանակություն ունեցող ռեսուրս, զգալիորեն մեծացնում է

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գրադարանների գործունեության կարևորությունը ինչպես անհատ քաղաքացիների, այնպես էլ ողջ հասարակության տեղեկատվական կարիքների բավարարման գործում: Սա մեծացնում է գրադարանային-տեղեկատվական ոլորտի և դրա մասնագետների առջև դրված պահանջները: Եթե գրադարանը ցանկանում է լինել ժամանակակից, ընթերցողակենտրոն, ապա պետք է ուշադրությունը սևեռել սոցիալական մեդիայի վրա՝ որպես գործունեության առանձին հարթակ:

Տեղեկատվական դաշտում ներկայանալուց առաջ յուրաքանչյուր գրադարան պետք է ինքն իրեն առաջադրի հետևյալ հարցերը.

ա. Ինչո՞ւ է գրադարանի համար կարևոր աշխատանքը սոցիալական մեդիայում:

բ. Ի՞նչ ձևաչափով է պատրաստ ներկայանալ գրադարանը սոցիալական մեդիայում:

գ. Ո՞րն է սոցիալական մեդիայում գործունեություն ծավալելու նպատակը:

Պատճառահետևանքային կապով փոխկապակցված այս երեք հարցերի պատասխանները վճռորոշ են յուրաքանչյուր գրադարանի զարգացման համար:

Այսօր համացանցից օգտվում է բնակչության մեծ մասը: Քանի որ կամաց-կամաց ընթերցողները դառնում են հեռավար օգտվողներ, հեռանում են տպագիր նյութից և նախապատվությունը տալիս են առցանց ընթերցանությանը, գրադարանավարը պետք ընթերցողի նկատմամբ ցուցաբերի նոր մոտեցում: Հենց այստեղ է օգնության գալիս սոցիալական մեդիան իր տեսակներով՝ հնարավորություն տալով գրադարանին ինքնադրսևորվել իր բոլոր ծառայություններով:

Սոցիալական մեդիան համագործակցության և երկխոսության միջավայր է: Այն տնտեսող և միևնույն ժամանակ արդյունավետ միջոց է գրադարանային ծառայությունների վերաբերյալ կարծիքների ուսումնասիրման և ընթերցողների հետ լավ փոխհարաբերություններ

րի հաստատման համար: Սոցիալական մեդիան հասանելի է 24 ժամ, աշխարհի բոլոր անկյուններից:

Ի՞նչ է այն իր մեջ ներառում.

ա. Սոցիալական մեդիան օգնում է գրադարանին պատմելու գրադարանային իրադարձությունների, գրքերի, գրողների, հորեյանական տարելիցների, հորեյարների և այլ հետաքրքիր իրադարձությունների մասին:

բ. Սոցիալական մեդիան օգնում է մոտիվացնել ընթերցողներին գրադարան այցելելու, հրապարակումներին հետևելու, ընթերցանության խթանման, գրադարանի կայք այցելելու համար:

գ. Սոցիալական մեդիան օգնում է ուշադրություն սևեռելու դեպի տվյալ գրադարանը, գրադարանային հրապարակումները, ստեղծագործողները և այլն (ՈՍԿԱՆՅԱՆ 2020):

Սոցիալական մեդիա-գրադարան փոխհամագործակցության մեջ կարևորում են հանրային կապերը, որոնք դառնում են յուրօրինակ միջնորդ օղակ գրադարանի և սոցիալական մեդիայի միջև: Չկա որևէ կազմակերպություն, որն իր գործունեության ընթացքում չառնչվի հանրության հետ: Յուրաքանչյուր կազմակերպություն՝ լինի պետական, մասնավոր թե հասարակական, ձգտում է ձևավորել և ամրապնդել կապը հանրության հետ (ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԹԱՌՓՈՇՅԱՆ 2020, 99-109): Հանրային կապերը գործողությունների համակարգ է, որի շնորհիվ հնարավոր է դառնում հանրային կարծիքի վրա ազդել, այսինքն՝ մթնոլորտ ստեղծել, մարդկանց ուշադրությունը գրավել (ԱՎԵՏԻՍՅԱՆ 2014, 16): Գրադարանային ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի իր մեջ ներառում է հանրային կապերի տարրեր: Յուրաքանչյուր գրադարանի նպատակը ընթերցողների ներգրավումն է, նրանց պահանջների բավարարումն ու անհրաժեշտ նյութերով ապահովումը: Այդ պատճառով գրադարանը պետք է տեղյակ պահի հանրությանը իր գործունեության մասին: Դրա համար

գրադարանը կարող է օգտվել զանազան միջոցներից՝ ՁԼՄ, հայտարարություններ կամ պաստառներ, համացանց և այլն:

Սոցիալական մեդիան աներևակայելի հնարավորություններ է ստեղծում գրադարանների համար: Ոչ միան սեփական կայքերի, այլև սոցիալական հարթակներում գրադարանների էջերի ստեղծումը, այդ էջերի ամենօրյա թարմացումները և նամակներին արագ արձագանքելու քաղաքականության որդեգրումը գրադարանի գործելաոճը պետք է լինի: Սոցիալական հարթակները (Facebook, Twitter, YouTube, Instagram, Pinterest, VK և այլն) այսօր հաշվված վայրկյանների ընթացքում կապ են հաստատում գրադարանների այցելուների հետ և ներգրավում նորերին: Դրանք ոչ միայն այցելուների, այլև հենց իրենց՝ գրադարարավարների միջև կապ հաստատելու լավագույն միջոցներ են: Facebook, Twitter, Instagram և Telegram միայն թրենդեր չեն, դրանք մարքեթինգային գործիքներ են գրադարանների համար:

Սոցիալական մեդիան գրադարաններում պետք է դիտարկվի որպես գովազդի միջոց: Նորագույն գործիքների հիմնավոր ներդրման և կիրառման շնորհիվ աշխարհում գրադարանները և մշակութային, կրթական այլ կառույցներ վաղուց իրենց վերածնունդն են ապրում: Այսօր Հայաստանի գրադարանային հանրությունը նույնպես դուրս է գալիս ավանդական պատկերացումներից, հատկապես հայտնի ու մեծ գրադարանները փորձում են քայլ մեկնել զարգացած երկրների գրադարանների հետ՝ այս առաջընթացի մեջ ներքաշելով նաև փոքր ու հեռավոր գրադարաններին: Այս հարցում գրադարաններին օգնության են հասնում սոցիալական մեդիա հարթակները:

Գովազդն ամբողջությամբ մտել է գրադարանի և ընթերցողների կյանք: Այսօր այն հանդիսանում է մի գործիք, որի միջոցով ընթերցողը գիտի ամեն ինչ կամ համարյա ամեն ինչ տվյալ հաստատության վերաբերյալ: Գովազդն արտացոլում է ոչ միայն գրադարանի տեղեկատվական պաշարները, այլև հնարավորությունները,

տեխնոլոգիաները, ստեղծում է գրադարանի և նրա աշխատակիցների ավելի գրավիչ պատկերը:

Գրադարանային գովազդի ֆենոմենը բավականաչափ ուսումնասիրված չէ ոլորտի մասնագետների կողմից, սակայն կարելի է ասել, որ ունի մեծ ազդեցություն ընթերցողների վրա, զբաղեցնում է իր ուրույն տեղը գրադարանային-տեղեկատվական միջավայրում: Գովազդի շնորհիվ գրադարանը բացահայտում է իր հնարավորությունները մեծ լսարանի առջև իր երկրի տարածքում և նրա սահմաններից դուրս սոցիալական մեդիայի միջոցով (БОРИСОВА 2002):

Ցավոք, սոցիալական մեդիան շատ օգտվողներ նույնականացնում են միայն կայքէջի հետ՝ օգտագործելով այն ոչ միայն հաղորդակցման, այլ նաև տարատեսակ տեղեկատվության ստացման համար: Սոցիալական մեդիայի օգտատերերի թիվը կազմում է ամբողջ համացանցի գրեթե 90%-ը: Նման պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության խնդիրն է դառնում օգտագործել սոցիալական մեդիայի ընձեռած հնարավորությունները:

Գրադարանների համար սոցիալական մեդիան հատկապես կարևոր է, քանի որ ընթերցողների մեծ մասը ցանկանում է առցանց օգտվել գրադարանի ռեսուրսներից և այցելել գրադարան միայն վիրտուալ միջավայրում: Այս դեպքում գրադարանը չպետք է հետմնա ժամանակակից միտումներից: Նրա գերխնդիրն է ընթանալ ժամանակին համաքայլ և ներկայացնել իր ծառայությունները և դրանց մասին տեղեկատվությունը ընթերցողին ավելի հարմար ձևով:

Գրադարանի աշխատանքի կազմակերպումը համացանցում և սոցիալական մեդիայի այլ հարթակներում ունի հետևյալ առավելությունները.

- ✓ Օգտատերերն իրենց միջավայրում կիսվում են տեղեկատվությամբ, ինչը հնարավորություն է տալիս գրավելու մեծ լսարան,
- ✓ Տեղի է ունենում հաղորդակցական փոխազդեցություն օգտատիրոջ և գրադարանի միջև՝ հետադարձ կապի առկայությամբ:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

✓ Տարբեր աշխարհայացքով և նախասիրություններով լսարանը գրադարանին հնարավորություն է տալիս գտնել հենց իրենը,

✓ Հնարավորություն է տալիս վերլուծելու օգտատերերին՝ ըստ տարիքի, մասնագիտության, կրթության և այլն,

✓ Սոցիալական կայքերն ինդեքսավորվում են փնտրման համակարգերի կողմից,

✓ Հնարավորություն է տալիս անցկացնել հարցումներ և ուսումնասիրություններ բոլոր ուղղություններով,

✓ Կարելի է փոխանակվել հղումներով, համագործակցել սոցիալական կայքերի միջոցով:

✓ Համագործակցել օգտատերերի հետ,

✓ Տեղի է ունենում օգտատերերի լսարանի ընդլայնում:

Իսկ ինչպիսի՞ն է պատկերը հայաստանյան գրադարանային համակարգում:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում գրադարանների գործունեությունն այսօր դժվար է պատկերացնել առանց սոցիալական ցանցերի ներգրավվածության, ինչը գրադարանավարի մասնագիտական գիտելիքներից զատ պահանջում է ունենալ նաև համակարգչային գիտելիքներ:

Արտասահմանյան շատ գրադարաններ օգտագործում են սոցիալական մեդիա հարթակները՝ գրադարանը ներկայացնելու և ընթերցողներին ավելի մոտ լինելու նպատակով: Հայաստանում վիճակագրությունը մի փոքր այլ է: Քաղաքային խոշոր գրադարաններն արդեն ունենց իրենց կայքերը սոցիալական մեդիա հարթակներում: Սակայն համայնքային գրադարաններում պատկերն այլ է: Հայաստանում համայնքային գրադարանները բավականին անտեսված են և չունեն զարգացման այն մակարդակը, ինչն առկա է քաղաքային գրադարաններում: Չնայած մի շարք համայնքային գրադարաններ փորձում են քայլել ժամանակին համընթաց՝ լուսաբանում են իրենց գործունեությունը, ակտիվ միջոցառումները, շնորհանդեսները, ցու-

ցահանդեսները (անգամ սակավաթիվ և հնամաշ ֆոնդի պայմաններում), անդրադարձը հոբեյարներին, որն էլ հուշում է, որ գրադարանավարը տեղեկատվության լուսաբանման ճիշտ ուղի է ընտրել: Սրանով հանդերձ, հայաստանյան գրադարաններում առավել գործածական են կայէջերը և սոցիալական որոշ ցանցեր, հատկապես՝ Դիմագիրքը (Facebook):

Ամփոփում

21-րդ դարի մարտահրավերները գրադարաններին թելադրում են քայլել ժամանակին համընթաց: Ժամանակից գրադարանն անհնար է պատկերացնել առանց սոցիալական մեդիա հարթակների պրոֆեսիոնալ և ակտիվ աշխատանքի: Հենց այդ աշխատանքի և գրադարանային մաքթինգի միջոցով էլ հնարավոր է դառնում հանրայնացնել գրադարանը, գրավել նոր ընթերցողների, կապ հաստատել աշխարհի յուրաքանչյուր անկյունում գտնվող օգտատիրոջ հետ:

Շարունակելի

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2014 – Ավետիսյան, Ա. (2014), *Հանրային կապերը զանգվածային հաղորդակցության համակարգում*, Երևան, ԵՊՀ, 76 [Avetisyan, A. (2014), *Hanrayin kapery zangvatcayin haghordaktsutyam hamakargum*, Yerevan, YSU, 76];

ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԹԱՌՓՈՇՅԱՆ 2020 – Ավետիսյան, Ա., Թառփոշյան, Ն. (2020), Սոցիալական մեդիան փոխել է հանրային կապերի (PR) բովանդակությունը, *Ժողովրդագրական և հաղորդակցություն. Տեսության և պատմության հարցեր* (Երևան) 3(15), 99-109 [Avetisyan, A., Tarposhyan, N. (2020), Social Media has changed Public Relations Content, *Journalism and Communication: Issues of Theory and History* (Yerevan) 3(15), 99-109];

ՄԵԼԲՈՆՅԱՆ 2015 – Մելքոնյան, Ն. (2015), Հասարակայնության հետ կապերի առանձնահատկությունները համացանցում կամ PR 2.0, *Քանոններ Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն* (Երևան) 3(18), 14–20 [Melkonyan, N. (2015), The Features of Public Relations on the Internet or PR 2.0. *Journal of Sociology, Bulletin of Yerevan University*, 3(18), 14–20];

ՈՍԿԱՆՅԱՆ 2020 – Ոսկանյան, Շ. (2020, 26 նոյեմբեր), *Սոցիալական մեդիան՝ գրադարանի գործընկեր, Հայաստանի գրադարաններ. նորարար գրադարանների հարթակ* [Voskanyan, Sh. (2020, November 26), *Sots'ialakan median gradarani gortsynker. Libraries of Armenia: A Platform for Innovative Libraries*] <https://shorturl.at/gBENO> (02.08.2023);

БОРИСОВА 2002 – Борисова, О. (2002), *Библиотечно-библиографическая реклама*, Москва, МГУК, 224 [Borisova, O. (2002), *Bibliotechno-bibliograficheskaya r'eklama*, Moscow, MGUK, 224];

ОГНЕВА 2011 – Огнева, И. (2011), *Библиотека и социальные медиа, библиотечное пространство: медиа – информация – культура*, Сборник материалов межрегиональной научно-практической конференции, Архангельск [Ogneva, I. (2011), *Library and social media, library space: media – information – culture*, Collection of Materials of the Interregional Scientific and Practical Conference, Arkhangelsk] <https://shorturl.at/euU58> (02.08.2023):

SOCIAL MEDIA AND LIBRARIES

ASPRAM ASHUGHYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Keywords: Information Technology, Social media, Libraries, Publicity, Website, Social Networks, Events.

The challenges of the 21st century dictate that libraries keep up with the times. It is impossible to imagine a modern library without the professional and active work in social media platforms. It is through this work and using library marketing tools that it becomes possible to publicize the library, attract new patrons, and establish contacts with the users all over the world.

**ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՇՈՒՇԻՈՒՄ
1832-1833 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ԵՐԿՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

ՀՏԴ: 070(479.25)+655.4

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-49

ՄՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Պատմական գիտությունների թեկնածու**

ORCID: [0009-0004-7040-688X](https://orcid.org/0009-0004-7040-688X)

Շուշիի հայկական տպագրության վերաբերյալ ուսումնասիրությունները կրում են շարունակական բնույթ, քանի որ պարբերաբար ի հայտ են գալիս նոր արխիվային փաստեր և մատենագիտական տվյալներ: Սույն հետազոտության շրջանակում ներկայացրել ենք Շուշիի հայ տպագրության պատմության որոշ դրվագներ՝ գիտական շրջանառության մեջ դնելով 1832-1833 թթ. տպագրված երկու հրատարակությունների վերաբերյալ նոր փաստերը:

Armenian printing history of Shushi is in the center of researcher's attention, as new archival facts and bibliographical data emerge regularly. Within the framework of this research, we have presented some episodes of the history of Shushi's Armenian printing, putting into scientific circulation 1832-1833. new facts on both printed editions.

Քանայի բաներ՝ Շուշի, հայ տպագրության պատմություն, տպարան, գրքույկ, մատենագիտություն, բողոքական քարոզիչներ, հրատարակություն:

Ինչպես հղել՝ Պետոյան, Ս. (2023), Մատենագիտական ճշգրտումներ Շուշիում 1832-1833 թվականներին տպագրված երկու հրատարակությունների վերաբերյալ, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 49-56. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-49](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-49)

How to cite (APA style): Petoyan, S. (2023), Bibliographical Corrections on Two Publications Printed in Shushi in 1832-1833, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 49-56. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-49](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-49)

* Հոդվածը ներկայացվել է 21.08.2023, գրախոսվել է 12.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:

The article was submitted on 21.08.2023, reviewed on 12.12.2023, accepted for publication on 20.12.2023.

Ներածություն

Շուշի քաղաքը հայ գրատպության խոշոր կենտրոններից էր, ուր տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի նախադրյալը եղել է Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում: Շուշիում բողոքական քարոզիչները 1828–1835 թթ. տպագրել են 31 անուն գիրք և գրքույկ, որոնցից 29-ը հայերեն են, մեկը՝ թաթար-թուրքերեն և պարսկերեն, ևս մեկ գիրք՝ պարսկերեն (ՊԵՏՏՈՅԱՆ 2020ա, 69–87): Պետք է նշել, որ Շուշիում տպագրված առաջին հրատարակությունն աշխարհաբարով 1828 թ. լույս տեսած «Լերան քարոզը» գրքույկն է (ՊԵՏՏՈՅԱՆ 2020բ, 302–317):

Մատենագիտական ցանկերն առաջնային կարևորություն ունեն հայ տպագրության պատմության հետազոտողների համար: Դրանք ամբողջական չեն կարող լինել, քանի որ ժամանակի ընթացքում մատենագիտական ցանկերը լրամշակվում են նորանուն գրքերի ի հայտ գալով: Չմոռանանք նաև, որ նախկինում կատարված մասնագիտական ուսումնասիրությունները չեն ունեցել այն մեծ առավելությունը, ինչը կա այսօր՝ պայմանավորված թվայնացման լայնածավալ աշխատանքներով: Որպես օրինակ՝ նշենք «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» մատենագիտությունը, ուր առկա են բողոքական քարոզիչների՝ Շուշիում հրատարակած 23 անուն գրքերի մատենագիտական նկարագրությունները: Սակայն սույն մատենագիտությունը կազմող Հայկ Դավթյանը մի դեպքում նույն գիրքը նկարագրել է երկու անգամ՝ տարբեր թվականներով, մյուս դեպքում՝ երկու գրքերի նկարագրությունը կատարելիս հղում է կատարել Արսեն Ղազիկյանի հաղորդած տեղեկություններին, որոնց նկատմամբ նա ունեցել է արդարացի կասկածներ (ԴԱՎԹՅԱՆ 1967, 191, նկարագրության Հ^մր 757 և 758): Ստացվում է, որ իր մատենագիտության մեջ Հայկ Դավթյանը, ըստ էության, ներկայացնում է բողոքական քարոզիչների՝ Շուշիում տպագրած 29 անուն հայերեն հրատարակություններից 20-ի մատենագիտական նկարագրությունը:

Երկու հրատարակության տարեթվի ճշգրտում

Բողոքական քարոզիչների կողմից Շուշիում հրատարակված «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» և «Կարճառօտ աղօթքներ շա-

բաթի ամեն մեկ օրին համար» գրքույկների տպագրության թվականները ճշգրտման կարիք ունեն: Այսպես, «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» մատենագիտության մեջ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկն ունի երկու նկարագրություն. մի դեպքում Հ^մ 417 նկարագրության մեջ՝ 1822 թ. հրատարակված գրքերի շարքում, մեկ այլ դեպքում՝ Հ^մ 761 նկարագրության մեջ՝ 1832 թ. հրատարակված գրքերի շարքում: Իսկ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամեն մեկ օրին համար» գրքույկն ունի մեկ նկարագրություն (Հ^մ 416), որը ևս հայտնվել է 1822 թ. հրատարակված գրքերի շարքում: Սակայն այս գրքույկների տպագրության թվականի մասին Հ. Դավթյանն անվանաթերթերի վրա նշված թվականները ստույգ չի համարել՝ բերելով մի քանի հիմնավորումներ: Համադրելով փաստերը՝ նա եզրակացրել է, որ հիշյալ գրքույկներն ամենայն հավանականությամբ տպագրվել են 1832 թ., իսկ անվանաթերթի վրա նշված 1822-ը պարզապես վրիպակ է կամ էլ հրատարակիչները միտումնավոր են այդ թվականը դրել (ԴԱՎԹՅԱՆ 1967, 106-107, նկարագրության Հ^մ 416 և 417):

Հ. Դավթյանի կատարած հետազոտությունից ավելի քան կես դար անց մեզ հաջողվեց պարզել հետևյալը: Նախ, այսօր Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետ՝ ՄՄ) պահվում է «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի երեք օրինակ, որոնցից մեկի (ԴԱՎԹՅԱՆ 1967, 107, նկարագրությունն Հ^մ 417 [դասիչը՝ 9352]) անվանաթերթի վրա տպագրության թվական է հիշատակված՝ 1822-ը, երկրորդի (ԴԱՎԹՅԱՆ 1967, 191, նկարագրություն Հ^մ 761 [իին դասիչը՝ 36437, նոր դասիչը՝ 16258]) անվանաթերթի վրա՝ 1832-ը, իսկ երրորդ օրինակի անվանաթերթի վրա ([դասիչը՝ 9353], հիշատակված չէ Հ. Դավթյանի կազմած մատենագիտության մեջ) տպագրության թվական է նշված կրկին 1832-ը: ՄՄ-ի երեք օրինակները համեմատելիս տեսնում ենք, որ դրանք չունեն բնագրային և տպագրական տարբերություններ՝ բացառությամբ կազմերի գույնի և վերջերեսի պատկերների: Ամենայն հավանականությամբ, այս տարբերությունից էլ ելնելով՝ Հ. Դավթյանը կարծել է, որ ՄՄ-ում պահվող սույն գրքույկի երեք օրինակներից առաջին երկուսն առանձին հրատարակություններ են: Նկատենք, որ «Տասն եւ վեց կարճառօտ քա-

րոզներ» գրքույկի մի օրինակ էլ (անվանաթերթի վրա՝ 1822) պահվում է Վրաստանի պատմության պետական թանգարանում (այսուհետ՝ ՎՊՊԹ): Ավելին, այս գրքույկի մեկ այլ օրինակ (անվանաթերթի վրա՝ 1832) մեզ հաջողվեց գտնել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում (այսուհետ՝ ՆՋԱՎ): Հետաքրքրական է, որ վերջերս ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուում հայտնաբերվեց այս գրքույկի ևս մեկ օրինակ (անվանաթերթի վրա՝ 1832): Ստացվում է, որ սույն գրքույկի՝ մեզ հասու երկու օրինակի անվանաթերթի վրա առկա է 1822 թ., իսկ մյուս չորսի անվանաթերթերի վրա՝ 1832 թ.: Վերոհիշյալ գրքույկի վեց օրինակները համեմատելիս որևէ բնագրային և տպագրական տարբերություններ չեն նկատվում: «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի՝ 1832 թվականով հանդիպող չորս օրինակներից կարելի է սխալմամբ ենթադրել, որ գրքույկը տպագրվել է հենց 1832 թ.:

Նշենք, որ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկի՝ մեզ հայտնի միակ օրինակը, որը և նկարագրել է Հ. Դավթյանը, պահվում է ՎՊՊԹ-ում (ԴԱՎԹՅԱՆ 1967, 106, նկարագրության Հ^մ 416):

Շուշիի բողոքական քարոզիչները 1830–1840 թթ. գրքեր են հրատարակել նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում՝ որոշ դեպքերում վերահրատարակելով Շուշիի իրենց տպագրություններից մի քանիսը: Շուշիում բողոքական քարոզիչների գործունեությունը կասեցնելուց հետո՝ 1837 թ., նրանցից ոմանք տեղափոխվել են Հնդկաստան, և Շուշիի որոշ հրատարակություններ վերատպել բողոքական քարոզիչների «Մկրտիչ Միսիոնարաց» տպարանում, որը գործել է Կալկաթայում 1830-ական թվականների սկզբից մինչև 1865 թ.: Այդ ընթացքում այստեղ տպագրվել են բազմաթիվ փոքրածավալ հրատարակություններ¹, որոնք առավելապես ունեն կրոնաբարոյական ուղղվածություն (ԻՐԱԶԵԿ 1986, 432): Նկատենք, որ Շուշիում

¹ Այս գրքերից որոշները ներառված չեն «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» մատենագիտության մեջ, իսկ դրանց մասին առաջին անգամ հանգամանորեն ներկայացրել է Լ. Մինասյանը (տե՛ս ՄԻՆԱՍԵԱՆ 1970, 78–79):

բողոքականների հրատարակած գրքերն ազդեցություն են ունեցել Շուշիից դուրս գործող հայկական և օտար² տպարանների վրա:

Այս տպարանում հրատարակված գրքերի օրինակներն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկը այստեղ վերատպվել է 1839 թ., որի անվանաթերթի վրա կարդում ենք. «Ի Շուշի յամի Տեառն 1833»: Այսինքն՝ այդ գրքույկի մեկ այլ վերահրատարակության մեջ շատ հստակ նշվում է նախորդ հրատարակության տպագրության վայրը և թվականը: Որպես հավելում՝ բերենք ևս մեկ փաստ, որը հաստատում է սույն գրքույկի՝ 1833 թ. տպագրված լինելու հանգամանքը: Այսպես, «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի օրինակների վերջում առկա վաճառվող գրքերի ցանկում³ բերված են 1833 թ. Շուշիում տպագրված գրքերի վերնագրերը ևս: Սա ինքնին խոսում է այն մասին, որ այն չէր կարող տպված լինել 1832 թ.: Ավելին, ուսումնասիրելով 1833 թ. Շուշիում տպագրված այլ հրատարակություններում առկա ցանկերը՝ կարող ենք հաստատել, որ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ»

² Մոսկվայից և Կալկաթայից բացի, Շուշիի բողոքականները գրքեր են հրատարակել Ջմյունիայի ամերիկյան բողոքական քարոզիչների տպարանում: Դրանցից մեզ հետաքրքրում է հատկապես 1843 թ. աշխարհաբար արևելահայերենով տպագրված Սաղմոսարանը՝ «Գիրք սաղմոսաց յեբրայական բնագրէ ի հասարակ լեզու հայոց թարգմանեալ» (Ջմյունիա, տպ. Կուլիէլմոս Կրիֆիթի, 1843), որը չի տարբերվում Շուշիում բողոքական քարոզիչների տպագրած գրքերի լեզվից: Երբ Շուշիում դադարեցված էր բողոքական քարոզիչների գործունեությունը, այս Սաղմոսարանը քարոզիչները փորձել են հրատարակել 1841 թ. Մոսկվայում, բայց քանի որ դա չի իրագործվել, այն տպագրել են 1843 թ. Ջմյունիայում:

³ 1832–1833 թթ. Շուշիում բողոքական քարոզիչների տպագրած որոշ գրքերի վերջում հանդիպում ենք վաճառվող գրքերի՝ համառոտ վերնագրերով ցանկերի, որոնց նախորդում է «Շուշի բերդումն աստարանական ժողովքի տան մէջն էս հետևող գրեանքս էլ ծախվում են» սկսվածքը: Ցանկերում հիշատակված գրքերը, բացառությամբ առաջինի («Նոր Կտակարան տպեալ ի Վենետիկ»), բողոքական քարոզիչները հիմնականում տպագրել են Շուշիում, իսկ մնացածը՝ Մոսկվայում: Ցանկերում տեղ գտած գրքերի գները, տպագրության տարեթիվը, վայրը, տպարանը բացակայում են, յուրաքանչյուր գրքի մասին տեղեկությունն էլ հակիրճ է (վերնագիր, լեզվական բնորոշում՝ «գրաբառ», «աշխարհաբառ», «ի գրաբառէ յաշխարհաբառ»):

գրքույկը տպագրվել է «Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար» (1833) գրքույկից հետո և «Քարոզ Աագ Ուրբաթ օրին համար...» (1833) գրքույկից առաջ:

«Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկը վերատպվել է Կալկաթայի նույն տպարանում 1841 թ., որի անվանաթերթի վրա գրված է. «Առաջին անգամ տպեալ յամի Տեառն 1832 ի Շուշի»: Համեմատելով 1832–1833 թթ. Շուշիում տպագրված այլ հրատարակություններում առկա ցանկերը՝ կարող ենք արձանագրել, որ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկը տպագրվել է «Ժամանակի վերջն» (1832) գրքույկից հետո և «Մեղքի մեծանալոյն և զօրանալոյն համար» (1833) գրքույկից առաջ:

Հետաքրքրական է, որ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» և «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկները 1840 թ. վերահրատարակվել են նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում, որոնց անվանաթերթերի վրա առկա է «երկրորդ տպագրութիւն» հիշատակությունը: Այս հանգամանքը փաստում է, որ թե՛ Մոսկվայում, թե՛ Կալկաթայում սույն գրքույկների վերատպություններն անհայտ էին տեղի բողոքական քարոզիչներին: Հակառակ դեպքում, դրանց անվանաթերթերի վրա արտացոլված կլինէր այս իրողությունը:

Ինչևէ, փաստացի այս գրքույկները Շուշիում չէին կարող ունենալ տարբեր տպագրություններ, քանի որ երկու դեպքում էլ, որպես երկրորդ հրատարակություն, մի դեպքում հիշատակված է Կալկաթայի տպագրությունը, իսկ մյուս դեպքում՝ Մոսկվայինը: Անհասկանալի է մնում, թե, օրինակ, «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի՝ մեզ հասու վեց օրինակների վրա ինչպե՛ս են տեղ գտել տպագրության տարեթվի ոչ ստույգ տվյալներ, ինչն արդեն իսկ մտորելու տեղիք է տալիս, թե բողոքական քարոզիչները, տվյալ դեպքում՝ Շուշիի տպարանի երկրորդ տպագրիչ Յոհան Քրիստիան Ֆրիդրիխ Յուդթը (ՊԵՏՈՅԱՆ 2021, 51), ի՞նչ նկատառումներով է գնացել նման քայլի: Դժվարանում ենք ասել՝ տպագրության թվականների այս անհամապատասխանությունը զուտ վրիպակի՞ արդյունք էր, թե՛ կանխամտածված քայլ:

Ամփոփում

Այսպիսով՝ կարող ենք պնդել, որ Շուշիում հրատարակված «Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար» գրքույկի տպագրության թվականը պետք է ընդունել 1832 թ., իսկ «Տասն եւ վեց կարճառոտ քարոզներ» գրքույկինը՝ 1833 թ.: Ըստ այդմ՝ դրանց համար պետք է կատարվեն մատենագիտական նոր նկարագրություններ:

Օգրագործված գրականության ցանկ (References)

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (կազմ.) (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին. մատենագիտություն*, Երևան, Երևան, ՀՍՍՀ Այ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 536, 3 [Davtyan, H. (comp.) (1967), *Hay Girky 1801-1850: Matenagitutyun*, Yerevan, Public Library of Armenian SSR after A. Myasnikyan, 536, 3];

Ժամանակի վերջն (1832), Շուշի, 45,1 [Zhamanaki Verjn (1832), Shushi, 45,1];

ԻՐԱԶԵԿ 1986 – Իրազեկ, Յ. (1986), *Պատմություն հնդկահայ տպագրութեան*, Անթիլիաս, Հրատարակչություն Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 560 [Irazek, H. (1986), *Patmutyun Hndkayah Tragrutyun*, Antelias, Publication of Catholicosate of Cilicia, 560];

Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար (1832), Շուշի, Ի տպարանի Մկրտող Միսոնարաց, 74 [*Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar* (1832), Shushi, Printing House of Mkrtogh Misonarats, 74];

Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար (1840), Մոսկվա, Ի տպագրատան Ճեմարանի Տեանն Լազարեանց, 58 [*Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar* (1832), Moscow, Printing House of Lazarian Seminary, 58];

Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար (1841), Կալկաթա, Ի տպարանի Մկրտող Միսոնարաց, 36 [*Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar* (1832), Calcutta, Printing House of Mkrtogh Misonarats, 36];

Մեղքի մեծանալոյն և զօրանալոյն համար (1833), Շուշի, 26 [*The Progress of Sin* (1832), Shushi, 26];

ՄԻՆԱՍԵԱՆ 1970 – Մինասեան, Լ. (1970), «Հայ տպագիր գիրքը 1801–1850 թուականներին» եւ մի քանի նորահայտ գրքեր, *Սիոն* (Երուսաղէմ), 1–2(ԽԴ.), 78–79 [Minasyan, L. (1970), "Hay Tpagir Girky 1801-1850 Tvakannerin" ev Mi Qani Norahayt Grqer, *Sion* (Jerusalem), 1–2(44), 78–79];

ՊԵՏՈՅԱՆ 2020ա – Պետոյան, Ս. (2020), Նոր էջեր 1828–1935 թթ. Շուշիում տպագրված գրքերի պատմությունից, *Սյունիք. հայագիտական տարեգիրք* (Երևան), 1(14), 69–87 [Petoyan, S. (2020), *New Pages from the History of the*

Books Printed in Shushi in 1828-1835, *Syunik: Armenological Yearbook* (Yerevan), 1(14), 69-87];

ՊԵՏՈՅԱՆ 2020թ – Պետոյան, Ս. (2020), Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, *Բանբեր Մատենադարանի* (Երևան), 30, 302–317 [Petoyan, S. (2020), New Facts about the First Books Published in Shushi, *Banber Matenadaran* (Yerevan), 30, 302-317];

ՊԵՏՈՅԱՆ 2021 – Պետոյան, Ս. (2021), Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.), *Հայագիտության հարցեր* (Երևան), 1(22), 45–66 [Petoyan, S. (2021), History of the Printing House in Shushi, Founded by Basel Protestant Missionaries (1827-1835), *Armenological Issues* (Yerevan), 1(22), 45-66];

Վարդապետությունի Քրիստոսի խաչին համար (1833), Շուշի, 57 [*Vardapetutyun Qristosi khachin hamar* (1833), Shushi, 57];

Տասն եւ վեց կարճառօր քարոզներ [1833], Շուշի, 66,2 [*Sixteen short sermons* [1833], Shushi, 66,2];

Տասն եւ վեց կարճառօր քարոզներ (1839), Կալկաթա, 56 [*Tasn ev Vets Karcharot Qarozner* (1839), Calcutta, 56];

Տասն եւ վեց կարճառօր քարոզներ (1840), Մոսկվա, 60 [*Tasn ev Vets Karcharot Qarozner* (1840), Calcutta, 60];

Քարոզ Ասագ Ուրբաթ օրին համար մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի Չարչարանաց եւ մահուան վերայ (1833), Շուշի, 32,2 [*Qaroz Avag Urbat Orin Hamar Mer Prkich Hisusi Qristosi Charcharanats ev mahvan veray* (1833), Shushi, 32,2].

BIBLIOGRAPHICAL CORRECTIONS ON TWO PUBLICATIONS PRINTED IN SHUSHI IN 1832–1833.

STYOPA PETOYAN

Institute of History of NAS of RA

Ph. D. in History

Keywords: Shushi, History of Armenian Printing, Printing house, Booklet, Bibliography, Protestant Missionaries, Publishing.

New bibliographical descriptions should be made by the bibliographers of the Armenian book for the aforementioned two booklets published by the protestant preachers in Shushi. Therefore, based on the current study, we can insist that the publication date of the booklet "Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar" («*Կարճառօր աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար*») published in Shushi should be 1832, and the booklet "Tasn ev Vets' Karcharot Qarozner" («*Տասն եւ վեց կարճառօր քարոզներ*») – 1833.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ*

ՀՏԴ: 02(=919.81)+655.4/.5

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-57

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Քանաասիրական գիտությունների թեկնածու

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Հայերեն տպագիր ժառանգության մի ստվար հատվածը հանգրվանել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ աշխարհի ամենատարբեր երկրների գրադարաններում կամ անհատների անձնական հավաքածուներում: Այդ տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումն այսօր գերակա խնդիրներից է: Սույն հետազոտության նպատակն է ընդգծել այս ուղղությամբ աշխատանքների կազմակերպման կարևորությունը, ներկայացնել այն հիմնական խնդիրները, որոնք առաջանում են որոնողական և հետազոտական աշխատանքների ընթացքում, հնարավորության դեպքում կազմակերպել այդ ժառանգության վերադարձը հայրենիք:

A significant part of the Armenian printed heritage has been preserved outside the borders of Armenian Republic, in the libraries of various countries of the world or in the personal collections of individuals. Discovering and preserving this printed heritage is one of the top priorities for us. The goal of this research is to emphasize the importance of organizing works in this direction, to present the main problems that arise during these activities, and if possible to organize the return of such treasures to the homeland.

Քանախի բառեր¹ հայկական տպագրություն, մշակութային ժառանգություն, թվայնացում, մատենագիտություն, հայերեն տպագիր գրքեր և պարբերականներ, հավաքածուներ, երկարատև պահպանություն:

* Հոդվածը ներկայացվել է 15.09.2023, գրախոսվել է 08.10.2023, ընդունվել է տպագրության 02.12.2023:

The article was submitted on 15.09.2023, reviewed on 08.10.2023, accepted for publication on 02.12.2023.

Ինչպես հղել՝ Գրիգորյան Մ. (2023), Հայ տպագիր ժառանգության հետքերով, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 57-68. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-57](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-57)

How to cite (APA style): Grigoryan M. (2023), Following trages of Armenian Printed Heritage, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 57-68. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-57](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-57)

Ներածություն

Արտերկրում հայ տպագիր ժառանգության պահպանությունն ունի ռազմավարական նշանակություն, և ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել որոնողական աշխատանքներ՝ ավանդական և առցանց տարբերակներով, ցուցակագրել հայերեն տպագիր գրքերն ու պարբերականները, հնարավորության դեպքում կազմել մատենագիտական ցանկեր, ուսումնասիրել Սփյուռքի տարբեր օջախներում պահվող անձնական հավաքածուները, կազմակերպել վտանգված հավաքածուների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն, լուծել օրենսդրական և հարկային այն բոլոր խոչընդոտները, որոնք առաջանում են տեղափոխման ժամանակ:

Սփյուռքում հայերեն տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումը հնարավոր է միայն անհատների, գիտամշակութային տարբեր կառույցների, ՀՀ պետական մարմինների, դեսպանատների, հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերի շնորհիվ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է մշակել պետական քաղաքականություն, հակառակ դեպքում աշխատանքները համակարգված և նպատակային բնույթ չեն կրի:

Սփյուռքահայ տպագիր ժառանգության պահպանության առանցքային խնդիրները

Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը պայքարել է գոյատևման, ազգային արժեքների պահպանման համար, գիրքը և գիրը դարձել են կարևոր ազդակներ, անցյալը ներկային կապող և ապագային փոխանցող կամուրջներ: Գրքի, գրի պատմության համատեքստում միանշանակ առանձնացել է հայ տպագիր ժառան-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

գությունը, որը սկզբնավորման օրվանից ստանձնել է տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումները ապագային փոխանցելու բարդ գործառույթը (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015, 55):

Վերջին տարիներին հայերեն տպագիր նյութերի հայտնաբերման ուղղությամբ իրականացվում են հետազոտական տարաբնույթ աշխատանքներ, ինչը հնարավորություն է տալիս նաև ուսումնասիրել դրանք: Աշխատանքների արդյունքում ծագում են նաև այդ նյութերի մշակման, պահպանության խնդիրներ, որոնց լուծումն առաջնահերթություն է դարձել մշակութային ժառանգության պահպանության տեսանկյունից: Առ այսօր իրականացված մատենագիտական որոնումներն ու հետազոտական աշխատանքները փաստում են, որ հայ տպագիր ժառանգության մի ստվար հատվածը հանգրվանել է աշխարհի ամենատարբեր երկրների գրադարաններում, սփյուռքահայ գիտական, մշակութային կենտրոններում կամ անհատների անձնական հավաքածուներում: Այդ ժառանգության հայտնաբերումն ու հանրայնացումը խիստ կարևոր է, շատ ավելի կարևոր է դրա պահպանությունը:

Հավաքածուների ուսումնասիրությունը՝ որպես ազգային մշակութային ժառանգության պահպանման գերակա ուղղություն կարևորելուց առաջ նախ պետք է հասկանալ՝ ինչպե՞ս և ինչու՞ է այն հայտնվել աշխարհի ամենատարբեր անկյուններում: Եվ այսպես.

ա. Հայ տպագրության պատմության ձևավորումը տեղի է ունեցել Հայաստանի սահմաններից դուրս: Հայաստանի տարածքում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը թույլ չի տվել, որ հայկական տպագրությունը սկզբնավորվի հենց այս տարածաշրջանում: Հակոբ Մեղապարտից հետո հայ գրքարվեստի պատմությունը բուռն զարգացում է ապրել Վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Լվովում և այլուր: 17-րդ դարում հայկական գրատպությունը ընդլայնել են աշխարհագրական տարածքները: 18-րդ դարավերջից տպագրական արվեստը սկզբնավորվել և զարգացել է նաև Հայաստանում

անգամ հասարակական, քաղաքական բարդ խնդիրների համատեքստում (ԻՇԽԱՆՅԱՆ 1981, 18):

բ. Սոցիալ-տնտեսական տարաբնույթ խնդիրների պատճառով 17-րդ դարից մեծ չափերի է հասել արտագաղթը: Հայերը հաստատվել են աշխարհի ամենատարբեր անկյուններում և ստեղծել հայկական միջավայր՝ կյանքը շարունակելու համար: Դիմագրավելով օտարին ճուլվելու վտանգին՝ նրանք հիմնել են եկեղեցի, դպրոց, տպարան և մշակութային այլ կառույցներ, որոնք թույլ են տվել չհեռանալ ազգային մշակույթից, հավատից, լեզվից: Աշխարհի տարբեր վայրերում ձևավորված հայկական գաղթօջախները յուրացրել են տվյալ երկրի ձեռքբերումները, մասնակցել այդ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարցերի կարգավորման և զարգացման գործընթացին, այդ ամենը ծառայեցրել հայ ժողովրդի և սեփական գաղթօջախի շահերին: Որոշ դեպքերում հայերն ավելի շուտ են յուրացրել այլ երկրների նորարարությունները և տեղայնացրել սեփական գաղթօջախում կամ այն երկրում, ուր ապրում են: Փաստենք հետևյալը. Աբգար Դ-ի Թոխաթեցին Կ. Պոլսում հայերեն գիրք է հրատարակել դեռևս 1568 թ, իսկ նույն Կ. Պոլսում թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է 1727 թ.: Միջին Արևելքի առաջին տպարանը հիմնվել է Լիբանանի Քազահիա վանքում, ուր 1610 թ. տպագրվել է ասորերեն «Սաղմոսարան» (ՄԻՆԱՍԵԱՆ 1997, 546), որին հաջորդել է Իրանում տպագրված հայերեն առաջին գիրքը՝ 1638 թ., վերջինիս էլ՝ պարսկերեն առաջին տպագիր գիրքը՝ 1830 թ.: Փաստերը վկայում են, թե ինչ որքան կարևոր է եղել գրքի տպագրությունը հայ իրականության մեջ (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015, 57):

գ. Տպագիր ժառանգության ստեղծման և տարածման համար ազդակ էր նաև գրավաճառ ցանցի առկայությունը: 16-րդ դարից սկսած՝ հայ վաճառականները քաջ գիտակցել են, թե ինչ կարևոր և թանկարժեք իրողություն է որևէ նյութի տպագրությունը: Չստվերելով խնդրի բարոյական կողմը՝ նշենք, որ տպագիր ցանկացած նյութ նրանք դիտարկել են նաև ֆինանսական տեսանկյունից՝ որպես եկա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

մուտ ապահովող աղբյուր: Հնատիպ, վաղ շրջանի տպագիր նյութերի հիշատակարանների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գրքերի պատվիրատուները կամ բարերարները եղել են հենց հայ վաճառականները (ԴԱԴԱՅԱՆ 2009, 128): Իրենց իսկ նախաձեռնությամբ տպագրված գրքերը, հետագայում նաև մամուլը, վաճառելու կամ նվիրելու նպատակով նրանք տեղափոխել են այլևայլ երկրներ, կազմակերպել տարբեր նյութերի վերավաճառքը՝ նպաստելով գրավաճառ ցանցի աշխարհագրական սահմանների ընդլայնմանը: Գրավաճառ ցանցն ակտիվացել է հատկապես 19-րդ դարից, երբ կատարելագործվել են տպագրական սարքավորումները, հնարավորություն է ստեղծվել ավելի կարճ ժամանակահատվածում տպագրել ավելի շատ նյութ: Տպարաններին կից կամ առանձին ստեղծվել են գրատներ, գրավաճառանոցներ, գրադարան-ընթերցարաններ, կիրառելի է դարձել բաժանորդագրությունը (ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ 2021, 125-132): Այս ամենը նպաստել է, որ աշխարհի տարբեր ծայրերում տպագրված նյութերը հասանելի լինեն նաև մյուսներին: 19-րդ դարում ակտիվ գրավաճառ կենտրոններ են համարվել Թիֆլիսը, Մոսկվան, Ս. Պետերբուրգը, Կ. Պոլիսը, Շուշին, Վենետիկը, Վիեննան, Փարիզը, Նյու Յորքը և այլն: Շարքը բավական ընդգրկուն է, պարզապես պետք է ընդգծել, որ գրավաճառ ցանցի ակտիվ գործարկման արդյունքում հայ տպագիր գիրքը կամ մամուլը հայտնվել է աշխարհի ամենատարբեր վայրերում՝ հանգրվանելով անհատական հավաքածուներում կամ գրադարաններում (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 1):

դ. Հայ տպագիր ժառանգության տարագրությանը միանշանակ նպաստել են պատերազմները, որոնց, ինչպես նաև պարբերաբար իրականացվող կոտորածների, 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանության հետևանքով թալանվել են հոգևոր և մշակութային կենտրոնները, հարուստ հավաքածուներ ունեցող անհատների տները: Թալանված ողջ ժառանգությունը կամ հայտնվել է սովյալ երկրի գրադարաններում, կամ վաճառվել աշխարհի տարբեր շուկաներում՝

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

նպաստելով հայ տպագիր ժառանգության տարագրության ծավալի աճին և սահմանների ընդլայնմանը:

Հակիրճ ներկայացնելով հայ տպագիր ժառանգության տարածման պատճառները՝ ընդգծենք, որ արտերկրում այդ ժառանգության պահպանության ուղղությամբ պետք է իրականացնել մշակված, համակարգված գործունեություն: Իհարկե, ցանկալի կլինի այս ուղղությամբ մշակել հայեցակարգ, ինչը հնարավորություն կտա խնդիրը դիտարկել փուլային զարգացումներով, սակայն քանի որ առ այսօր պետական որևէ կոնկրետ քաղաքականություն չի իրականացվել, և խնդրին անդրադարձել են միայն ոլորտի որոշ մասնագետներ, ուրեմն խոսել հայեցակարգի մասին դեռ վաղ է: Մյուս կողմից՝ նմանատիպ վերլուծությունները կարող են դառնալ ապագայի հայեցակարգի առանցքը:

Անհրաժեշտ է հստակ պատկերացնել՝ ի՞նչը պահպանել, ինչպե՞ս պահպանել, ո՞ր ժամանակահատվածին ուշադրություն դարձնել, կարևորել տպագիր միավո՞րը, թե տպագիր անունը: Այս հարցադրումները խիստ կարևոր են՝ խնդիրներին հիմնավոր լուծումներ տալու, հետագայում նաև հայեցակարգ մշակելու համար:

Միանշանակ պետք է պահպանել արտերկրում տպագրված և պահպանվող հայատառ ժառանգությանը՝ կարևորելով տվյալ նյութի տպագրության ժամանակահատվածը: Մինչ այս իրականացված հետազոտական ուսումնասիրություններից պարզ է, որ հայ հնատիպ և վաղ շրջանի բազմաթիվ տպագրություններ ֆիզիկապես հասանելի չեն. պահպանվել են միայն որոշ մատենագիտական տվյալեր (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 864, ԴԱՎԹՅԱՆ 1967, 536): Նմանատիպ հրատարակությունների հայտնաբերումը հնարավորություն կտա ամբողջացնել հայ տպագրության պատմությունը: 1851 թվականից հետո ընդլայնվել են հայկական տպագրության աշխարհագրական սահմանները, ծավալը և տեսականին, գործոններ, որոնք ավելի են բարդացրել դրանց որոնման և ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքները: Հայ տպագրության պատմության որոշ շրջափուլերում

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

առաջացել են արհեստական բարդություններ, ինչպես օրինակ գրաքննության գործոնը ցարական Ռուսաստանում կամ Օսմանյան Թուրքիայում: Որոշ դեպքերում առգրավվել կամ ոչնչացվել է ամբողջ տպաքանակը կամ պահպանվել է ընդամենը մի քանի օրինակ:

Խիստ կարևոր է հստակեցնել՝ պահպանել տպագիր միավորը, թե անունը: Հարցը բավական տարողունակ է և պետք է ունենա տարբերակված լուծումներ՝ պայմանավորված տարբեր գործոններով: Հայ տպագրության մեջ տպագրական արվեստով, բարդությամբ, հիշատակարաններով առավել կարևորվում են հնատիպ և վաղ շրջանի հրատարակությունները: Նշանակում է՝ մոտեցումը պետք է լինի կոնկրետ և որոշակի. պետք է պահպանել յուրաքանչյուր տպագիր միավորը: 19-րդ դարի երկրորդ կեսից հետո պետք է ուշադրությունը կենտրոնացնել տպագիր անունի պահպանության վրա, քանի որ տպագրական սարքավորումների կատարելագործման, մատչելիության, ծավալի և հնարավորությունների աճի շնորհիվ ֆիզիկապես հնարավոր չէ յուրաքանչյուր միավորի պահպանությունը: Բացառություն են կազմում այն հրատարակությունները, որոնք ունեն արժեքավոր հիշատակություններ, ինքնագրեր, ընծայագրեր, յուրահատուկ են տպագրարվեստի տեսանկյունից:

Տպագիր ժառանգության հետ աշխատանքը ենթադրում է նյութի հայտնաբերում, ուսումնասիրում, պահպանում, հանրայնացում: Արտերկրի հայատառ տպագիր ժառանգության պարագայում այս գործառույթներն ավելի են արժևորվում: Հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոններն ու գործառույթները՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայերեն տպագիր ժառանգության պահպանության ուղղությամբ անհրաժեշտ է.

ա. Իրականացնել որոնողական աշխատանքներ՝ ավանդական և առցանց տարբերակներով: Որոնողական աշխատանքները պսակվում են հաջողությամբ, քանի որ ներկայումս՝ համընդհանուր թվայնացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում, աշխարհի բոլոր խոշորագույն գրադարաններ-

րը թվայնացնում են գրքերը. դրանց մեջ առկա են նաև հայերեն տպագրություններ: Հայտնաբերվում են այնպիսի տպագիր նյութեր, որոնք չեն ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում և ֆիզիկապես բացակայում են հայաստանյան գրադարաններում: Հետագայում նմանատիպ միավորները փոխանցվում են Հայաստանին նվիրատվության կամ գնումների ձևաչափով կամ դրանց թվային տարբերակները հարստացնում են շտեմարանները¹: Օրինակ, 1512-1800 թթ. տպագրված հայերեն հնատիպ գրքի շտեմարանը աշխարհի տարբեր երկրների գրադարաններից և հայագիտական կենտրոններից կատարված ներբեռնումների շնորհիվ լրացվել է Հայաստանում ֆիզիկապես բացակա գրքերի թվային տարբերակներով (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2016): Գրքերի թվային տարբերակներ են տրամադրվել Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Զմմառի վանքի և այլ կենտրոնների գրադարաններից: Ստամբուլի քաղաքապետարանի գրադարանում կատարված ուսումնասիրության արդյունքում լրացվել է հինգ հնատիպ գրքի թվային տարբերակ (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 1-3): 1851 թվականից հետո առկա տպագիր ժառանգության ուղղությամբ ևս իրականացվում են նմանատիպ աշխատանքներ, սակայն այս շրջանից սկսած հայկական տպագրության սահմանների ընդլայնմամբ և ծավալի աճով պայմանավորված ընդլայնվում են որոնողական և հետազոտական աշխատանքների սահմանները:

Միայն թվայնացումը բավարար չէ պատկերն ամբողջացնելու համար, քանի որ դեռևս կան երկրներ, որոնք տարբեր պատճառներով մասամբ են հանրայնացնում իրենց գրադարանային հավաքածուները: Անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրություններ

¹ Տե՛ս «Համահայկական թվանշային գրադարան» <https://arar.sci.am/dlibra?language=hye> (11.09.2023), «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ» <https://tert.nla.am/> (11.09.2023), «Հայ գիրք» շտեմարան <https://haygirk.nla.am/> (11.09.2023):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

կատարել տեղում՝ հաղթահարելով տվյալ երկրների կողմից առաջացրած օրենսդրական կամ արհեստածին այլ խոչընդոտները:

բ. Ցուցակագրել հայերեն տպագիր գրքերն ու պարբերականները, հնարավորության դեպքում կազմել մատենագիտական ցանկեր: Առ այսօր կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ կան հայերեն գրքեր և պարբերականներ, որոնք չեն ներառվել հայ գրքի և պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում, որովհետև ժամանակին չեն եղել այն հնարավորությունները, որոնք կան այսօր: Որոշ գրադարաններ կամ հավաքածուներ ունեն նմանատիպ ցանկեր, սակայն դրանք կազմված են սխալներով: Մինչդեռ յուրաքանչյուր գրադարանի կամ հավաքածուի հայերեն գրքերի կամ պարբերականների ցուցակավորումը հնարավորություն կտա ամրագրելու, թե որքան է կազմում այդ տպագիր ժառանգությունը, ինչ վիճակում է գտնվում և ինչքանով է հայտնի հայ և օտարազգի հետազոտողին: Լավագույն օրինակը 2021 թ. ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի կողմից իրականացված մի ծրագիր էր, որի շրջանակում ուսումնասիրվեց Ստամբուլի քաղաքապետարանի գրադարանի հայերեն հավաքածուն: Հայտնաբերված նորանուն գրքերի թվային տարբերակները ներառվեցին նոր ստեղծված շտեմարանի մեջ, իսկ մատենագիտությունն ամբողջությամբ ներկայացրեց հավաքածուն, առկա միավորների ֆիզիկական վիճակը, յուրաքանչյուր միավորի առանձնահատկությունը (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 544):

գ. Ուսումնասիրել հատկապես Սփյուռքի տարբեր օջախներում պահվող անձնական հավաքածուները: Քաղաքական, պատմական, հասարակական տարբեր պատճառներով հայ տպագիր ժառանգության արժեքավոր մի հատվածը հանգրվանել է մասնավոր հավաքածուներում, որտեղ չկան պահպանության ճիշտ պայմաններ և համապատասխան ցուցակներ: Անհրաժեշտ է հայտնաբերել, ուսումնասիրել նմանատիպ հավաքածուները, գրանցել դրանք, որ-

պեսզի հետագայում հնարավոր լինի վերահսկել այդ հավաքածուների շարժը:

դ. Կազմակերպել վտանգված հավաքածուների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն: Փաստ է, որ հատկապես այն պետություններում, ուր վերջին տասնամյակներում պատերազմների պատճառով հայերը ստիպված են եղել լքել երկիրը, պատերազմական գոտում են հայտնվել բազմաթիվ հայերեն տպագիր գրքեր և պարբերականներ, որոնց մեջ առկա են նաև եզակի հրատարակություններ: Նմանատիպ գրքերի ճակատագիրն այսօր անհայտ է կամ վտանգված: Նրանց տեղափոխումը հայրենիք հրատապ է, քանի որ կորուստն անդառնալի կարող է լինել:

ե. Լուծել օրենսդրական և հարկային այն բոլոր խոչընդոտները, որոնք առաջանում են տեղափոխման ժամանակ: Բացի վտանգված հավաքածուներից, Սփյուռքում կան նաև անհատներ, որոնք ունեն անձնական եզակի հավաքածուներ, պատրաստ են նվիրել հայաստանյան գրադարաններին, սակայն տեղափոխման հետ կապված առաջանում են օրենսդրական և ֆինանսական լրացուցիչ խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն պետական աջակցության շնորհիվ:

Ամփոփում

Կարծում ենք՝ Սփյուռքում հայերեն տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումը հնարավոր է միայն անհատների, տարբեր կառույցների և պետության համատեղ ջանքերի շնորհիվ: Սփյուռքի տարբեր կառույցներում և անհատների մոտ պահվող հայատառ տպագիր ժառանգության պահպանությունը առաջնահերթություն է և ունի ռազմավարական նշանակություն Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության համատեքստում: Համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում հնարավոր կդառնա այդ տպագիր ժառանգության թվայնացումն ու ուսումնասիրությունը, որոշ չափով նաև՝ այդ ժառանգության ներգաղթը Հայաստան:

Օգտագործված գրականության ցանկ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015 – Գրիգորյան, Մ. (2015), Հայ գիրքը՝ պատմության քառուղիներում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 55-64 [Grigoryan, M. (2015), Armenian Book in the Crossroads of the History, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 2(2), 55-64];

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2016 – Գրիգորյան, Մ. (2016), «Հայ գիրք» շրջմարտնի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը. զեկույց [Grigoryan, M. (2016), *The Status of the Works being carried out Towards the Creation of the "Armenian Book" Database*. Report] <https://arar.sci.am/dlibra/publication/290012/edition/266279/content> (11.09.2023);

ԴԱԴԱՅԱՆ 2009 – Դադայան, Խ. (2009), *Ակնարկներ հայ վաճառականության պատմության*, Երևան, 128 [Dadayan, Kh. (2009), *Essays on the History of Armenian Trade*, Yerevan, 128];

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (կազմ.) (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին. մատենագիտություն*, Երևան, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 536, 3 [Davtyan, H. (comp.) (1967), *Hay Girky 1801-1850: Matenagitutyun*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 536, 3];

ԻՇԽԱՆՅԱՆ 1981 – Իշխանյան, Ռ. (1981), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 152,3 [Ishkhanyan, R. (1981), *Hay Girky 1512-1800 Tvakannerin*, Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 152,3];

ՄԻՆԱՍԵԱՆ 1997 – Մինասեան, Մ. (1997), Հայերէն նորայայտ հնատիպ գրքեր եւ մատենագիտական լրացումներ, *Հասկ. հայագիտական տարեգիրք*, Անթիլիաս, 543-593 [Minasian, M. (1997), Hayeren Norahayt Hnatip Grker ev Matenagitakan Lrats'cumner, *Hask. Hayagitakan Taregirk*, Antelias, 543-593];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Ք., Սավալյան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan, Q., Savalyan, A. (1988), *The Armenian Book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ 2021 – Սուքիասյան, Հ., Պետոյան, Ս. (2021), *Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828-1920 թվականներին*, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 238 [Sukiasyan, H., Petoyan, S.

(2021), *Gratputyuny Arevelyan Hayastanum 1828-1920 Tvakannerin*, Yerevan, Institute of History of NAS RA, 238];

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022 – Վարդանյան, Ա. (կազմ.) (2022), *Հայ գիրքը Թուրքիայում: Պրակ Ա.*, Երևան, Անտարես, XXI, 514, 9 [Vardanyan, A. (2022), *Armenian Book in Turkey, Vol. 1*, Yerevan, Antares, XXI, 514, 9].

**FOLLOWING TRACES OF
ARMENIAN PRINTED HERITAGE**

MAYA GRIGORYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph.D. in Philology

Keywords: Armenian Printing, Cultural Heritage, Digitization, Bibliography, Armenian Printed Books and Periodicals, Collections, Long-Term Preservation.

A large part of the Armenian printed heritage has been preserved outside the borders of Armenia, in the libraries of various countries around the world or in the personal collections of individuals. Finding and preserving this printed heritage is considered a priority today. The purpose of this research is to emphasize the importance of organizing work in this direction, to present the main problems that arise during the search and research work, and if possible, to organize the return of this heritage to the homeland.

In order to protect the Armenian printed heritage abroad, it is necessary to conduct searches with traditional and online options, to list Armenian printed books and periodicals, if possible compile bibliographic lists, to study especially the private collections kept in various centers of the Diaspora, to organize the transfer of endangered collections to the Republic of Armenia, to resolve all legal and tax obstacles that arise during relocation.

The discovery and preservation of Armenian print heritage in the Diaspora is possible only thanks to the joint efforts of individuals, various structures and of the state. We think it is necessary to develop a developed state policy, otherwise the work will not be systematic and purposeful.

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆԸ*

ՀՏԴ: 378(=919.81)(569.3)+655.15
DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-69

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

Հայկազեան Համալսարանի հայկական Սփիուքի
ուսումնասիրության կենտրոնի տնօրէն

Հայկազեան հայագիտական հանդէսի

պատասխանատու խմբագիր

Սուանզի համալսարանի

միջազգային յարաբերութիւնների դոկտոր (Ուէյլզ)

*Բանալի բառեր*¹ Հայկազեան համալսարան, լիբանանահայ մշակոյթ, հրատարակչատուն, հայ տպագրութեան պատմութիւն, մատենագիտութիւն:

Ներածութիւն

7 Յունիս 2011ին, Հայկազեան Համալսարանը պաշտօնապէս կը դիմէր Լիբանանի Հանրապետութեան տեղեկատուութեան նախարարութեան ընդհանուր տնօրէնութեան մամլոյ եւ հանրային հաղորդակցութեան գրասենեակին, որպէսզի արտօնուի հիմնումն ու գործարկումը “Haigazian University Press” հրատարակչատան: Դիմումը կը տեղեկացնէր նաեւ թէ Անդրանիկ Մանուկ Տազէսեանը հրատարակչատան տնօրէն կը կարգուէր, իսկ Շիրակ տպարան հրատարակչատունը իբրեւ տպարան պիտի օգտագործուէր:

* Յօդուածը ներկայացուել է 11.08.2023, գրախօսուել է 21.09.2023, ընդունուել է տպագրութեան 30.11.2023:

The article was submitted on 11.08.2023, reviewed on 21.09.2023, accepted for publication on 30.11.2023.

16 Յուլիս 2011ին, տեղեկատուության նախարար Ուալիտ Տաուք, թիւ 640/2011 որոշումով ընթացք կու տար վերոյիշեալ դիմումին: Լիբանանի պետութեան պաշտօնաթերթը՝ *ժարիփա Րասմիյա*, իր 28 Յուլիս 2011 թիւին 2774րդ էջին վրայ հրատարակելով որոշումը, ի զօրու կը դարձնէր զայն:

Այս գործողութիւններէն միառժամանակ ետք, 17 Մայիս 2012ին կը դիմուէր Լիբանանի մշակոյթի նախարարութեան, ձեռք բերելու համար հրատարակչատան յատուկ ISBN համարանիշը:

Հայկազեան համալսարանի հրատարակչատան (<<<) առաջին գիրքը լոյս կ'ընծայուէր Սեպտեմբեր 2011ին¹:

¹ Համալսարանը նախապէս հրատարակած է շարք մը գիրքեր, ինչպէս՝ 1) *Հայաստանեայց Աւերարանական Եկեղեցին* յօդուածներու ժողովածուն (1986, կազմ. ու խմբ.՝ Երուանդ Հ. Քասունի), լոյս տեսած «Հայկազեան գոլէճի հայագիտական ուսմանց կեդրոն»ի անունով եւ «Հայ աւետարանական հիմնադրամ»ի հրատարակութեամբ: 2) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present- Day Community* (2009, խմբ.՝ դոկտ. Այտա Պուճիգանեան) Հայկազեան համալսարանի եւ Armenian Heritage Press հրատարակութեամբ: Հատորը կ'ամփոփէ 2005ին համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ դոկտ. Արա Սանճեանի ջանքերով կազմակերպուած «Լիբանանի հայերը» գիտաժողովին նիւթերը: 3) *Հայկազեան հայագիտական հանդէսի* առաջին 32 հատորները (1970-2012): 4) *Haigazian University, Golden Jubilee Album (1955-2005)*, (2006, խմբ.՝ Մարիա Պազգալեան): Այս գիրքերուն կողքին համալսարանը հրատարակած է իր դասախօսակազմէն Ֆրիտա Ապս-Հատատի *Introduction to the Field of Social Work: A Middle Eastern Perspective* հատորը 1992ին (Հայկազեան համալսարանական քոլէճ անուան տակ), նոյնի՝ *A Manual for Working with Groups*, 2006ին (Հայկազեան համալսարան անուան տակ), Մկրտիչ Պուլտուքեանի *The Management of Correspondent Banking* հատորին բ. տիպը 2007ին (Հայկազեան համալսարան անուան տակ), դոկտ. Սամիհ Ազարի *Collection of Essays in Economics* հատորը 2007ին (Հայկազեան համալսարան անուան տակ), նոյնի՝ *Collection of Essays in Financial Economics* հատորը 2008ին (Հայկազեան համալսարան անուան տակ), ինչպէս նաեւ Alfred de Zayasի *The Genocide Against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention* հատորին բ. վերամշակուած հրատարակութիւնը 2010ին (Հայկազեան համալսարան անուան տակ):

Առաջին գիրքը՝ *Towards Golgotha*, թարգմանուած եւ ծանօթագրուած էր համալսարանի Արուեստից եւ Գիտութեան բաժանմունքի տեսուչ դոկտ. Արտա Էքմէքճիի կողմէ եւ կը բովանդակէր իր մեծօր՝ Յակոբ Արսէնեանին, ողիսականը՝ Ատափագարէն Երուսաղէմ:

Իր հիմնումէն ի վեր հրատարակչատունը նպատակ կը հետապնդէ մասնատրաբար անհատական թէ հաւաքական հեղինակութեամբ, հայերէն/արաբերէն/անգլերէն հայագիտական եւ գիտակրթական բնոյթի ակադեմական ուսումնասիրութիւններու, նաեւ զուտ համալսարանական գործունէութեան առնչուող նիւթերու հրատարակման զարկ տալ:

Ստորեւ կը ներկայացնենք համառօտ պատումը ՀՀՀին՝ սկիզբէն մինչեւ Հոկտեմբեր 2023 (DAKESSIAN 2020, 19: ՏԱԳԷՍԵԱՆ 2020, 79-84):

Բնութագրական համապատկեր ՀՀՀի հրատարակութիւններուն

Հրատարակչատան ցարդ լոյս ընծայած 49 հատորներէն 11ը նուիրուած է Հայոց Յեղասպանութեան: Այս հատորները լուսարձակի տակ կ'առնեն սոմանեան երեսփոխան Յակոբ Պապիկեանի պաշտօնական տեղեկագիրը Ատանայի 1909ի կոտորածին մասին, ցեղասպանութենէն վերապրած Յակոբ Արսէնեանի ականատեսի վկայութիւնները, Հաճնոյ հերոսամարտի 90ամեակին եւ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած գիտաժողովներուն նիւթերը, ՀԲԸՄի Հաճընի որբանոցին պատումն ու որբերուն նկարագիրը, Հաճըն առաքուած միսիոնարի մը յուշերը՝ տեղաբնիկ հայերու հետ իր պաշարման 13 ամիսներուն, ցեղասպանութեան նուիրուած արաբերէն փաստաթուղթեր, Հրանդ Տինքէն խոհագրութիւններ՝ հայ-թուրք մերձեցման խնդրով, եւ լիբանահայ 9-11րդ դասարանի 101 աշակերտներու ընտանիքներուն պատմութիւնը՝ ցեղասպանութեան շրջանին:

Վերոյիշեալներուն կողքին, ՀՀՀի կողմէ ցարդ լոյս տեսած են Հայկազեան հայագիտական հանդէսի 13 հատորները՝ ԼԳ.-ԽԳ/1. (2013-2023)²:

ՀՀՀն լոյս ընծայած է նաեւ համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի կազմակերպած եւ Միջին Արեւելքի հայօճախներուն նուիրուած եօթ գիտաժողովներէն հինգին նիւթերը, «Հայկական Սփիւռք» մատենաշարով:

2019ին ՀՀՀն սկսաւ իր երկրորդ մատենաշարին՝ «Կրօնք, կրթութիւն եւ ժամանակակից հարցեր» վերնագրով: Յարդ այս մատենաշարով լոյս տեսած են երեք հատորներ, որոնք նիւթերն են համալսարանի Արուեստից եւ գիտութեանց բաժանմունքին կազմակերպած երեք խորհրդաժողովներուն: Միաժամանակ, այլ՝ «Առնչուիլ անցեալին ի յուշ ապագային» մատենաշարով, ՀՀՀն հրատարակեց Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքներուն առնչուող երեք հատորներ:

ՀՀՀն նաեւ լոյս ընծայած է անհատ հետազօտողներու եւ ուսումնասէրներու մենագրութիւններ/համադրումներ/վիճակագրութիւն-աշխատասիրութիւններ, որոնք կը վերաբերին սփիւռքահայ քաղաքական կեանքին (դոկտ. Զաւէն Մարըլեան եւ Ռուբէն Աւշարեան), Սփիւռքի համայնքներու պատմութեան (դոկտր. Վահրամ Շեմմասեան եւ Անդրանիկ Տազէսեան), սփիւռքահայ մշակոյթին եւ մշակութային բերքին (դոկտր. Անդրանիկ Տազէսեան/Արմէն Իւրնէշլեան եւ Յակոբ Եագուպեան) եւ Սփիւռքի ինքնութեան ու համարկումին (դոկտ. Յակոբ Տէր Կարապետեան):

² 2020ին Հանդէսը հրատարակեց յոբելեանական հատոր մը, իր ընթացիկ հատորին կողքին, իսկ 2022էն իվեր Հանդէսը լոյս կ'ընծայէ տարեկան երկու գիրք:

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀՀն հրատարակած է նաև հայ տպագրության 500ամեակին առթիվ Հայկազեան համալսարանի կազմակերպած ձեռնարկներու տեղեկատուական հատորը, ինչպես նաև Վահան Թեքեանի «Արև» օրաթերթին մէջ ստորագրած իր խմբագրականները:

Ցանկ Հայկազեան Հրատարակատան հրատարակած հատորներու			
SS.		Անուն	Էջ
2011	1	<i>Towards Golgotha: the memoirs of Hagop Arsenian, a Genocide survivor</i> , թարգմ. Եւ ծանօթ.՝ Արտա Արսէնեան-Էքմէքճի	238
	2	هرانت دینک، امتان قریبتان... جاران بعدان արաբերէնի թարգմ.՝ Տոքթ. Ալեքսան Քեշիշեանի	160
2013	3	<i>Լիբանանահայ գիրքը 1894-2012. մարտնադիրական ցանկ</i> , աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տագէսեան Եւ Դոկտ. Արմէն Իրնէշեան	440
	4	<i>Հաճնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիւթեր Եւ վաւերագրեր ու լուսանկարներ</i> , կազմ. Եւ խմբ.՝ Դոկտ. Անդրանիկ Տագէսեան (հայերէն Եւ անգլերէն)	228
	5	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 33</i> (հայերէն Եւ անգլերէն)	566
2014	6	<i>Dr. Zaven Messerlian, Armenian participation in the Lebanese legislative elections 1934-2009</i>	548
	7	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 34</i> (հայերէն Եւ անգլերէն)	656
	8	<i>Հայկազեան Համալսարան. հայ տպագրության 500-ամեակի ձեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ</i>	104
	9	<i>Հայկական անդրսահմանային փարածականութիւնը Եւ արդի հաղորդակցական միջոցները. Գիտաժողովի նիւթեր (15-17 Մայիս 2013)</i> , խմբ.՝ Անդրանիկ Տագէսեան, Հայկական Սփիւռք Մատենաշար Ա.	246
2015	10	<i>Dr. Vahram L. Shemmassian, The Musa Dagh Armenians: a socioeconomic and cultural history 1919-1939</i>	378

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

	11	<i>Towards Golgotha: the memoirs of Hagop Arsenian, a Genocide survivor</i> , թարգմ. եւ ծանօթ.՝ Արուս Արսէնեան-Էքմէքճի, Բ. տիպ.	238
	12	<i>Հարիրամեակ Հայոց Յեղասպանութեան. հետեանքներ եւ յտաջարկանքներ. գիտաժողովի նիւթեր (31 Յունուար-1Փետրուար 2015)</i> , խմբ.՝ Անդրանիկ Տազէսեան (հայերէն-անգլերէն)	240
	13	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 35</i> (հայերէն-անգլերէն)	944
	14	Անդրանիկ Տազէսեան, <i>Լիբանանի հայօճախը. գիրք Ա., համարկումին խաչողիները (1920-2005)</i>	174
	15	د. نورا أريسيان, <i>100 عام على الإبادة الأرمنية: 100 شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)</i>	136
2016	16	Յակոբ Ա. Եագուպեան, <i>Քենտադարական մտածողութիւնը լիբանանահայ վարժարաններու մէջ</i>	158
	17	<i>Իմ ընտանիքիս պատմութիւնը</i> , կազմ.՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւն, խմբ.՝ Ա. Տազէսեան	296
	18	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 36</i> (հայերէն եւ անգլերէն)	700
2017	19	<i>Բարսէղ Կանաչեան (1885-1967). Կեանքի մը երածշտացումը</i> , աշխ.՝ Անդրանիկ Տազէսեան	670
	20	<i>Լիբանանի հայերը (Բ.). գիտաժողովի նիւթեր (14-16 Մայիս 2014)</i> , խմբ. Անդրանիկ Տազէսեան, Հայկական Սփիւոք Մատենաշար Բ. (հայերէն եւ անգլերէն)	366
	21	Roupen Avsharian, <i>On the record. Armenian deputies in the Lebanese parliaments, Volume I, 1922-1972</i>	654
	22	Roupen Avsharian, <i>On the record. Armenian deputies in the Lebanese parliaments, Volume II, 1972-2017</i>	680
	23	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 37</i> (հայերէն եւ անգլերէն)	720
2018	24	<i>Սուրիոյ հայերը. գիտաժողովի նիւթեր (24-27 Մայիս 2015)</i> , խմբ. Անդրանիկ Տազէսեան, Հայկական Սփիւոք Մատենաշար Գ. (հայերէն եւ անգլերէն)	720
	25	Aghop Der-Karabetian, <i>Armenian ethnic Identity in context: empirical and psychosocial perspective</i>	270
	26	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 38</i> (հայերէն եւ անգլերէն)	852

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

	27	Hagop Babiguan, <i>The Adana massacres: an eyewitness account</i> , translated, foreword (and overview) and annotated by Dr. A. B. Gureghian	140
2019	28	<i>Յորդանանի հայերը. գիտաժողովի նիւթեր (22-24 Մայիս 2016)</i> , խմբ. Անդրանիկ Տազէտեան, Հայկական Սփիւռք Մատենաշար Դ. (հայերէն եւ անգլերէն)	520
	29	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 39</i> (հայերէն եւ անգլերէն)	928
	30	<i>The symbolism of water in religion, proceedings of an interreligious conference on water and religion, Religion, Education and Contemporary Concerns, vol. 1, edited by Wilbert van Saane</i>	166
2020	31	<i>ՀԲԸՄ Հածրնի որբանցը, 1919-1920</i> , ներած., թարգմ., եւ ծանօթ.՝ Անդրանիկ Տազէտեան (հայերէն եւ անգլերէն)	288
	32	<i>The relevance of intercultural studies in 21st century, proceedings of the symposium held at Haigazian University on January 25, 2019</i> , Religion, Education and Contemporary Concerns, Vol. 2, edited by Arda Ekmekji	88
	33	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 40</i> (հայերէն եւ անգլերէն)	928
	34	<i>Ալիս Քիփ Քլարք, Նամակներ Կիլիկիայէն (օրագրութիւն)</i> , ներած., թարգմ., եւ ծանօթ.՝ Անդրանիկ Տազէտեան (հայերէն եւ անգլերէն)	168
	35	<i>Իրաքի հայերը. գիտաժողովի նիւթեր (29-31 Մայիս 2017)</i> , խմբ. Անդրանիկ Տազէտեան, Հայկական Սփիւռք Մատենաշար Ե. (հայերէն-արաբերէն-անգլերէն)	660
	36	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Յոբելեանական Հատոր (1970-2020)</i> , 2020	422
2021	37	<i>Իրաքի Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (29-31 Մայիս 2017)/Armenians of Iraq: Proceedings of the Conference (29-31 May 2017)</i> , խմբ. Ա. Տազէտեան	770
	38	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԱ./Haigazian Armenological Review, Vol. 41</i>	816
	39	<i>Religion, Education, and Peace, Proceedings of an Online International Conference Held in March 2021</i> , Religion, Education and Contemporary Concerns, Vol. 3, edited by Jon Armajani and Wilbert van Saane	162

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2022	40	<i>Centennial of Greater Lebanon: Constituting the Idea of a “Lebanese Identity” Perspectives from the Lebanese Arts and Letters/ مئوية لبنان الكبير: تشكيل الهوية اللبنانية انطباعات من التراث اللبناني في الادب والعلوم (Proceedings of the Symposium Organized on the Centennial of Greater Lebanon, February 5, 2021), edited by Antranik Dakessian</i>	128
	41	Վահան Թեքէտան, <i>Արեւի խմբագրականներ, (1915-1945), կազմ. եւ խմբ.՝ Պետրոս Թորոսեան, Անդրանիկ Տազէտեան</i>	
	42	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԲ. Գիրք 1, Haigazian Armenological Review, Vol. 42/1</i>	644
	43	<i>Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր 1 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018), խմբ. Ա. Տազէտեան</i>	784
	44	<i>Dealing with the Past, Memory for the Future: A Compilation of Haigazian University Project Submissions, “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 1</i>	156
	45	Noura Amikah, <i>The Narratives of the Survivors of the Beirut Port Blast in Relation to their Recollections of Past Tragedies in Lebanon, “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 2</i>	108
	46	Reem Rehim, <i>Anxiety, Depression, and Persistent Complex Bereavement Among the Families of the Enforced Disappeared and Deceased during the Lebanese Civil War. “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 3</i>	66
	47	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԲ. Գիրք 2, Haigazian Armenological Review, Vol. 42/2</i>	656
2023	48	Efronia Khatchadourian, <i>The Story of My Life, translated by Herant Katchadourian</i>	260
	49	<i>Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր 2 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018), խմբ. Ա. Տազէտեան</i>	350

Ամփոփում

Միջին հաշուով տարեկան 3-4 գիրքերու հրատարակման իր բերքով, այդ բերքին բնոյթով եւ ուղղութեամբ՝ ՀՀՀն ակադեմական

յատկանշական, իւրայատուկ յաւելում կը բերէ լիբանահայ գրահրատարակչութեան:

Օգտագործուած գրականութեան ցանկ

ՏԱԳԷՍԵԱՆ 2020 – Տազէսեան Ա., *Հայկազեան համալսարանի հրատարակչատունը, Հայկազեան հայագիտական հանդէս. յոբելեանական համար (1970-2020)*, Պէյրութ, 2020, 421 էջ:

DAKESSIAN 2020 – Dakessian A., *Haigazian University Press, AMAA News, Paramus*, 2020, N 4, Oct.-Nov.-Dec., p. 19.

THE HAIGAZIAN UNIVERSITY PRESS

ANTRANIK DAKESSIAN

***Director of the Armenian Diaspora Research Center
at Haigazian University***

Editor-in-Chief of

Haigazian Armenological review

Ph.D., Swansea University

Keywords: Haigazian University, Lebanese-Armenian Culture, Publishing House, History of Armenian printing, Bibliography.

Haigazian University Press brings an academically characteristic and unique addition to the Armenian book publishing industry in Lebanon, publishing an average of three to four books per year.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 90-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ*

ՀՏԴ: 027.625(479.25)

ՌՈՒՋԱՆ ՏՈՆՈՅԱՆ

*Խնկո Ապոր անվան ազգային
մանկական գրադարանի տնօրեն*

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամբարում է հայ տպագիր ժառանգության մի սրվար հատվածը և որպես Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման հարցերով զբաղվող մեթոդական կենտրոն, արդեն 90 տարի մանուկների և պատանիների շրջանում իրականացնում է ընթերցանության զարգացման քաղաքականություն:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել գրադարանի հիմնադրման պատմությունն ու 90-ամյա գործունեության ուղին՝ ընդգծելով այն կարևոր տեղն ու դիրքը, որ ունի այս մշակութային կառույցը հայ հասարակության մեջ:

Khanko Aper National Children's Library collects a large part of the Armenian print heritage and as a methodical center dealing with issues of organizing children's and youth reading in the Republic of Armenia, has been implementing reading development policy among children and adolescents for 90 years.

The purpose of this article is to present the history of the foundation of the library and the path of its 90-year activity, emphasizing the important place and position that this cultural structure has in the Armenian society.

Ինչպես հղել՝ Տոնոյան Ռ. (2023), Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի 90-ամյա ուղին, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 80-87:

* Հոդվածը ներկայացվել է 22.11.2023, գրախոսվել է 30.11.2023, ընդունվել է տպագրության 01.12.2023:

The article was submitted on 22.11.2023, reviewed on 30.11.2023, accepted for publication on 01.12.2023.

How to cite (APA style): Tonoyan R. (2023), The 90-year path of the Khnko Aper National Children's Library, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 80-87.



1933 թ. ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ հիմնադրվում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ որպես առաջին մասնագիտացված մանկական պետական գրադարան:

Գրադարանը սկզբնապես գտնվում էր Երևան քաղաքի Խ Աբովյանի անվան դպրոցի հարևանությամբ: Ի պատիվ հայ առակագիր, ՀԽՍՀ վաստակավոր մանկական գրող և ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Աթաբեկ Հովհաննեսի Խնկոյանի (գրական կեղծանվամբ՝ Խնկո Ապեր)՝ գրադարանը 1935 թ.՝ նրա մահվանից հետո, անվանակոչվեց «Խնկո Ապոր» անվամբ: 1937 թ. գրադարանը տեղափոխվեց Երևան քաղաքի Ալավերդյան փողոցի վրա գտնվող մանկատան շենք (այժմ՝ Թումանյան փողոցի թիվ 21 շենք): Գրադարանն այն ժամանակ ուներ 2000 միավոր գիրք, 800 ընթերցող և 30 տեղանոց ընթերցարահ:

Տարիների հետևողական աշխատանքի արդյունքում աստիճանաբար աճեց թե՛ գրքային հավաքածուն, թե՛ ընթերցողների թիվը: Հետագա տարիներին, գրադարանային ոլորտում ծավալած բազմաբնույթ և բազմավեկտոր գործունեության շնորհիվ, մշակութային այս կարևոր օջախը ստացավ հանրապետական (1962 թ.), գիտական (1982 թ.) առաջին կարգի նշանակության գրադարանի, ավելի ուշ՝ «Ազգային գրադարանի» կարգավիճակ (2003 թ. ապրիլից):

Արդեն 1970-ական թվականների սկզբին գրադարանի շենքային սուղ և անբարենպաստ պայմանները չէին բավարարում հան-

րապետությունում տարեցտարի աճող մանկապատանեկան ընթերցանության պահանջմունքը բավարարելու և գրադարանային բազմաբնույթ աշխատանքներն արդյունավետ ու նպատակային կազմակերպելու համար: Ընդամին՝ հանրապետությունում արագ զարգացող գրադարանային համակարգի մեթոդական աշխատանքները համակարգողի գործառույթը լիարժեք իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված՝ առաջացել էր գրադարանին նոր շենք տրամադրելու անհրաժեշտություն:

Մանկան համաշխարհային տարվա հռչակման առթիվ՝ 1979 թ., կառուցվեց գրադարանի՝ Երևան քաղաքի Տերյան 42/1 հասցեում գտնվող ներկայիս շենքը: 1980 թվականից գրադարանն իր գործունեությունն իրականացնում է ճարտարապետական հոյակերտ հորինվածքով, քառանիստ ծավալ ունեցող վեցհարկանի տիպային շենքում, ուր տարածքները միացած են ընդհանուր ճեմասրահներով:

Գրադարանի շենքը 1978 թ. նախագծել են Հայաստանի վաստակավոր ճարտարապետ Լևոն Ղալումյանը (1940-2017) և ճարտարապետ Ռուզան Ալավերդյանը (1946-2017), որի համար 1981 թ. նրանք արժանացել են Հայաստանի Լենինյան կոմերիտմության մրցանակի:

Կրթամշակութային այս կարևոր կառույցը տարբեր տարիներին ղեկավարել են Սիրուշ Սինանյանը (1933-1937), Ասյա Շաբոյանը (1937-1938), Բաբկեն Զաքարյանը (1938-1939), Անահիտ Հակոբյանը (1939-1969), Հայկուշ Դանիելյանը (1970-1996), Ռուզան Տոնոյանը (1996-ից մինչ օրս):

Այսօր Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ունի 90-ամյա պատմություն, որն ամբարում է հայ տպագիր գրքի ավելի քան հինգհարյուրամյա վերելքներով և վայրէջքներով առատ՝ պատմական դժվարին և երկար ճանապարհի գրավոր ժառանգությունը և որպես Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման հարցերով զբաղվող մեթոդական կենտրոն, արդեն 90 տարի մանուկների և պատա-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

նիների շրջանում իրականացնում է ընթերցանության զարգացման քաղաքականություն:

Իսնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանը հանդիսանում է մանկապատանեկան գրականության ազգային պահոց, իսկ ՀՀ գրադարանների մանկապատանեկան բաժինների համար՝ գիտամեթոդական, - տեղեկատվական և կրթամշակութային կենտրոն:



Թեպետ տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքն արմատապես վերափոխեց գրադարանի գործունեության ավանդական գործիքակազմը, սակայն գրադարանի հիմնական գործառույթները մնացին անփոփոխ. գրադարանն այսօր և՛ս շարունակում է իրականացնել գրադարանագիտական, մատենագիտական, տեղեկատվական և մեթոդական գործունեությունը:

Որպես գիտամեթոդական կենտրոն՝ գրադարանը տարիներ շարունակ կազմակերպում է վարպետության դասեր, սեմինարներ, գիտագործնական կոնֆերանսներ: Կարևորելով շարունակական կրթությունն ու միջազգային փորձի փոխանակումը՝ ՀՀ գրադարանավարների համար պարբերաբար իրականացնում է վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ՝ արտերկրից հրավիրված հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

Այսօր գրադարանն ունի տպագիր բազմաքանակ վավերագրերի կազմակերպված հավաքածու (2023 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքածուն կազմում է 545.292 պահպանական միավոր), հայալեզու և ավելի քան 50 օտար լեզուներով գրքեր, պարբերականներ, տեսալսողական փաստավավերագրեր, երաժշտական-նոտագիր հրատարակություններ, որոնք ժամանակավոր օգտագործման է տրամադրում 3-ից 18 տարեկան մանուկներին ու պատանիներին,

Նաև՝ մանկապատանեկան գրականության և ընթերցանության խնդիրներով զբաղված անձանց:

Գրադարանի հավաքածուում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վաղ շրջանի գրքերի հավաքածուն, որը ներառում է 1845-1920 թթ. լույս ընծայված գրքերի բացառիկ և արժեքավոր հրատարակություններ: 1963 թվականից կարևոր այս կառույցն իրականացնում է հրատարակչական գործունեություն՝ մինչ օրս կազմելով և հրատարակելով շուրջ 500 անուն մեթոդական ձեռնարկներ, մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, հիշարժան տարեթվերի օրացույցներ և այլն, որոնք անվճար տրամադրվում են հանրապետության գրադարաններին:

Գրադարանից օգտվում է տարեկան շուրջ 20.000 ընթերցող, որոնց սպասարկումն իրականացվում է տարբերակված՝ տարիքային խմբերի տարանջատված ընթերցասրահների առձեռն հավաքածուների միջոցով: Գործում են նախադպրոցականների, 1-4-րդ, 5-8-րդ, 9-12-րդ դասարանցիների համար նախատեսված սպասարկման սրահներ, նաև՝ ընթերցանությունը կազմակերպողների, երաժշտական-նոտագիր վավերագրերի և օտարալեզու գրականության բաժիններ:

Գրադարանագիտական գործունեությունն իրականացնում է գրադարանի Ազգային հավաքածուի պահպանման, Համալրման ու մշակման, Մատենագիտության և էլեկտրոնային շտեմարանների ձևավորման բաժինների միջոցով: 2004 թվականից գրադարանը միացել է Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացման ցանցի ստեղծման գործընթացին և շարունակում է իրականացնել էլեկտրոնային համահավաք քարտարանի ձևավորման աշխատանքները, իսկ 2022 թվականից՝ թվային տվյալների շտեմարանը կիրառվում է ընթերցողների էլեկտրոնային սպասարկման նպատակով:

100 ընթերցողի համար նախատեսված ընթերցասրահում սպասարկումն իրականացվում է էլեկտրոնային և քարտային եղանակով, որտեղ ընթերցողները կարող են օգտվել տպագիր մամուլից

և պարբերականներից, տեղեկատվական-հանրագիտարանային բնույթի հարուստ հավաքածուից, արվեստաբանական և գիտական բազմաճյուղ գրականությունից ու ալբոմներից:



Երեխաների մտավոր զարգացմանը նպաստող մշակութային միջավայրի ստեղծումը կրթության կարևոր բաղադրիչներից է, ուստի պատահական չէ, որ ընթերցասարահում՝ մատիտով կատարված որմնանկարներում, պատկերված են Հայոց պատմության առանցքային իրադարձություններն ու ձեռքբերումները՝

հեթանոսությունից սկսած մինչև քրիստոնեություն և քրիստոնեությունից մինչև մեր ժամանակները: Որմնանկարների հեղինակն է ՀՀ վաստակավոր նկարիչ Ռուբեն Ղևոնդյանը (1942-2019): Աշխատանքները կատարվել են 1982-1984 թթ.:

Գրադարանի ձայնադարանում, խմբով կամ անհատապես, կարելի է ունենդրել տարբեր ժանրերի երաժշտություն: Մանկահասակ, նախադպրոցական և կրտսեր տարիքի ընթերցողները կարող են հյուրընկալվել հեքիաթի սրահում: Ի դեպ, վերոհիշյալ երկու սրահները և՛ս ձևավորվել է Ռուբեն Ղևոնդյանը՝ հայկական և աշխարհի ժողովուրդների հեքիաթների հերոսների կերպարներով:

Գրադարանում գործում են արտադպրոցական մանկապատանեկան խմբակներ և ստուդիաներ (նկարչական, թատերական, օտար լեզուների ուսուցման և այլն), ինչպես նաև՝ «Փաթիլ» տիկնիկային թատրոնը: Գրադարանի ճեմասրահում մշտապես ցուցադրվում են նկարչական ստուդիայի սաների աշխատանքները:

Տարիներ շարունակ գրադարանում կազմակերպվում են տարբերույթ զանգվածային միջոցառումներ՝ հանդիպումներ, կլոր սեղաններ, համագրույցներ, քննարկումներ, վարպետության դասեր, ցերեկույթներ, շնորհանդեսներ, ցուցահանդեսներ, դասախոսությո-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

յուններ, հեքիաթասացություններ և այլ հանդիսություններ: Ավանդույթ է դարձել «Մանկապատանեկան գրքի ցուցահանդես-տոնավաճառը», «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը», «Ազգային գրադարանային շաբաթը», «Գրադարանավարի օրը», «Մանկական գրքի միջազգային օրը», «Երեխաների պաշտպանության միջազգային օրը», «Հեքիաթի դեսպաններ» հեղինակային ծրագիրը, որի շրջանակում Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպաններն իրենց մայրենի լեզվով մանուկների ներկայացնում են ազգային հեքիաթներ: 2017 թվականից կազմակերպում է նաև «Ամառային ճամբար» կրթամշակութային ծրագիրը:



*Գերմանիայի
դեսպանարան
մշակույթի կցորդ
Կոստանդին Սելենդի
(2012)*

Ավանդական միջոցառումներին գրադարանը մշտապես հյուրընկալել է հայ և օտարազգի անվանի մտավորականների, գրողների, արվեստագետների /Ավ. Իսահակյան, Վ. Սարոյան, Ս. Միխայկով, Ստ.Զորյան, Դ. Դեմիրճյան, Հ. Շիրազ, Գ. Գասպարյան, Տ. Լևոնյան, Տ. Սազանդարյան, Օ. Դուրյան, Խ. Գյուլնազարյան, Էդ. Մեծելայտիս, Ա. Այվազյան, Ա. Չիլինգարով, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հ. Բաղրամյան, Հ. Իգիթյան, Հ. Չեքիջյան և այլն/: Վերջիններիս մակագրություններով գրադարանին ընծայաբերված գրքերն առանձնակի հետաքրքրություն և մշակութային արժեք են ներկայացնում:

Համագործակցությունը գրադարանի գործունեության առաջնային ուղղություններից է, որի իրականացման արդյունքում ստեղծվել և գործում են օտարալեզու գրականության անկյունները. «Իրանական ընթերցասրահը»՝ 2006 թվականից, որը համագործակցում է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության ու Իրանի մշակույթի զարգացման մանկական կենտրոնի հետ, և համալրված է պարսկերեն լեզվով մանկական, գեղարվեստական, ուսումնական գրականությամբ, տեղեկատվական և տեսալսողական վավերագրերով և տեխնիկական սարքերով, ուր պարսկերենի իրենց իմացությունն են խորացնում աշակերտները, ուսանողներն ու մասնագետները, 2014 թվականից “China Hanban” կազմակերպության հետ համագործակցությամբ գործում է «Չինական անկյունը», որից օգտվում են չինարենն ուսումնասիրող դպրոցականները, ուսանողները և մասնագետները, «Արաբական անկյունը»՝ 2018 թվականից, որ հիմնադրվել է «ԻԲԲԻ ԱՄԷ»-ի և «Կալիմաթ» հիմնադրամի միջոցներով և կահավորվել ու տեխնիկական սարքավորումներով վերազինվել ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության աջակցությամբ:

Իսնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը համագործակցում է աշխարհի մի շարք պետությունների մանկական գրադարանների, մանկապատանեկան գրականության և ընթերցանության խնդիրներով զբաղվող հայրենական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դեսպանությունների հետ՝ իրականացնելով կրթական, գիտական և մշակութային համատեղ ծրագրեր: Անդամակցում է «Մանկապատանեկան գրքի միջազգային խորհրդին» (IBBY), «Գրադարանների միջազգային ասոցիացիային» (IFLA), «Երաժշտական գրադարանների միջազգային ասոցիացիային» (IAML):

Իր բեղմնավոր գործունեության համար գրադարանը բազմիցս պարգևատրվել է շնորհակալագրերով, պատվոգրերով և մեդալներով:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ*

ՀՏԴ: 027.625(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-88

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0007-2034-8062](https://orcid.org/0009-0007-2034-8062)

Երեխային պետք է սովորեցնել գրադարանից օգտվել վաղ հասակից, քանի որ այս դեպքում հավանականությունն առավել մեծ է, որ նա կշարունակի գրադարանից օգտվել նաև հետագայում: Երեխաների ընթերցանության կազմակերպման գործընթացը գործողությունների փոխկապակցված շղթա է: Հարկավոր է ուշադրություն և հոգաբարոյություն, որպեսզի այն ճիշդ կազմակերպվի:

Սույն ուսումնասիրության մեջ կանդրադառնանք փոփոխվող և զարգացող աշխարհում մանկապարտեզական ընթերցանության խթանմանը վերաբերող և նպաստող ծրագրերին ու միջոցառումներին, նաև՝ միջազգային համագործակցության կարևորությանը՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի փորձի օրինակով:

A child should be taught to use the library from an early age, because in this case, the it is more likely that he will continue to use the library in the future. The process of organizing children's reading is an interconnected chain of actions. It takes care and attention to get it right.

In this research, we will look at the programs and measures related to and contributing to the promotion of children's reading in the changing and

* Հոդվածը ներկայացվել է 13.11.2023, գրախոսվել է 06.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:

The article was submitted on 13.11.2023, reviewed on 06.12.2023, accepted for publication on 20.12.2023.

developing world, as well as the importance of international cooperation, on the experience of the Khnko Aper National Children's Library.

Բանալի բառեր՝ մանկական գրադարան, միջազգային համագործակցություն, մանկապատանեկան ընթերցանության խթանում, միջազգային ծրագրեր և նախագծեր:

Ինչպես հղել՝ Աճեմյան Ն. (2023), Մանկապատանեկան ընթերցանության խթանման գործում միջազգային համագործակցության դերակատարությունը, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 88–99. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-88](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-88)

How to cite (APA style): Atshemyan N. (2023), The Role of International Cooperation in Promoting Reading among Children and Young Adults, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 5-29. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-88](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-88)

Ներածություն

Կարևորելով ընթերցանության դերը կրթամշակութային համակարգը հզորացնելու գործում՝ անհրաժեշտ է ընթերցանության խթանման նախադրյալներ, հիմքեր ու սովորույթ ձևավորել դեռևս երեխայի վաղ հասակից: Երեխայի ընթերցող դառնալու իրավունքի իրացման համար կարևոր է թե՛ ընտանիքի և թե՛ մանկական գրադարանի դերը, քանի որ գրադարանը ո՛չ միայն սերմանում է ընթերցասիրություն, այլև հանդիսանում է հետաքրքիր և բազմակողմանի գիտելիքի հաղորդման աղբյուր երեխայի և նրա ընտանիքի համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում, տեղեկատվական հոսքերի ծավալների աճով պայմանավորված, թերևս, դժվարացել է ընթերցանության խթանումը մանուկների և պատանիների շրջանում, որը նոր մարտահրավերների առաջ է կանգնեցրել գրադարանավարներին: Գրադարանի ամենակարևոր գործառույթներից մեկը երեխաների ու պատանիների շրջանում նոր մեթոդներով և նորարարական սկզբունքներով ընթերցասիրության

արթնացումն է: Իսկ ինչպե՞ս մշակել այդ մեթոդները, որոնք հնարավորություն կընձեռեն երեխային դարձնելու գրքասեր և ընթերցասեր: Այստեղ կարևոր դերակատարում պետք է ունենա ընթերցանության կազմակերպումը, որը հիմնված լինի ո՛չ միայն հայրենական, այլև միջազգային փորձի ուսումնասիրման վրա:

Մանկապարտանեկան ընթերցանության և ընթերցասիրության խթանման գործում միջազգային համագործակցության դերակատարությունը՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի փորձի օրինակով

Գրադարանային հանրության հետ միջազգային համագործակցային կապերը արդի աշխարհում առավելապես նպաստում են գրադարանների զարգացմանը: Համագործակցության այս ձևաչափը թույլ է տալիս գրադարանավարներին ուսումնասիրել ոլորտի զարգացման միտումները, գնահատել սեփական գործունեությունը, ձեռքբերումներն ու խնդիրները: Գրադարանային աշխատողների համար հնարավորություն է ստեղծվում ընդլայնել իրենց մտահորիզոնը, բարելավել մասնագիտական գիտելիքներն ու մասնակցել զարգացման նոր հայեցակարգերի մշակմանը: Միջազգային փորձի փոխանակումը նաև ապահովում է հասանելիություն համաշխարհային մշակութային ժառանգությանը: Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումն արդի աշխարհում ի հայտ է բերել գրադարանային համագործակցության նոր ձևաչափեր:

Խոսելով միջազգային համագործակցության ամրապնդմանը նպատակաուղղված ջանքերի մասին՝ անհրաժեշտ է առանձին անդրադարձ կատարել միջազգային գիտաժողովներին, գրքի տոնավաճառներին, ինչպես նաև՝ գրադարանային միությունների և ասոցիացիաների հետ համագործակցային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը համագործակցում է ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային պե-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տական-հասարակական մշակութային կազմակերպությունների հետ՝ իրականացնելով համատեղ ծրագրեր: Իր բազմամյա գործունեության ընթացքում գրադարանը աշխարհի բազմաթիվ երկրներում մասնակցել է գրքի միջազգային տարբեր փառատոնների, տոնավաճառների, գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների, մասնավորապես՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, Իտալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Իսպանիա, Ռուսաստան, Հունաստան և այլն, որոնք կարևոր հարթակ են եղել փորձի փոխանակման, նոր գործընկերների հետ հարաբերությունների հաստատման համար:

Նման ձևաչափ և լայն ընդգրկվածություն ունեցող միջոցառումներին մասնակցությունը գրադարանի համար նոր գաղափարներով և ծրագրերով ոգեշնչվելու առիթ է հանդիսացել: Այդպիսին էր իր տեսակով Հայաստանում միակը՝ «Դարձ առ գիրք» գրքարվեստի միջազգային ամենամյա փառատոնը, որի ընթացքում յուրաքանչյուր տարի կազմակերպվել են գիտագործնական համաժողովներ, սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ, գրքի տոնավաճառուցահանդեսներ, փորձի փոխանակումներ և այլն, որոնց մասնակցել են ոչ միայն գրադարանային ոլորտի հայ մասնագետները, այլև մասնագետներ ու ներկայացուցիչներ ամբողջ աշխարհից:

Գրադարանի նախաձեռնությամբ 2013 թվականից Հայաստանը անդամակցում է «Մանկապատանեկան գրքի միջազգային խորհրդին»¹: Ստեղծվել է «IBBY-Armenia» ազգային խորհուրդը, որի նպատակն է.

- համախմբել մանկապատանեկան գրքուրտի գործիչներին ընդհանուր խնդիրների շուրջ,
- նպաստել ընթերցանության խթանմանը, մանկապատանեկան գրքի հանրահռչակմանը և գրադարանային գործի բարելավմանը,

¹ IBBY, International Board on Books for Young People
<https://www.ibby.org/about/what-is-ibby> (11.11.2023)

➤ նպաստել գրադարանային ոլորտի մասնագետների շարունակական մասնագիտական կրթությանը,

➤ նպաստել գրահրատարակչական ոլորտի և գրքարվեստի, մասնավորապես՝ մանկագրության խթանմանը և գրքի նկարագարման մշակույթի զարգացմանը:

Շարունակական համագործակցության արդյունքում գրադարանն առ այսօր իրականացնում է վերոնշյալ նպատակների իրականացմանը միտված ծրագրեր և միջոցառումներ: Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Վերապատրաստման դասընթացներ

Կարևորելով փորձի փոխանակումը գրադարանային ոլորտի միջազգային գործընկերների հետ ընթերցանության կազմակերպման ու զարգացման գործում՝ գրադարանը 2015 թվականից սկսած յուրաքանչյուր տարի, գրողների, գրքի նկարագարողների, թարգմանիչների, գրադարանավարների և գրահրատարակիչների համար կազմակերպում և իրականացնում է վերապատրաստման դասընթացներ՝ ոլորտի օտարերկրյա համապատասխան մասնագետների ներգրավածությամբ:

Վարպետության դասընթացները վարել են՝ գրողների համար՝ Մանֆրեդ Թայգենը (Գերմանիա), նկարագարողների համար՝ Կլասս Վերպլանկը (Բելգիա), թարգմանիչների համար՝ Դանիել Հանը (Անգլիա), գրադարանավարների համար՝ Վիոլեն Կանմաչերը (Ֆրանսիա), Ջոհրե Ղայենին (Իրան), հրատարակիչների համար՝ Ֆլորիան Էնդրյուաը (Գերմանիա):

Դասընթացների հիմնական նպատակն է միջազգային փորձի փոխանակման միջոցով աջակցել ստեղծագործական աշխատանքի խթանմանը միտված մանկապատանեկան առավել հետաքրքիր և որակյալ գրքերի ստեղծմանը, որն իր հերթին ուղղակիորեն կնպաստի մանկապատանեկան ընթերցանության զարգացմանը: Վարպետության դասընթացների արդյունքում գրադարանը 6 գիրք, որոնք

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ներկայացվել են Բոլոնիայի (Իտալիա) և Շարժայի (ԱՄԷ) գրքի միջազգային տոնավաճառներում:

Գրքի ճամբարներ մարզերի երեխաների համար

Գրադարանը, IBBY-ի հետ համագործակցությամբ, 2022 թ. կյանքի կոչեց ևս մի հետաքրքիր ծրագիր՝ «Գրքի ճամբար մարզերի երեխաների համար»: Ծրագրի շրջանակում կազմակերպվեցին ճամբարներ Տավուշի, Լոռու, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի, Սյունիքի մարզերում և Երևանում, որոնց ընթացքում երեխաները մասնակցեցին գրքային ընթերցումների ու քննարկումների, հեքիաթի նկարազարդումների և տիկնիկային բեմականացումների, հանդիպեցին ժամանակակից մանկագիրների հետ, այցելեցին մշակութային հաստատություններ, ընթերցեցին գրքեր և մասնակցեցին ընթերցանության մրցույթին: «Գրքի ճամբար մարզերի երեխաների համար» ծրագրի նպատակն է նպաստել մանկապատանեկան ընթերցանության մշակույթի զարգացմանը Հայաստանի ամբողջ տարածքում և, մասնավորապես, սահմանամերձ բնակավայրերում:

Մանկապատանեկան գրողների և մանկապատանեկան գրքի նկարազարդողների մրցույթ

2019 թ. գրադարանը մանկապատանեկան գրողների և մանկապատանեկան գրքի նկարազարդողների շրջանում IBBY-ի հետ համագործակցությամբ կազմակերպեց ստեղծագործական ներուժի բացահայտմանը և դրսևորմանը նպատակաուղղված մրցույթ՝ նպաստելով մանկագրության և ընթերցանության դերակատարության բարելավմանն ու հանրահռչակմանը, հայտնաբերելով, խրախուսելով և հանրությանը ճանաչելի դարձնելով մանուկների և պատանիների համար ստեղծագործող հայ հեղինակներին:

Մանկապատանեկան ընթերցանության անկյուններ ՀՀ մարզերում

Մանկապատանեկան ընթերցանությունը խթանելու նպատակով՝ 2019 թվականից սկսած իջոցառումներ են կազմակերպվել և

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

իրականացվել Հայաստանի մարզերում. ստեղծվել են նոր ու գունազարդ գրքերով համալրված ընթերցանության անկյուններ, մարզային գրադարանավարների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ, կազմակերպվել մանուկների և պատանիների շրջանում ընթերցանությունն ու ընթերցասիրությունը խթանող միջոցառումներ, հանդիպումներ, գրքի քննարկումներ:

2020 թ. մանկապատանեկան ընթերցանության անկյուններ ստեղծվեցին Տավուշի, Սյունիքի, Լոռու, Արագածոտնի և Կոտայքի մարզերի հինգ գրադարաններում, որոնք համալրվեցին նոր ու գունազարդ գրքերով, ինչպես նաև՝ ընթերցողների համար կազմակերպվեցին գրական ընթերցումներ, քննարկումներ և հանդիպումներ ժամանակակից գրողների հետ: Ծրագրի շրջանակում տեխնիկապես վերազինվել և նոր ու գունազարդ գրքերով համալրվել է Տավուշի մարզի Աչաջուր համայնքի մշակույթի տան փոքրիկ գրադարանը, որը սպասարկում է ո՛չ միայն տեղի երեխաներին ու պատանիներին, այլև մարզի սահմանամերձ բնակավայրերի ընթերցողներին:

Մարզային վերոնշյալ միջոցառումները նպատակ ունեն Հայաստանի մարզերի և գյուղական համայնքների երեխաների և պատանիների շրջանում հետաքրքրություն և սեր առաջացնել գրքի և ընթերցանության հանդեպ՝ գրական ընթերցումների, քննարկումների, ինչպես նաև՝ գրողների հետ հադիպումների և անմիջական շփումների միջոցով:

Օտարալեզու գրականության անկյունները խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում

Գրադարանում գործում է օտարալեզու գրականության բաժին, որն սպասարկում է ավելի քան 50 լեզուներով գրականություն: Համագործակցության արդյունքում գրադարանում ստեղծվել են օտարալեզու գրականության առանձին անկյուններ.

1997-2011 թթ. գրադարանում, Գերմանիայի Գյոթեի անվան ինստիտուտի հետ համագործակցության արդյունքում, գործել է

«Գերմանական ընթերցասրահը»՝ գերմանալեզու հարուստ հավաքածուով:

2006 թվականից գրադարանում, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան աջակցությամբ, գործում է «Իրանական ընթերցասրահը»:

2014 թվականից գրադարանում, «Չայնա Հանբան» /“China Hanban”/ կազմակերպության հետ համագործակցությամբ, գործում է «Չինական անկյունը»:

2019 թվականին գրադարանում IBBY-ի, ինչպես նաև՝ IBBY UAE-ի և արաբական «Կալիմաթ» հիմնադրամի համատեղ ջանքերով և գործընկերությամբ, օտարալեզու գրականության մի քանի անկյունների կողքին բացվեց «Արաբական անկյունը», որով հնարավորություն ստեղծվեց արաբերենով հաղորդակցվող փախստական երեխաներին իրացնել գրադարանից օգտվելու իրենց իրավունքը:

«Մեծ աշխարհի մեր անկյունը» ստեղծագործական նախագիծ

2021 թ. գրադարանը մեկ այլ հետաքրքիր նախագիծ կենսագործեց՝ դարձյալ՝ IBBY-ի հետ համագործակցությամբ՝ «Մեծ աշխարհի մեր անկյունը» /վարպետության դաս՝ ստեղծագործական նախագիծ/, որի նպատակն էր Հայաստանի մարզերում ստեղծված ընթերցանության հինգ անկյունները զարգացնել ու դրանք վերածել նաև ստեղծագործական կենտրոնների, որտեղ կիրականացվեն վարպետության դասեր շնորհալի ստեղծագործող պատանիների համար, որոնք կվերարտադրեն իրենց ստացած գիտելիքը հեքիաթի, ավանդապատումի, պատմվածքի, էսսեի տեսքով: Ծրագրի նպատակն էր պատանիների ստեղծագործական ներուժն ուղղորդել գրական երկերի ստեղծմանը՝ նրանց հետագա ստեղծագործական զարգացման համար իրական նախադրյալներ ստեղծելով՝ ունենալու համար դերակատարություն ժամանակակից մշակութային կյանքում և մանկապատանեկան գրականության մեջ:

IBBY Կոնգրես

IBBY Կոնգրեսին, որ տեղի է ունենում երկու տարին մեկ անգամ և որին մասնակցում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ անդամ 80 երկրների ներկայացուցիչների հետ, մտքեր են փոխանակվում մանկապատանեկան ընթերցանության խթանմանը վերաբերող ծրագրերի, դրանց արդյունքների և առաջիկա անելիքների մասին: Գրադարանային ծրագրեր են իրականացվում միջազգային կազմակերպությունների՝ «Գրադարանային ասոցիացիաների միջազգային դաշնության» (IFLA, International Federation of Library Associations), «Երաժշտական գրադարանների միջազգային դաշնության» (IAML, International Association of Music Libraries), «Միջազգային գրական ասոցիացիայի» (ILA, International Literacy Association) հետ, որոնց հետ համագործակցությամբ իրականացվում են և շարունակվում են իրականացվել մանկապատանեկան ընթերցանությունը խթանող ծրագրեր և վերապատրաստման դասընթացներ:

Գրադարանը մասնակցել է Իսպանիայում, Ֆրանսիայում և Բելգիայում կազմակերպված «Գրադարանների համաշխարհային տեսլականը» /IFLA, “Global Vision”/ խորագրով վերապատրաստման դասընթացներին, որոնց մասնակից հայ գրադարանավարները իրենց ստացած գիտելիքով և փորձով հետագայում փոխանակվել են մարզային և համայնքային գրադարանների իրենց գործընկերների հետ:

Գրադարանը «Աշխարհը նկարազարդ գրքի միջով» /IFLA, “World through picture books”/ էլեկտրոնային գրացուցակի համար ներկայացրել է տասը հայ հեղինակի գիրք՝ նպատակ ունենալով հանրահռչակել հայ գրողներին, հայ գիրքը, մշակույթն ու պատմությունը²²:

²² The World Through Picture Books <https://shorturl.at/abguZ> (11.11.2023)

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանը, համագործակցելով IAML-ի հետ, Հայաստանում պարբերաբար կազմակերպել է գիտագործնական համաժողովներ, սեմինարներ, ինչպես նաև՝ վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է շուրջ 100 գրադարանավար՝ հանրապետության մարզերից և Երևան քաղաքից:

2018 թվականից սկսած՝ գրադարանը մասնակցել է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրին՝ տարբեր միջոցառումներով ընթերցողներին ներկայացնելով եվրոպական ժողովուրդների լեզուն, մշակույթը, պատմությունը, գրականությունն ու մշակութային ոչ նյութական ժառանգությունը: 2023 թ. «Եվրոպական ժառանգության օրերի» շրջանակում գրադարանը մասնակցեց «Եվրոպական ժառանգության պատմություններ» ծրագրին՝ ներկայացնելով «Հեքիաթի դեսպաններ» ծրագիրը: Եվ ներկայացված 120 հայտերի շարքում, գրադարանի հայտը լավագույն քսանի մեջ հայտնվելով, հնարավորություն ստացավ մասնակցելու ծրագրի երկրորդ փուլի դրամաշնորհային մրցույթին: Դրամաշնորհային մրցույթին մասնակից քսան երկրներից միայն տասը (Իտալիա [2 հայտ], Ֆրանսիա, Հունաստան, Ուկրաինա, Գերմանիա, Լիտվա, Անգլիա [2 հայտ]) կարողացան հաղթահարել մրցութային փուլը, որոնց մեջ էր նաև Հայաստանի Հանրապետությունը:

Այս ծրագրի շրջանակում նախատեսվում է ՀՀ մարզերի երեխաների համար կազմակերպել «Եվրոպական ժառանգության ճամբար» և Հայաստանի մարզերից երկուսում ստեղծել եվրոպական գրականության անկյուններ, իրականացնել «Հեքիաթի դեսպաններ» ծրագիրը և կազմակերպել եվրոպական պետությունների ազգային մշակութային ժառանգության պահպանության կարևորության վերաբերյալ վարպետության դասեր, մանկապատանեկան գրքերի ընթերցումներ և քննարկումներ: Երեխաները կմասնակցեն նաև գրքի նկարազարդման վարպետության դասընթացին և կկատարեն «Մշակութային ժառանգությունն իմ աչքերով» թեմայով նկարզարդումներ,

որոնք ծրագրի ավարտին կներկայացվեն Երևանում կայանալիք համանուն ցուցահանդեսին:

Ամփոփում

Ժողովրդավարական հասարակության զարգացման և ժողովրդավարության պահպանման մեջ կարևոր են մանուկներին և պատանիներին մատուցվող գրադարանային ծառայությունները: Սակայն պետք է նշել, որ արդի հասարակության հիմնական խնդիրներից մեկը մանուկների և պատանիների ընթերցանության և ընթերցասիրության զարգացումն է, իսկ մանկական գրադարանների առաքելությունը՝ առկա բոլոր պաշարների օգտագործմամբ, միջազգային փորձի փոխանակմամբ, գրադարանային ոլորտի միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա մասնագետների հետ համագործակցությամբ, ընթերցանության խթանմանը նպաստելն է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք հողվածում, պետք է ընթերցասիրության սովորույթ ձևավորել դեռևս երեխայի վաղ հասակից:

Մանկական գրադարանների աշյունավետ և մասնագիտական կառավարումը պահանջում է ունենալ վերապատրաստված և նվիրյալ գրադարանավարներ, որոնք կնախագծեն, կկազմակերպեն, կիրականացնեն գրադարանային ծրագրեր և ծառայություններ՝ երեխաների արտադպրոցական կրթության ապահովման և բազմակողմանի զարգացման համար, իսկ մասնագիտական շարունակական կրթության մեջ կկարևորվեն միջազգային փորձի փոխանակումն ու համագործակցության հաստատումը և զարգացումը:

Կարող ենք փաստել, որ Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը մանկապատանեկան ընթերցանության զարգացման և փորձի փոխանակման նպատակով պարբերաբար մասնակցել և մասնակցում է մանկապատանեկան գրքի միջազգային տոնավաճառների, համաժողովների, սեմինարների և այլ ծրագրերի՝ միջազգային գործընկերների հետ առավելագույնս համագործակցելով և նախագծելով ծրագրեր, որոնք նպաստում են մանկապատանեկան

նեկան ընթերցանության խթանմանը և ուղղորդված են նորարարությանը և նոր գաղափարների ձևավորմանը, ներդրմանը և արդյունավետ իրագործմանը:

THE ROLE OF INTERNATIONAL COOPERATION IN PROMOTING READING AMONG CHILDREN AND YOUNG ADULTS

NAIRA ATSHEMYAN

Khanko Aper National Children's Library

Keywords: Children's Library, International Cooperation, Promotion of Children's and Youth Reading, International Programs and Projects.

Library services to children and youth are essential in the development and maintenance of democratic society, offering them wide access and diversity of knowledge and self-education. However, it should be noted that one of the main problems of modern society is the development of reading and literacy of children and adolescents, and the mission of children's libraries is to contribute to the promotion of reading among children and adolescents using all available resources: exchange of international experience, cooperation with international organizations of the library sector and foreign specialists. Because it is necessary to form the habit of reading from the early age of the child. Library events are very important, which should be aimed at the promotion of children's book loving and reading, popularization of books and literature. Effective and professional management of children's libraries requires trained and committed librarians who will design, organize, implement library programs and services for the provision of extracurricular education and multifaceted development of children. We can state that Khanko Aper National Children's Library regularly participated and participates in international children's book fairs, conferences, seminars and other programs in order to develop children's and youth reading and exchange experience, cooperating with international partners to the maximum and designing programs that contribute to the promotion of children's and youth reading.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ*

ՀՏԴ: 027(479.25)

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0005-1779-5860](https://orcid.org/0009-0005-1779-5860)

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանն իր 90-ամյա գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր, որոնք նպաստել են գրադարան-ընթերցող կապի ամրապնդմանը, միջազգային նոր հարաբերությունների հաստատմանը և այլն: Սույն հոդվածի նպատակը այդ ծրագրերն ու դրանց արդյունքները ներկայացնելն է:

During its 90 years of activity, the Khnko Aper National Children's Library has implemented many educational and cultural programs that have contributed to strengthening the library-reader chain, establishing new international relations, etc. The purpose of this article is to present these programs and their results.

Բանալի բառեր՝ մանկական գրադարան, մանկապատանեկան ընթերցանության խթանում, միջոցառումներ, միջազգային համագործակցություն:

Ինչպես հղել՝ Ավետիսյան Ի. (2023), Կրթամշակութային ծրագրերը՝ որպես ընթերցանության խթանման միջոց, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 100-111:

How to cite (APA style): Avetisyan I. (2023), Educational Programs as a Tool for Reading Promotion, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 100-111.

* Հոդվածը ներկայացվել է 13.11.2023, գրախոսվել է 12.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:

The article was submitted on 13.11.2023, reviewed on 12.12.2023, accepted for publication on 20.12.2023.

Ներածություն

2023 թ. Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը նշում է իր հիմնադրման 90-ամյակը: Ինը տասնամյակ շարունակ գրադարանն իրականացնում է գրադարանային, տեղեկատվական, մատենագիտական, կրթամշակութային գործունեություն: Ժամանակակից գրադարանային առօրյան հնարավոր չէ պատկերացնել առանց կրթամշակութային ծրագրերի և միջոցառումների: Գրադարանում տարբեր տարիքային խմբերի երեխաների համար իրականացվող բազմաթիվ (այդ թվում՝ հեղինակային) բազմաբովանդակ ծրագրերն ու միջոցառումները միտված են մանուկների և պատանիների գիտելիքի ամրապնդմանն ու գեղագիտական ճաշակի զարգացմանը: Տարեցտարի այդ ծրագրերի աճը նպաստում է մանուկ և պատանի ընթերցողների նոր սերնդի ներգրավմանը գրքի հանրահռչակման և ընթերցանության մշակույթի ձևավորմանն ու ընթերցասիրության զարգացման մեջ:

Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ

Միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը», որը կազմակերպվում է ամեն տարի Հայաստանի գրողների միության հետ համատեղ: Շաբաթն առաջին անգամ անցկացվել է 1943 թ., Մոսկվայում: Այդ ժամանակից սկսած ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, նշվում էր այդ կարևոր հանդիսությունը: 1982 թ. Խնկո Ապոր անվան հանրապետական գրադարանը հյուրընկալեց ԽՍՀՄ 15 հանրապետություններից ժամանած մանկագիրներին, հյուրերին, ինչպես նաև՝ գրողների՝ Բուլղարիայից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից: Արդեն ավանդական դարձած «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթն» անցկացվում է մարտ ամսվա վերջերին: 2023թ. լրացավ «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթի» 80-ամյակը: Կազմակերպված միջոցառումներում կարևորվեց երեխաների կյանքում գրքի և

ընթերցանության դերը. «Ընթերցողական համաժողով–հանդիպումը», գրական և երաժշտական բազմաբովանդակ միջոցառումները երեխաներին հնարավորություն ընձեռեցին շփվել և հաղորդակցվել գրողների հետ, տեղեկություն ստանալ նոր գրքերի մասին և ընդլայնել իրենց գիտելիքները: Շաբաթվա միջոցառումները միտված են ընթերցանության խթանմանը, գրող-ընթերցող-գրադարան կապի ամրապնդմանը¹:

Ազգային գրադարանային շաբաթ

«Ազգային գրադարանային շաբաթ» Հայաստանում առաջին անգամ անցկացվել է 2002 թ.¹ «Հայկական գրադարանային ասոցիացիայի» նախաձեռնությամբ: Այն մինչ օրս իր ուրույն տեղն ունի գրադարանային կյանքում: «Ազգային գրադարանային շաբաթը» պատեհ առիթ է կարևորելու «գրադարանային աշխատողին» հանրային կյանքում և արժևորելու «գրադարանի» դերը՝ իբրև հանրային պատասխանատվություն կրող մշակութային, գիտական, տեղեկատվական, ժամանցային կազմակերպություն: Այս համատեքստում մեծ է «Ազգային գրադարանային շաբաթի» նշանակությունը մշակութային կյանքի համաչափ զարգացման գործում, քանի որ գրքի նկատմամբ սերն ու հոգատարությունը, ընթերցասիրությունը մեծ դերակատարություն ունեն հոգևոր և մշակութային դաստիարակության մեջ: «Ազգային գրադարանային շաբաթվա» ընթացքում կազմակերպվող միջոցառումները նպաստում են հանրության մեջ գրադարանների, գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության աճին, գրադարանների դերի կարևորմանը և ընթերցող-գրադարան կապի սերտացմանը: Շաբաթը ընթերցողների համար հնարավորություն է մասնակիցը դառնալու մշակութային բազմազան միջոցառումների. այդ օրերին կազմակերպվում են մանկապատանեկան և դպրոցական գրադարանների արդի խնդիրների վերաբերյալ քննարկումներ,

¹ Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ
<https://shorturl.at/djIzQ> (10.11.2023)

գրադարանային աշխատողների փորձի փոխանակումներ, մանկական գրքի ցուցահանդեսներ, խմբային երաժշտական ունկնդրումներ, տիկնիկային ներկայացումներ, հեքիաթապատումներ, ինտերակտիվ խաղ-մրցույթներ, մշակութային գործիչների հետ հանդիպումներ, այցելություններ մարզային և համայնքային գրադարաններ: «Ազգային գրադարանային շաբաթվան» մշտապես իրենց բազմաբովանդակ միջոցառումներով մասնակցում են Հայաստանի գրեթե բոլոր գրադարանները:

Մանկապարանեկան գրքի երևանյան ցուցահանդես-տոնավաճառ

Գրադարանում արդեն ավանդական է դարձել Մանկապարանեկան գրքի ցուցահանդես-տոնավաճառը, որն իր շուրջն է համախմբում բազմաթիվ գրքասերների, ընթերցողների, գրադարանի բարեկամների: Տոնավաճառին մասնակցում են հայաստանյան մի շարք գրահրատարակչություններ, գրքին և ընթերցանությանը առնչվող կազմակերպություններ, որոնք ներկայացնում են իրենց մանկապատանեկան արտադրանքը: Միջոցառումներն իրականացվում են գրադարանի ճեմասրահում, դահլիճում և սրահներում: Գրքի ցուցահանդես-տոնավաճառը կարևոր հարթակ է, որտեղ երեխաներն ու այցելուները հնարավորություն ունեն ծանոթանալու տարբեր հրատարակչությունների գրքային հավաքածուներին, նոր հեղինակների ստեղծագործություններին, ձեռք բերելու նոր գրքեր և մասնակցելու բազմաբնույթ ու հետաքրքիր միջոցառումների: Գրադարան այցելող տարբեր տարիքային խմբերի մանուկների և պատանիների համար ցուցահանդես-տոնավաճառի ընթացքում կազմակերպվում են գրքի քննարկումներ, շնորհանդեսներ, հանդիպումներ, վիկտորինաներ, համագրույցներ, գրքերի տեսություններ, զբոսարշավներ, կինոդիտումներ և այլն, ինչպես նաև՝ գրքի նվիրատվությունների ավանդական ակցիաներ: Կարևոր այս միջոցառումները մեկ անգամ ևս նշանավորում են գիրն ու գիրքը, գրականությունն ու գրքարվեստը, մա-

նուկներին և պատանիներին տեղեկացնում են մանկապատանեկան գրքի նորոյթներին, խթանում են ընթերցանությունն ու ընթերցասիրությունը, նպաստում մանուկների և պատանիների կրթությանն ու գիտելիքի ձեռքբերմանը:

Գիրք նվիրելու օր

ՀՀ կառավարության որոշմամբ 2008 թվականից յուրաքանչյուր տարի փետրվարի 19-ին՝ հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը, Հայաստանում նշվում է Գիրք նվիրելու օրը: Օրվա խորհուրդը բազմազան է. արժևորվում է գիրքը, կարևորվում է գիրք նվիրելը և գրքի դերը մարդու կյանքում՝ խթանելով գրքի և ընթերցանության տարածումը: Գրադարանում միմյանց գրքեր նվիրում են ո՛չ միայն երեխաները, այլև՝ գրադարանավարները. իրականացվում է «Քո առաջին գիրքը» ակցիան, որի ընթացքում մի շարք բժշկական կենտրոններում գրքեր են նվիրվում նորածինների մայրերին: Օրվա խորհրդին համահունչ՝ նախատեսվում են հեքիաթապատումներ, թատերական և տիկնիկային ներկայացումներ, համագրույցներ, մուլտֆիլմերի դիտումներ, գրական վիկտորիաներ և խաղեր, երաժշտական ունկնդրումներ՝ թումանյանական մոտիվներով:

Մայրենի լեզվի միջազգային օր

Փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օրն է, որը 2000 թ. ընդունել է ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ որպես մայրենի լեզուների իրավունքի ճանաչման և գործածության աջակցության օր: Այն Հայաստանի Հանրապետությունում նշվում է 2005 թվականից: Աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ հայերենը, հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է, նրա մտածողության և հոգու արգասիքն ու արտացոլանքը: Գրադարանում կազմակերպվող ամենատարբեր միջոցառումները՝ համագրույցները, ցուցահանդեսները, գրական վիկտորիաները և խաղերը, ընթերցողական համաժողովները միտված են մայրենի լեզվի և նրա անաղարտության պահպանմանը, գրագետ և գեղեցիկ խոսքի արվեստին և հոետորաբանությանը:

Մանկական գրքի միջազգային օր

Ամեն տարի ապրիլի 2-ին՝ մեծ հեքիաթագիր Հ. Ք. Անդերսենի ծննդյան օրը, աշխարհը նշում է Մանկական գրքի միջազգային օրը: Այն 1967 թ. հիմնադրվել է Մանկական գրքի միջազգային խորհրդի («IBBY») որոշմամբ ու նախաձեռնությամբ: Նպատակ ունի ուշադրություն դարձնելու մանկական գրականության հասանելիությանը և մանկական ընթերցանության տարածմանը: Օրը հագեցած է ոչ միայն Հ. Ք. Անդերսենի, այլև շատ հեքիաթագիրների հեքիաթներով, զրույցներով, թատերական և տիկնիկային ներկայացումներով, վիկտորինաներով, որին մասնակցում են գրադարանի թատերական ստուդիայի սաները, ինչպես նաև՝ գրադարանի ընթերցողները: Ծրագիրը նպաստում է կրտսեր և միջին տարիքի դպրոցականների ծանոթացմանը հայ և աշխարհի ժողովուրդների մանկական գրականությանը, հեքիաթներին ու պատմվածքներին:

Երեխաների պաշտպանության միջազգային օր

Ամեն տարի, սկսած 1950 թվականից, աշխարհում հունիսի 1-ին նշվում է Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Այն կոչված է մարդկանց ուշադրությունը հրավիրելու այն խնդիրներին, որոնց բախվում են մոլորակի երեխաները: Օրը հիշեցնում է մարդկանց, որ երեխաները ամենօրյա ուշադրության, սիրո և պաշտպանության, երջանիկ մանկության պահանջ ունեն: Եվ գրադարանում կազմակերպվող միջոցառումները մեկ հավաքական նպատակ ունեն՝ մանուկների մեջ զարգացնել իրենց իրավունքները պաշտպանելու, առողջ և երջանիկ ապրելու բարոյական ձգտումներ: Այդ օրը գրադարանում թևածում է մանկան ուրախ երգն ու պարը, ինչպես նաև՝ կազմակերպվում են թատերական, տիկնիկային ներկայացումներ, բարձրաձայն ընթերցանություններ, գեղարվեստական խմբերի ելույթներ, իսկ գրադարանամերձ հրապարակում՝ կավճանկարչու-

թյուն, որոնց մասնակցում են նաև առողջական խնդիրներ ունեցող՝ խոցելի և ներառական խմբերում ընդգրկված երեխաները:

Արևմտահայոց գրականության միամսյակ

Արևմտահայերենը 2010 թ. փետրվարից ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի վտանգված լեզուների էլեկտրոնային քարտեզում»՝ ստանալով հաստատապես վտանգված լեզվի կարգավիճակ: Այն վերակենդանացնելու և նրա կենսունակությունը պահպանելու համար ամեն տարի գրադարանում անցկացվում է «Արևմտահայոց գրականության միամսյակ», որի ընթացում երեխաները ծանոթանում են արևմտահայ գրականությանը և գրողների ստեղծագործություններին: Կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, բանաստեղծությունների ընթերցումներ, գրական երեկոներ, ցուցադրվում են արևմտահայերեն լեզվով ֆիլմեր ու մուլտֆիլմեր, գրքերի քննարկումներ: Գրադարանում մեկ ամիս շարունակ թևածում է արևմտահայերենը՝ արևմտահայոց հեքիաթներն ու գրական գոհարները:

Միջոցառումների նպատակն է առավել մեծ ուշադրություն դարձնել արևմտահայ գրականության և լեզվի տարածմանը, հանրահոչակմանը, հաղորդակցությանը, առավել ճանաչելի դարձնել արևմտահայերեն լեզուն ընթերցողների, մանուկների և պատանիների շրջանում:

Եվրոպական ժառանգության օրեր

1954 թ. Փարիզում ընդունված «Եվրոպական մշակութային կոնվենցիան» վավերացրած 50 պետություններում ամեն տարի անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումը: Այս ծրագիրը պաշտոնապես հաստատվել է Եվրոպայի Խորհրդի կողմից 1991 թ., որին 2000 թ. միացել է նաև Հայաստանը: Գրադարանում ամեն տարի իրականացվող միջոցառումների (ցերեկոյթներ, հեքիաթապատումներ, տիկնիկային ներկայացումներ, բարձրաձայն ընթերցանություններ, երաժշտական խմբային ունկնդրումներ) նպատակն

է երեխաների մոտ զարգացնել ժողովուրդների միջև փոխըմբռնումը և հարգանքը միմյանց մշակույթի և մշակութային բազմազանության նկատմամբ, հարգանք տածելով միմյանց ընդհանուր հիմնական արժեքների նկատմամբ՝ աջակցել համաեվրոպական մշակութային ժառանգության մեջ ազգային ներդրմանը, նպաստել միմյանց լեզուների, պատմության և քաղաքակրթության ուսումնասիրմանը:

Ֆրանկոֆոնիայի օրեր

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հիմնադրվել է 1970 թ.՝ ֆրանսիական համընդհանուր արժեքների ամրագրման և տարածման նպատակով:

Իսկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամեն տարի մասնակցում է Հայաստանում Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա առթիվ անցկացվող մշակութային միջոցառումներին: Ֆրանկոֆոնիայի օրերը գրադարանում բազմաբովանդակ և հետաքրքիր են: Կազմակերպվող հեքիաթապատումները, գրական և երաժշտական ցերեկոյթները, ֆրանսերեն լեզվով բարձրաձայն ընթերցանությունները, երաժշտական խմբային ունկնդրումները, ցուցահանդեսներն ու տիկնիկային ներկայացումները նպաստում են ֆրանսիական մշակույթի հետ հաղորդակցմանը, աջակցում են Հայաստանի Հանրապետությունում ֆրանսերեն լեզվի և ֆրանսիական մշակույթի տարածմանն ու ամրապնդմանը:

Բալասան

2019 թ. Իսկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, նախաձեռնեց «Բալասան» հեղինակային ծրագիրը: Ծրագրի շրջանակում Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բժշկական կենտրոնում բացվեց «Բալասան» մանկապատանեկան ընթերցանության և մտավոր ժամանցի անկյունը: Ծրագրի նպատակն է նպաստել երեխաների հոգեկան առողջությանը և ապահովել նրանց արդյունավետ զբաղվածությունը ստացիոնար բուժման ընթացքում: Նորաբաց անկյունը համալրվեց մտա-

վոր խաղերով, պատկերազարդ հրատարակություններով: Այցելությունների ընթացքում գրադարանի աշխատողներն իրականացրել են զանազան միջոցառումներ (հեքիաթապատումներ, տիկնիկային բեմադրություններ): Իրականացվել են այցելություններ նաև Հայաստանի «Կարմիր խաչ» ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն և «Հայրենիքի պաշտպան» վերականգնողական կենտրոն («Զինվորի տուն»)՝ Արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորված և այնտեղ բուժվող զինվորներին:

Ծրագրի շրջանակում գրադարանը համագործակցում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցության «Լուսե» կենտրոնի, Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող թիվ 17 հատուկ դպրոցի, Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, ՀՀ արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի, «Էկո արտթերապիա» կենտրոնի, հանրակրթական դպրոցների ներառական խմբերում ընդգրկված երեխաների հետ՝ նրանց համար կազմակերպելով գրադարանային զբոսարշավներ, զրույցներ, հեքիաթապատումներ, բարձրաձայն ընթերցանություններ, ինտերակտիվ խաղեր, տիկնիկային ներկայացումներ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում

Գրադարանում իրականացվում է նաև «Մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանում» ծրագիրը, որի շրջանակում անցկացվում են վարպետության դասեր, թեմատիկ քննարկումներ, մշակութային այցելություններ: Գրադարանի ընթերցողներն այցելել են Գյումրու «Եռանկյունի» դարբնոց, կավագործության արհեստանոց, «Միեր Մկրտչյանի», «Ասլամազյան քույրերի» թանգարաններ և շրջագայել քաղաքում: Կազմակերպվել են գորգագործության, տիկնիկագործության, ազգային պարերի վարպետության դասեր:

Ծրագրի նպատակն է մշակութային ոչ նյութական ժառանգության կարևորման և արժեվորման գիտակցության ձևավորումն ու հանրահռչակումը մանուկների ու պատանիների շրջանում:

Դպրոցական ճամբարներ

Գրադարանը 2017 թվականից գարնանը, ամռանը և աշնանը՝ դպրոցականների արձակուրդի օրերին, կազմակերպում է դպրոցական ճամբարներ՝ նպատակ ունենալով առավել հետաքրքիր դարձնել երեխաների առօրյան ու ժամանցը: Գամբար հաճախում են 6-ից 13 տարեկան ոչ միայն հայաստանաբնակ, այլև իրենց հանգիստը Հայաստանում անցկացնող տարբեր երկրներից ժամանած երեխաները: Ճամբարի աշխատանքներին անվճար հիմունքներով մասնակցում են նաև խոցելի խմբերի երեխաները: Երեխաների համար կազմակերպվում են բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր, այցելություններ թանգարաններ, թատրոններ և այլ մշակութային կենտրոններ: Ժամանցային բնույթի հետաքրքիր դասընթացները և վարպետության դասերը, ուսուցողական, կրթական և մշակութային պարապմունքները, գրադարանային զբոսարշավները, կինոդիտումները հնարավորություն են տալիս երեխաներին ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ:

Քո մասնագիտությունը

Մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտության ընտրությունը պատանիների կյանքում կարևոր և պատասխանատու քայլ է: Կատարել ընտրություն՝ նշանակում է ընտրել մասնագիտություն, որն առավելագույնս համապատասխանում է քո ընդունակություններին, հետաքրքրություններին ու անձնական նախասիրություններին: Այս դեպքում շատ կարևոր է նաև պատանիների շրջանում մասնագիտությունների և զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության տարածումը, որի համար նախատեսվում են հանդիպումներ տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց հետ: Կազմակերպվել են հիշարժան հանդիպումներ՝ բժիշկ, համաճարակաբան

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Արման Բաղայանի, քանդակագործ Վիգեն Ավետիսի, գյուղատնտես Նվարդ Շահնուրադյանի, մեղվաբույժ Մարիաննա Ավետիսյանի և այլ անձանց՝ գրողների, հոգեբանների, գրահրատարակիչների հետ: Կազմակերպվում են նաև ցուցահանդեսներ, զրույցներ, վիկտորինաներ, որոնց նպատակն է պատանիների մեջ ձևավորել պատասխանատվություն և պարտավորվածության զգացում, ինքնուրույն որոշում ընդունելու և մասնագիտական ընտրություն կատարելու ունակություն: միջոցառումներ, որոնք կաջակցեն նրանց կողմնորոշվել իրենց նախընտրած մասնագիտության մեջ և մասնագիտական ճիշտ ընտրություն կատարել:

Հեքիաթի դեսպաններ

Հեքիաթի սրահում գրադարանի հեքիաթասացներն ամեն օր պատմում են հեքիաթներ փոքրիկ այցելուների համար: Գրադարանի նախաձեռնությամբ 2010 թվականին Հայաստանում առաջին անգամ իրականացվեց հեղինակային ծրագիր, որ կրում էր «Հեքիաթի դեսպաններ» խորագիրը: Հեքիաթները կարդում են ՀՀ-ում հավատարմագրված երկրների դեսպանները՝ իրենց մայրենի լեզվով, ինչպես նաև՝ հայ անվանի մտավորականներ և արվեստագետներ:

Այս ծրագրի նպատակն է ստեղծել միջմշակույթային կապեր, մանուկ և պատանի ընթերցողին ծանոթացնել տարբեր երկրների մանկագիրների և գրողների ստեղծագործություններին, այդ երկրների կենցաղին և մշակույթին, բարելավել ու զարգացնել օտար լեզուների իմացությունը հանդիպումների և քննարկումների միջոցով:

Բարբառագիտություն

Բարբառները հայերեն լեզվի հիմքն են, նրա հարստությունը, մեր պատմության, մեր հիշողության գանձարանը: Այս ծրագրի շրջանակում հայոց լեզվի տարբեր բարբառներով իրականացվում են հեքիաթների պատումներ և բարձրաձայն ընթերցանություն, որով նոր սերնդի համար հասանելի և ըմբռնելի են դառնում հայերեն լեզվի բարբառային առանձնահատկությունները:

Ծրագրի նպատակն է մանուկներին և պատանիներին ծանոթացնել հայերեն լեզվի բարբառներին, նրանց համար բանասիրության և գրականության միջոցով հասանելի դարձնել հայերեն բարբառները և հետաքրքրություն առաջացնել դրանց նկատմամբ:

Ամփոփում

Իսնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանում յուրաքանչյուր տարի իրականացվում է մոտավորապես 200 կրթամշակութային ծրագիր և միջոցառում, որոնք բազմապիսի և բազմաբովանդակ են: Սակայն մեկն է բոլոր ծրագրերի և միջոցառումների նպատակը՝ խթանել ընթերցանությունն ու ընթերցասիրությունը մանուկների և պատանիների շրջանում՝ նպաստելով նրանց բազմակողմանի զարգացմանն ու գիտելիքի ձեռքբերմանը:

EDUCATIONAL PROGRAMS AS A TOOL FOR READING PROMOTION

ISKUHI AVETISYAN

Khanko Aper National Children's Library

Keywords: Children's Library, International Cooperation, Promotion of Children's and Youth Reading, Events.

In the Khanko Aper National Children's Library more than 200 educational and cultural programs and events are implemented every year, which are diverse and multi-faceted. However, the goal of all programs and events is to promote reading among children and teenagers, contributing to their multifaceted development and acquisition of knowledge.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1963-2023 թթ.)*

ՀՏԴ: 027.625(479.25)(091)

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-112

ԵԼԻԶԱՎԵՏ ԵՐԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0009-3037-0209](https://orcid.org/0009-0009-3037-0209)

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակչական գործունեությունը բխում է այն նպատակից, որ որդեգրել է գրադարանը 90 տարի շարունակ: Այսօր գրադարանն ունի հարուստ տպագիր ժառանգություն, որը խոսում է ամենօրյա կրթնաջան աշխատանքի մասին: Սույն հոդվածի շրջանակում անդրադառնում ենք գրադարանի տպագիր հրատարակությունների թեմատիկ առանձնահատկություններին:

The publishing activities of the Khnko Aper National Children's Library stems from the goal adopted by the library for 90 years. Today, the library has a rich print heritage, which is the result of the daily hard work. This article addresses the thematic features of the library's printed publications.

Բանալի բառեր՝ Խնկո Ապոր անվան մանկական գրադարան, գրադարանի հիմնադրման պատմություն, տպագիր ժառանգություն, գործառույթներ, հրատարակություններ, մատենագիտություն, թվային դարաշրջան:

Ինչպես հղել՝ Երեմյան Ե. (2023), Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1963-2023 թթ.), *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 112-136.
[https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-112](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-112)

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2023, գրախոսվել է 08.12.2023, ընդունվել է տպագրության 22.12.2023:

The article was submitted on 01.11.2023, reviewed on 08.12.2023, accepted for publication on 22.12.2023.

How to cite (APA style): Eremyan E. (2023), Publications of the Khnko Aper National Children's Library (1963-2023), *Herald of the Armenian Library Association*, 2(2), 112-136. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5)

Ներածություն

Գրադարանային համակարգում իրենց առանձնահատուկ տեղն ունեն մանկական գրադարանները, որոնց գործառույթները ինքնատիպ են՝ պայմանավորված ընթերցողական լսարանի առանձնահատկություններով:

«Ը գրադարանային համակարգում առանձնանում է Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը, որի հիմնադրման 90-ամյակը տոնեցին այս տարի: Ավանդույթներ և ինքնատիպ աշխատելաճ ունեցող մշակութային օջախը տասնամյակներ շարունակ, ի թիվս այլևայլ գործառույթների, իրականացրել է հրատարակչական աշխատանք, որի արդյունքը տեսանելի դարձավ հիմնադրման 90-ամյակի առթիվ կազմակերպված ցուցադրության ժամանակ:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանի գիտական-հրատարակչական գործունեությունը:

Համառոտ պատմական ակնարկ

Երևան քաղաքում է գտնվում հայ մանկական գրքի գլխավոր օջախը՝ Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը, որն այս օրերին նշում է իր հիմնադրման 90 ամյակը: Գրադարան, որն իր բազմաբնույթ և բազմաբովանդակ աշխատանքներով բավարարում է ոչ միայն մանուկ ու պատանի ընթերցողների պահանջները, այլև, արդեն շուրջ 60 տարի, ղեկավարում է հանրապետությունում ընթերցանության հետ կապված բազմաթիվ հարցեր ու խնդիրներ:

Գործունեության երկար տարիների ընթացքում գրադարանում կազմվել և հրատարակվել են բազմաթիվ մեթոդա-մատենագիտական նյութեր, որոնք բաշխվել են հանրապետության մանկական ու դպրոցական գրադարաններին, դարձել մասնագիտական նյութերի ներդրման, փորձի փոխանակման աղբյուր, աշխատանքների

կազմակերպման ծրագիր և ուղեցույց: Խնկո Ապոր անվան ազգային գրադարանը բավարարել է ընթերցողների տեղեկատվական պահանջները, նպաստել արտադասարանային ընթերցանության կազմակերպմանը, որի արդյունքում իր գործուն մասնակցությունն է ունեցել հանրապետության մարզերում և քաղաքներում գործող մանկական, մարզային գրադարանների մանկական բաժինների, ինչպես նաև դպրոցական գրադարանների աշխատանքների կազմակերպման գործընթացին: Գրադարանի կողմից հաճախ կազմակերպվող սեմինար պարապմունքները, կոնֆերանսները, այցերը հետևողականորեն նպաստել են գրադարանների հետազոտական, մատենագիտական, մեթոդական աշխատանքների իրականացմանը:

60-ական թվականներին հանրապետությունում ընդարձակվում է գրադարանային ցանցը. բացվում են բազմաթիվ մանկական և դպրոցական գրադարաններ, որոնք իրենց հետ բերում են աշխատանքները համակարգելու խնդիրներ: Եվ ահա այդ գրադարաններին մեթոդական-մատենագիտական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտություն է առաջացանում ունենալ հանրապետական մի գրադարան, որը պիտի ղեկավարեր այդ աշխատանքները: Այս տարիներին գրադարանը մեծ հեղինակություն է ձեռք բերում:

Իր բազմաբնույթ աշխատանքների շնորհիվ 1962 թ. ՀԽՍՀ նախարարների խորհրդի դեկտեմբերի 8-ի թ. 988 որոշմամբ գրադարանը ստանում է հանրապետական կարգ, ըստ կանոնադրության՝ համարվել է ազգային գրապահոց և մեթոդական աշխատանքների կենտրոն երեխաներին սպասարկող գրադարանների համար՝ իր վրա վերցնելով հանրապետության դպրոցական և մանկական գրադարանների մեթոդական-մատենագիտական ղեկավարման աշխատանքները:

Գրադարանի հրապարակությունները

1963 թվականից սկսած Մեթոդ-մատենագիտական միացյալ բաժինը իրականացնում է հրատարակչական աշխատանքներ. կազ-

մում և հրատարակում է բազմաբովանդակ մասնագիտական գրականություն՝ մեթոդական ձեռնարկներ, տեղեկատու-մատենագիտական ցանկեր, մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, օրացույցներ՝ նվիրված մանկապատանեկան պարբերական մամուլին, գրողներին, արվեստագետներին, մանկավարժներին:

«Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց»-ի առաջին համարը գրադարանավարների սեղանին դրվեց 1963 թ.: Այն մեքենագիր էր՝ բաղկացած 80 օրինակից: Սկզբնական շրջանում նյութերը մեքենագիր էին՝ 50-60 օրինակ տպաքանակով: 1966 թ. հրատարակվել է թիթեղատիպ՝ 400-500 օրինակով, իսկ 1967 թվականից՝ նյութերը հրատարակվել են տպարանում՝ 1000-1500 օրինակ տպաքանակով:

Գրադարանի մատենագիտական բաժինը 60 տարի շարունակ, առ այսօր, կազմում և հրատարակում է «Հիշարժան տարեթվեր» մեթոդ-մատենագիտական հանձնարարականը (օրացույցը), որի նպատակն է օգնել գրադարաններին և այլ մանկական կազմակերպություններին՝ համակարգելու իրենց աշխատանքները:

1970-ական թվականներին հանրապետությունում մշակույթի, գրահրատարակչական գործի զարգացմանը զուգընթաց՝ առավել ակտիվացան գրադարանի մեթոդական-մատենագիտական աշխատանքները:

1974 թ. Մեթոդ-մատենագիտական բաժինը տարանջատվեց երկու առանձին բաժիններ:

Հետագա տարիներին գրադարանում իրականացվող մեթոդական, մատենագիտական, գիտահետազոտական, դաստիարակության և զանգվածային միջոցառումների աշխատանքների, սոցիոլոգիական, վիճակագրական վերլուծությունների, գրքային ֆոնդերի ուսումնասիրությունների հիման վրա գիտական հիմքերի վրա դրվեցին երեխաների գրադարանային սպասարկումը, դաստիարակչական ու մեթոդական աշխատանքները: Մշակվեցին և կատարելագործվեցին գիրքը երեխային հասցնելու բազմաթիվ ձևեր և մեթոդ-

ներ: Իր իրականացրած աշխատանքների համար 1982 թ. գրադարանին շնորհվեց գիտական առաջին կարգ:

ՀՀ անկախությունից հետո՝ 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին, ոչ միայն չդադարեց «Հիշարժան տարեթվեր» օրացույցի կազմումը, այլև համակարգչի և պատճենահանման միջոցով կազմվեցին և հրատարակվեցին ժամանակի պահանջը բավարարող բազմաբնույթ հանձնարարական ցանկեր և այլ նյութեր:

1998-1999 թթ., արդեն տպարանում հրատարակվեցին գրադարանի կողմից կազմված գունազարդ «Ճոճանակ» մանկական ամսագրի երեք համարները: Հետագա տարիներին՝ 2002 թվականից սկսած, գրադարանի կողմից կազմված նյութերը հրատարակվեցին տպարանում:

Գրադարանի կողմից 1986 և 1990 թթ. հրատարակված գունազարդ «Գարնան շողեր»-ը 2002 թ. հրատարակվեց երրորդ անգամ, ուր, ինչպես նախորդ հրատարակություններում, ամփոփվեցին գրադարանի գրական և նկարչական խմբակների սաների բանաստեղծությունները, պատմվածքներն ու նկարները:

Գրադարանի նկարչական խմբակի սաների նկարազարդումներով հրատարակվեցին գունազարդ թերթվող ալբոմ-օրացույցներ՝ «2003 օրացույց» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) և «2008 օրացույց» (հայերեն, անգլերեն)՝ նվիրված գրադարանի հիմնադրման 70 և 75-ամյակներին:

2003 թ. ՀՀ կառավարության թ. 886 որոշմամբ գրադարանը վերակազմավորվեց՝ որպես Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան:

2006 թ. հրատարակվեց «Անկախության 15-ամյա ուղին», որը հանրապետության տարբեր մարզերի պատանի ընթերցողների շարադրությունների ժողովածու էր՝ նվիրված Հայաստանի անկախությանը. գրքի ձևավորումը իրականացրել էին Խնկո Ապոր ազգային մանկական գրադարանի նկարչական խմբակի սաները: Ավելի ուշ՝ 2009 թ., գրադարանի աջակցությամբ հրատարակվեց հերոսա-

մարտի 90-ամյակին նվիրված Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոնի երեխաների նկարչական ստեղծագործությունների «Սարդարապատի դոդանջները» խորագրով գիրք-ալբոմը, ուր ներառվեցին հայ ժողովրդի հերոսական պայքարը ներկայացնող 16 պաննոներ:

Հայկական գրատպության 500-ամյակին ընդառաջ՝ 2010 թ. ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ և Հայկական գրատպության 500-ամյակի հոբելյանական հանձնաժողովի հովանու ներքո, ինչպես նաև «Արտերիջ» գրախանութի, «Հայ գրքի կենտրոն» ՀԿ-ի, «Անտարես հոլդինգը»-ի և Հրատարակիչների ազգային ասոցիացիայի հետ գործակցությամբ, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը կազմակերպեց «Դարձ առ գիրք» խորագրով գրքարվեստի փառատոն՝ միտված գրքի արժևորմանն ու ընթերցանության խթանմանը: Փառատոնը միջմշակութային երկխոսության, փորձի փոխանակման և համագործակցության միջոցով նպաստեց Հայաստանում ժամանակակից գրականության, թարգմանական գործի, գրքի ձևավորման մշակույթի, գրատպության զարգացմանը: Այն նպատակ ուներ հանրությանը վերադարձնել դեպի գիրքն ու ընթերցանությունը: Փառատոնին մասնակցեցին տարբեր երկրների հրատարակիչներ, գրողներ, արվեստագետներ: Ծրագիրը ներառում էր բազմաբնույթ միջոցառումներ:

Գրքի միջազգային երեք հիմնական մասնագիտական ասոցիացիաների ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախընտրական հանձնախմբի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում անցկացված նիստի ժամանակ Երևանը հռչակվեց 2012 թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այսպիսով Երևանը դարձավ Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակված 12-րդ քաղաքը: Ընդհանուր միջոցառումների շրջանակում 2012 թ. գրադարանի կողմից կազմվեցին ու հրատարակվեցին մի շարք արժեքավոր գրքեր: Նույն թվականին ՀՀ մշակույթի նախարարության և «Զանգակ» հրատարակչության հետ համատեղ իրականացվեց «Ես գիրք եմ ստեղծում» մանկական գրա-

կան-սուսուցողական միջոցառումը, որի նպատակը գրքի ստեղծման աշխատանքներին մասնակից դարձնելու միջոցով երեխաների ու պատանիների մոտ գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն և սեր ձևավորելն էր: Ծրագրի առաջին փուլում անցկացվեց «Գիրքը, որը փոխեց իմ կյանքը» խորագրով շարադրությունների մրցույթը: Ընթերցումների արդյունքում ընտրված 30 լավագույն աշխատանքներն ամփոփվեցին «Իմ ստեղծած գիրքը» ժողովածուում: Ծրագրի երկրորդ փուլում գիրքը պատկերազարդելու և պատանիների մեջ ընթերցանության նկատմամբ նոր խթաններ առաջացնելու նպատակով հայտարարվեց «Ես գիրք եմ ստեղծում» գրքի ձևավորման մրցույթը, որի արդյունքում ներկայացվեց 200 աշխատանք: Նկարազարդումների և շարադրությունների հեղինակները «Զանգակ» հրատարակչությունում մասնակցեցին գրքի ձևավորման և հրատարակման գործընթացին, ականատես եղան գրքի արարմանը:

Վերոնշյալ աշխատանքները հիմք դարձան՝ 2013 թվականից IBBY-ին՝ Մանկապատանեկան գրքի կոմիտեին անդամակցելու և լիիրավ գործընկեր դառնալու համար: Ստեղծվեց IBBY Հայաստան կոմիտեն, որի հիմնադիրներն են Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ու «Հրանտ Մաթևոսյան» հիմնադրամը: IBBY-ի անդամակցությունը հեռանկարային հնարավորություն ստեղծեց Հայաստանում IBBY-ի նախագծերի (մանկապատանեկան գրականության զարգացում և ընթերցանության խթանում) իրականացման համար, ինչպես նաև ապահովեց Հայաստանի մասնակցությունը IBBY-ի և նրա ավելի քան 80 անդամ երկրների ծրագրերին ու նախագծերին: Միջազգային այս կառույցին Հայաստանի մասնակցությունը նպաստավոր հիմք ստեղծեց՝ հանրապետությունում մանկական գրականությունը և մանկական գրքի ձևավորման մշակույթը խթանելու ու զարգացնելու համար: 2015 թ. IBBY Հայաստան կոմիտեն իրականացրեց «Պատանին և շրջակա միջավայրը» խորագրով ստեղծագործական մրցույթ-նախագիծը, որի շրջանակում գերմանացի գրող Մանֆրեդ Թայգենը եռօրյա վարպետության դաս անցկաց-

րեց հայ երիտասարդ գրողների համար: Նա հայ պատանիների համար գրեց «Ապակյա Արամը» պատմվածքը, որը թարգմանաբար հրատարակվեց հայերեն: Նույն թվականին նախագծին մասնակից հայ երիտասարդ գրողների «7 գույն» պատմվածքների ժողովածուն և Ս. Թայգենի «Ապակյա Արամը» գրքերը հրատարակվեցին «IBBY Յամանդա» հիմնադրամի «Ընթերցող դառնալու երեխայի իրավունքը» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: 2017 թ. Իտալիայի Բոլոնիա քաղաքում անցկացված մանկապատանեկան գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառում, որին մասնակցում էր ՀՀ մշակույթի նախարարության գլխավորած պատվիրակությունը («Ձանգակ-97», «Ակտուալ արվեստ» հրատարակչությունները, «Բուկինիստ» գրախանութը, «GSM» ստուդիան, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը), կայացավ «IBBY Հայաստան» ազգային կոմիտեի հրատարակած «7 գույն» պատմվածքների ժողովածուի անգլերեն տարբերակի (2016 թ.) շնորհանդեսը: Միջոցառման ընթացքում ներկայացվեց գրքի ստեղծման պատմությունը: Մանկապատանեկան գրքի միջազգային կոմիտեի (IBBY) և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի համագործակցության արդյունքում՝ իրականացվեց ևս մի հրաշալի և ուսանելի ծրագիր՝ գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ, որը վարում էր Լիոնի քաղաքային գրադարանի մանկական բաժնի վարիչ Վիոլին Կաննաչերը: Ծրագրի ավարտից հետո գրադարանավարների համար՝ որպես ուղեցույց, ամփոփվեց և հրատարակվեց «Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը» մեթոդական ձեռնարկը:

2018 թ. մարտի 7-ին գրադարանի հրավերով «Հեքիաթի դեպաններ» հեղինակային նախագծի հյուրն էր ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը (այժմ՝ ՀՀ վարչապետ), ով գրադարանի փոքրիկ ընթերցողների համար կարդաց իր հեղինակած «Չար տնակի հեքիաթը» ստեղծագործությունը, որը գրվել էր հատուկ գրադարանի ընթերցողների համար և ընթերցվում էր առաջին անգամ: 2018 թ.

գիրքը հրատարակվեց գրադարանի և «IBBY Հայաստան» նախագծի շրջանակում՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի սաների ձևավորմամբ:

2019 թ. գրադարանը և IBBY Հայաստանը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, «Արևիկ» հրատարակչության և «Արտ-բրիջ» գրախանութի գործակցությամբ, անցկացրեցին Մանկագիրների և նկարազարդողների մրցույթ, որի նպատակն էր խթանել մանկագրության զարգացումը Հայաստանում: Մանկապատանեկան արձակ անվանակարգում երկրորդ մրցանակին արժանացած Հովիկ Մխիթարյանի և Էդգար Թաթևյանի ստեղծագործությունները հրատարակվեցին մեկ գրքով:

2019 թ. Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանը առանձին տաղավարով մասնակցեց ԱՄԷ-ի Շարժայի միջազգային գրքի ամենամյա տոնավաճառին: Տոնավաճառի շրջանակում իրականացվեց «IBBY Armenia» ՀԿ-ի հետ համագործակցությամբ հրատարակված գրքերի շնորհանդեսը:

Ամփոփում

Գրադարանը շարունակում է իր աշխատանքները նույն ոգով. կազմում և հրատարակում է «Հիշարժան տարեթվեր», «Հայ մանկական գրականության մատենագիտություն» պրակները, կենսամատենագիտություններ, հանձնարարական ցանկեր, մեթոդական նյութեր, ակտիվորեն համագործակցում է Հայաստանում IBBY-ի և այլ միջազգային նախագծերին: Գրադարանն իր հրատարակությունները առկա և առցանց տարբերակներով տրամադրում է ՀՀ մարզերի գրադարաններին՝ նպաստելով մանկապատանեկան գրականության զարգացման և ընթերցանության կազմակերպման աշխատանքներին:

PUBLICATIONS OF
THE KHNKO APER NATIONAL CHILDREN'S LIBRARY

ELIZAVET YEREMYAN

Khnko Aper National Children's Library

Keywords: Khnko Aper National Children's Library, History of the Foundation of the Library, Printed Heritage, Operations, Publications, Bibliography, Digital Age.

The library continues its work in the same spirit: compiles and publishes "Memorable Dates", "Bibliography of Armenian Children's Literature" books, bio-bibliographies, instruction lists, methodological materials, actively cooperates with IBBY and other international projects in Armenia. The library provides its publications in existing and online versions to the libraries of RA regions, contributing to the development of children's literature and the organization of reading.

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ցանկ իսնկո Ապոր անվան ազգային
մանկական գրադարանի տպագրած գրքերի**

1965

1. Մելյան Բալաբեկ: Երբ սիրում են գործը (Ստեփանավանի շրջանային մանկական գրադարանի աշխատանքային փորձը):

2. Քաղաքային, շրջանային մանկական գրադարանների աշխատողների սեմինար պարապմունքների թեմատիկան:

1966

3. Աշխատանքը մանուկների հետ գյուղական գրադարաններում: Գործնական ձեռնարկ: Գլուխ 2. Մանուկների ընթերցանության ղեկավարումը /Կազմ.՝ Տ. Լ. Սադոֆևա; Փոխադրեց՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբ.՝ Հ. Հ. Սիլվանյան:

4. Մանուկ ընթերցողներին՝ ՍՄԿԿ 23-րդ համագումարի մասին: Մեթոդական օգնություն մանուկներին սպասարկող գրադարաններին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Գ. Հակոբյան:

5. Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց (յուրաքանչյուր տարի առ այսօր):

1967

6. Ինչ կարդալ Վ.Ի. Լենինի մասին: 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Միլյան, Ժ. Ստեփանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

7. Ինչ կարդալ քաղաքացիական կոիվների մասին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխչյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

8. Ինչո՞ւ Ապերը մանուկներին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

9. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Ինչ կարդալ (ՍՍՀՄ ժողովուրդների մանկական գրականությունից: 2-8-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

10. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Ինչ կարդալ (8-10-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

11. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Հայաստանը նոր հնգամյակում:

12. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Պատանի քննիկոսին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար):

13. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Քեզ համար պատանի ֆիզիկոս: Հանձնարարական գրականության ցանկ:

14. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին և Վ. Ի. Լենինի 100-ամյակին: Հանձնարարական գրականության ցանկ:

15. Հովհաննես Թումանյանը մանուկներին /Կազմ.՝ Է. Երիցյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

16. Ճանաչիր քո հայրենիքը և արտադրության առաջավորներին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխչյան:

17. Շրջանային, քաղաքային մանկական գրադարանների տարեկան պլանի սխեման /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

18. Վ. Ի. Լենինի անվան պիոներական կազմակերպության 45-ամյակը: Մեթոդական նամակ:

1968

19. Գիտա-հանրամատչելի գրականության պրոպագանդան մանկական գրադարանում: (Մեթոդական նամակ) / Կազմ.՝ Ա. Ամիրյան:

20. Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Բանաստեղծությունների հանձնարարական ցանկ /Կազմ.՝ Է. Երիցյան:

21. Ընթերցանության ղեկավարման մասին: (Մեթոդա-հրահանգչական նամակ գրադարանավարի համար) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

22. Ինչ կարդալ կոմերիտիության մասին: Հանձնարարարական գրականության ծանոթագրված ցանկ 6-10-րդ դասարանների համար ՀամԼԿԵՄ 50-ամյակի առթիվ:

23. Խաժակ Գյուլնազարյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

24. Խնկո-Ապր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1968 թթ.) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Ս. Ամիրյան:

25. Հայրապետ Հայրապետյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական և կրտսեր տարիքի սովորողների համար /Կազմ.՝ Ա. Նիկոլյան:

26. Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ: Ինչ կարդալ գիտա-ֆանտաստիկ և արկածային գրականությունից /Կազմ.՝ Լ. Վ. Գևորգյան:

27. Հուշագրություններ: Հանձնարարական գրականության ցանկ 7-10-րդ դասարաններում սովորողների համար:

28. Ղազարոս Աղայանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Է. Երիցյան:

29. Ճանապարհորդը ավարտեց իր երթուղին: (Մեծ հոկտեմբերի 50-ամյակին նվիրված այբոմ - ճանապարհորդի երթուղին դպրոցական գրադարաններում) /Կազմ.՝ Բ. Մելյան:

30. Մանկական գրադարանի կապը ծնողների և դպրոցի հետ: Մեթոդա-հրահանգչական նամակ:

31. Մանկական գրադարանների աշխատանքի փորձից /Խմբ.՝ Ա. Ամիրյան:

32. Մելյան Բալբեկ: Գյուղական գրադարանը և մանուկ ընթերցողը: (Գրադարանավարների աշխատանքի փորձից):

33. Մկրտիչ Կորյուն: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Է. Երիցյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

34. Պատվական Խաչատրյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան; Խմբ.՝ Վ. Վարդանյան:

35. Պարբերական մամուլի պրոպագանդան մանկական գրադարանում /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

36. Ռուբեն Ղարիբյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

37. Սողոմոն Գրիգորի Մկրտչյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

38. Սուրեն Մուրադյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

39. Վազգեն Գրիգորի Տայյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

40. Վախտանգ Անանյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Է. Երիցյան:

41. Վիկտոր Վարդանի Վարդանյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան; Խմբ.՝ Ս. Մկրտչյան:

1969

42. Աթաբեկ Խնկոյան (Խնկո-Ապեր): Կենսագրություն և մատենագիտություն /Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

43. Գուրգեն Բորյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ս. Լալախանյան:

44. Երկրագիտական աշխատանքի կազմակերպումը մանկական գրադարանում (Մեթոդա-հրահանգչական նամակ) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

45. Էդուարդ Ավագյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի դպրոցականների համար:

46. Թումանյանական օրերը մանկական գրադարանում: (Օգնություն մանուկներին սպասարկող գրադարանավարներին) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

47. Ինչ կարդալ մանուկներին: Գրականության անտագրված հանձնարարական ցանկ նախադպրոցական հասակի և I-IV դասարանների երեխաների համար: Պրակ 2. 1950-1967 /Կազմ.՝ Բ. Գ. Ջաքարյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

48. Ինչպես անցկացնել լեինյան ընթերցումները մանկական գրադարաններում: (Ծննդյան 100-ամյակի առթիվ):

49. Խնկո-Ապրր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1968 թթ.) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

50. Հայկական ՍՍՀ մանկական գրադարանների 1968 թ. հաշվետվությունների տեսություն:

51. Հենրիկ Սևան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ: Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս. Մ. Խարազյան:

52. Մատենագիտությունը ծառայում է մանուկ ընթերցողներին: (Լեւինականի քաղաքային մանկական գրադարանների աշխատանքի փորձից) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

53. Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ միջին և բարձր տարիքի սովորողների համար (Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ):

54. Վիկտոր Վարդանի Վարդանյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ (Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

1970

55. Արշավիր Դարբնի: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Յ. Սիմոնյան; Խմբ. Ա. Հակոբյան:

56. Բանաստեղծությունների ցանկ նվիրված Սովետական Հայաստանին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 4-8-րդ դասարանների համար: (50-ամյակի առթիվ) /Կազմ.՝ Մ. Մուրադյան:

57. Եղբայրական հանրապետությունների գրողները մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան:

58. Խաչիկ Հրաչյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Բ. Գ. Մելյան:

59. Խնկոյանական օրերը մանկական գրադարաններում /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

60. Հանձնարարական գրականության թեմատիկ ցանկ 2-6-րդ դասարաններում սովորողների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան:

61. Հովհաննես Ղուկասյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

62. Հովհաննես Շիրազ: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Շ. Ա. Արմենյան:

63. Մաթևոս Դարբինյան (Կենսամատենագիտություն) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս.Բ. Աղաբաբյան:

64. Մանուկ ընթերցողների ուսումնասիրության և նրանց ընթերցանության ղեկավարումը: (Մեթոդական ձեռնարկ գրադարանավարների համար) /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբագիր՝ Հ. Սիլվանյան:

65. Սիլվա Կապուտիկյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

66. Սովետական Հայաստան - երկիր հարազատ: (Հանձնարարական գրականության ցանկ 7-8-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

67. Ստեփան Զորյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հոբոս-Ապեր:

68. Վ. Ի. Լենինի մասին գրականության պրոպագանդան կրտսեր տարիքի (1-4 դաս.) արճնեմենտում /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան:

1971

69. Աթաբեկ Իսկոյան: Ծննդյան հարյուրամյակի առթիվ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու: (Օգնություն մանկական գրադարանի աշխատողներին) /Խմբ.՝ Վ. Ա. Իսկոյան:

70. Արազյան Թերեզա: Արամ Սաթունց: Հանձնարարական աշխատանք ընթերցողների գեղագիտական դաստիարակության ղեկավարողներին:

71. Գրողները մանուկներին: (Գրականության հանձնարարական ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար /Խմբ.՝ Հ. Դանիելյան:

72. Լուսիկ Բառնակյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

73. Հռոս-Ապեր: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան; Խմբ.՝ Բ. Գ. Մելյան:

74. Մնացական Թարյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Ս. Մաթևոսյան:

75. Նանսեն Միքայելյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

76. Սարմեն: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր, միջին և բարձր տարիքի դպրոցականների համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

77. ՍՄԿԿ 24-րդ համագումարի նյութերի պրոպագանդումը մանկական և դպրոցական գրադարաններում (Մեթոդական նամակ մանուկների ընթերցանությունը ղեկավարողներին):

1972

78. Անահիտ Սեկոյան: Հանձնարարված գրականության ծանոթագրության ցանկ 7-9-րդ դասարանների ընթերցողների համար /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

79. Արազյան Թ. Մ. Սոֆյա Սամվելյան: Հանձնարարական աշխատանք ընթերցողների գեղագիտության դաստիարակությունը ղեկավարողներին) /Խմբ.՝ Յ. Լ. Սիմոնյան:

80. Գեղագիտական աշխատանքը մանկական գրադարանում: (Իսկոյան-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի աշխատանքի փորձից) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Է. Ս. Ավագյան:

81. Գրողները մանուկներին: (Գրական հանձնարարական ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանի աշակերտների համար) /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան; Խմբ.՝ Ե. Հ. Գրիգորյան:

82. Հայ մանկական գրականության մատենագիտություն.

Պրակ 1. 1920-1945 թթ.- Երևան, 1972: Վերահրատ.՝ Երևան, 1988:

Պրակ 2. Սովետական շրջանի հրատարակություններ (1946-1972) /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան, Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան.- Երևան, 1974:

Պրակ 3. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական հրատարակություններ /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան.- Երևան, 1975:

Պրակ 4. Սովետական շրջանի հրատարակություններ (1973-1982 թթ.) /Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.- Երևան, 1984:

Պրակ 5. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական շրջանի հրատարակություններ (1973-1982 թթ.) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.- Երևան, 1987:

Պրակ 6. 1983-1987 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2007:

Պրակ 7. 1988-1992 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2013:

Պրակ 8. 1993-1997 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2015:

Պրակ 9. 1998-2002 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2018:

83. Հեքիաթների աշխարհում: Գրականության հանձնարարականների ցանկ 1-3-րդ դասարանների ընթերցողների համար /Կազմ.՝ Ս. Զ. Ավետիսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

84. Ղազարոս Աղայան (1840-1911): Մատենագիտություն /Կազմ.՝ Փ. Հ. Խանզադյան, Գ. Ա. Աղյան; Խմբ. և առաջաբ.՝ Ա. Պ. Հակոբջանյան:

85. Ճանապարհորդություն գեղեցիկի աշխարհում: Հանձնարարական գրականության ցանկ 7-8-րդ դասարանների աշակերտների համար: Պրակ 1-4 /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.

86. Մանկական գրադարան: Գործնական մեթոդական ձեռնարկ մանուկների ընթերցանությունը ղեկավարների համար /Կազմող՝ Ն. Բ. Մեղվեղև և ուրիշն.: Ռուս. թարգմ.՝ Հր. Կոստիկյան; Խմբ.՝ Հ. Հ. Դանիելյան:

87. Մանկական գրադարանը ՍՍՀՄ-ի 50-ամյակին /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1973

88. Արեգ Լուսինյանը մանուկներին: Օգնություն գրադարաններում՝ երեխաների հետ տարվող գեղագիտական աշխատանքը ղեկավարողներին /Կազմ.՝ Թ. Մ. Արագյան:

89. Գեղունի Չթյանը մանուկներին: Օգնություն գրադարաններում երեխաների հետ տարվող գեղագիտական աշխատանքը ղեկավարողներին /Խմբ.՝ Բ. Գ. Գրիգորյան:

90. Գրողները մանուկներին: Գրականության հանձնարարված ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան:

91. Իսնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1973 թթ.):

92. Մանկական գրադարանների աշխատանքի հիմնական ցուցանիշները 1972 թ. /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

93. Մկրտիչ Կորյուն /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

1974

94. Հայրապետ Հայրապետյան (1874-1962): Մատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լավախանյան, Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան:

95. Քո դասագրքից այն կողմ: Ֆիզիկայի, քիմիայի և մաթեմատիկայի հանձնարարված գրականության ծանոթագրության ցանկ 6-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1975

96. Անուշավան Գասպարյանը մանուկներին /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

97. Դանիելյան Հայկուշ: Համագումարի ուղիով: Մանուկներին սպասարկող գրադարանների աշխատանքի փորձից /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

98. Ընթերցողի ուսումնասիրումը և դաստիարակությունը մանկական գրադարանում: Մեթոդական ցուցումներ /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

99. Հայրենագիտական աշխատանքը Լենինականի մանկական գրադարաններում: Մեթոդական հանձնարարականներ երեխաների ընթերցանության ղեկավարներին /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

100. Միշտ պատրաստ: Մեթոդա-հրահանգչական նամակ մանուկների ընթերցանությունը ղեկավարողների համար /Կազմ.՝ Ա. Գ. Թադևոսյան:

101. Վախթանգ Անանյանը և մանկական գրադարանը: Մեթոդական օգնություն մանուկների ընթերցանությունը ղեկավարողներին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1976

102. Ապագան լուսավոր է և գեղեցիկ /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

103. Եղիր առողջ և առույգ: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 5-8 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

104. Հռիփսիմե Պողոսյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Խ. Մ. Գյուլնազարյան:

105. Ճանաչիր բուսական և կենդանական աշխարհը: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 4-8 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

106. Նոր գրքեր: Հանձնարարված գրականության թեմատիկ ցանկ 4-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1977

107. Արաքս: Մատենագիտություն /Կազմ.՝ Ե. Կ. Երեմյան; Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

108. Գրադարանային դասակարգման աղյուսակներ մանկական գրադարանների համար /Թարգմ.՝ Հ. Հ. Սիլվանյան:

1978

109. Խաժակ Գյուլնազարյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Լ. Կարապետյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

110. «Պիոներ» ամսագրի մատենագիտություն /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան, Ռ. Հ. Մուշեղյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան, Բ. Գ. Զաքարյան:

Պրակ 1. 1923-1955.- 1978:

Պրակ 2. 1956-1965.- 1984.:

Պրակ 3. 1966-1980.- 1988:

111. Յուզգդրական աշխատանքը մանկական գրադարաններում (Մեթոդական հանձնարարականներ) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1979

112. Ամեն լավագույնը երեխաներին: Մեթոդական հանձնարարական՝ նվիրված մանկան միջազգային տարվան /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

113. Գրադարանային մատենագիտական դասակարգում: Աղյուսակներ մանկական գրադարանների համար /Թարգմ. և փոխադր.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան:

114. Կարգային գրացուցակների ձևավորումը մանկական գրադարանների ԳՄԴ աղյուսակների համաձայն (Մեթոդական-հրահանգչական նամակ) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

115. Հակոբ Աղաբաբ: Մատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Գ. Հ. Սրվանձտյան:

116. Մանկական գրադարանների ֆոնդերի և գրացուցակների փոխադրումը ԳՄԴ աղյուսակների: Մեթոդա-հրահանգչական նամակ /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան:

1980

117. Աշոտ Շայրոն: Հանձնարված գրականության ծանոթագրված ցանկ 5-8-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Ա. Աբովյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

118. Սուրեն Մուրադյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1981

119. Կամսար Ավետիսյան: Գրականության հանձնարարական ցանկ /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

120. Մատենագիտություն «Հասկեր» ամսագրի (1905-1917, 1922) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

121. Պատանին գանգրահեր: Մեթոդական հանձնարարականներ երեխաների ընթերցանությունը ղեկավարողների համար /Կազմ.՝ Գ. Լ. Ավետիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

122. Վիկտոր Վարդանյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1982

123. Գրողները մանուկներին: Հանձնարարված գրականության ծանոթագրված ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

124. Գրքեր հարազատ և մտերիմ: Մեթոդական հանձնարարական մանկական գրքի շաբաթի առթիվ /Կազմ.՝ Շ. Ս. Նալբանդյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

125. Դարաշրջանի միտքը, պատիվն ու խիղճը: Մեթոդական հանձնարություններ /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

126. Երբ միասին են բաբախում սրտերը: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

127. Մանկական գրականության հետ տարվող աշխատանքները ԳԿՀ-ում: Մեթոդական հանձնարարական մանուկներին սպասարկող գրադարանների համար /Կազմ.՝ Գ. Կ. Միրիբյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

128. Վալտեր Արամյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ 6-8-րդ դասարանների համար /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

1983

129. Ասք բուլճիկյան ընդհատակի մասին: Մեթոդական հանձնարարական՝ ՌՍԴԲԿ երկրորդ համագումարի 80-ամյակը /Կազմ.՝ Գ. Լ. Ավետիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

130. Գիտելիքների աշխարհում: Գիտահանրամատչելի գրականության ծանոթագրված ցանկ 6-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Փ. Հ. Մեժլումյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

131. Մանկական գրքի առաջին օջախը (Ուղեցույց) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

132. Սովետական իրավունքը և ընթերցողը (Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Գ. Կ. Խաչատրյան:

133. Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Ֆ. Խաչատրյան:

1984

134. Գեղեցիկ և առողջ լինելու գաղտնիքը (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

135. Գիտահանրամատչելի գրականության դերը երեխայի կյանքում (Մեթոդական օգնություն գրադարանավարներին) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Ռ. Իշխանյան:

136. Գրացուցակների կազմակերպումը և պրոպագանդան գրադարանում (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ի. Ա. Ավետիսյան; Խմբ.՝ Բ. Գ. Զաքարյան:

137. Մանուկների հյուրընկալ տունը: Ուղեցույց:

138. Նորը գաղափարախոսական աշխատանքում: Մեթոդական հանձնարարական /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

139. Վազգեն Տայյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Ս. Ս. Բաբայան:

1985

140. Գարնան շողեր /Կազմ.՝ Ա. Պետրոսյան; Առաջաբ., խմբ.՝ Ա. Պողոսյան:

141. Գիտության տունը: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Ա. Նարիմանյան; Խմբ.՝ Էդ. Ավագյան:

142. Գրադարանային ակտիվ և խորհուրդ: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Հ. Բ. Հարությունյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

143. Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ... Արկածային և գիտաֆանտաստիկ գրականության ծանոթագրությունների ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Գ. Հ. Դումանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

144. Խնկո-Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1973-1983 թթ.) /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Է. Ս. Երիցյան:

145. Սխրանքդ անմահ է /Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

146. Սողոմոն Մկրտչյան /Կազմ.՝ Գ. Ս. Մկրտչյան; Խմբ.՝ Ս. Ս. Մուրադյան:

1986

147. Աշխատանքային դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը գրադարանում: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Շ. Ս. Նալբանդյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

148. Ընդդեմ խավարի: Հակակրոնական հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 6-9 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Գ. Հ. Դումանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1987

149. Այբբենական-առարկայական ուղեցույց (Մակետ) /Կազմ.՝ Ի. Ս. Ավետիսյան; Խմբ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան:

150. Աշոտ Տեր-Գրիգորյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան, Ռ. Ա. Տեր-Գրիգորեան:

151. Բարոյագիտության այբուբենը երեխաներին: Մեթոդական հանձնարարականներ /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

152. Երեխաներին սպասարկող գրադարանների հիմնական ցուցանիշները: (1981-1985 թթ. վերլուծություն) /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Գ. Դանիելյան:

153. Համագումարի կենսահաստատ ուղիով: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

154. Հենրիկ Սևան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ս. Մկրտչյան; Խմբ.՝ Էդ. Ս. Ավագյան:

155. Հոկտեմբերին հավատարիմ: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան, Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

156. Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Գ. Դանիելյան:

157. Սոֆյա Լալախանյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ս. Ս. Մուրադյան:

1989

158. Լիպարիտ Սարգսյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան:

1990

159. Հայ պոեզիան և գեղագիտական դաստիարակությունը /Կազմ.՝ Ա. Աբովյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

160. Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի (1901-1918) /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Գ. Դանիելյան:

1991

161. Ճանապարհորդություն գեղեցիկի աշխարհում: Հանձնարարելի գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

1992

162. Գրացուցակների կազմակերպումն ու պրոպագանդումը /Կազմ.՝ Ի. Ավետիսյան:

163. Գոյապահպանություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան:

164. Հայոց հին և միջնադարյան մեծերի մասին /Կազմ.՝ Շ. Նալբանդյան:

1998

165. Գրադարանը բարեփոխվող դպրոցում: Գիտագործնական համաժողովի նյութեր (Նոյեմբեր 1997) /Խմբ.՝ Վ. Պողոսյան:

166. Թարգմանաչափ օր /Կազմ.՝ Շ. Նալբանդյան:

2001

167. Գթասրտության և միասնության շաբաթ /Կազմ.՝ Ե. Երեմյան:

168. Հովիկ Էդգարյանի հետ: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Շ. Ոսկանյան:

Ոսկանյան:

169. Ֆրիտյոֆ Նանսեն /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

2002

170. Գարնան շողեր: Մանկական ստեղծագործություններ /Կազմ.՝ Ռ. Տոնոյան, Մ. Հովսեփյան; Խմբ.՝ Ե. Պետրոսյան:

171. Գուրգեն Գաբրիելյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

172. Շուշանիկ: Ազոավի արցունքը: Բանաստեղծություններ /Շուշանիկ (Շ. Ս. Ոսկանյան); Խմբ.՝ Ֆ. Բախչինյան:

173. Շուշիի ազատագրման 10-ամյակը /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

174. IEARN in Armenia /Compl., edit. K. Durgaryan.

2003

175. Էդուարդ Ավագյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

176. Մենք և բնությունը: Հանձնարարական գրականության ցանկ /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

177. DEEP/iEARN in Armenia: Քաղաքացիական դաստիարակություն (միջազգային կրթություն) /Կազմ.՝ Կ. Դուրգարյան, Մ. Հովսեփյան, Շ. Ոսկանյան:

178. iEARN IN ARMEENIA: Միջազգային կրթությունը և ցանցային ռեսուրսները: [Դպրոցականների թեմատիկ շարադրությունները՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով]:

2004

179. Գեղունի Չթյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

180. Երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում (Մեթոդական օգնություն գրադարանավարին) /Կազմ.՝ Մ. Հովսեփյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

181. Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1983-2003 թթ.) /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

182. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն: Մեթոդա-մատենագիտական հանձնարարական /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

183. IEARN in Armenia /Comp. K. Durgaryan, E. Simonyan, P. Mezhlumyan; Edt. K. Durgaryan.

2005

184. Գրադարան և գրադարանավարներ: (Մեթոդական ձեռնարկ) /Խմբ.՝ Ե. Հակոբյան; Կազմ.՝ Մ. Կոշկակարյան:

185. «Ծիծեռնակ» ամսագրի մատենագիտություն (1967-2002) /Կազմ.՝ Ե. Երեմյան, Գ. Մկրտչյան, Հ. Քեոյան:

186. Հնդկաստան: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Հ. Քեոյան:

187. Մաշտոցյան գրեր: Մեթոդ-մատենագիտական հանձնարարական /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

188. Սուրեն Մուրադյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

2006

189. Անկախության 15 /Խմբ.՝ Գ. Կարապետյան:

190. Արեգ Լուսինյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան, Լ. Մուսիկյան:

191. Գրադարան և գրադարանավարներ: Մեթոդական ձեռնարկ: Երկրորդ լրացված հրատ. /Խմբ.՝ Ե. Հակոբյան; Կազմ.՝ Մ. Կոշկակարյան:

192. Իրանի Իսլամական հանրապետություն: (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Հ. Քեոյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

193. Կրթադաստիարակչական աշխատանքները Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում /Կազմ.՝ Մ. Հովսեփյան, Խմբ.՝ Ե. Հակոբյան:

194. Ռուսաստանի Դաշնություն (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Թարգմ. և խմբ.՝ Գ. Կարապետյան:

2007

195. Հայոց բանակ (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

196. Խնկո-Ապրո անվան ազգային մանկական գրադարանը մանկական ու դպրոցական գրադարանների հանգուցակետում /Կազմ.՝ Շ. Ոսկանյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

197. Մելյան Բալաբեկ: Դեպի լույս: (1963-1973 թթ. Խնկո-Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանում աշխատած տարիների մասին հուշերից պատառիկներ):

198. Использование электронных источников информации в детской библиотеке (Информационно-методическое пособие) /Сост.: Э. Симонян.

2008

199. Գրադարանի մասին հրատարակված նյութերի մատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

200. Կարապետյան Գայանե: Մանկապատանեկան ընթերցանության հիմնախնդիրները (Մեթոդական հանձնարարական):

201. Յուրի Սահակյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

202. Ոսկանյան Շուշանիկ: Համալրման արդի խնդիրներ (Գրադարանային ձեռնարկ):

2009

203. Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը: Տեղեկատու-մեթոդական ձեռնարկ /Կազմ.՝ Է. Սիմոնյան; Թարգմ. և խմբ.՝ Գ. Կարապետյան:

204. Կոչկակարյան Մանիկ: Ապրենք հավատով և հայրենասիրությամբ:

205. Սարգսրապատի դղանջները: Երեխաների նկարչական ստեղծագործությունների գիրք-ալբոմ /Խմբ.՝ Գ. Կարապետյան:

2010

206. Արեգ Լուսինյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

207. Հենրիկ Սևան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

208. Ներսիսյան Լևոն: Ultra Verba=Վերջին խոսք:

2012

209. Իմ ստեղծած գիրքը: [Շարադրություններ նկարազարդումներով]:

210. Հայտնի և անհայտ գրադարաններ, անվանի գրադարանավարներ /Կազմ.՝ Գ. Կարապետյան; Խմբ.՝ Ն. Հայրապետյան:

211. Ներսիսյան Լևոն: Ինչից եւ ումից սկսենք. անտիկ շրջան: Դասախոսություններ:

2015

212. 7 գույն: 7 նկարազարդ պատմվածք պատանիների համար /Ա. Սերոբյան, Կ. Աշոտյան, Լ. Հակոբյան, Է. Ջոիրաբյան, Հ. Թեքցյոզյան, Ե. Գրիգորյան, Մ. Բեյլերյան:

213. Թայգեն Մանֆրեդ: Ապակյա Արամը /Գերմ. թարգմ.՝ Կ. Մատինյան:

2017

214. Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը: Մեթոդական ձեռնարկ /Թարգմ.՝ Ն. Ղարիբյան, Ա. Շահբազյան, Ն. Աճեմյան:

2018

215. Փաշինյան Նիկոլ: Չար տնակի հեքիաթը:

2021

216. Սքանչելին: Հեքիաթ /Հ. Մխիթարյան; Ձևե մարդը /Էդ. Թաթևկյան; Խմբ.՝ Գ. Կարապետյան:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ



**ՀԱՅԿՈՒՇ
ԴԱԴԱՇԻ
ԴԱՆԻԵԼՅԱՆ
(1919-2005)**

**ՀՏԴ: 929:02(479.25)
Դանիեյան+02**

Հայաստանի գրադարանային ոլորտի պատմության մեջ ճանաչված և մեծ վաստակ ունեցող անուն է Հայկուշ Դանիեյանը:

Ծնվել է 1919 թ. Բաքվում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1945 թ.՝ ստանալով պատմաբանի մասնագիտություն: Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԼԿԵՄ Կենտկոմից (1945-1953 թթ.), եղել է Ղափանի /այժմ՝ Կապան/ շրջգործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ (1953-1961 թթ.), ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության կադրերի բաժնի վարիչ, երաժշտական բաժնի պետ (1961-1969 թթ.): 1969-1996 թթ. զբաղեցրել է Խնկո Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի տնօրենի պաշտոնը, այնուհետև աշխատանքային գործունեությունը շարունակել է հարազատ գրադարանում՝ որպես փոխտնօրեն (1996-2000 թթ.), տնօրենի խորհրդական (2000-2005 թթ.): 27 տարի ղեկավարել է Խնկո-Ապոր անվան հանրապետական /այժմ՝ ազգային/ մանկական գրադարանը, 36 տարի աշխատել է նույն գրադարանում:

Աշխատանքային բեղուն գործունեության արդյունքում պարգևատրվել է «Կարմիր դրոշ», «Պատվո նշան» շքանշաններով, «Հայ-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

րենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար» մեղալով, ԽՍՀՄ և Հայաստանի Գերագույն խորհրդի և մինիստրությունների, ՀամԼԿԵՄ Կենտկոմի մեղալներով, բազմաթիվ պատվոգրերով: Մշակույթի բնագավառում երկարամյա, անբասիր աշխատանքի համար արժանացել է ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման (1972 թ.), իսկ ծննդյան 85-ամյակի առթիվ պարգևատրվել է Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» մեղալով (2004 թ.): Հիշյալ ձեռքբերումներն ու պարգևները սոսկ փաստերի թվարկում չեն. Հայկուշ Դանիելյանը հանրությանը հայտնի է իր գրադարանաշինական գործունեությամբ, գրադարանային գործի զարգացմանը նպաստող բեղուն աշխատանքով:

Նրա անմիջական ջանքերով և հետևողականությամբ 1980 թ. հանրապետության բոլոր երեխաներին մեծ նվեր մատուցվեց. շահագործման հանձնվեց գրադարանի նորակառույց տիպային շենքն՝ իր յուրահատուկ ձևավորմամբ ու կահավորանքով. այն իր տեսակով ԽՍՀՄ մյուս հանրապետությունների մանկական գրադարանների տնօրենների «բարի նախանձն» էր շարժում:

Չհանդիսանալով գրադարանային ոլորտի մասնագետ՝ ղեկավարին հատուկ վճռականությամբ ու կազմակերպվածությամբ նա կարճ ժամանակում տիրապետեց ոլորտի նրբություններին և նախաձեռնեց ծավալուն աշխատանքներ ողջ հանրապետության տարածքում՝ շրջանային, քաղաքային, հանրապետական սեմինարներ, գիտաժողովներ, հոբելյանական հանդիսություններ: Իրենց տեսակով և ծավալով հատկապես առանձնանում են Մանկապատանեկան գրքի համամիութենական շաբաթը (1982 թ.), ԽՍՀՄ և ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրությունների համագործակցությամբ անցկացված Համամիութենական գիտագործնական կոնֆերանսը (1983 թ.), ինչպես նաև Հայաստանի դպրոցական գրադարանների համար նախատեսված 5-օրյա սեմինար-խորհրդակցությունը՝ 300 մասնակցով:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Մեծ է նաև նրա ավանդը գրադարանի մեթոդական, մատենագիտական նյութերի հրատարակման գործում: Խմբագրել է մեթոդական նյութեր, հանձնարարական ցանկեր, հիշարժան տարեթվերի օրացույցներ, մատենագիտություններ. դրանց թվում հատկապես արժեքավոր են «Մանկական թարգմանական գրականության մատենագիտություն»-ը (1972 թ.), «Հասկեր» (1981 թ.), «Աղբյուր» (1987 թ.), «Պիոներ» (1978 թ.) ամսագրերի մատենագիտությունները:

Լինելով խստապահանջ ղեկավար՝ միաժամանակ հոգատար էր աշխատողների նկատմամբ, գնահատում էր բոլորի մասնագիտական հմտությունները՝ վեր կանգնելով միջանձնային տարաձայնություններից: Հարգված ու սիրված էր աշխատակազմի կողմից. բոլորը գիտեին՝ խիստ ու չոր խոսքերի ետևում բարի սիրտ էր թաքնված:

Տարիների իր գործը Հայկուշ Դանիելյանը փոխանցեց նոր տնօրեն Ռուզան Տոնոյանին, որը ոչ միայն շարունակեց, այլև ավելի ընդարձակեց ու բարեփոխեց գրադարանը ժամանակի նոր պահանջներին համաձայն: Վերջինիս նախաձեռնությամբ ու անմիջական ջանքերով 2004 թ. գրադարանում մեծ շուքով նշվեց Հայկուշ Դանիելյանի ծննդյան 85-ամյակը: Ներկա գտնվողները՝ գրողներ, արվեստագետներ, գրադարանային աշխատողներ, գնահատանքի ու շնորհավորանքի ջերմ խոսքեր հնչեցրին հորեյարի հասցեին: Մեկ տարի անց նրա վերջին հրաժեշտը եղավ իր սիրելի գրադարանի շենքում:

Շատ բան կարելի է ասել, սակայն կարծում եմ՝ արդեն իսկ պարզ է նրա անուրանալի վաստակը մշակույթի, հատկապես գրադարանային ոլորտի զարգացման գործում:

Այդպիսին էր նա՝ գործունյա, աշխատասեր, եռանդուն, մինչև վերջ իր գործին նվիրված Հայկուշ Դադաշի Դանիելյանը:

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
*Խնկո Ապոր անվան ազգային
մանկական գրադարան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Մխիթարեան միաբանության Վիեննայի մենաստանում պահվող պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում..... 5

ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մատենագիտությունը թվային դարաշրջանում.
«Թարգմանչաց արվեստ» շտեմարան..... 30

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՍՊՐԱՄ ԱՇՈՒՂՅԱՆ

Սոցիալական մեդիան և գրադարանները..... 39

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՍՏՅՈՂԱ ՊԵՏՈՅԱՆ

Մատենագիտական ճշգրտումներ Շուշիում 1832–1833 թվականներին տպագրված երկու հրատարակությունների վերաբերյալ..... 49

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ տպագիր ժառանգության հետքերով..... 57

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

Հայկազեան համալսարանի հրատարակչատունը..... 69

ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

90 ՏԱՐԵԿԱՆ Է

ՌՈՒԶԱՆ ՏՈՆՈՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի
90-ամյա ուղին..... 80

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Մանկապարտանեկան ընթերցանության խթանման գործում միջազգային համագործակցության դերակատարությունը 88

ԻՍԿՈՒՇԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կրթամշակութային ծրագրերը՝ որպես ընթերցանության խթանման միջոց..... 100

ԵԼԻՉԱՎԵՏ ԵՐԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1963-2023 թթ.)..... 112

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայկուշ Դադաշի Դանիելյան..... 137

ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՖԼԱ-ի ուղեցույցները գրադարաններում հանրային ինտերնետ հասանելիության

CONTENTS

Editor-in-Chief's Column 3

THEORY AND PRACTICE

TIGRAN ZARGARYAN

Digitalization of the periodicals being preserved in the Mekitarist Monastery of Vienna. presentation of first phase results 5

MERY MANUKYAN

The bibliography in the digital era. "Art of Translation" Database..... 30

21ST CENTURY LIBRARY

ASPRAM ASHUGHYAN

Social media and libraries 39

CULTURAL HERITAGE

STYOPA PETOYAN

Bibliographical corrections on two publications printed in Shushi in 1832–1833..... 49

MAYA GRIGORYAN

Following traces of Armenian printed heritage..... 57

BOOK PUBLISHING

ANTRANIK DAKESSIAN

The Haigazian University Press 69

KHNKO APER NATIONAL CHILDREN'S LIBRARY IS 90 YEARS OLD

ՌՈՒՉԱՆ ՏՈՆՈՅԱՆ

*On the 90th anniversary of the
Khanko Aper National Children's Library*..... 80

NAIRA ATSHEMYAN

*The role of international cooperation in promoting reading
among children and young adults*..... 88

ISKUHI AVETISYAN

Educational programs as a tool for reading promotion..... 100

ELIZAVET YEREMYAN

Publications of the Khnko Aper National Children's Library..... 112

MADLEN HOVSEPYAN

Haykush Danielyan..... 137

APPENDIX

IFLA Guidelines on Public Internet Access in Libraries

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի՛ ընթերցող

Կարևորելով գրադարանային ոլորտի ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ Հայկական գրադարանային ասոցիացիան Ձեր դատին է ներկայացնում «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսի երկրորդ համարը:

Հանդեսի առաջին համարը հրատարակվեց 2023 թ. հունիսին և խանդավառությամբ ընդունվեց ընթերցողների ու գրադարանային հանրույթի կողմից: Երկրորդ համարը հրատարակում ենք մեր որդեգրած նպատակին և գաղափարին համահունչ:

Ընթերցողին ներկայացվող համարում հոդվածները ներկայացնում ենք «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մշակութային ժառանգություն», «Գրահրատարակչություն», «Մանկական գրադարաններ», խորագրերի ներքո:

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներին ընդանաջ տպագիր ժառանգության թվայնացումն ու շտեմարանների ստեղծումը գերխնդիր է դարձել: Ներկայում այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները միտված են տպագիր ժառանգության ողջամնացության ապահովմանն ու հանրայնացմանը: Ահա ինչու խիստ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել ինչպես տպագիր և գրավոր մշակութային ժառանգության ուսումնասիրությունը, այնպես էլ այդ ժառանգության թվայնացման և հանրայնացման աշխատանքները:

Հսկայածավալ այս աշխատանքին զուգահեռ գրադարաններն իրենց աշխատանքային զինանոցում պետք է ունենան հասարակության տարբեր շերտերի պահանջները բավարարող գործիքակազմ՝ տեղեկատվության առավել արագ և որակյալ սպասարկման համար: Գրադարանավարները պետք է յուրացնեն տեղեկատվական

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և գործունեություն ծավալելն այս համատեքստում:

Հայաստանյան գրադարաններում աշխատանքային գործընթացները ճիշտ կազմակերպելու համար կարևորվում է միջազգային փորձի յուրացումն ու տեղայնացումը: Ահա ինչու, բացի կոնկրետ և գործնական քայլերից, անհրաժեշտություն է առաջանում թարգմանել մի շարք կարևոր միջազգային փաստաթղթեր:

Այսօր ավելի քան արդիական է գրադարան-հրատարակչություն համագործակցությունը: Գրահրատարակչության ոլորտի ձեռքբերումներն ու խնդիրները ևս համահունչ են ամսագրի նպատակին:

2023 թ. լրացավ Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հիմնադրման 90-ամյակը: Կարևորելով այս գրադարանի դերն ու նշանակությունը մեր հասարակության մեջ՝ «Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանը 90 տարեկան է» խորագրով ընթերցողին ենք ներկայացնում գրադարանի հիմնադրման պատմությունը, գործունեության առանցքային ուղղությունները և ձեռքբերումներները:

Գրադարաններն այսօր տեղեկատվական կենտրոններ են, որոնց առջև ծառայած են բազմաթիվ խնդիրներ: Կարծում ենք՝ հանդեսի երկրորդ համարը որոշ չափով տալիս է այդ խնդիրների լուծման բանալիները:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՆԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ*

ՀՏԴ: 070(=919.81)(450)+01

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-5

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի
Տեխնիկական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

2019 թ. Գալուստյ Կիլպէնկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունքը», ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հետ համատեղ, առաջարկեց թվայնացնել Մխիթարեան միաբանության Վիեննայի Մենաստանի գրադարանում պահվող հայերեն թերթերի և հանդեսների մինչև 1920 թ. հրատարակված լրակազմերը: Սույն հոդվածի նպատակը հիշյալ գործընթացի առաջին արդյունքների ամփոփումն է:

Ուշադրություն ենք դարձրել և՛ թվային պատճենների բարձր որակի առկայությանը, և՛ մատենագիտական շտեմարանի ձևավորման առանձնահատկություններին, և՛ որոնման ճկուն հնարավորություններին:

In 2019 digitization of the Armenian newspapers and periodicals being preserved in the Mekhitarist Monastery of Vienna started. The purpose of this article is to summarize the results of the project's first stage. During project realization the main focus has been made on having high quality digital copies of the periodicals, to the peculiarities of construction of the bibliographic database and on developing flexible search and indexing algorithms.

* Հոդվածը ներկայացվել է 13.10.2023, գրախոսվել է 07.12.2023, ընդունվել է տպագրության 08.12.2023:

The article was submitted on 13.10.2023, reviewed on 07.12.2023, accepted for publication on 08.12.2023.

Բանալի բառեր¹ հայ պարբերական մամուլ, հայ մամուլի մատենագիտություն, Մխիթարյան միաբանություն Վիեննա, Գալուստ Կիլպէնկեան հիմնարկություն:

Ինչպես հղել¹ Զարգարյան Տ. (2023), Մխիթարեան միաբանության Վիեննայի մենաստանի պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 5–29. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5)

How to cite (APA style): Zargaryan T. (2023), Digitalization of the periodicals being preserved in the Mekitarist Monastery of Vienna: Presentation of first phase results, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 5-29. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5)

Ներածություն

Հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը», լույս է տեսել 1794 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում, Հարություն քին. Շմավոնյանի ջանքերով: Այնուհետև հայալեզու թերթեր հրատարակվեցին աշխարհի տարբեր ծայրերում՝ դառնալով հայ ժողովրդի գոյության տարեգիրը, պահպանելով մեր ինքնությունը, մոռացումից փրկելով ազգային կյանքի բազում հիշարժան իրադարձություններ: 1794 թվականից ի վեր Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում լույս է տեսել ավելի քան 6,500 պարբերական¹: Ներկայում պարբերականների թղթային հրատարակությունները, ճիշտ է, իրենց տեղը աստիճանաբար զիջում են էլեկտրոնային համարժեքներին, գործարկվում են լրատվական կայքեր, որոնք շուրջօրյա տեղեկատվություն են փոխանցում իրենց բաժանորդներին, սակայն տպագիր մամուլը (հատկապես մինչև 20-րդ դարի 90-ականների մամուլը) հետազոտողների համար չի կորցնում արդիականությունը: Սրան ավելանում է նաև մամուլի ողջամնացության ապահովման խնդիրը,

¹ Առ 01.12.2023 թ. «[Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ](#)» շտեմարանում հաշվառված է մամուլի 6,556 անվանում:

քանի որ թուղթը մթնոլորտային, քիմիական և տեխնածին գործոնների ազդեցության հետևանքով աստիճանաբար սկսում է խոնանալ և քայքայվել:

Մխիթարեան միաբանության հայ մամուլի հավաքածուն տեսականիով ամենահարուստ հավաքածուներից է, իսկ մամուլի լրակազմերի պահպանվածության և ամբողջականության առումով՝ լավագույններից մեկը: 2019 թ. մի շարք քննարկումներից հետո Գալուստ Կիլպենկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունք»² հանդես եկավ առաջարկով՝ թվայնացնել և հանրությանը ազատորեն հասանելի դարձնել Մխիթարեան միաբանության Վիեննայի Մենաստանի գրադարանում պահվող հայերեն թերթերի և հանդեսների մինչև 1920 թ. հրատարակված լրակազմերը:

Նախագծի նպատակները և աշխատանքի փուլերը

Նախագիծը հետապնդում է երկու կարևոր նպատակ.

ա. Բարձր որակի թվային պատճենների շնորհիվ ձևավորել մամուլի ապահովագրական նմուշներ, որոնցից հնարավոր կլինի ստանալ պահանջվող տպագիր էջերը՝ առանց որակի կորստի:

բ/ Համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ հետազոտողներին հասանելի դարձնել մամուլի լրակազմերի թվային պատճենները՝ դրանով իսկ մեծապես օժանդակելով հայ մամուլի եզակի նմուշների առցանց և բաց ձևաչափով հասանելիությանը:

Սույն նախաձեռնության շրջանակում որպես Գալուստ Կիլպենկեան հիմնարկության գործընկեր կառույցներ հանդես եկան Մխիթարեան միաբանության Վիեննայի Մենաստանը³, Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանը⁴:

² Գալուստ Կիլպենկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունք» <https://gulbenkian.pt/en/armenians/> (11.10.2023):

³ Վիեննայի Մենաստան՝ <https://mechitharisten.org/> (11.10.2023):

⁴ Հիմնարար գիտական գրադարան՝ <https://www.flib.sci.am/> (11.10.2023):

Որպես նախագծի համակատարող կառույցներ՝ հանդես եկան «Iron Mountain» ընկերությունը⁵, որը մասնագիտացված է մեծ ծավալի թղթային նյութերի թվայնացման բնագավառում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը⁶, որը տարածաշրջանում առաջատարն է ցանցային և ամպային ծառայությունների տրամադրման, ինչպես նաև բարձր արտադրողականությամբ հաշվողական համակարգերի նախագծման բնագավառներում:

Համահայկական կարևորություն ունեցող նախագծի հաջող ընթացքը ապահովելու նպատակով կատարվեց աշխատանքների բաշխում՝ ըստ հետևյալ խմբերի.

1. Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի Մենաստանի գրադարանի կայքէջի⁷ ստեղծում:

2. Մամուլի նմուշների մատենագիտական նկարագրությունների շտեմարանի ծրագրային միջավայրի ընտրություն՝ հիմնված «Մատենագիտական նկարագրության միջազգային ստանդարտի» վրա:

3. Թվանշային գրադարանի հարթակի ընտրություն, նկատի առնելով այն կարևոր հանգամանքը, որ առաջարկվող լուծումը պետք է ապահովի բառերի և արտահայտությունների որոնում թե՛ մատենագիտական նկարագրության մակարդակում և թե՛ թվանշային գրադարանում ներառված նյութերում:

4. Սերվերային լուծումների ընտրություն այն հաշվարկով, որ թվանշային գրադարանում ամբարվելու են տասնյակ հազարավոր

⁵ «Iron Mountain» ընկերություն՝ <https://shorturl.at/bjpP0> (11.10.2023):

⁶ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ՝ <https://iiap.sci.am/> (11.10.2023):

⁷ Վիեննայի Մենաստանի գրադարանի կայքէջ՝ <https://arm.mechitaristlibrary.org/> (11.10.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

նկարահանված էջեր, որոնք զբաղեցնելու են մեքենայական հիշողության զգալի ծավալներ:

Հաշվի առնելով տեղեկատվության պահոցների նախագծման և շահագործման բնագավառներում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում (ՀԳԳ) կուտակված երկարամյա փորձը, փորձարկված և տեղայնացված ծրագրային լուծումները՝ որոշում կայացվեց որպես մատենագիտական նկարագրությունների շտեմարանի ծրագրային լուծում ընտրել «Կոհա» փաթեթը, որը հաջողությամբ կիրառվում է Հայաստանի գրադարաններից շատերում, պատկանում է «Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի» ընտանիքին⁸ և, հետևաբար, տրամադրվում է անվճար: Այս ընտանիքին պատկանող «Գրինսթոուն» և «Դլիբրա» հարթակների համեմատական վերլուծությունից հետո, որպես թվանշային գրադարանի լուծում, ընտրվեց «Դլիբրա» համակարգը: Թեպետ երկու համակարգերն էլ ակտիվորեն օգտագործվում են ՀԳԳ-ում, մեքենայական հիշողության հսկայական ծավալների հետ աշխատելու պայմաններում, մեր կարծիքով «Դլիբրա» համակարգը ավելի ճկուն և բազմաֆունկցիոնալ է (ZARGARYAN 2020, 67-79): Սերվերային լուծումների պարագայում ընտրությունը միարժեքորեն կանգ առավ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի վրա, որպես կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, ինչպես նաև գիտության և տեխնիկայի տարբեր ճյուղերում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ասպարեզում տարածաշրջանային առաջատարի:

Կայքէջի ձևավորումը վստահվեց դիզայներ Նունե Խուդավերդյանին, ով հաջողությամբ կյանքի կոչեց իր առջև դրված առաջադրանքները:

Այս փուլերը հաղթահարելուց հետո արդիական դարձավ մամուլի մատենագիտական նկարագրությունների շտեմարանի ցուցի-

⁸ Free and open-source software: <https://shorturl.at/rxCIT> (11.10.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

չավորվող դաշտերի ընտրության հարցը: Հայաստանի ազգային գրադարանում շահագործվող «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ»-ի⁹ նախագծման ընթացքում մեր կողմից կիրառված լուծումները և ձեռք բերված փորձը մեծապես հեշտացրեցին ընտրությունը: Որպես «ցուցիչավորվող և արտաձվող» դաշտեր որոշվեց ընտրել հետևյալները.

✓ Խմբագիրներին, արտոնատերերին, հրատարակիչներին նկարագրող 700\$a դաշտը:

✓ Տպարանների անվանումները նկարագրող 650\$a դաշտը:

✓ Տպագրության քաղաքը, երկիրը, մայրցամաքը նկարագրող աշխարհագրական անվանման 651\$a դաշտը:

✓ Նյութի տեսակը նկարագրող 655\$a դաշտը: Նյութի տեսակը կարող է լինել թերթ, ամսագիր, տարեգիր:

✓ Թեմատիկ խորագրերը նկարագրող 650\$a դաշտը:

✓ Ընծայագրերի առկայությունը նկարագրող 650\$a դաշտը:

✓ Դարաշրջանը և տպագրության տարիները նկարագրող 650\$y դաշտը:

✓ Պարբերականի շարժը նկարագրող 653\$a դաշտը: Շարժը կարող է լինել «Շարժ ներքին», այսինքն՝ նույն երկրի սահմաններում մի քաղաքից մեկ այլ քաղաք, ինչպես նաև «Շարժ արտաքին», այսինքն մի երկրից մեկ այլ երկիր: «Շարժ ներքին» և «Շարժ արտաքին» տերմինները հանդես են գալիս որպես «Չվերահսկվող տերմիններ»:

✓ Պարբերականի կյանքի տևողությունը ներկայացնող 583 դաշտը: Սա ոչ հանրային նշումի դաշտ է, արտաձման ոչ մի ձևաչափում չի երևում, սակայն փնտրովի է, և կարելի է ստանալ պարբերականների կյանքի տևողության բաշխումը ըստ ակտիվության տարիների: Նվազագույն արժեքն է 1 տարի: Այսինքն, եթե պարբերականը

⁹ Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ՝ <https://tert.nla.am> (11.10.2023):

ունեցել է տպագրված մեկ թիվ, այնուհետև դադարեցրել է իր գոյությունը, պարբերականի կյանքի տևողությունը դրվում է 1 տարի, հետևյալ ձևաչափով՝ T=1 տարի:

Մատենագիտական շտեմարանի հնարավորությունների ներկայացում

Մխիթարեան Միաբանության Վիեննայի Մենաստանի գրադարանի կայքէջի «Ընդհանուր ցուցակ» բաժնից կարելի է մուտք գործել մատենագիտական գրառումների շտեմարան¹⁰, իսկ «Թուային գրադարան» բաժնից՝ թվանշային գրադարան¹¹:

Քանի որ մատենագիտական տվյալների MARC21 ձևաչափը¹² և դրա հենքի վրա ստեղծված ծրագրային փաթեթները նյութի նկարագրության բոլորովին նոր հնարավորություններ են բացում մատենագետների առջև, իսկ համակարգիչների կիրառությունը «գրելու նոր տարածք» է տրամադրում հետազոտող-մատենագետին, սույն շտեմարանի ձևավորման ընթացքում կիրառեցինք նորարարական մի շարք լուծումներ՝ հիմնված ծրագրավորման HTML լեզվի վրա, որոնք, լինելով նոր խոսք մատենագիտության մեջ, մեզ ծանոթ ավանդական նկարագրությունների համեմատ մեծապես բարձրացնում են գրառումների թե՛ դիտարժանությունը, թե՛ ամբողջականությունը և թե՛ ընթեռնելիությունը:

Այսպես, մամուլի շատ անվանումներ, իրենց գոյության ընթացքում, փոխում են խմբագիրներին, փոխվում են տպարանները, տպագրության չափսերը: Երբեմն անվանումն էլ է կրում փոփոխություններ: Նման փոփոխությունները հարկ է արտացոլել մատենագի-

¹⁰ Վիեննայի Մխիթարյան միաբանության մամուլի մատենագիտական գրառումների շտեմարան՝ <https://vmc.sci.am/> (11.10.2023):

¹¹ Վիեննայի Մխիթարյան միաբանության մամուլի թվային գրադարան՝ <https://shorturl.at/kuxUO> (11.10.2023):

¹² MARC – Machine Readable Cataloguing՝ Մեքենաընթեռնելի քարտագրում:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

տական գրառման մեջ՝ դրա համար օգտագործելով MARC21 ձևաչափի ընձեռած հնարավորությունները:

Բերենք մի քանի օրինակ.

ա. Համաձայն MARC21 ձևաչափի՝ 504 դաշտը նախագծված է «Մատենագիտություն, նշումներ» տեքստի ձևավորման համար: Թիֆլիսի «Մուրճ» ամսագրի պարագայում, պարբերականի մասին տպագրված մատենագիտությանը հղում կատարելու համար HTML լեզվով կատարվել է մի այսպիսի նկարագրություն. «Աղբիւր. Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի. (1889-1907) / Կազմ.՝ Կ. Քացախյան.- Ե., 1977.- 775 էջ»: Արդյունքում, ISBD արտաձման պարագայում, ունեք հետևյալ տեսքը. «Աղբիւր. [Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի \(1889-1907\) / Կազմ.՝ Կ. Քացախյան.- Ե., 1977.- 775 էջ](#)»: Նման կառուցվածքը թույլ է տալիս մատենագիտական գրառումից ուղղակի անցում կատարել հետազոտական նյութին:

բ. Համաձայն MARC21 ձևաչափի՝ 563 դաշտը նախագծված է լրակազմի նկարագրության համար: Օգտագործելով HTML լեզվի այսպիսի կառուցվածք. «Թիւերը կազմուած եւ ամփոփուած են առանձին թղթածրարներում.
 1889 Թիւ 1-6: Դասիչն է 827 L II-5.
1889 Թիւ 7-12: Դասիչն է 828 L II-5.
1890 Թիւ 1-6: Դասիչն է 829 L II-5.
1890 Թիւ 7-12: Դասիչն է 830 L II-5.
1891 Թիւ 1-6: Դասիչն է 831 L II-5.
1891 Թիւ 7-12: Դասիչն է 832 L II-5.
»՝ ISBD արտաձման պարագայում ունեք հետևյալ տեսքը. «Թիւերը կազմուած եւ ամփոփուած են առանձին թղթածրարներում.

1889 Թիւ 1-6: Դասիչն է 827 L II-5.

1889 Թիւ 7-12: Դասիչն է 828 L II-5.

1890 Թիւ 1-6: Դասիչն է 829 L II-5.

1890 Թիւ 7-12: Դասիչն է 830 L II-5.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

1891 Թիւ 1-6: Դասիչն է 831 L II-5.

1891 Թիւ 7-12: Դասիչն է 832 L II-5»:

Տարեթվերը արտաձվում են թավ, որը գրառումը դարձնում է ավելի արտահայտիչ:

գ. Նույն 563 դաշտում կիրառված է HTML լեզվի մեկ այլ կառուցվածք՝ տարեթվից հղում դեպի թվանշային գրադարան, դեպի պարբերականի կառուցվածք: HTML լեզվով կազմած արտահայտությունը հետևյալն է. «Վիեննական Մխիթարեան մենասպանում առկայ են հեղինակ թիւերը.

1889, Առաջին տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)
1890, Երկրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)
1891, Երրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7-8 (Յուլիս-Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)
»:

ISBD արտաձման պարագայում ունեք հետևյալ տեսքը. «Վիեննական Մխիթարեան մենասպանում առկայ են հեղինակ թիւերը.

1889. Առաջին տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)

1890. Երկրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7 (Յուլիս), Թիւ 8 (Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)

1891. Երրորդ տարի, Թիւ 1 (Յունուար), Թիւ 2 (Փետրուար), Թիւ 3 (Մարտ), Թիւ 4 (Ապրիլ), Թիւ 5 (Մայիս), Թիւ 6 (Յունիս), Թիւ 7-8 (Յուլիս-Օգոստոս), Թիւ 9 (Սեպտեմբեր), Թիւ 10 (Հոկտեմբեր), Թիւ 11 (Նոյեմբեր), Թիւ 12 (Դեկտեմբեր)»:

Գունաընդգծված տարիները պարունակում են հղումներ դեպի թվանշային գրադարան: Թվանշային գրադարանից էլ կարելի է անցում կատարել դեպի մատենագիտական շտեմարան՝ սեղմելով «Լրացուցիչ տեղեկություն» դաշտի «սեղմիր այստեղ կապին հետևելու համար» հղումը:

դ. Համաձայն MARC21 ձևաչափի՝ 520 դաշտը նախագծված է «Ամփոփումների» համար: Քանի որ շատ պարբերականներ հրատարակման տարբեր ժամանակահատվածներում փոխում են տպարանները, խմբագիրներին, փոխվում է էջերի քանակը, թղթի չափը և այլն, ապա նպատակահարմար գտանք այս դաշտում արտածել այդ տեղեկատվությունը: «Մուրճ»-ի պարագայում, 520 դաշտի գրառումն ունի հետևյալ տեսքը.

«1889-1900 "ՄՈՒՐՃ" : ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", Մ. Դ. Ռուդինեանցի ՏՊԱՐԱՆ:

1901-1902 ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐՃ" : ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", Տպարան Կրաց. Հրատ. Ընկերութեան:

1903, Թիւ 1-Թիւ 10 ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐՃ" : ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", Արագափոխ Մն. Մարտիրոսեանցի:

1903, Թիւ 11-Թիւ 12, 1904 ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐՃ" : ԳՐԱԿԱՆ,

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", *Տպարան Ա.*

Քույթաթելաձեռի:

1905-1907, ՆՈՐ ՇՐՋԱՆ "ՄՈՒՐՃ: ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ", *Տպարան "Հերմէս":*

Ինչպես տեսնում ենք, թե՛ տպարանների փոփոխությունները, թե՛ հանդեսի անվան փոփոխությունները արտացոլված են 520 դաշտում:

Ե. «Վիքիպեդիան», որպես ազատ հանրագիտարան, գնալով իր մեջ է ներառում նորանոր թեմաներ և անձնանուններ: Այդ հոդվածներից շատերը ուղղակի կապ ունեն հայկական գրատպության օջախների, խմբագիրների և տպարանների գործունեության հետ: Այս ամենը նկատի ունենալով՝ մամուլի խմբագիրների անունները կապվել են Վիքիպեդիայի համապատասխան գրառումներ հետ: Այսպես, «Թատրոն» թերթը, որի տերը և խմբագիրը եղել է Հակոբ Պարոնյանը, «Նորմալ դիտում» վիճակում պարունակում է հետևյալ հղումը. «[Պարոնեան, Հակոբ Յովհաննէսի, 1843-1891 \[տէր-խմբ.\]](#)»:

Վ պատկերակը սեղմելուց հետո, անցում է կատարվում մատենագիտական գրառումից դեպի Վիքիպեդիա՝ «Հակոբ Պարոնյանին» նկարագրող գրառումը: «Թատրոն» պարբերականի պարագայում 520 դաշտը շատ ավելի հարուստ նկարագրական նյութ է պարունակում. «**ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.** 1874, Թիւ 1-2, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՄ. Տնտեսան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 3-7, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գավաֆեան եւ Ընկ., Յ. Պարոնեան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 8-9, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գավաֆեան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 10-26, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Միւհէնպիսեան. ՏէՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 27-40, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Միւհէնպիսեան. ՏէՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ս. ԹԷՐԶԻԵԱՆ.*

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. 1874, Թիւ 41-42, *ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. Տիվիթեան. ՏէՐ ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ս. ԹԷՐԶԻԵԱՆ.*

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1874, թիւ 43-47, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. Թօզլեանց. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Ս. ԹԵՐԶԻԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1874, թիւ 48-70, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. Թօզլեանց. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1874, թիւ 71- 1875, 87, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնտեսեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1875, թիւ 88-125, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնտեսեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ. ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Գ. Մ. ԷՋԱՃԵԱՆ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.1875, թիւ 126, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնտեսեան. ՏԷՐ ԼՐԱԳՐՈՅՍ
Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ.1875, թիւ 127-164, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Տնտեսեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ.1875, թիւ 165-175, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Արամեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 176-183, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Արամեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 184-192, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.Մ. Արամեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 193-199, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 200-211, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յարութիւն Պարոնեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1876, թիւ 212-219, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1877, թիւ 220-244, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ.1877, թիւ 245-256, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Միքայէլեան. ՏԷՐ
ԼՐԱԳՐՈՅՍ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ»:

զ. 505 դաշտը, որը, համաձայն MARC21 ձևաչափի, նախատեսված է «Բովանդակության» նկարագրության համար, ամսագրերի պարագայում կարող է ունենալ բազմաթիվ կիրառություններ: Բերենք դրանցից մեկը՝ կիրառված Սանկտ-Պետերբուրգում հրատարակված «Արաքս» ամսագրի համար: «Նորմալ դիտում» ռեժիմում ունենք հետևյալ պատկերը.

«→ Յաւելուած. Վիլլիամ Շեկսպիրի ԼԻՐ ԹԱԳԱՌՈՐ. Թարգմանեց: ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ. 1887, ԳԻՐՔ Ա. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

→ Յաւելուած. Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ ԱՍԵԱ. Թարգմանեց Աղեքսանդր Ծարպուրեան. 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած. ԲԷԼԱ, Լերմոնսկով. Թարգմանեց Յովհաննէս Մալխասեանց. 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը», Լերմոնսկով, Գլոխ II Մակսիմ Մակսիմիչ. Թարգ. 3. Մալխասեանց. Յաւելուած. ԱՐՁԱԳԱՆՔ ՄԻ ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԷՆ, Գիլիգար. 1890, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը» վէպի վերջը, Լերմոնսկով, Թարգ. 3. Մալխասեանց. 1890, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Վաղեմի կալուածապէրեր», Ն. ԳՕԳՕԼ, ԹԱՐԳ. 3. ԱԹԱՆԱՍԵԱՆՅ. 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից», Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» ԳԼՈՒԻ Թ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1894-1895, ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» ԳԼՈՒԻ Ժ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1897 [1894-1895], ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ. **ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ**

→ Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մտեալ տանից» Մասն երկրորդ, ԳԼՈՒԻ Ա, Հիւանդանոց, շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. 1898, ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա. **ԱՐԱՔՍ**

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ»:

Նոյն արտածումը, բայց արդեն որպէս ISBD գրառում, ունի հետևյալ տեսքը. «Յաւելուած. Վիլիամ Շեկսպիրի ԼիՐ ԹԱԳԱԻՈՐ. Թարգմանեց: ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1887, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած. Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ ԱՍԵԱ. Թարգմանեց Աղեքսանդր Ծարպուրեան. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած. ԲԷԼԱ, Լերմոնսկով. Թարգմանեց Յովհաննէս Մալխասեանց. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1889, ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը», Լերմոնյով, Գլուխ II Մակսիմ Մակսիմիչ. Թարգ. 3. Մայխասեանց.

Յաւելուած. ԱՐԱՔՍԱՆՔ ՄԻ ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԷՆ, Գիւլիգար. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1890, ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած. «Մեր ժամանակի հերոսը» վէպի վերջը, Լերմոնյով, Թարգ. 3. Մայխասեանց. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1890, ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Վաղեմի կալուածապէրեր», Ն. ԳՕԳՕԼ', ԹԱՐԳ. 3. ԱՐԺԱՆԱՍԵԱՆՅ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից», Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1892, ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1893, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» ԳԼՈՒԽ Թ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1894-1895, ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» ԳԼՈՒԽ Ժ., շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1897 [1894-1895], ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Բ.

Յաւելուած "ԱՐԱՔՍ" ՀԱՆԴԻՍԻ. «Յիշատակարան մեռեալ փանից» Մասն Երկրորդ, ԳԼՈՒԽ Ա, Հիւանդանոց: շարունակելի, Ֆ. ԴՕՍՏՕԵԻՍԿԻ. ԱՐԱՔՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ 1898, ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԳԻՐՔ Ա.

Վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ ունենալով HTML լեզվով ծրագրավորման հմտություններ և տիրապետելով MARC21 ձևաչափի կառուցվածքին՝ կարելի է ստեղծել մատենագիտական գրառումներ, որոնք շատ ավելի ճկուն են և դիտարժան, քան դրանց գրքային նկարագրություններն են:

Առաջին փուլի արդյունքների հակիրճ ամփոփում

Ներկայացնենք նախագծի մի շարք արդյունքներ, որոնք պետք է հետաքրքրեն մատենագետներին:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ա. «ԾՈ ՎԱՌ» թերթ: Թե՛ Հ. Ռափայել Կարապետեանի (ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924) և թե՛ Բաբլոյանի (ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 171) կազմած մատենագիտական ցանկերում¹³ տպարանը նշված չէ: Թերթի էջերում տպարանի անվանումը առանձին տողով ևս առկա չէ: Թերթելով թվայնացված էջերը, 1930 Դ. տարի, թիւ 3-4-ում նկատեցի հետևյալ նշումը. «...Իսկ գալով «Ծովառ»ի կուսակցական բնոյթ ունենալուն, որովհետեւ «Պայքար»ի տպարանին մէջ կը տպագրուի եւ անոր օֆիսին մէջ կը խմբագրուի...»: Այսինքն, թերթը տպագրվել է «Պայքար»-ի տպարանում: Թերթի նկարագրությունը սա է. «ԾՈ ՎԱՌ : Պաշտօնաթերթիկ ՉՆԳՇՈՅ ԾՈ ՎԱՌ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԾՈ՛ Վառ Խմբ.՝ Պ. Փապուճեան. - Շիքակօ, Տպարան Պայքար, 1927-1933.»¹⁴:

բ. **ԴԱՓՆԻ** : TAPNY Արտօնատեր՝ Հ. Ջուանշիր - Ջմիւռնիա : Տպագր. ԹԷԼԼԱԼԵԱՆ, 1919. - 4 երես : (կիսամսեայ) 30 x 22 սմ.

Գ. Լևոնյանի կազմած մատենագիտության մեջ (ԼԵՎՈՆՅԱՆ 1934) այս «Դափնի»-ն միավորվել է «ԴԱՓՆԻ : Կիսամսեայ կրօնաթերթ / Արտօնատեր-պատասխանատու տնօրէն՝ Համայէր Ջուանշիր; Խմբ.՝ Ղեւոնդ Դուրեան. - Ջմիւռնիա : տպ. Քէշիշեան, 1921-1922. - 32 էջ: 21 x 14 սմ.» պարբերականի հետ (տե՛ս ԼԵՎՈՆՅԱՆ 1934, մատենագիտական գրառում թիվ 856): Մ. Բաբլոյանի կազմած մատենագիտության մեջ այս թերթը ևս չի ներառվել, չնայած որ Հ. Ռափայել Կարապետեանի «Լիակատար ցուցակ հայերէն լրագիրներու որոնք կը գտնուին Մխիթարեան մատենադարանին մէջ ի Վիեննա 1794-1921» այդ անվանումը առկա է (ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924, թիվ 238 և 239 գրառումները)¹⁵:

¹³ Բաբլոյանի մատենագիտական ցանկում սույն վերնագիրը նկարագրված է էջ 171-ում, 1574 թվի ներքո: Առկա է թվագրման վրիպակ: Պետք է լինի 1547:

¹⁴ «ԾՈ ՎԱՌ» թերթի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/CJL46> (11.10.2023):

¹⁵ «Դափնի» թերթի մատենագիտական նկարագրությունը տե՛ս

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

գ. Վիեննայի Մենաստանի թվայնացված մամուլի վերնագրերում առկա է «ԺԱՄԱՆԱԿ» անվանումը կրող մի հավելված, որն ուսումնասիրելուց և մասնագետների հետ քննարկելուց հետո եզրակացրեցինք, որ նորահայտ անուն է և, հավանաբար, եղել է, Գոչունեանների ընտանեկան «Ժամանակ» թերթի գունավոր կազմով հավելվածը: Նկարագրությունը սա է. «ԺԱՄԱՆԱԿ / - Իսթամպուլ Վիմգ. Տպգր. Մ. Տէր-Սահակեան, 1932? - 4 էրես ; (գունաւոր) 31 x 22 սմ.»:

Քանի որ ելքային տվյալները թերթի վրա խիստ աղքատիկ են (ԲԱԲԼՈՅԱՆ 1986), իսկ Մ. Տէր-Սահակեան անունով հրատարակիչ/տպարան գործել է.

(i) Բելգիայում 1928-1929 թթ., ապա տեղափոխվել է Ռումինիա 1930-1931 թթ. և տպագրել է «Գիտություն և գիտելիք» հանդեսը, որը բովանդակային առումով ոչ մի աղերս չունի հայտնաբերված «Ժամանակ»-ի հետ:

(ii) 1931-1932 թթ. Ստամբուլում տպագրվել է «Արշալոյս» պարբերականը, որի հրատարակիչն է եղել Մ. Տէր-Սահակեանը, հետևաբար պետք է ենթադրել, որ այս նորահայտ անունը 1932? է, և տպագրված է Ստամբուլում¹⁶:

դ. ՀՆՉԱԿ ԿԱՄ ՀԱԻԱՔԱԾՈՅ ԶՈՒԱՐՃԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ:
Հանդեսի հրատարակության մեկնարկի տարեթիվը թե՛ Հ. Ռափայել Կարապետեանի, թե՛ Գ. Լևոնյանի, թե՛ Մ. Բաբլոյանի և թե՛ Ա. Կիրակոսյանի (ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970) մատենագիտական ցանկերում նշված է 1886: Այս հանդեսը Հայաստանի ազգային գրադարանում առկա է 1887, Գ. Տարի, Հատոր Ե., թիւ 1-ից սկսած և նկարագրված

<https://shorturl.at/fmP38> (11.10.2023):

¹⁶ «Ժամանակ» թերթի հավելվածի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/jyKM3> (11.10.2023):

է «Հնչակ : Տասնօրյա զավեշտաթերթ» անվանումով¹⁷: «ՀՆՉԱԿ» հանդեսի նկարահանված էջերը թերթելիս նկատեցի հետևյալը. հանդեսի հավաքական կազմի վրա նշված է 1886 թ., իսկ երբ սկսվում է հանդեսի թիվ 1-ի կազմը, ապա նշված է 1885 թ.: Կարելի էր ենթադրել, որ սա տպագրական սխալմունք է: Սակայն դա այդպես չէ, քանի որ 1887 թ. համար հանդեսի հրատարակիչները նշել են Երրորդ տարի՝ հետագայում այն փոխելով Գ. տարի: Եթե համադրենք տպագրության տարիները և հատորների թվերը, ապա 1885 թ. ճիշտ է նշված: Այսպիսով, հարկ է փաստել, որ տպագրական սխալ առկա չէ, և տպագրության սկզբնական տարին պետք է համարել 1885 թ.¹⁸:

Ե. Անտոն Սաքսեանի 1886 թ. հիմնադրած «ԾԱՂԻԿ : ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ» պարբերականը բավականին խճճված և բարդ կառուցվածք ունի: Եղել է թերթ, ապա ամսագիր, շարունակվել է այլ անվանումներով, կիսվել է և այլն¹⁹: Մատենագիտական տարբեր աղբյուրներում առկա «ԾԱՂԻԿ»-ի նկարագրությունը շատ հեռու է ամբողջական լինելուց: Սույն պարբերականի նկարագրությունը բավականին լավ է արված Գ. Լևոնյանի մոտ (ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 27, թ. 189 գրառումը): Շտեմարանում նկարագրելիս կատարվել են մի շարք հավելումներ և ճշգրտումներ: Այսպես, Վիեննայի Մենաստանի թվայնացված մամուլի մատենագիտական շտեմարանում արված է պարբերականների հստակ տարանջատում՝ ըստ տպագրության տեսակների: Այսինքն, պարբերականները տարանջատվում են ամսագրերի, թերթերի և տարեգրերի: Այս բաժանումը կիրառված է վիճակագրական հաշվարկների համար, որպեսզի հստակ պատկեր ունենանք,

¹⁷ Որպես անվանում՝ նշված է հանդեսի 1887 թ. Ե. հատոր անունը: 1885-1887 թթ. հատոր Դ.-ն ներառյալ՝ հանդեսի անվանումը եղել է «ՀՆՉԱԿ ԿԱՍ ՀԱԻԱՔԱԾՈՅ ԶՈՒԱՐՃԱՐԱՆՈՒԹԵԱՆՑ»:

¹⁸ «Հնչակ կամ Հաւաքածոյ զարճաբանութեանց» հանդեսի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/inEV9> (11.10.2023):

¹⁹ «Ծաղիկ» պարբերականի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/jkpLS> (11.10.2023):

թե քանի՞ ամսագիր, քանի՞ թերթ և քանի՞ տարեգիր է տպագրվել: «ԾԱՂԻԿ»-ի պարագայում Ա. Չոպանեանը և Ա. Անտոնեանը թերթի փոխարեն տպագրել են ամսագրեր: Այսպես, Ա. Անտոնեանը 1904-1905 թթ. տպագրել է «ԾԱՂԻԿ : ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ» ամսագիրը, և 1904 ժԷ. տարի, Նոր շրջան, թիւ 1, ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔԵՐ սյունակում (էջ 3) առկա է հետևյալը. «Ծաղիկ»ի ներկայ հրատարակությունը որեւէ նիւթական կամ բարոյական կապ չունի Պ. Միքայէլ Շամբանեանի խմբագրութեամբ հրատարակուած նախորդ շրջանին հետ: ...»²⁰: Ուստի, Ա. Անտոնեանի հրատարակած սոյն ամսագիրը, ներառված լինելով «Ծաղիկի» նկարագրության մեջ, նկարագրվեց նաև որպես առանձին վերնագիր²¹:

Թե՛ «ԾԱՂԻԿ»-ում և թե՛ «ԾԱՂԻԿ : ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ»-ում օգտագործվել են MARC21 ձևաչափի 780 «Նախորդող մուտք» և 785 «Հաջորդող մուտք» դաշտերը՝ գրառումները տրամաբանորեն իրար կապելու համար: Նոյն մոտեցումն է կիրառվել Ա. Չոպանեանի 1895 թ. հրատարակած «ԾԱՂԻԿ : ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ» ամսագրի պարագայում: Որպես տեր և տնօրեն շարունակել է հանդես գալ Ա. Սաքաեանը, բայց ամսագրի պատասխանատուն եղել է Ա. Չոպանեանը: Այս ամսագիրը ևս նկարագրվել է որպես առանձին վերնագիր՝ նաև ներառվելով «Ծաղիկ»-ի նկարագրության մեջ²²:

²⁰ Միգուցե Ա. Անտոնեանը արտոնագրային բարդություններից խուսափելու նպատակով, պարզպաես վերցրել է «ԾԱՂԻԿ» անունը, որպես արտոնատեր հանդես է եկել Անտոն Սաքաեանը, բայց հրատարակել է իր ուրույն ամսագիրը:

²¹ «Ծաղիկ» հանդեսի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/dwAG8> (11.10.2023):

²² «Ծաղիկ»-ի մատենագիտական նկարագրությունը տե՛ս <https://shorturl.at/nolj3> (11.10.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ներկայացնում ենք մի հատված այս գրառման 520 դաշտից (տե՛ս նկ. 1), որից պարզ է դառնում, որ 1895 թ. Ա. Չոպանեանի հրատարակությունից (ընդգծված է դեղինով) հետո, «Ծաղիկ»-ի 1896 թ. հրատարակությունն ունեցել է հետևյալ ենթավերնագիրը՝ «ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱՋԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ» և նշվել է որպես 9^{րդ} տարի:

- 1886** Ա. Տարի Թիւ 1-4, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ
- 1887** Ա. Տարի Թիւ 5-104, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ
- 1887** Բ. Տարի Թիւ 105-107, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ
- 1888** Բ. Տարի Թիւ 108-161, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ
- 1888** Բ. Տարի Թիւ 162-183, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
- 1888** Գ. Տարի Թիւ 184-185, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
- 1889** Գ. Տարի Թիւ 186-275, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
- 1889** Դ. Տարի Թիւ 276-278, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
- 1890** Դ. Տարի Թիւ 279-329, ԾԱՂԻԿ : ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ: Խմբագիր-Տնօրէն՝ Յովնան Գ. Փայլազաշեան. Խմբագրապէս՝ Ա. Ա. Սուրենեան.
- 1890** Նոր Շրջան Ա. Տարի Թիւ 1 (ՍԵՂՏԵՄԲԵՐ 15) - Թիւ 16, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.
- 1891** Նոր Շրջան Ա. Տարի Թիւ 17-52, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.
- 1891** Նոր Շրջան Բ. Տարի Թիւ 1-11, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.
- 1892** Նոր Շրջան Բ. Տարի Թիւ 12-52, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.
- 1892** Նոր Շրջան Գ. Տարի Թիւ 1-2, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.
- 1893** Նոր Շրջան Գ. Տարի Թիւ 3-37, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ.
- 1894** Նոր Շրջան Գ. Տարի Թիւ 38-39, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ, Խմբագիր՝ Գրիգոր Պ. Գայսերեան.
- 1894** Նոր Շրջան Ա. Տարի Թիւ 1 (Մայիս 14)-20, ԾԱՂԻԿ : ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Շաբաթաթերթ: 39 x 28 սմ, 8 էրես: Խմբագիր՝ Գրիգոր Պ. Գայսերեան.
- 1895** Նոր Շրջան Թիւ 1-17, ԾԱՂԻԿ : ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՂԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ - Խմբագրապէտ Արշակ Չոպանեան: 24 x 16 սմ, 32 էրես:
- 1896** 9րդ Տարի Թիւ 1-23, ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ - 55 x 39 սմ, 4 էրես: Տնօրէն-Խմբագիր՝ Երուանդ Գաբրիելեան

Նկ. 1 Հատված «Ծաղիկ» թերթի 520 դաշտից

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Փորձենք հաշվել տարիները՝ հիմք ընդունելով 520 դաշտում բերված բաշխումն ըստ Ա., Բ., Գ., ... տարիների:

- ✓ 1886 Ա. տարի-1890 Դ. տարի՝ կազմում է 4 տարի:
- ✓ 1890 Նոր շրջան Ա. տարի - 1894 Նոր շրջան Գ. տարի՝ կազմում է 3 տարի:
- ✓ 1894 Նոր շրջան Ա. տարի՝ կազմում է 1 տարի:

Ընդամենը կազմեց 8 տարի:

1895 թ. Ա. Չօպանեանը հրատարակում է իր ամսագիրը, որը նույն թվականին էլ դադարեցնում է գործունեությունը:

1896 թ. Ե. Գարթալեանը շարունակում է «Ծաղիկ»-ի՝ որպես թերթի տպագրությունը՝ նշելով դա որպես 9^{րդ} տարի, այսինքն՝ Ա. Չօպանեանի հրատարակությունը չեն ներառել տարիների հերթական հաշվարկում: Այս փոքրիկ վերլուծությունը ևս հաստատում է վերևում իմ առաջ քաշած ենթադրությունը, որ թե՛ Ա. Չօպանեանի և թե՛ Ա. Անտոնեանի ամսագրերը «Ծաղիկ» թերթի տրամաբանական մաս չեն կազմել:

Նման մոտեցման արդյունքում **երկու հանդես** ևս ավելացավ ամսագրային հրատարակությունների ընդհանուր թվին:

գ. Մ. Բաբլոյանի մատենագիտությունում առկա է մի այսպիսի գլուխ՝ «Հայտարարված, բայց չհրատարակված թերթեր և հանդեսներ»: «ԾԱՂԻԿ»-ի 1899 ժԳ. տարի, 28 օգոստոսի, թիւ 8, կարդում ենք «ԼՈՅՍ՝ ՓՈԽԱՆ ԾԱՂԻԿԻ «Ինչպէս որ ասկէ առաջ յայտարարուած էր, ԾԱՂԻԿ ի մօտոյ պիտի հրատարակուի իբրև օրաթերթ ամէն օր, իր արտօնատիրոջ՝ Անտոն էֆ. Սաքաեանի տրամադրութեան տակ: Թէև ըսուած էր թէ միեւնոյն ժամանակ ԾԱՂԻԿ շաբաթերթն ալ պիտի շարունակուի ըստ առաջնոյն: Սակայն անկարելի ըլլալով միեւնոյն թերթը երկու տարբեր ուղղութեամբ և տարբեր տնօրինութեամբ շարունակել, նախամեծար համարեցի թերթիս ուղղութիւնը փոխելու տեղ անունը փոխել: Ուստի յառաջիկայ շաբաթէն սկսեալ ԼՈՅՍ պիտի հրատարակուի ԾԱՂԻԿի տեղ, միևնոյն ուղղու-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

թեամբ, միեւնոյն պարունակութեամբ, միևնոյն ծաւալով և միեւնոյն պայմաններով: Միմիայն թերթին ճակատը փոխանակ ՇԱՂԻԿԻ՝ ԼՈՅՍ պիտի գրուի... ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ»:

«ԼՈՅՍ» անունով պարբերական, հիմնադրված 1899 թ. մատենագիտական ցանկերում առկա չէ:

Այսինքն, ևս մեկ հայտարարված, բայց չհրատարակված անուն է հայտնաբերվել այս հավաքածուում:

Շտեմարանը որպես վիճակագրական տվյալների աղբյուր

Մխիթարեան միաբանութեան հայ մամուլի շտեմարանի նախագծման ընթացքում, փորձ արեցինք ընտրել ինդեքսավորման այնպիսի կառուցվածք, որպեսզի փնտրտույքը շտեմարանի ներսում լինի հնարավորինս ճկուն և հնարավորինս շատ վիճակագրական տվյալներ տրամադրվեն հետազոտողին: Այս պահին շտեմարանը պարունակում է 195 պարբերականի մատենագիտական նկարագրություն, որոնք ըստ նյութի տեսակների բաշխված են այսպես.

- ✓ Թերթ՝ 93 վերնագիր.
- ✓ Ամսագիր՝ 100 վերնագիր.
- ✓ Տարեգիր՝ 2 վերնագիր:

Խմբագիրների անուններն ինդեքսավորվում են, և ինդեքսավորված անվան աջ մասում երևում է, թե քանի պարբերականի խմբագիր կամ հրատարակիչ է տվյալ անձը եղել: Այսպես, «Մամուրեան, Հրանտ Մատթէոսի (4)» հուշում է, որ Մամուրեան Հրանտը 4 պարբերականի խմբագիր-տնօրենն է եղել: Անվան ցուցիչից կարելի է ուղղակի անցում կատարել հրատարակած պարբերականների մատենագիտական գրառումներին:

Վիճակագրական տվյալների մի առանձին խումբ էլ ներկայացնում են տպագրության քաղաքների և երկրների անվանումները: Կարելի է հեշտությամբ իմանալ, թե որ քաղաքում/երկրում քանի անուն պարբերական է տպագրվել:

Հայ տպագրության պատմությամբ զբաղվող մասնագետների համար, տպարանները միշտ էլ մեծ հետաքրքրություն են ներկայացրել: Շտեմարանը տալիս է հստակ տեղեկատվություն թե՛ տպարանների անունների, թե՛ դրանց գտնվելու վայրի և թե՛ այդ տպարաններում հրատարակված պարբերականների անունների և քանակների վերաբերյալ: Օգտագործվել է հետևյալ ստանդարտացված կառուցվածքը՝ *տպ. «անվանում»*, արդյունքում տպարանների անունները հավաքվում են «Խորագրային» ցուցիչների առանձին տիրույթում: «[տպ. "Ա. Յակոբ Պոյաճեան" \(6\)](#)» գրառումը հուշում է, որ Պոյաճեանի տպարանում տպագրվել է 6 անուն պարբերական, իսկ հետևելով հղմանը, կարտածվեն այդ տպարանում լույս տեսած պարբերականների մատենագիտական գրառումները:

Շտեմարանում ներդրված է կառուցվածք, որը հնարավորություն է տալիս ունենալու հայոց լրագրության պատկերն ըստ հրատարակության տևողության, տե՛ս նկար 2-ը: Վիճակագրական բաշխման աղյուսակից տեսնում ենք, որ 1794 թվականից մինչև 1920-ականներն ընկած ժամանակահատվածում, մամուլի համեմատաբար շատ քանակներ ունեցել են մեկից մինչև վեց տարվա կյանք: Մեկ տարվա կամ դրանից էլ պակաս կյանքի տևողություն ունեցող պարբերականների թիվը ամենաշատն է՝ 48 անուն:


խոսք երախտիքի

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի Մենաստանի հոգևոր հայրերին՝ ցուցաբերած աջակցության համար, հատկապես Հայր Նարեկ Տատուրեանին, ում ակտիվ մասնակցության և շարունակական աջակցության շնորհիվ սույն նախագիծը դարձավ իրականություն: Շնորհակալության խոսքս եմ հղում Հայր Սիմոն Պայեանին, ում ջանքերի արդյունքում մամուլի թվայնացման աշխատանքները մեծապես շահեցին: Անուրանալի է Արհիապատիւ Պողոս Լեւոն արք. Զեքիեանի ներդրումը սույն նախագծի կայացման գործում: Գերապայծառ Հայրը մշտա-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

պես եղել է մեր կողքին, և առանց իր խորհուրդների ծրագիրը մեծապես կտուժեր:

Երախտիքի մեր խոսքն ենք ուղղում նաև Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության «Հայկական համայնքների բաժանմունք»-ի տնօրեն դոկտ. Ռազմիկ Փանոսեանին և տնօրենի օգնական Շողեր Մարկոսեանին՝ նախագծի առաջին փուլի ֆինանսավորման և ցուցաբերած մշտական աջակցության համար:



Նկ. 2 Պարբերականների քանակներն՝ ըստ կյանքի տևողություն **Ամփոփում**

Սույն հոդվածում ներկայացվեցին մեր կողմից կատարված ճշգրտումներից և բացահայտումներից մի քանիսը: Իրականում դրանք ավելի շատ են. ունենք բազմաթիվ նոր տպարաններ, խմբագիրներ, շտկվել են մի շարք մատենագիտական սխալներ և այլն:

Մամուլի մատենագիտություն կազմողները հիմնականում օգտվում են տարիներ առաջ կազմված մատենագիտական տպագիր ցանկերից, որոնք, կարծում ենք, թվային դարաշրջանում պետք է

ծառայեն որպես սկզբնաղբյուր, բայց ոչ որպես մեխանիկական պատճենման աղբյուր: Ձեռքի տակ ունենալով մամուլի թվայնացված նմուշները՝ հարկ է դրանք էջ առ էջ թերթել, քանի որ մատենագետին սպասվում են բազմաթիվ անակնկալներ:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԲԱԲԼՈՅԱՆ 1986 – Բաբլոյան, Մ. (կազմ.) (1986), *Հայ պարբերական մամուլը (1794-1980)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 470 [Babloyan, M. (comp.) (1986), *Hay Parberakan Mamuly. Matenagitakan Hamahavak Ts'uts'ak*], Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 470];

ԼԵՎՈՆՅԱՆ 1934 – Լևոնյան, Գ. (կազմ.) (1934), *Հայոց պարբերական մամուլը (1794-1934)*, Երևան, Պետհրատ, XXXI, 228, 3 [Levonyan, G. (comp.) (1934). *Hayots' Parberakan Mamuly (1794-1934)*, Yerevan, Pethrat, XXXI, 228, 3];

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924 – Կարապետեան, Հ. (կազմ.) (1924), *Լիակապար ցուցակ հայերէն լրագիրներու որոնք կը գտնուին Մխիթարեան մատենադարանին մէջ ի Վիեննա 1794-1921*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 79 [Karapetyan, H. (comp.) (1924). *Liakatar Ts'uts'ak Hayeren Lragirneru voronk kgtvin Mkhitaryan Matenadaranin mej (1794-1921)*, Vienna, Mkhitaryan Press, 79];

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970 – Կիրակոսյան, Ա. (կազմ.) (1970), *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 621 [Kirakosyan, A. (comp.) (1970). *Hay Parberakan Mamuly (1794-1967)*, Yerevan, Public Library of Armenian SSR after A.I. Myasnikyan, 621];

ZARGARYAN 2020 – Zargaryan, T., Astsatryan H., Matela M. (2020), Armenian Research & Academic Repository in Action: Towards Challenges of the 21st Century, *Katchar* (Yerevan), 2, 67-79.

**DIGITALIZATION OF THE PERIODICALS
BEING PRESERVED IN
THE MEKITARIST MONASTERY OF VIENNA.
PRESENTATION OF FIRST PHASE RESULTS**

TIGRAN ZARGARYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph. D. (Technical Sciences)

Keywords: Armenian periodicals, bibliography of the Armenian periodicals, Mekitarist Congregation - Vienna, Calouste Gulbenkian Foundation.

In 2019 Calouste Gulbenkian Foundation in close cooperation with Mekitarist Congregation – Vienna and Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia initiated a project – to digitize Armenian periodical and newspaper collections being preserved in the Mekhitarist Congregation – Vienna library.

The library website <https://mechitaristlibrary.org/> presents the periodical and newspaper collections published between 1794 and 1920 from the Vienna Mekhitarist Library. All digitized materials are stored in the databases of the Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia, and are freely accessible to all. The digitization of materials is continuous, and content will be made available in the corresponding databases and websites when ready.

The project also pursues other goals: openness to the international scientific world, access to knowledge for all Armenians and the international scientific and academic community, strengthening of the Armenian language, promotion and development of research work, as well as the promotion of collaboration between inter-Armenian and various Armenian and international organizations.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ . «ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՐՎԵՍ» ՇՏԵՄԱՐԱՆ*

ՀՏԴ: 01(479.25)+681.3+82.035
DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-30

ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՀ ԳԱՄ Հիմնարար գիտական գրադարան

ORCID: [0009-0005-3657-0704](https://orcid.org/0009-0005-3657-0704)

20-րդ դարի վերջից սկսած, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ, առաջնային դարձան էլեկտրոնային շտեմարանները՝ որպես մատենագիտական ինքնատիպ աղբյուրներ: Շտեմարաններում մատենագիտական նկարագրության սկզբունքները էական փոփոխություններ չկրեցին, սակայն տեղեկատվության որոնողական համակարգով դրանք գերազանցեցին ավանդական մատենագիտական ցանկերին: Հոդվածի նպատակն է ընդգծել շտեմարանների դերն ու նշանակությունը տեղեկատվության հավաքագրման և մատուցման գործում:

Ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք շտեմարանների ստեղծման առանձնահատկություններին, որոնման ճկուն համակարգին, բովանդակային շերտերին: Որպես մասնավոր օրինակ՝ դիտարկել ենք «Թարգմանչաց արվեստը» շտեմարանի համակարգման աշխատանքները:

Starting from the end of the 20th century, along with the development of information technologies, electronic databases became primary as original bibliographic sources. The principles of bibliographic description in databases did not undergo significant changes, but due to the information search system, the databases surpassed traditional bibliographic lists. The purpose of the article is to emphasize the role and importance of databases in the collection and delivery of information.

* Հոդվածը ներկայացվել է 03.09.2023, գրախոսվել է 31.11.2023, ընդունվել է տպագրության 04.12.2023:

The article was submitted on 03.09.2023, reviewed on 31.11.2023, accepted for publication on 04.12.2023.

Within the framework of the study, we referred to the features of creating databases, the flexible search system and the content layers. As a private example, we have considered the work of creating and coordinating the "The Art of Translation" database.

Քանայի բաներ՝ թվային պահոցներ, տվյալների շտեմարաններ, մատենագիտություն, բաց հասանելիություն, Վիքիպեդիա:

Ինչպես հղել՝ Մանուկյան Մ. (2023), Մատենագիտությունը թվային դարաշրջանում. «Թարգմանչաց արվեստ» շտեմարան, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 30-38. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-30](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-30)

How to cite (APA style): Manukyan M. (2023), The Bibliography in the Digital Era. "Art of Translation" Database, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 30-38. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-30](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-30)

Ներածություն

Հայ իրականության մեջ մատենագիտությունն իբրև գիտական տերմին գործածական է դարձել 18-րդ դարի առաջին կեսից (ԻՇԽԱՆՅԱՆ 1964, 134): Մատենագիտության նպատակն է ոչ միայն հաշվառել, գրանցել, մշակել ու դասակարգել տպագիր երկերը, այլև ներկայացնել գրքի բովանդակությունը, նրա գաղափարական և գիտական արժեքը, բացահայտել պատմությունը, ճշտել գտնվելու վայրը և ֆիզիկական վիճակը (ԿՈՍՏԻԿՅԱՆ 1968, 3-11): Ունենալով աղբյուրագիտական արժեք՝ այն խիստ կարևորվում է ցանկացած գիտական ուսումնասիրության մեջ:

Յուրաքանչյուր դարաշրջան առաջադրել է մատենագիտական նկարագրության իր պահանջներն ու չափորոշիչները: Տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում այդ պահանջները բոլորովին այլ են: Բնականաբար, այսօր փոխվել են մատենագիտությանն առաջադրված ավանդական ձևերն ու սկզբունքները: Տեղեկատվական տեխնոլոգիաների աճին զուգահեռ ավելացել են համա-

ցանցային ծառայությունների տեսակները՝ ստեղծելով և առաջադրելով նորանոր հնարավորություններ:

Սույն ուսումնասիրության նպատակն է ընդգծել շտեմարանների կարևորությունը արդի շրջանում՝ որպես մատենագիտության յուրօրինակ դրսևորում, ցույց տալ դրանց կազմման հիմնական ձևերն ու սկզբունքները և ընդգծել կիրառելիության սահմանները:

Տվյալների շտեմարան

20-րդ դարի վերջից սկսած տեղեկատվության հավաքագրումը, կուտակումը և տարածումը գերխնդիր էր, որի լուծման կարևորագույն օղակները հանդիսացան գրադարանները, արխիվները, թանգարանները, որոնց առաջադրված աշխատանքի կազմակերպման նոր պահանջների մեջ առաջնային դարձան էլեկտրոնային շտեմարանները՝ որպես մատենագիտական ինքնատիպ աղբյուրներ (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 7-8):

Տվյալների շտեմարանները տվյալների կամ տեղեկատվության կազմակերպված հավաքածուներ են, որոնք պահվում են համակարգչային ընթեռնելի ձևաչափով: Դրանք կարող են լինել հանրային կամ մասնավոր՝ ըստ նպատակային գործածության (ՈՅՈՒՍՈՒՄ 2020, 18-20: Ավելի մանրամասն տե՛ս ԽԱԶԱՏՐՅԱՆ 2022, 9-19):

Մատենագիտական տեղեկանքի տվյալների տարրերը ներառում են հեղինակի կամ հեղինակների անունները, տպագրված աշխատության անվանումը, ամսագրի անվանումը, էջերի քանակը, հատորի համարը, թողարկման համարը և հրապարակման ամսաթիվը: Առցանց տեղեկատվություն գտնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե որ էլեկտրոնային շտեմարանն է պարունակում այդ տեղեկատվությունը: Տվյալների շտեմարանները նույնականացնելու մի քանի եղանակ կա: Դրանցից մեկը տպագիր և առցանց գրացուցակների օգտագործումն է, մյուսը՝ համացանցի որոնման համակարգերի օգտագործումը:

Տվյալների շտեմարանը մեկ կամ մի քանի թվային տիրույթում պահվող տվյալների հավաքածու է և հանդիսանում է տվյալների պահպանման և կազմակերպման հիանալի միջոց: Դա համակարգչային ծրագրաշարի ձև է, որը նախատեսված է տվյալներն արդյունավետ կերպով պահելու, արտածելու և կառավարելու համար՝ նպատակ ունենալով հեշտացնելու փնտրման գործընթացը: Այն սովորաբար պարունակում է դաշտեր կամ սյունակներ, որտեղ յուրաքանչյուր դաշտ ունի որոշակի տեսակի տվյալներ և երկարություն: Ամենատարածված տեսակներն են՝ տեքստը, թվերը, ամսաթվերը և այլն: Շտեմարանում որոնումը հեշտացնելու նպատակով մեկ կամ մի քանի դաշտեր կարելի է ինդեքսավորել:

«Թարգմանչաց արվեստ» շտեմարան¹

ՀՀ գրադարաններում տվյալների շտեմարանների ձևավորման աշխատանքները սկսվել են 20-րդ դարի վերջից: 2000 թ. Ազգային գրադարանի, Ազգային գրապալատի, ՀՀ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (այուրետ՝ ԳԱԱ) Հիմնարար գիտական գրադարանի, Երևանի պետական համալսարանի գրադարանի աշխատակիցներից ստեղծված աշխատանքային խումբը պատրաստեց հայաստանյան գրադարանների ավտոմատացված ցանցի հայեցակարգը: Նախագծին տրվեց «Հայաստանի գրադարանային ավտոմատացված ցանցի ստեղծում» անվանումը (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2015, 3-12): Մրցույթի արդյունքում ընտրվեց իսրայելական ExLibris կազմակերպության Aleph համակարգը, որի հիման վրա ստեղծված Համահավաք էլեկտրոնային քարտարանը դարձավ տեղեկատու շտեմարան՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնողական դյուրին համակարգով: 2017 թ. մի շարք պատճառներից ելնելով՝ այն փո-

¹Թարգմանչաց արվեստ

<http://greenstone.flib.sci.am/gsd/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=fs|grad-col&l=hy&w=utf-8>
(31.08.2023):

խարինվեց Koha ծրագրով (ԱՌԱՔԵԼՅԱՆ 2018, 68): Հետագա տարիներին շտեմարանների ձևավորման ուղղությամբ աշխատանքներն ընդգրկեցին ավելի լայն շրջանակներ: Այսօր հայաստանյան մի շարք գրադարաններում ձևավորվում են էլեկտրոնային շտեմարաններ՝ համապատասխան նախանշված նպատակի և կիրառության:

Շտեմարանների ստեղծման գործում ակնառու է ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի փորձը: Լինելով գիտամեթոդական կենտրոն՝ գրադարանը պարբերաբար թարմացնում է ծրագրաշարերը, տեղայնացնում և հասանելի դարձնում հայաստանյան գրադարանային հանրությանը: KOHA, Greenstone, Dlibra և այլ ծրագրերի միջոցով այսօր գրադարանի կայքէջում հասանելի են թեմատիկ մի շարք շտեմարաններ, որոնցից վերջինը 2023 թ. ստեղծված «Թարգմանչաց արվեստ» շտեմարանն է:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանն արդեն վաղուց որդեգրել է տեղեկատվությունը բաց մատչելիության սկզբունքով մատուցելու քաղաքականությունը: Հենց այս գաղափարախոսության շրջանակում է այսօր թվայնացվում ՀՀ ԳԱԱ տպագիր ողջ ժառանգությունը: Բացառություն չեն նաև գրադարանի ձևավորած էլեկտրոնային շտեմարանները, որոնցից է «Թարգմանչաց արվեստ»-ը: Այն հասանելի է բոլոր հետազոտողներին, ընթերցողներին՝ առանց տարածքային և ժամանակային սահմանափակումների:

Շտեմարանը ստեղծվել է Greenstone² ծրագրի հիման վրա, որը պատկանում է բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի ընտանիքին և լավագույն ծրագրային լուծումներից է:

«Թարգմանչաց արվեստ» շտեմարանը ստեղծելիս առաջնորդվել ենք հետևյալ նպատակով.

1. Ստեղծել մեկ միասնական հարթակ հայ թարգմանիչների համար՝ ներառելով բոլորին:

² <https://www.greenstone.org/> (31.08.2023):

2. Մեկ էլեկտրոնային շտեմարանում համախմբել առ այսօր տպագրված բոլոր թարգմանությունները, որոնք կատարել են հայ թարգմանիչները առանց լեզվական սահմանափակումների:

3. Ամբողջացնել թարգմանված տպագիր ժառանգության մատենագիտական գրառումները:


4. Չխախտելով հեղինակային իրավունքի պահանջները՝ նկարագրություններին կցել թվային տարբերակները:

5. Համագործակցություն սկսել թարգմանիչների հետ՝ նպաստելով գրադարանի հավաքածուների ամբողջացմանը:

6. Իրականացվող աշխատանքներով նպաստել հայ տպագիր ժառանգության ուղղությամբ տարվող հետազոտական աշխատանքներին:

Առաջնորդվելով վերոնշյալ առաջնահերթություններով՝ շտեմարանում ներառվում են տարբեր ժամանակներում գործած հայ թարգմանիչների՝ այլ լեզուներից հայերեն և հայերենից այլ լեզուներ կատարած թարգմանությունները՝ համապատասխան մատենագիտական նկարագրություններով և թվային տարբերակներով (եթե դա չի հակասում հեղինակային իրավունքի պահանջներին): Ներկայում առաջնահերթությունը տրվում է առանձին գրքերին կամ ժողովածուներում տպագրված թարգմանություններին: Հետագայում նախատեսվում է շտեմարանում ներառել պարբերական մամուլում տպագրված թարգմանությունները:

Ընդգրկվում են բոլոր թարգմանություններն անխտիր: Համակարգն ունի որոնման լայն հնարավորություններ՝ ըստ հեղինակների, վերնագրերի, թարգմանիչների, տպագրության վայրի և տարեթվի, հրատարակիչների: Հեղինակների, վերնագրերի, թարգմանիչների դաշտերում նյութերը դասակարգված են այբբենական կարգով: Ներկայացված են յուրաքանչյուր թարգմանիչի թարգմանությունները թե՛ գրքերից, և թե՛ ժողովածուներից:



Առաջին անգամ փորձ է արվել անմիջական կապ ստեղծել էլեկտրոնային շտեմարանի և Վիքիպեդիայի միջև՝ գիտակցելով, որ առավել լիարժեք տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային հարթակը հենց Վիքիպեդիան է³, որն առցանց, բազմալեզու, հանրագիտարանային նախագիծ է, որն աշխատում է վիքի ձևաչափով: Նախագիծը նպատակ ունի տրամադրել ազատ, առավել ամբողջական բովանդակություն, առաջնորդվում է հիմնարար սկզբունքներով, իսկ բովանդակությունը հրապարակվում է Creative Commons BY-SA արտոնագրի ներքո⁴: Վիքիպեդիայում ողջ տեղեկատվությունը ներկայացված է ազատ և առանց գովազդի:

Շտեմարանում յուրաքանչյուր թարգմանչի անվան վրա դրվում է **W** նշանը՝ հղումով, որի վրա սեղմելով օգտվողին հասանելի է դառնում տվյալ թարգմանչի վիքի էջը: Կատարվում է թարգմանչի անհատական էջի խմբագրում, անհրաժեշտության դեպքում տեղադրվում է թարգմանությունների ցանկը: Այս համագործակցության շրջանակում գործում է հետադարձ կապը. Յուրաքանչյուր թարգմանչի Վիքիպեդիայի էջում տեղադրվում է շտեմարանի հատուկ պատրաստված լոգո, որի վրա սեղմելով՝ օգտվողը միանգամից հայտնվում է «Թարգմանչաց արվեստ» հարթակում: Արդյունքում՝ ստեղծվել է շղթայական մի օղակ, որով ապահովվում է և՛ թարգմանչի կյանքի ու գործունեության մասին տեղեկատվությունը, և՛ թարգմանությունների մատենագիտական ցանկը: Եթե թարգմանիչը Վիքիպեդիայում էջ չունի, թարգմանչի հետ համագործակցության արդյունքում ստեղծվում է նաև այդ էջը: Շտեմարանում գրառումները հղումներով կապվում են գրադարանի էլեկտրոնային քարտարանի,

³ Վիքիպեդիա. ազատ հանրագիտարան <https://hy.wikipedia.org/> (31.08.2023):

⁴ Creative Commons BY-SA <https://creativecommons.org/licenses/by-sa/2.0/deed.en> (31.08.2023):

Համահայկական թվանշային գրադարանի կամ համապատասխան կայքէջի հետ: Սա հնարավորություն է տալիս օգտվողին կամ առցանց ընթերցել գիրքը, եթե այն թվայնացված է կամ առցանց պատվիրել գիրքը՝ գրադարանի ընթերցասարահում ընթերցելու համար:

Ամփոփում

Կարող ենք փաստել, որ տվյալների շտեմարաններն այսօր հանդես են գալիս, որպես մատենագիտական ինքնատիպ ձեռնարկներ՝ բովանդակության առավել լայն ընդգրկումով և որոնման անսահմանափակ հնարավորություններով: Դրանք ավանդական մատենագիտության բացասում չեն, այլ տեղեկատվության մատուցման նոր ձևաչափ: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի ստեղծած շտեմարաններից է «Թարգմանչած արվեստ»-ը, որը դարձել է էլեկտրոնային մեծ հարթակ հայ թարգմանիչների և նրանց թարգմանությունների համար:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՌԱՔԵԼՅԱՆ 2018 – Առաքելյան, Ն. (2018), Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային շտեմարանները որպես մատենագիտական աղբյուրներ, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 2(2), 68-84 [Arakelyan, N. (2018), *Electronic Databases of the National Library of Armenia as Bibliographic Sources, Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 2(2), 68-84];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hegh. Hrat., 168];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2015), Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից (Հայացք 25 տարվա անցած ուղուն), *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 3-12 [Zargaryan, T. (2015), From The History of Developing Digital Libraries in Armenia: 25 years of Library Automation in Armenian, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(1), 3-12];

ԻՇԽԱՆՅԱՆ 1964 – Իշխանյան, Ռ. (1964), *Հայ մատենագրության պատմություն (ուրվագիծ)*, պրակ Ա. V-XVIII դարեր, Երևան, ՀՍՍՀ Ա. Մյաս-

նիկյանի անվան հանրապետական գրադարան, 157 [Ishkhanyan, R. (1964), *Hay Matenagrutyun patmutyuan (urvagits)*, prak. A. V-XVIII darer, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 157];

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2022 – Խաչատրյան, Կ., Թումանյան, Ա. (2022), *Տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր*, Երևան, Տնտեսագետ, 192 [Khachatryan, K., Tumanyan, A. (2022), *Tvyalneri Shtemaranneri Kar'avarman Hamakarger*, Yerevan, Tntesaget, 192];

ԿՈՍՏԻԿՅԱՆ 1968 – Կոստիկյան, Հ. (1968), *Մատենագիտության հիմունքները*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 425 [Kostikyan, H. (1968), *Matenagutyan Himunknery*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 425];

НОВИКОВ 2020 – Новиков, Б. А., Горшкова, Е. А., Графеева, Н. Г. (2020), *Основы технологий баз данных*, Москва, ДМК Пресс, 582 [Novikov, B. A., Gorshkova, E. A., Grafeeva, N. G. (2020), *Database Technology Basics*, Moscow, DMK Press, 582].

THE BIBLIOGRAPHY IN THE DIGITAL ERA. “ART OF TRANSLATION” DATABASE

MERY MANUKYAN
Fundamental Scientific Library of NAS RA

Keywords: Digital repositories, Databases, Bibliography, Open Access, Wikipedia.

We can prove that today repositories act as unique bibliographic catalogs, with a wider coverage of content and with unlimited search possibilities. They do not reject traditional bibliography, but act as a new format for presenting information. The "Art of Translation" database created by the Fundamental Scientific Library of the NAN RA is the electronic catalogue, which is already serving the purpose for which it was created, to become a large electronic platform for Armenian translators and their translations.

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ*

ՀՏԴ: 681.3:316+02

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-39

ԱՍՊՐԱՍ ԱՇՈՒԴՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ORCID: [0009-0005-4891-0999](https://orcid.org/0009-0005-4891-0999)

Թվային դարաշրջանում գրադարանները պետք է յուրացնեն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և գործունեություն ծավալեն այդ համատեքստում: Քայլերով ժամանակին համընթաց՝ գրադարաններն իրենց աշխատանքային զինանոցում պարտավոր են ունենալ տվյալ ժամանակաշրջանի հասարակության պահանջները բավարարող գործիքակազմ՝ տեղեկատվության առավել արագ մատուցման համար: Սույն ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք գրադարանների ներկայացման և զարգացման գործում սոցիալական մեդիայի դերին՝ ցույց տալ գրադարան-սոցիալական մեդիա համագործակցության առավելությունները և ընդգծել, թե հայաստանյան գրադարաններում որքանով է այն իրականություն դարձել: Կարծում ենք՝ առաջադրված նպատակն ունի արդիական հնչեղություն:

In the digital age, libraries must appropriate the possibilities of using information technologies and carry out activities in that context. Keeping up with the times, libraries must have tools in their working arsenal that meet the demands of the society of the given period for the fastest delivery of information. Within the framework of this research, we referred to the role of social media in the presentation and development of libraries, to show the advantages of library-

* Հոդվածը ներկայացվել է 08.08.2023, գրախոսվել է 07.12.2023, ընդունվել է տպագրության 11.12.2023:

The article was submitted on 08.08.2023, reviewed on 07.12.2023, accepted for publication on 11.12.2023.

social media cooperation and to emphasize how much it has become a reality in Armenian libraries. We think the proposed goal has a modern resonance.

Քանալի բառեր¹ տեղեկատվական տեխնոլոգիաներ, սոցիալական մեդիա, սոցիալական ցանցեր, գրադարաններ, հանրայնացում, կայքէջ, միջոցառումներ:

Ինչպես հղել¹ Աշուղյան Ա. (2023), Սոցիալական մեդիան և գրադարանները. *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 39–48. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-39](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-39)

How to cite (APA style): Ashughyan A. (2023), Social Media and Libraries, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 39-48. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-39](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-39)

Ներածություն

Համացանցի տարածվածությունն ամենուր ստիպում է գրադարաններին համաշխարհային տեղեկատվական ցանցում ունենալ ուրույն ներկայություն՝ բլոգերի, կայքէջի, սոցիալական ցանցի ձևաչափով, քանի որ ժամանակակից գրադարանի ընթերցողները ոչ միայն նրանք են, ովքեր գտնվում են ընթերցասրահներում, այլ նաև նրանք, ովքեր օգտվում են համացանցից:

Ավանդական գրադարանը տեղափոխելով վիրտուալ տիրույթ՝ առաջանում են բազմաթիվ հարցեր՝ արդյո՞ք սոցցանցերն օգնում են լուծել գրադարանների խնդիրները, ո՞րն է համացանցում գրադարանի ներկայանալու հիմնական պատճառը, որքանո՞վ է արդյունավետ գրադարանի առցանց գործունեությունը և այլն: Յուրաքանչյուր հարց ենթադրում է պատասխանների շարք, որոնք հանգեցնում են հետևյալ դրույթի առաջադրմանը. եթե գրադարանը ցանկանում է լինել ժամանակակից և ընթերցողակենտրոն, ապա պետք է ուշադրության կենտրոնում պահի սոցիալական մեդիայի ընձեռած հնարավորությունները: Նոր ընթերցողներ ներգրավելու և հին ընթերցողներին չկորցելու համար գրադարանի համար առաջնահերթ

պետք է լինի ընթերցողների ներգրավվումը, նրանց հետ համագործակցությունը և նրանց մասնակցությունը գրադարանային կյանքին:

Սոցիալական մեդիան՝ գրադարանի ներկայացման միջոց

Սոցիալական մեդիան համակարգչային տեխնոլոգիաների ամբողջությունն է, որը հեշտացնում է տեղեկատվության, գաղափարների և մի շարք այլ առաջնահերթությունների ստեղծումն ու փոխանակումը վիրտուալ համայնքների և ցանցերի միջոցով (ՕԴՄԵԲԱ 2011, 63-69): Ներկայում սոցիալական մեդիայի ծառայությունները բազմազան են, բայց ունեն որոշ ընդհանուր առանձնահատկություններ: Նախ՝ սոցիալական մեդիան ինտերակտիվ Web 2.0 համացանցային ծրագիր է: Երկրորդ՝ օգտագործողի կողմից ստեղծված բովանդակությունը, ինչպիսիք են տեքստային հաղորդագրությունները (գրառումները) կամ մեկնաբանությունները, թվային լուսանկարները կամ տեսանյութերը և բոլոր առցանց փոխազդեցությունների արդյունքում ստացված տվյալները սոցիալական ցանցերի բաղկացուցիչ մասն են: Երրորդ՝ սոցիալական ցանցերը օգտատիրոջ պրոֆիլը միացնում են այլ անձանց կամ խմբերի պրոֆիլին՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ առցանց համակարգի զարգացմանը:

Որպես շփման տեխնոլոգիա՝ այն փոքրացնում է աշխարհագրական հեռավորությունը, նպաստում է հաղորդակցման հնարավորությունների լիովին օգտագործմանը, թույլ է տալիս ակտիվացնել հաղորդակցությունը (ՄԵԼՔՈՆՅԱՆ 2015, 14-20):

Սոցիալական մեդիայի մեջ մտնում են սոցիալական ցանցերը, բլոգները, կայքէջերը, ֆորումները, Վիքիպեդիան և այլն, որոնք բոլորն էլ այսօր կիրառվում են գրադարաններում:

Ինչպե՞ս է արտահայտվում սոցիալական մեդիա-գրադարան փոխադարձ կապը:

Տեղեկատվական հասարակության ձևավորման և ամրապնդման համատեքստում տեղեկատվության դերը, որպես ռազմավարական նշանակություն ունեցող ռեսուրս, զգալիորեն մեծացնում է

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գրադարանների գործունեության կարևորությունը ինչպես անհատ քաղաքացիների, այնպես էլ ողջ հասարակության տեղեկատվական կարիքների բավարարման գործում: Սա մեծացնում է գրադարանային-տեղեկատվական ոլորտի և դրա մասնագետների առջև դրված պահանջները: Եթե գրադարանը ցանկանում է լինել ժամանակակից, ընթերցողակենտրոն, ապա պետք է ուշադրությունը սևեռել սոցիալական մեդիայի վրա՝ որպես գործունեության առանձին հարթակ:

Տեղեկատվական դաշտում ներկայանալուց առաջ յուրաքանչյուր գրադարան պետք է ինքն իրեն առաջադրի հետևյալ հարցերը.

ա. Ինչո՞ւ է գրադարանի համար կարևոր աշխատանքը սոցիալական մեդիայում:

բ. Ի՞նչ ձևաչափով է պատրաստ ներկայանալ գրադարանը սոցիալական մեդիայում:

գ. Ո՞րն է սոցիալական մեդիայում գործունեություն ծավալելու նպատակը:

Պատճառահետևանքային կապով փոխկապակցված այս երեք հարցերի պատասխանները վճռորոշ են յուրաքանչյուր գրադարանի զարգացման համար:

Այսօր համացանցից օգտվում է բնակչության մեծ մասը: Քանի որ կամաց-կամաց ընթերցողները դառնում են հեռավար օգտվողներ, հեռանում են տպագիր նյութից և նախապատվությունը տալիս են առցանց ընթերցանությանը, գրադարանավարը պետք ընթերցողի նկատմամբ ցուցաբերի նոր մոտեցում: Հենց այստեղ է օգնության գալիս սոցիալական մեդիան իր տեսակներով՝ հնարավորություն տալով գրադարանին ինքնադրսևորվել իր բոլոր ծառայություններով:

Սոցիալական մեդիան համագործակցության և երկխոսության միջավայր է: Այն տնտեսող և միևնույն ժամանակ արդյունավետ միջոց է գրադարանային ծառայությունների վերաբերյալ կարծիքների ուսումնասիրման և ընթերցողների հետ լավ փոխհարաբերություններ

րի հաստատման համար: Սոցիալական մեդիան հասանելի է 24 ժամ, աշխարհի բոլոր անկյուններից:

Ի՞նչ է այն իր մեջ ներառում.

ա. Սոցիալական մեդիան օգնում է գրադարանին պատմելու գրադարանային իրադարձությունների, գրքերի, գրողների, հորեյանական տարելիցների, հորեյարների և այլ հետաքրքիր իրադարձությունների մասին:

բ. Սոցիալական մեդիան օգնում է մոտիվացնել ընթերցողներին գրադարան այցելելու, հրապարակումներին հետևելու, ընթերցանության խթանման, գրադարանի կայք այցելելու համար:

գ. Սոցիալական մեդիան օգնում է ուշադրություն սևեռելու դեպի տվյալ գրադարանը, գրադարանային հրապարակումները, ստեղծագործողները և այլն (ՈՍԿԱՆՅԱՆ 2020):

Սոցիալական մեդիա-գրադարան փոխհամագործակցության մեջ կարևորում են հանրային կապերը, որոնք դառնում են յուրօրինակ միջնորդ օղակ գրադարանի և սոցիալական մեդիայի միջև: Չկա որևէ կազմակերպություն, որն իր գործունեության ընթացքում չառնչվի հանրության հետ: Յուրաքանչյուր կազմակերպություն՝ լինի պետական, մասնավոր թե հասարակական, ձգտում է ձևավորել և ամրապնդել կապը հանրության հետ (ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԹԱՌՓՈՇՅԱՆ 2020, 99-109): Հանրային կապերը գործողությունների համակարգ է, որի շնորհիվ հնարավոր է դառնում հանրային կարծիքի վրա ազդել, այսինքն՝ մթնոլորտ ստեղծել, մարդկանց ուշադրությունը գրավել (ԱՎԵՏԻՍՅԱՆ 2014, 16): Գրադարանային ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի իր մեջ ներառում է հանրային կապերի տարրեր: Յուրաքանչյուր գրադարանի նպատակը ընթերցողների ներգրավումն է, նրանց պահանջների բավարարումն ու անհրաժեշտ նյութերով ապահովումը: Այդ պատճառով գրադարանը պետք է տեղյակ պահի հանրությանը իր գործունեության մասին: Դրա համար

գրադարանը կարող է օգտվել զանազան միջոցներից՝ ՁԼՄ, հայտարարություններ կամ պաստառներ, համացանց և այլն:

Սոցիալական մեդիան աներևակայելի հնարավորություններ է ստեղծում գրադարանների համար: Ոչ միան սեփական կայքերի, այլև սոցիալական հարթակներում գրադարանների էջերի ստեղծումը, այդ էջերի ամենօրյա թարմացումները և նամակներին արագ արձագանքելու քաղաքականության որդեգրումը գրադարանի գործելաճը պետք է լինի: Սոցիալական հարթակները (Facebook, Twitter, YouTube, Instagram, Pinterest, VK և այլն) այսօր հաշվված վայրկյանների ընթացքում կապ են հաստատում գրադարանների այցելուների հետ և ներգրավում նորերին: Դրանք ոչ միայն այցելուների, այլև հենց իրենց՝ գրադարարավարների միջև կապ հաստատելու լավագույն միջոցներ են: Facebook, Twitter, Instagram և Telegram միայն թրենդեր չեն, դրանք մարքեթինգային գործիքներ են գրադարանների համար:

Սոցիալական մեդիան գրադարաններում պետք է դիտարկվի որպես գովազդի միջոց: Նորագույն գործիքների հիմնավոր ներդրման և կիրառման շնորհիվ աշխարհում գրադարանները և մշակութային, կրթական այլ կառույցներ վաղուց իրենց վերածնունդն են ապրում: Այսօր Հայաստանի գրադարանային հանրությունը նույնպես դուրս է գալիս ավանդական պատկերացումներից, հատկապես հայտնի ու մեծ գրադարանները փորձում են քայլ մեկնել զարգացած երկրների գրադարանների հետ՝ այս առաջընթացի մեջ ներքաշելով նաև փոքր ու հեռավոր գրադարաններին: Այս հարցում գրադարաններին օգնության են հասնում սոցիալական մեդիա հարթակները:

Գովազդն ամբողջությամբ մտել է գրադարանի և ընթերցողների կյանք: Այսօր այն հանդիսանում է մի գործիք, որի միջոցով ընթերցողը գիտի ամեն ինչ կամ համարյա ամեն ինչ տվյալ հաստատության վերաբերյալ: Գովազդն արտացոլում է ոչ միայն գրադարանի տեղեկատվական պաշարները, այլև հնարավորությունները,

տեխնոլոգիաները, ստեղծում է գրադարանի և նրա աշխատակիցների ավելի գրավիչ պատկերը:

Գրադարանային գովազդի ֆենոմենը բավականաչափ ուսումնասիրված չէ ոլորտի մասնագետների կողմից, սակայն կարելի է ասել, որ ունի մեծ ազդեցություն ընթերցողների վրա, զբաղեցնում է իր ուրույն տեղը գրադարանային-տեղեկատվական միջավայրում: Գովազդի շնորհիվ գրադարանը բացահայտում է իր հնարավորությունները մեծ լսարանի առջև իր երկրի տարածքում և նրա սահմաններից դուրս սոցիալական մեդիայի միջոցով (БОРИСОВА 2002):

Ցավոք, սոցիալական մեդիան շատ օգտվողներ նույնականացնում են միայն կայքէջի հետ՝ օգտագործելով այն ոչ միայն հաղորդակցման, այլ նաև տարատեսակ տեղեկատվության ստացման համար: Սոցիալական մեդիայի օգտատերերի թիվը կազմում է ամբողջ համացանցի գրեթե 90%-ը: Նման պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության խնդիրն է դառնում օգտագործել սոցիալական մեդիայի ընձեռած հնարավորությունները:

Գրադարանների համար սոցիալական մեդիան հատկապես կարևոր է, քանի որ ընթերցողների մեծ մասը ցանկանում է առցանց օգտվել գրադարանի ռեսուրսներից և այցելել գրադարան միայն վիրտուալ միջավայրում: Այս դեպքում գրադարանը չպետք է հետմնա ժամանակակից միտումներից: Նրա գերխնդիրն է ընթանալ ժամանակին համաքայլ և ներկայացնել իր ծառայությունները և դրանց մասին տեղեկատվությունը ընթերցողին ավելի հարմար ձևով:

Գրադարանի աշխատանքի կազմակերպումը համացանցում և սոցիալական մեդիայի այլ հարթակներում ունի հետևյալ առավելությունները.

- ✓ Օգտատերերն իրենց միջավայրում կիսվում են տեղեկատվությամբ, ինչը հնարավորություն է տալիս գրավելու մեծ լսարան,
- ✓ Տեղի է ունենում հաղորդակցական փոխազդեցություն օգտատիրոջ և գրադարանի միջև՝ հետադարձ կապի առկայությամբ:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

✓ Տարբեր աշխարհայացքով և նախասիրություններով լսարանը գրադարանին հնարավորություն է տալիս գտնել հենց իրենը,

✓ Հնարավորություն է տալիս վերլուծելու օգտատերերին՝ ըստ տարիքի, մասնագիտության, կրթության և այլն,

✓ Սոցիալական կայքերն ինդեքսավորվում են փնտրման համակարգերի կողմից,

✓ Հնարավորություն է տալիս անցկացնել հարցումներ և ուսումնասիրություններ բոլոր ուղղություններով,

✓ Կարելի է փոխանակվել հղումներով, համագործակցել սոցիալական կայքերի միջոցով:

✓ Համագործակցել օգտատերերի հետ,

✓ Տեղի է ունենում օգտատերերի լսարանի ընդլայնում:

Իսկ ինչպիսի՞ն է պատկերը հայաստանյան գրադարանային համակարգում:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում գրադարանների գործունեությունն այսօր դժվար է պատկերացնել առանց սոցիալական ցանցերի ներգրավվածության, ինչը գրադարանավարի մասնագիտական գիտելիքներից զատ պահանջում է ունենալ նաև համակարգչային գիտելիքներ:

Արտասահմանյան շատ գրադարաններ օգտագործում են սոցիալական մեդիա հարթակները՝ գրադարանը ներկայացնելու և ընթերցողներին ավելի մոտ լինելու նպատակով: Հայաստանում վիճակագրությունը մի փոքր այլ է: Քաղաքային խոշոր գրադարաններն արդեն ունենց իրենց կայքերը սոցիալական մեդիա հարթակներում: Սակայն համայնքային գրադարաններում պատկերն այլ է: Հայաստանում համայնքային գրադարանները բավականին անտեսված են և չունեն զարգացման այն մակարդակը, ինչն առկա է քաղաքային գրադարաններում: Չնայած մի շարք համայնքային գրադարաններ փորձում են քայլել ժամանակին համընթաց՝ լուսաբանում են իրենց գործունեությունը, ակտիվ միջոցառումները, շնորհանդեսները, ցու-

ցահանդեսները (անգամ սակավաթիվ և հնամաշ ֆոնդի պայմաններում), անդրադարձը հոբեյարներին, որն էլ հուշում է, որ գրադարանավարը տեղեկատվության լուսաբանման ճիշտ ուղի է ընտրել: Սրանով հանդերձ, հայաստանյան գրադարաններում առավել գործածական են կայէջերը և սոցիալական որոշ ցանցեր, հատկապես՝ Դիմագիրքը (Facebook):

Ամփոփում

21-րդ դարի մարտահրավերները գրադարաններին թելադրում են քայլել ժամանակին համընթաց: Ժամանակից գրադարանն անհնար է պատկերացնել առանց սոցիալական մեդիա հարթակների պրոֆեսիոնալ և ակտիվ աշխատանքի: Հենց այդ աշխատանքի և գրադարանային մաքթինգի միջոցով էլ հնարավոր է դառնում հանրայնացնել գրադարանը, գրավել նոր ընթերցողների, կապ հաստատել աշխարհի յուրաքանչյուր անկյունում գտնվող օգտատիրոջ հետ:

Շարունակելի

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2014 – Ավետիսյան, Ա. (2014), *Հանրային կապերը զանգվածային հաղորդակցության համակարգում*, Երևան, ԵՊՀ, 76 [Avetisyan, A. (2014), *Hanrayin kapery zangvatcayin haghordaktsutyam hamakargum*, Yerevan, YSU, 76];

ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԹԱՌՓՈՇՅԱՆ 2020 – Ավետիսյան, Ա., Թառփոշյան, Ն. (2020), Սոցիալական մեդիան փոխել է հանրային կապերի (PR) բովանդակությունը, *Ժողովուրդային և հաղորդակցություն. Տեսության և պատմության հարցեր* (Երևան) 3(15), 99-109 [Avetisyan, A., Tarposhyan, N. (2020), Social Media has changed Public Relations Content, *Journalism and Communication: Issues of Theory and History* (Yerevan) 3(15), 99-109];

ՄԵԼԲՈՆՅԱՆ 2015 – Մելքոնյան, Ն. (2015), Հասարակայնության հետ կապերի առանձնահատկությունները համացանցում կամ PR 2.0, *Քանոններ Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն* (Երևան) 3(18), 14–20 [Melkonyan, N. (2015), The Features of Public Relations on the Internet or PR 2.0. *Journal of Sociology, Bulletin of Yerevan University*, 3(18), 14–20];

ՈՍԿԱՆՅԱՆ 2020 – Ոսկանյան, Շ. (2020, 26 նոյեմբեր), *Սոցիալական մեդիան՝ գրադարանի գործընկեր, Հայաստանի գրադարաններ. նորարար գրադարանների հարթակ* [Voskanyan, Sh. (2020, November 26), *Sots'ialakan median gradarani gortsynker. Libraries of Armenia: A Platform for Innovative Libraries*] <https://shorturl.at/gBENO> (02.08.2023);

БОРИСОВА 2002 – Борисова, О. (2002), *Библиотечно-библиографическая реклама*, Москва, МГУК, 224 [Borisova, O. (2002), *Bibliotechno-bibliograficheskaya r'eklama*, Moscow, MGUK, 224];

ОГНЕВА 2011 – Огнева, И. (2011), *Библиотека и социальные медиа, библиотечное пространство: медиа – информация – культура*, Сборник материалов межрегиональной научно-практической конференции, Архангельск [Ogneva, I. (2011), *Library and social media, library space: media – information – culture*, Collection of Materials of the Interregional Scientific and Practical Conference, Arkhangelsk] <https://shorturl.at/euU58> (02.08.2023):

SOCIAL MEDIA AND LIBRARIES

ASPRAM ASHUGHYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Keywords: Information Technology, Social media, Libraries, Publicity, Website, Social Networks, Events.

The challenges of the 21st century dictate that libraries keep up with the times. It is impossible to imagine a modern library without the professional and active work in social media platforms. It is through this work and using library marketing tools that it becomes possible to publicize the library, attract new patrons, and establish contacts with the users all over the world.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՇՈՒՇԻՈՒՄ 1832-1833 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ԵՐԿՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

ՀՏԴ: 070(479.25)+655.4

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-49

ՄՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Պատմական գիտությունների թեկնածու

ORCID: [0009-0004-7040-688X](https://orcid.org/0009-0004-7040-688X)

Շուշիի հայկական տպագրության վերաբերյալ ուսումնասիրությունները կրում են շարունակական բնույթ, քանի որ պարբերաբար ի հայտ են գալիս նոր արխիվային փաստեր և մատենագիտական տվյալներ: Սույն հետազոտության շրջանակում ներկայացրել ենք Շուշիի հայ տպագրության պատմության որոշ դրվագներ՝ գիտական շրջանառության մեջ դնելով 1832-1833 թթ. տպագրված երկու հրատարակությունների վերաբերյալ նոր փաստերը:

Armenian printing history of Shushi is in the center of researcher's attention, as new archival facts and bibliographical data emerge regularly. Within the framework of this research, we have presented some episodes of the history of Shushi's Armenian printing, putting into scientific circulation 1832-1833. new facts on both printed editions.

Բանալի բաներ՝ Շուշի, հայ տպագրության պատմություն, տպարան, գրքույկ, մատենագիտություն, բողոքական քարոզիչներ, հրատարակություն:

Ինչպես հղել՝ Պետոյան, Ս. (2023), Մատենագիտական ճշգրտումներ Շուշիում 1832-1833 թվականներին տպագրված երկու հրատարակությունների վերաբերյալ, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 49-56. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-49](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-49)

How to cite (APA style): Petoyan, S. (2023), Bibliographical Corrections on Two Publications Printed in Shushi in 1832-1833, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 49-56. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-49](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-49)

* Հոդվածը ներկայացվել է 21.08.2023, գրախոսվել է 12.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:

The article was submitted on 21.08.2023, reviewed on 12.12.2023, accepted for publication on 20.12.2023.

Ներածություն

Շուշի քաղաքը հայ գրատպության խոշոր կենտրոններից էր, ուր տպագրությունն սկիզբ է առել 1828 թ., որի նախադրյալը եղել է Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունը տարածաշրջանում: Շուշիում բողոքական քարոզիչները 1828–1835 թթ. տպագրել են 31 անուն գիրք և գրքույկ, որոնցից 29-ը հայերեն են, մեկը՝ թաթար-թուրքերեն և պարսկերեն, ևս մեկ գիրք՝ պարսկերեն (ՊԵՏՏՈՅԱՆ 2020ա, 69–87): Պետք է նշել, որ Շուշիում տպագրված առաջին հրատարակությունն աշխարհաբարով 1828 թ. լույս տեսած «Լերան քարոզը» գրքույկն է (ՊԵՏՏՈՅԱՆ 2020բ, 302–317):

Մատենագիտական ցանկերն առաջնային կարևորություն ունեն հայ տպագրության պատմության հետազոտողների համար: Դրանք ամբողջական չեն կարող լինել, քանի որ ժամանակի ընթացքում մատենագիտական ցանկերը լրամշակվում են նորանուն գրքերի ի հայտ գալով: Չմոռանանք նաև, որ նախկինում կատարված մասնագիտական ուսումնասիրությունները չեն ունեցել այն մեծ առավելությունը, ինչը կա այսօր՝ պայմանավորված թվայնացման լայնածավալ աշխատանքներով: Որպես օրինակ՝ նշենք «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» մատենագիտությունը, ուր առկա են բողոքական քարոզիչների՝ Շուշիում հրատարակած 23 անուն գրքերի մատենագիտական նկարագրությունները: Սակայն սույն մատենագիտությունը կազմող Հայկ Դավթյանը մի դեպքում նույն գիրքը նկարագրել է երկու անգամ՝ տարբեր թվականներով, մյուս դեպքում՝ երկու գրքերի նկարագրությունը կատարելիս հղում է կատարել Արսեն Ղազիկյանի հաղորդած տեղեկություններին, որոնց նկատմամբ նա ունեցել է արդարացի կասկածներ (ԴԱՎԹՅԱՆ 1967, 191, նկարագրության Հ^մր 757 և 758): Ստացվում է, որ իր մատենագիտության մեջ Հայկ Դավթյանը, ըստ էության, ներկայացնում է բողոքական քարոզիչների՝ Շուշիում տպագրած 29 անուն հայերեն հրատարակություններից 20-ի մատենագիտական նկարագրությունը:

Երկու հրատարակության տարեթվի ճշգրտում

Բողոքական քարոզիչների կողմից Շուշիում հրատարակված «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» և «Կարճառօտ աղօթքներ շա-

բաթի ամեն մեկ օրին համար» գրքույկների տպագրության թվականները ճշգրտման կարիք ունեն: Այսպես, «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» մատենագիտության մեջ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկն ունի երկու նկարագրություն. մի դեպքում Հ^մ 417 նկարագրության մեջ՝ 1822 թ. հրատարակված գրքերի շարքում, մեկ այլ դեպքում՝ Հ^մ 761 նկարագրության մեջ՝ 1832 թ. հրատարակված գրքերի շարքում: Իսկ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամեն մեկ օրին համար» գրքույկն ունի մեկ նկարագրություն (Հ^մ 416), որը ևս հայտնվել է 1822 թ. հրատարակված գրքերի շարքում: Սակայն այս գրքույկների տպագրության թվականի մասին Հ. Դավթյանն անվանաթերթերի վրա նշված թվականները ստույգ չի համարել՝ բերելով մի քանի հիմնավորումներ: Համադրելով փաստերը՝ նա եզրակացրել է, որ հիշյալ գրքույկներն ամենայն հավանականությամբ տպագրվել են 1832 թ., իսկ անվանաթերթի վրա նշված 1822-ը պարզապես վրիպակ է կամ էլ հրատարակիչները միտումնավոր են այդ թվականը դրել (ԴԱՎԹՅԱՆ 1967, 106-107, նկարագրության Հ^մ 416 և 417):

Հ. Դավթյանի կատարած հետազոտությունից ավելի քան կես դար անց մեզ հաջողվեց պարզել հետևյալը: Նախ, այսօր Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետ՝ ՄՄ) պահվում է «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի երեք օրինակ, որոնցից մեկի (ԴԱՎԹՅԱՆ 1967, 107, նկարագրությունն Հ^մ 417 [դասիչը՝ 9352]) անվանաթերթի վրա տպագրության թվական է հիշատակված՝ 1822-ը, երկրորդի (ԴԱՎԹՅԱՆ 1967, 191, նկարագրություն Հ^մ 761 [իին դասիչը՝ 36437, նոր դասիչը՝ 16258]) անվանաթերթի վրա՝ 1832-ը, իսկ երրորդ օրինակի անվանաթերթի վրա ([դասիչը՝ 9353], հիշատակված չէ Հ. Դավթյանի կազմած մատենագիտության մեջ) տպագրության թվական է նշված կրկին 1832-ը: ՄՄ-ի երեք օրինակները համեմատելիս տեսնում ենք, որ դրանք չունեն բնագրային և տպագրական տարբերություններ՝ բացառությամբ կազմերի գույնի և վերջերեսի պատկերների: Ամենայն հավանականությամբ, այս տարբերությունից էլ ելնելով՝ Հ. Դավթյանը կարծել է, որ ՄՄ-ում պահվող սույն գրքույկի երեք օրինակներից առաջին երկուսն առանձին հրատարակություններ են: Նկատենք, որ «Տասն եւ վեց կարճառօտ քա-

րոզներ» գրքույկի մի օրինակ էլ (անվանաթերթի վրա՝ 1822) պահվում է Վրաստանի պատմության պետական թանգարանում (այսուհետ՝ ՎՊՊԹ): Ավելին, այս գրքույկի մեկ այլ օրինակ (անվանաթերթի վրա՝ 1832) մեզ հաջողվեց գտնել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում (այսուհետ՝ ՆՋԱՎ): Հետաքրքրական է, որ վերջերս ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուում հայտնաբերվեց այս գրքույկի ևս մեկ օրինակ (անվանաթերթի վրա՝ 1832): Ստացվում է, որ սույն գրքույկի՝ մեզ հասու երկու օրինակի անվանաթերթի վրա առկա է 1822 թ., իսկ մյուս չորսի անվանաթերթերի վրա՝ 1832 թ.: Վերոհիշյալ գրքույկի վեց օրինակները համեմատելիս որևէ բնագրային և տպագրական տարբերություններ չեն նկատվում: «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի՝ 1832 թվականով հանդիպող չորս օրինակներից կարելի է սխալմամբ ենթադրել, որ գրքույկը տպագրվել է հենց 1832 թ.:

Նշենք, որ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկի՝ մեզ հայտնի միակ օրինակը, որը և նկարագրել է Հ. Դավթյանը, պահվում է ՎՊՊԹ-ում (ԴԱՎԹՅԱՆ 1967, 106, նկարագրության Հ^մ 416):

Շուշիի բողոքական քարոզիչները 1830–1840 թթ. գրքեր են հրատարակել նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում՝ որոշ դեպքերում վերահրատարակելով Շուշիի իրենց տպագրություններից մի քանիսը: Շուշիում բողոքական քարոզիչների գործունեությունը կասեցնելուց հետո՝ 1837 թ., նրանցից ոմանք տեղափոխվել են Հնդկաստան, և Շուշիի որոշ հրատարակություններ վերատպել բողոքական քարոզիչների «Մկրտիչ Միսիոնարաց» տպարանում, որը գործել է Կալկաթայում 1830-ական թվականների սկզբից մինչև 1865 թ.: Այդ ընթացքում այստեղ տպագրվել են բազմաթիվ փոքրածավալ հրատարակություններ¹, որոնք առավելապես ունեն կրոնաբարոյական ուղղվածություն (ԻՐԱԶԵԿ 1986, 432): Նկատենք, որ Շուշիում

¹ Այս գրքերից որոշները ներառված չեն «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» մատենագիտության մեջ, իսկ դրանց մասին առաջին անգամ հանգամանորեն ներկայացրել է Լ. Մինասյանը (տե՛ս ՄԻՆԱՍԵԱՆ 1970, 78–79):

բողոքականների հրատարակած գրքերն ազդեցություն են ունեցել Շուշիից դուրս գործող հայկական և օտար² տպարանների վրա:

Այս տպարանում հրատարակված գրքերի օրինակներն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկը այստեղ վերատպվել է 1839 թ., որի անվանաթերթի վրա կարդում ենք. «Ի Շուշի յամի Տեառն 1833»: Այսինքն՝ այդ գրքույկի մեկ այլ վերահրատարակության մեջ շատ հստակ նշվում է նախորդ հրատարակության տպագրության վայրը և թվականը: Որպես հավելում՝ բերենք ևս մեկ փաստ, որը հաստատում է սույն գրքույկի՝ 1833 թ. տպագրված լինելու հանգամանքը: Այսպես, «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի օրինակների վերջում առկա վաճառվող գրքերի ցանկում³ բերված են 1833 թ. Շուշիում տպագրված գրքերի վերնագրերը ևս: Սա ինքնին խոսում է այն մասին, որ այն չէր կարող տպված լինել 1832 թ.: Ավելին, ուսումնասիրելով 1833 թ. Շուշիում տպագրված այլ հրատարակություններում առկա ցանկերը՝ կարող ենք հաստատել, որ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ»

² Մոսկվայից և Կալկաթայից բացի, Շուշիի բողոքականները գրքեր են հրատարակել Ջմյունիայի ամերիկյան բողոքական քարոզիչների տպարանում: Դրանցից մեզ հետաքրքրում է հատկապես 1843 թ. աշխարհաբար արևելահայերենով տպագրված Սաղմոսարանը՝ «Գիրք սաղմոսաց յեբրայական բնագրէ ի հասարակ լեզու հայոց թարգմանեալ» (Ջմյունիա, տպ. Կուլիէլմոս Կրիֆիթի, 1843), որը չի տարբերվում Շուշիում բողոքական քարոզիչների տպագրած գրքերի լեզվից: Երբ Շուշիում դադարեցված էր բողոքական քարոզիչների գործունեությունը, այս Սաղմոսարանը քարոզիչները փորձել են հրատարակել 1841 թ. Մոսկվայում, բայց քանի որ դա չի իրագործվել, այն տպագրել են 1843 թ. Ջմյունիայում:

³ 1832–1833 թթ. Շուշիում բողոքական քարոզիչների տպագրած որոշ գրքերի վերջում հանդիպում ենք վաճառվող գրքերի՝ համառոտ վերնագրերով ցանկերի, որոնց նախորդում է «Շուշի բերդումն աստարանական ժողովքի տան մէջն էս հետևօղ գրեանքս էլ ծախվում են» սկսվածքը: Ցանկերում հիշատակված գրքերը, բացառությամբ առաջինի («Նոր Կտակարան տպեալ ի Վենետիկ»), բողոքական քարոզիչները հիմնականում տպագրել են Շուշիում, իսկ մնացածը՝ Մոսկվայում: Ցանկերում տեղ գտած գրքերի գները, տպագրության տարեթիվը, վայրը, տպարանը բացակայում են, յուրաքանչյուր գրքի մասին տեղեկությունն էլ հակիրճ է (վերնագիր, լեզվական բնորոշում՝ «գրաբառ», «աշխարհաբառ», «ի գրաբառէ յաշխարհաբառ»):

գրքույկը տպագրվել է «Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար» (1833) գրքույկից հետո և «Քարոզ Աագ Ուրբաթ օրին համար...» (1833) գրքույկից առաջ:

«Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկը վերատպվել է Կալկաթայի նույն տպարանում 1841 թ., որի անվանաթերթի վրա գրված է. «Առաջին անգամ տպեալ յամի Տեառն 1832 ի Շուշի»: Համեմատելով 1832–1833 թթ. Շուշիում տպագրված այլ հրատարակություններում առկա ցանկերը՝ կարող ենք արձանագրել, որ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկը տպագրվել է «Ժամանակի վերջն» (1832) գրքույկից հետո և «Մեղքի մեծանալոյն և զօրանալոյն համար» (1833) գրքույկից առաջ:

Հետաքրքրական է, որ «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» և «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկները 1840 թ. վերահրատարակվել են նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում, որոնց անվանաթերթերի վրա առկա է «երկրորդ տպագրութիւն» հիշատակությունը: Այս հանգամանքը փաստում է, որ թե՛ Մոսկվայում, թե՛ Կալկաթայում սույն գրքույկների վերատպություններն անհայտ էին տեղի բողոքական քարոզիչներին: Հակառակ դեպքում, դրանց անվանաթերթերի վրա արտացոլված կլինէր այս իրողությունը:

Ինչևէ, փաստացի այս գրքույկները Շուշիում չէին կարող ունենալ տարբեր տպագրություններ, քանի որ երկու դեպքում էլ, որպես երկրորդ հրատարակություն, մի դեպքում հիշատակված է Կալկաթայի տպագրությունը, իսկ մյուս դեպքում՝ Մոսկվայինը: Անհասկանալի է մնում, թե, օրինակ, «Տասն եւ վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի՝ մեզ հասու վեց օրինակների վրա ինչպե՛ս են տեղ գտել տպագրության տարեթվի ոչ ստույգ տվյալներ, ինչն արդեն իսկ մտորելու տեղիք է տալիս, թե բողոքական քարոզիչները, տվյալ դեպքում՝ Շուշիի տպարանի երկրորդ տպագրիչ Յոհան Քրիստիան Ֆրիդրիխ Յուդթը (ՊԵՏՈՅԱՆ 2021, 51), ի՞նչ նկատառումներով է գնացել նման քայլի: Դժվարանում ենք ասել՝ տպագրության թվականների այս անհամապատասխանությունը զուտ վրիպակի՞ արդյունք էր, թե՛ կանխամտածված քայլ:

Ամփոփում

Այսպիսով՝ կարող ենք պնդել, որ Շուշիում հրատարակված «Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար» գրքույկի տպագրության թվականը պետք է ընդունել 1832 թ., իսկ «Տասն եւ վեց կարճառոտ քարոզներ» գրքույկինը՝ 1833 թ.: Ըստ այդմ՝ դրանց համար պետք է կատարվեն մատենագիտական նոր նկարագրություններ:

Օգրագործված գրականության ցանկ (References)

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (կազմ.) (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին. մատենագիտություն*, Երևան, Երևան, ՀՍՍՀ Ա. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 536, 3 [Davtyan, H. (comp.) (1967), *Hay Girky 1801-1850: Matenagitutyun*, Yerevan, Public Library of Armenian SSR after A. Myasnikyan, 536, 3];

Ժամանակի վերջն (1832), Շուշի, 45,1 [Zhamanaki Verjn (1832), Shushi, 45,1];

ԻՐԱԶԵԿ 1986 – Իրազեկ, Յ. (1986), *Պատմություն հնդկահայ տպագրութեան*, Անթիլիաս, Հրատարակչություն Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 560 [Irazek, H. (1986), *Patmutyun Hndkahay Tragrutyun*, Antelias, Publication of Catholicosate of Cilicia, 560];

Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար (1832), Շուշի, Ի տպարանի Մկրտող Միսոնարաց, 74 [*Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar* (1832), Shushi, Printing House of Mkrtogh Misonarats, 74];

Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար (1840), Մոսկվա, Ի տպագրատան Ճեմարանի Տեանն Լազարեանց, 58 [*Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar* (1832), Moscow, Printing House of Lazarian Seminary, 58];

Կարճառոտ աղօթքներ շաբաթի ամեն մէկ օրին համար (1841), Կալկաթա, Ի տպարանի Մկրտող Միսոնարաց, 36 [*Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar* (1832), Calcutta, Printing House of Mkrtogh Misonarats, 36];

Մեղքի մեծանալոյն և զօրանալոյն համար (1833), Շուշի, 26 [*The Progress of Sin* (1832), Shushi, 26];

ՄԻՆԱՍԵԱՆ 1970 – Մինասեան, Լ. (1970), «Հայ տպագիր գիրքը 1801–1850 թուականներին» եւ մի քանի նորահայտ գրքեր, *Սիոն* (Երուսաղէմ), 1–2(ԽԴ.), 78–79 [Minasyan, L. (1970), "Hay Tpagir Girky 1801-1850 Tvakannerin" ev Mi Qani Norahayt Grqer, *Sion* (Jerusalem), 1–2(44), 78–79];

ՊԵՏՈՅԱՆ 2020ա – Պետոյան, Ս. (2020), Նոր էջեր 1828–1935 թթ. Շուշիում տպագրված գրքերի պատմությունից, *Սյունիք. հայագիտական տարեգիրք* (Երևան), 1(14), 69–87 [Petoyan, S. (2020), *New Pages from the History of the*

Books Printed in Shushi in 1828-1835, *Syunik: Armenological Yearbook* (Yerevan), 1(14), 69-87];

ՊԵՏՈՅԱՆ 2020թ – Պետոյան, Ս. (2020), Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, *Բանբեր Մատենադարանի* (Երևան), 30, 302–317 [Petoyan, S. (2020), New Facts about the First Books Published in Shushi, *Banber Matenadaran* (Yerevan), 30, 302-317];

ՊԵՏՈՅԱՆ 2021 – Պետոյան, Ս. (2021), Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.), *Հայագիտության հարցեր* (Երևան), 1(22), 45–66 [Petoyan, S. (2021), History of the Printing House in Shushi, Founded by Basel Protestant Missionaries (1827-1835), *Armenological Issues* (Yerevan), 1(22), 45-66];

Վարդապետությունի Քրիստոսի խաչին համար (1833), Շուշի, 57 [*Vardapetutyun Qristosi khachin hamar* (1833), Shushi, 57];

Տասն եւ վեց կարճառոյ քարոզներ [1833], Շուշի, 66,2 [*Sixteen short sermons* [1833], Shushi, 66,2];

Տասն եւ վեց կարճառոյ քարոզներ (1839), Կալկաթա, 56 [*Tasn ev Vets Karcharot Qarozner* (1839), Calcutta, 56];

Տասն եւ վեց կարճառոյ քարոզներ (1840), Մոսկվա, 60 [*Tasn ev Vets Karcharot Qarozner* (1840), Calcutta, 60];

Քարոզ Ասագ Ուրբաթ օրին համար մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի Չարչարանաց եւ մահուան վերայ (1833), Շուշի, 32,2 [*Qaroz Avag Urbat Orin Hamar Mer Prkich Hisusi Qristosi Charcharanats ev mahvan veray* (1833), Shushi, 32,2].

BIBLIOGRAPHICAL CORRECTIONS ON TWO PUBLICATIONS PRINTED IN SHUSHI IN 1832–1833.

STYOPA PETOYAN

Institute of History of NAS of RA

Ph. D. in History

Keywords: Shushi, History of Armenian Printing, Printing house, Booklet, Bibliography, Protestant Missionaries, Publishing.

New bibliographical descriptions should be made by the bibliographers of the Armenian book for the aforementioned two booklets published by the protestant preachers in Shushi. Therefore, based on the current study, we can insist that the publication date of the booklet "Karcharot Aghotkner Shabati Amen Mek Orin Hamar" («*Կարճառոյ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար*») published in Shushi should be 1832, and the booklet "Tasn ev Vets' Karcharot Qarozner" («*Տասն եւ վեց կարճառոյ քարոզներ*») – 1833.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ*

ՀՏԴ: 02(=919.81)+655.4/.5

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-57

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Քանապիտակի գիտությունների թեկնածու

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Հայերեն տպագիր ժառանգության մի ստվար հատվածը հանգրվանել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ աշխարհի ամենատարբեր երկրների գրադարաններում կամ անհատների անձնական հավաքածուներում: Այդ տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումն այսօր գերակա խնդիրներից է: Սույն հետազոտության նպատակն է ընդգծել այս ուղղությամբ աշխատանքների կազմակերպման կարևորությունը, ներկայացնել այն հիմնական խնդիրները, որոնք առաջանում են որոնողական և հետազոտական աշխատանքների ընթացքում, հնարավորության դեպքում կազմակերպել այդ ժառանգության վերադարձը հայրենիք:

A significant part of the Armenian printed heritage has been preserved outside the borders of Armenian Republic, in the libraries of various countries of the world or in the personal collections of individuals. Discovering and preserving this printed heritage is one of the top priorities for us. The goal of this research is to emphasize the importance of organizing works in this direction, to present the main problems that arise during these activities, and if possible to organize the return of such treasures to the homeland.

Քանախի բառեր¹ հայկական տպագրություն, մշակութային ժառանգություն, թվայնացում, մատենագիտություն, հայերեն տպագիր գրքեր և պարբերականներ, հավաքածուներ, երկարատև պահպանություն:

* Հոդվածը ներկայացվել է 15.09.2023, գրախոսվել է 08.10.2023, ընդունվել է տպագրության 02.12.2023:

The article was submitted on 15.09.2023, reviewed on 08.10.2023, accepted for publication on 02.12.2023.

Ինչպես հղել՝ Գրիգորյան Մ. (2023), Հայ տպագիր ժառանգության հետքերով, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 57-68. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-57](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-57)

How to cite (APA style): Grigoryan M. (2023), Following trages of Armenian Printed Heritage, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 57-68. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-57](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-57)

Ներածություն

Արտերկրում հայ տպագիր ժառանգության պահպանությունն ունի ռազմավարական նշանակություն, և ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել որոնողական աշխատանքներ՝ ավանդական և առցանց տարբերակներով, ցուցակագրել հայերեն տպագիր գրքերն ու պարբերականները, հնարավորության դեպքում կազմել մատենագիտական ցանկեր, ուսումնասիրել Սփյուռքի տարբեր օջախներում պահվող անձնական հավաքածուները, կազմակերպել վտանգված հավաքածուների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն, լուծել օրենսդրական և հարկային այն բոլոր խոչընդոտները, որոնք առաջանում են տեղափոխման ժամանակ:

Սփյուռքում հայերեն տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումը հնարավոր է միայն անհատների, գիտամշակութային տարբեր կառույցների, ՀՀ պետական մարմինների, դեսպանատների, հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերի շնորհիվ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է մշակել պետական քաղաքականություն, հակառակ դեպքում աշխատանքները համակարգված և նպատակային բնույթ չեն կրի:

Սփյուռքահայ տպագիր ժառանգության պահպանության առանցքային խնդիրները

Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը պայքարել է գոյատևման, ազգային արժեքների պահպանման համար, գիրքը և գիրը դարձել են կարևոր ազդակներ, անցյալը ներկային կապող և ապագային փոխանցող կամուրջներ: Գրքի, գրի պատմության համատեքստում միանշանակ առանձնացել է հայ տպագիր ժառան-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

գությունը, որը սկզբնավորման օրվանից ստանձնել է տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումները ապագային փոխանցելու բարդ գործառույթը (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015, 55):

Վերջին տարիներին հայերեն տպագիր նյութերի հայտնաբերման ուղղությամբ իրականացվում են հետազոտական տարաբնույթ աշխատանքներ, ինչը հնարավորություն է տալիս նաև ուսումնասիրել դրանք: Աշխատանքների արդյունքում ծագում են նաև այդ նյութերի մշակման, պահպանության խնդիրներ, որոնց լուծումն առաջնահերթություն է դարձել մշակութային ժառանգության պահպանության տեսանկյունից: Առ այսօր իրականացված մատենագիտական որոնումներն ու հետազոտական աշխատանքները փաստում են, որ հայ տպագիր ժառանգության մի ստվար հատվածը հանգրվանել է աշխարհի ամենատարբեր երկրների գրադարաններում, սփյուռքահայ գիտական, մշակութային կենտրոններում կամ անհատների անձնական հավաքածուներում: Այդ ժառանգության հայտնաբերումն ու հանրայնացումը խիստ կարևոր է, շատ ավելի կարևոր է դրա պահպանությունը:

Հավաքածուների ուսումնասիրությունը՝ որպես ազգային մշակութային ժառանգության պահպանման գերակա ուղղություն կարևորելուց առաջ նախ պետք է հասկանալ՝ ինչպե՞ս և ինչու՞ է այն հայտնվել աշխարհի ամենատարբեր անկյուններում: Եվ այսպես.

ա. Հայ տպագրության պատմության ձևավորումը տեղի է ունեցել Հայաստանի սահմաններից դուրս: Հայաստանի տարածքում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը թույլ չի տվել, որ հայկական տպագրությունը սկզբնավորվի հենց այս տարածաշրջանում: Հակոբ Մեղապարտից հետո հայ գրքարվեստի պատմությունը բուռն զարգացում է ապրել Վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Լվովում և այլուր: 17-րդ դարում հայկական գրատպությունը ընդլայնել են աշխարհագրական տարածքները: 18-րդ դարավերջից տպագրական արվեստը սկզբնավորվել և զարգացել է նաև Հայաստանում

անգամ հասարակական, քաղաքական բարդ խնդիրների համատեքստում (ԻՇԽԱՆՅԱՆ 1981, 18):

բ. Սոցիալ-տնտեսական տարաբնույթ խնդիրների պատճառով 17-րդ դարից մեծ չափերի է հասել արտագաղթը: Հայերը հաստատվել են աշխարհի ամենատարբեր անկյուններում և ստեղծել հայկական միջավայր՝ կյանքը շարունակելու համար: Դիմագրավելով օտարին ճուլվելու վտանգին՝ նրանք հիմնել են եկեղեցի, դպրոց, տպարան և մշակութային այլ կառույցներ, որոնք թույլ են տվել չհեռանալ ազգային մշակույթից, հավատից, լեզվից: Աշխարհի տարբեր վայրերում ձևավորված հայկական գաղթօջախները յուրացրել են տվյալ երկրի ձեռքբերումները, մասնակցել այդ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարցերի կարգավորման և զարգացման գործընթացին, այդ ամենը ծառայեցրել հայ ժողովրդի և սեփական գաղթօջախի շահերին: Որոշ դեպքերում հայերն ավելի շուտ են յուրացրել այլ երկրների նորարարությունները և տեղայնացրել սեփական գաղթօջախում կամ այն երկրում, ուր ապրում են: Փաստենք հետևյալը. Աբգար Դպիր Թոխաթեցին Կ. Պոլսում հայերեն գիրք է հրատարակել դեռևս 1568 թ, իսկ նույն Կ. Պոլսում թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է 1727 թ.: Միջին Արևելքի առաջին տպարանը հիմնվել է Լիբանանի Քազահիա վանքում, ուր 1610 թ. տպագրվել է ասորերեն «Սաղմոսարան» (ՄԻՆԱՍԵԱՆ 1997, 546), որին հաջորդել է Իրանում տպագրված հայերեն առաջին գիրքը՝ 1638 թ., վերջինիս էլ՝ պարսկերեն առաջին տպագիր գիրքը՝ 1830 թ.: Փաստերը վկայում են, թե ինչ որքան կարևոր է եղել գրքի տպագրությունը հայ իրականության մեջ (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015, 57):

գ. Տպագիր ժառանգության ստեղծման և տարածման համար ազդակ էր նաև գրավաճառ ցանցի առկայությունը: 16-րդ դարից սկսած՝ հայ վաճառականները քաջ գիտակցել են, թե ինչ կարևոր և թանկարժեք իրողություն է որևէ նյութի տպագրությունը: Չստվերելով խնդրի բարոյական կողմը՝ նշենք, որ տպագիր ցանկացած նյութ նրանք դիտարկել են նաև ֆինանսական տեսանկյունից՝ որպես եկա-

մուտ ապահովող աղբյուր: Հնատիպ, վաղ շրջանի տպագիր նյութերի հիշատակարանների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գրքերի պատվիրատուները կամ բարերարները եղել են հենց հայ վաճառականները (ԴԱԴԱՅԱՆ 2009, 128): Իրենց իսկ նախաձեռնությամբ տպագրված գրքերը, հետագայում նաև մամուլը, վաճառելու կամ նվիրելու նպատակով նրանք տեղափոխել են այլևայլ երկրներ, կազմակերպել տարբեր նյութերի վերավաճառքը՝ նպաստելով գրավաճառ ցանցի աշխարհագրական սահմանների ընդլայնմանը: Գրավաճառ ցանցն ակտիվացել է հատկապես 19-րդ դարից, երբ կատարելագործվել են տպագրական սարքավորումները, հնարավորություն է ստեղծվել ավելի կարճ ժամանակահատվածում տպագրել ավելի շատ նյութ: Տպարաններին կից կամ առանձին ստեղծվել են գրատներ, գրավաճառանոցներ, գրադարան-ընթերցարաններ, կիրառելի է դարձել բաժանորդագրությունը (ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ 2021, 125-132): Այս ամենը նպաստել է, որ աշխարհի տարբեր ծայրերում տպագրված նյութերը հասանելի լինեն նաև մյուսներին: 19-րդ դարում ակտիվ գրավաճառ կենտրոններ են համարվել Թիֆլիսը, Մոսկվան, Ս. Պետերբուրգը, Կ. Պոլիսը, Շուշին, Վենետիկը, Վիեննան, Փարիզը, Նյու Յորքը և այլն: Շարքը բավական ընդգրկուն է, պարզապես պետք է ընդգծել, որ գրավաճառ ցանցի ակտիվ գործարկման արդյունքում հայ տպագիր գիրքը կամ մամուլը հայտնվել է աշխարհի ամենատարբեր վայրերում՝ հանգրվանելով անհատական հավաքածուներում կամ գրադարաններում (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 1):

դ. Հայ տպագիր ժառանգության տարագրությանը միանշանակ նպաստել են պատերազմները, որոնց, ինչպես նաև պարբերաբար իրականացվող կոտորածների, 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանության հետևանքով թալանվել են հոգևոր և մշակութային կենտրոնները, հարուստ հավաքածուներ ունեցող անհատների տները: Թալանված ողջ ժառանգությունը կամ հայտնվել է սովյալ երկրի գրադարաններում, կամ վաճառվել աշխարհի տարբեր շուկաներում՝

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

նպաստելով հայ տպագիր ժառանգության տարագրության ծավալի աճին և սահմանների ընդլայնմանը:

Հակիրճ ներկայացնելով հայ տպագիր ժառանգության տարածման պատճառները՝ ընդգծենք, որ արտերկրում այդ ժառանգության պահպանության ուղղությամբ պետք է իրականացնել մշակված, համակարգված գործունեություն: Իհարկե, ցանկալի կլինի այս ուղղությամբ մշակել հայեցակարգ, ինչը հնարավորություն կտա խնդիրը դիտարկել փուլային զարգացումներով, սակայն քանի որ առ այսօր պետական որևէ կոնկրետ քաղաքականություն չի իրականացվել, և խնդրին անդրադարձել են միայն ոլորտի որոշ մասնագետներ, ուրեմն խոսել հայեցակարգի մասին դեռ վաղ է: Մյուս կողմից՝ նմանատիպ վերլուծությունները կարող են դառնալ ապագայի հայեցակարգի առանցքը:

Անհրաժեշտ է հստակ պատկերացնել՝ ի՞նչը պահպանել, ինչպե՞ս պահպանել, ո՞ր ժամանակահատվածին ուշադրություն դարձնել, կարևորել տպագիր միավո՞րը, թե տպագիր անունը: Այս հարցադրումները խիստ կարևոր են՝ խնդիրներին հիմնավոր լուծումներ տալու, հետագայում նաև հայեցակարգ մշակելու համար:

Միանշանակ պետք է պահպանել արտերկրում տպագրված և պահպանվող հայատառ ժառանգությանը՝ կարևորելով տվյալ նյութի տպագրության ժամանակահատվածը: Մինչ այս իրականացված հետազոտական ուսումնասիրություններից պարզ է, որ հայ հնատիպ և վաղ շրջանի բազմաթիվ տպագրություններ ֆիզիկապես հասանելի չեն. պահպանվել են միայն որոշ մատենագիտական տվյալեր (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 864, ԴԱՎԹՅԱՆ 1967, 536): Նմանատիպ հրատարակությունների հայտնաբերումը հնարավորություն կտա ամբողջացնել հայ տպագրության պատմությունը: 1851 թվականից հետո ընդլայնվել են հայկական տպագրության աշխարհագրական սահմանները, ծավալը և տեսականին, գործոններ, որոնք ավելի են բարդացրել դրանց որոնման և ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքները: Հայ տպագրության պատմության որոշ շրջափուլերում

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

առաջացել են արհեստական բարդություններ, ինչպես օրինակ գրաքննության գործոնը ցարական Ռուսաստանում կամ Օսմանյան Թուրքիայում: Որոշ դեպքերում առգրավվել կամ ոչնչացվել է ամբողջ տպաքանակը կամ պահպանվել է ընդամենը մի քանի օրինակ:

Խիստ կարևոր է հստակեցնել՝ պահպանել տպագիր միավորը, թե անունը: Հարցը բավական տարողունակ է և պետք է ունենա տարբերակված լուծումներ՝ պայմանավորված տարբեր գործոններով: Հայ տպագրության մեջ տպագրական արվեստով, բարդությամբ, հիշատակարաններով առավել կարևորվում են հնատիպ և վաղ շրջանի հրատարակությունները: Նշանակում է՝ մոտեցումը պետք է լինի կոնկրետ և որոշակի. պետք է պահպանել յուրաքանչյուր տպագիր միավորը: 19-րդ դարի երկրորդ կեսից հետո պետք է ուշադրությունը կենտրոնացնել տպագիր անունի պահպանության վրա, քանի որ տպագրական սարքավորումների կատարելագործման, մատչելիության, ծավալի և հնարավորությունների աճի շնորհիվ ֆիզիկապես հնարավոր չէ յուրաքանչյուր միավորի պահպանությունը: Բացառություն են կազմում այն հրատարակությունները, որոնք ունեն արժեքավոր հիշատակություններ, ինքնագրեր, ընծայագրեր, յուրահատուկ են տպագրարվեստի տեսանկյունից:

Տպագիր ժառանգության հետ աշխատանքը ենթադրում է նյութի հայտնաբերում, ուսումնասիրում, պահպանում, հանրայնացում: Արտերկրի հայատառ տպագիր ժառանգության պարագայում այս գործառույթներն ավելի են արժևորվում: Հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոններն ու գործառույթները՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայերեն տպագիր ժառանգության պահպանության ուղղությամբ անհրաժեշտ է.

ա. Իրականացնել որոնողական աշխատանքներ՝ ավանդական և առցանց տարբերակներով: Որոնողական աշխատանքները պսակվում են հաջողությամբ, քանի որ ներկայումս՝ համընդհանուր թվայնացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում, աշխարհի բոլոր խոշորագույն գրադարաններ

րը թվայնացնում են գրքերը. դրանց մեջ առկա են նաև հայերեն տպագրություններ: Հայտնաբերվում են այնպիսի տպագիր նյութեր, որոնք չեն ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում և ֆիզիկապես բացակայում են հայաստանյան գրադարաններում: Հետագայում նմանատիպ միավորները փոխանցվում են Հայաստանին նվիրատվության կամ գնումների ձևաչափով կամ դրանց թվային տարբերակները հարստացնում են շտեմարանները¹: Օրինակ, 1512-1800 թթ. տպագրված հայերեն հնատիպ գրքի շտեմարանը աշխարհի տարբեր երկրների գրադարաններից և հայագիտական կենտրոններից կատարված ներբեռնումների շնորհիվ լրացվել է Հայաստանում ֆիզիկապես բացակա գրքերի թվային տարբերակներով (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2016): Գրքերի թվային տարբերակներ են տրամադրվել Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Զմմառի վանքի և այլ կենտրոնների գրադարաններից: Ստամբուլի քաղաքապետարանի գրադարանում կատարված ուսումնասիրության արդյունքում լրացվել է հինգ հնատիպ գրքի թվային տարբերակ (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 1-3): 1851 թվականից հետո առկա տպագիր ժառանգության ուղղությամբ ևս իրականացվում են նմանատիպ աշխատանքներ, սակայն այս շրջանից սկսած հայկական տպագրության սահմանների ընդլայնմամբ և ծավալի աճով պայմանավորված ընդլայնվում են որոնողական և հետազոտական աշխատանքների սահմանները:

Միայն թվայնացումը բավարար չէ պատկերն ամբողջացնելու համար, քանի որ դեռևս կան երկրներ, որոնք տարբեր պատճառներով մասամբ են հանրայնացնում իրենց գրադարանային հավաքածուները: Անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրություններ

¹ Տե՛ս «Համահայկական թվանշային գրադարան» <https://arar.sci.am/dlibra?language=hye> (11.09.2023), «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ» <https://tert.nla.am/> (11.09.2023), «Հայ գիրք» շտեմարան <https://haygirk.nla.am/> (11.09.2023):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

կատարել տեղում՝ հաղթահարելով տվյալ երկրների կողմից առաջացրած օրենսդրական կամ արհեստածին այլ խոչընդոտները:

բ. Ցուցակագրել հայերեն տպագիր գրքերն ու պարբերականները, հնարավորության դեպքում կազմել մատենագիտական ցանկեր: Առ այսօր կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ կան հայերեն գրքեր և պարբերականներ, որոնք չեն ներառվել հայ գրքի և պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում, որովհետև ժամանակին չեն եղել այն հնարավորությունները, որոնք կան այսօր: Որոշ գրադարաններ կամ հավաքածուներ ունեն նմանատիպ ցանկեր, սակայն դրանք կազմված են սխալներով: Մինչդեռ յուրաքանչյուր գրադարանի կամ հավաքածուի հայերեն գրքերի կամ պարբերականների ցուցակավորումը հնարավորություն կտա ամրագրելու, թե որքան է կազմում այդ տպագիր ժառանգությունը, ինչ վիճակում է գտնվում և ինչքանով է հայտնի հայ և օտարազգի հետազոտողին: Լավագույն օրինակը 2021 թ. ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի կողմից իրականացված մի ծրագիր էր, որի շրջանակում ուսումնասիրվեց Ստամբուլի քաղաքապետարանի գրադարանի հայերեն հավաքածուն: Հայտնաբերված նորանուն գրքերի թվային տարբերակները ներառվեցին նոր ստեղծված շտեմարանի մեջ, իսկ մատենագիտությունն ամբողջությամբ ներկայացրեց հավաքածուն, առկա միավորների ֆիզիկական վիճակը, յուրաքանչյուր միավորի առանձնահատկությունը (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 544):

գ. Ուսումնասիրել հատկապես Սփյուռքի տարբեր օջախներում պահվող անձնական հավաքածուները: Քաղաքական, պատմական, հասարակական տարբեր պատճառներով հայ տպագիր ժառանգության արժեքավոր մի հատվածը հանգրվանել է մասնավոր հավաքածուներում, որտեղ չկան պահպանության ճիշտ պայմաններ և համապատասխան ցուցակներ: Անհրաժեշտ է հայտնաբերել, ուսումնասիրել նմանատիպ հավաքածուները, գրանցել դրանք, որ-

պեսզի հետագայում հնարավոր լինի վերահսկել այդ հավաքածուների շարժը:

դ. Կազմակերպել վտանգված հավաքածուների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն: Փաստ է, որ հատկապես այն պետություններում, ուր վերջին տասնամյակներում պատերազմների պատճառով հայերը ստիպված են եղել լքել երկիրը, պատերազմական գոտում են հայտնվել բազմաթիվ հայերեն տպագիր գրքեր և պարբերականներ, որոնց մեջ առկա են նաև եզակի հրատարակություններ: Նմանատիպ գրքերի ճակատագիրն այսօր անհայտ է կամ վտանգված: Նրանց տեղափոխումը հայրենիք հրատապ է, քանի որ կորուստն անդառնալի կարող է լինել:

ե. Լուծել օրենսդրական և հարկային այն բոլոր խոչընդոտները, որոնք առաջանում են տեղափոխման ժամանակ: Բացի վտանգված հավաքածուներից, Սփյուռքում կան նաև անհատներ, որոնք ունեն անձնական եզակի հավաքածուներ, պատրաստ են նվիրել հայաստանյան գրադարաններին, սակայն տեղափոխման հետ կապված առաջանում են օրենսդրական և ֆինանսական լրացուցիչ խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն պետական աջակցության շնորհիվ:

Ամփոփում

Կարծում ենք՝ Սփյուռքում հայերեն տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումը հնարավոր է միայն անհատների, տարբեր կառույցների և պետության համատեղ ջանքերի շնորհիվ: Սփյուռքի տարբեր կառույցներում և անհատների մոտ պահվող հայատառ տպագիր ժառանգության պահպանությունը առաջնահերթություն է և ունի ռազմավարական նշանակություն Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության համատեքստում: Համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում հնարավոր կդառնա այդ տպագիր ժառանգության թվայնացումն ու ուսումնասիրությունը, որոշ չափով նաև՝ այդ ժառանգության ներգաղթը Հայաստան:

Օգտագործված գրականության ցանկ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015 – Գրիգորյան, Մ. (2015), Հայ գիրքը՝ պատմության քառուղիներում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 55-64 [Grigoryan, M. (2015), Armenian Book in the Crossroads of the History, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 2(2), 55-64];

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2016 – Գրիգորյան, Մ. (2016), «Հայ գիրք» շրջմարտանի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը. զեկույց [Grigoryan, M. (2016), *The Status of the Works being carried out Towards the Creation of the "Armenian Book" Database*. Report] <https://arar.sci.am/dlibra/publication/290012/edition/266279/content> (11.09.2023);

ԴԱԴԱՅԱՆ 2009 – Դադայան, Խ. (2009), *Ակնարկներ հայ վաճառականության պատմության*, Երևան, 128 [Dadayan, Kh. (2009), *Essays on the History of Armenian Trade*, Yerevan, 128];

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (կազմ.) (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին. մատենագիտություն*, Երևան, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 536, 3 [Davtyan, H. (comp.) (1967), *Hay Girky 1801-1850: Matenagitutyun*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 536, 3];

ԻՇԽԱՆՅԱՆ 1981 – Իշխանյան, Ռ. (1981), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 152,3 [Ishkhanyan, R. (1981), *Hay Girky 1512-1800 Tvakannerin*, Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 152,3];

ՄԻՆԱՍԵԱՆ 1997 – Մինասեան, Մ. (1997), Հայերէն նորայայտ հնատիպ գրքեր եւ մատենագիտական լրացումներ, *Հասկ. հայագիտական տարեգիրք*, Անթիլիաս, 543-593 [Minasian, M. (1997), Hayeren Norahayt Hnatip Grker ev Matenagitakan Lrats'cumner, *Hask. Hayagitakan Taregirk*, Antelias, 543-593];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Ք., Սավալյան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan, Q., Savalyan, A. (1988), *The Armenian Book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ 2021 – Սուքիասյան, Հ., Պետոյան, Ս. (2021), *Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828-1920 թվականներին*, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 238 [Sukiasyan, H., Petoyan, S.

(2021), *Gratputyuny Arevelyan Hayastanum 1828-1920 Tvakannerin*, Yerevan, Institute of History of NAS RA, 238];

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022 – Վարդանյան, Ա. (կազմ.) (2022), *Հայ գիրքը Թուրքիայում: Պրակ Ա.*, Երևան, Անտարես, XXI, 514, 9 [Vardanyan, A. (2022), *Armenian Book in Turkey, Vol. 1*, Yerevan, Antares, XXI, 514, 9].

**FOLLOWING TRACES OF
ARMENIAN PRINTED HERITAGE**

MAYA GRIGORYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph.D. in Philology

Keywords: Armenian Printing, Cultural Heritage, Digitization, Bibliography, Armenian Printed Books and Periodicals, Collections, Long-Term Preservation.

A large part of the Armenian printed heritage has been preserved outside the borders of Armenia, in the libraries of various countries around the world or in the personal collections of individuals. Finding and preserving this printed heritage is considered a priority today. The purpose of this research is to emphasize the importance of organizing work in this direction, to present the main problems that arise during the search and research work, and if possible, to organize the return of this heritage to the homeland.

In order to protect the Armenian printed heritage abroad, it is necessary to conduct searches with traditional and online options, to list Armenian printed books and periodicals, if possible compile bibliographic lists, to study especially the private collections kept in various centers of the Diaspora, to organize the transfer of endangered collections to the Republic of Armenia, to resolve all legal and tax obstacles that arise during relocation.

The discovery and preservation of Armenian print heritage in the Diaspora is possible only thanks to the joint efforts of individuals, various structures and of the state. We think it is necessary to develop a developed state policy, otherwise the work will not be systematic and purposeful.

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆԸ*

ՀՏԴ: 378(=919.81)(569.3)+655.15
DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-69

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

Հայկազեան Համալսարանի հայկական Սփիռքի
ուսումնասիրության կենտրոնի տնօրէն

Հայկազեան հայագիտական հանդէսի

պատասխանատու խմբագիր

Սուանզի համալսարանի

միջազգային յարաբերութիւնների դոկտոր (Ուէյլզ)

Բանալի բառեր՝ Հայկազեան համալսարան, լիբանանահայ մշակոյթ, հրատարակչատուն, հայ տպագրութեան պատմութիւն, մատենագիտութիւն:

Ներածութիւն

7 Յունիս 2011ին, Հայկազեան Համալսարանը պաշտօնապէս կը դիմէր Լիբանանի Հանրապետութեան տեղեկատուութեան նախարարութեան ընդհանուր տնօրէնութեան մամլոյ եւ հանրային հաղորդակցութեան գրասենեակին, որպէսզի արտօնուի հիմնումն ու գործարկումը “Haigazian University Press” հրատարակչատան: Դիմումը կը տեղեկացնէր նաեւ թէ Անդրանիկ Մանուկ Տազէսեանը հրատարակչատան տնօրէն կը կարգուէր, իսկ Շիրակ տպարան հրատարակչատունը իբրեւ տպարան պիտի օգտագործուէր:

* Յօդուածը ներկայացուել է 11.08.2023, գրախօսուել է 21.09.2023, ընդունուել է տպագրութեան 30.11.2023:

The article was submitted on 11.08.2023, reviewed on 21.09.2023, accepted for publication on 30.11.2023.

16 Յուլիս 2011ին, տեղեկատուության նախարար Ուալիտ Տաուք, թիւ 640/2011 որոշումով ընթացք կու տար վերոյիշեալ դիմումին: Լիբանանի պետութեան պաշտօնաթերթը՝ *ժարիփա Րասմիյա*, իր 28 Յուլիս 2011 թիւին 2774րդ էջին վրայ հրատարակելով որոշումը, ի զօրու կը դարձնէր զայն:

Այս գործողութիւններէն միառժամանակ ետք, 17 Մայիս 2012ին կը դիմուէր Լիբանանի մշակոյթի նախարարութեան, ձեռք բերելու համար հրատարակչատան յատուկ ISBN համարանիշը:

Հայկազեան համալսարանի հրատարակչատան (<<<) առաջին գիրքը լոյս կ'ընծայուէր Սեպտեմբեր 2011ին¹:

¹ Համալսարանը նախապէս հրատարակած է շարք մը գիրքեր, ինչպէս՝ 1) *Հայաստանեայց Աւերարանական Եկեղեցին* յօդուածներու ժողովածուն (1986, կազմ. ու խմբ.՝ Երուանդ Հ. Քասունի), լոյս տեսած «Հայկազեան գոլէճի հայագիտական ուսմանց կեդրոն»ի անունով եւ «Հայ աւետարանական հիմնադրամ»ի հրատարակութեամբ: 2) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present- Day Community* (2009, խմբ.՝ դոկտ. Այտա Պուճիգանեան) Հայկազեան համալսարանի եւ Armenian Heritage Press հրատարակութեամբ: Հատորը կ'ամփոփէ 2005ին համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ դոկտ. Արա Սանճեանի ջանքերով կազմակերպուած «Լիբանանի հայերը» գիտաժողովին նիւթերը: 3) *Հայկազեան հայագիտական հանդէսի* առաջին 32 հատորները (1970-2012): 4) *Haigazian University, Golden Jubilee Album (1955-2005)*, (2006, խմբ.՝ Մարիա Պազգալեան): Այս գիրքերուն կողքին համալսարանը հրատարակած է իր դասախօսակազմէն Ֆրիտա Ապս-Հատատի *Introduction to the Field of Social Work: A Middle Eastern Perspective* հատորը 1992ին (Հայկազեան համալսարանական քոլէճ անուան տակ), նոյնի՝ *A Manual for Working with Groups*, 2006ին (Հայկազեան համալսարան անուան տակ), Մկրտիչ Պուլտուքեանի *The Management of Correspondent Banking* հատորին բ. տիպը 2007ին (Հայկազեան համալսարան անուան տակ), դոկտ. Սամիհ Ազարի *Collection of Essays in Economics* հատորը 2007ին (Հայկազեան համալսարան անուան տակ), նոյնի՝ *Collection of Essays in Financial Economics* հատորը 2008ին (Հայկազեան համալսարան անուան տակ), ինչպէս նաեւ Alfred de Zayasի *The Genocide Against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention* հատորին բ. վերամշակուած հրատարակութիւնը 2010ին (Հայկազեան համալսարան անուան տակ):

Առաջին գիրքը՝ *Towards Golgotha*, թարգմանուած եւ ծանօթագրուած էր համալսարանի Արուեստից եւ Գիտութեան բաժանմունքի տեսուչ դոկտ. Արտա Էքմէքճիի կողմէ եւ կը բովանդակէր իր մեծօր՝ Յակոբ Արսէնեանին, ողիսականը՝ Ատափագարէն Երուսաղէմ:

Իր հիմնումէն ի վեր հրատարակչատունը նպատակ կը հետապնդէ մասնատրաբար անհատական թէ հաւաքական հեղինակութեամբ, հայերէն/արաբերէն/անգլերէն հայագիտական եւ գիտակրթական բնոյթի ակադեմական ուսումնասիրութիւններու, նաեւ զուտ համալսարանական գործունէութեան առնչուող նիւթերու հրատարակման զարկ տալ:

Ստորեւ կը ներկայացնենք համառօտ պատումը ՀՀՀին՝ սկիզբէն մինչեւ Հոկտեմբեր 2023 (DAKESSIAN 2020, 19: SUԳԷՍԵԱՆ 2020, 79-84):

Բնութագրական համապարկեր ՀՀՀի հրատարակութիւններուն

Հրատարակչատան ցարդ լոյս ընծայած 49 հատորներէն 11ը նուիրուած է Հայոց Յեղասպանութեան: Այս հատորները լուսարձակի տակ կ'առնեն սոմանեան երեսփոխան Յակոբ Պապիկեանի պաշտօնական տեղեկագիրը Ատանայի 1909ի կոտորածին մասին, ցեղասպանութենէն վերապրած Յակոբ Արսէնեանի ականատեսի վկայութիւնները, Հաճնոյ հերոսամարտի 90ամեակին եւ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած գիտաժողովներուն նիւթերը, ՀԲԸՄի Հաճընի որբանոցին պատումն ու որբերուն նկարագիրը, Հաճըն առաքուած միսիոնարի մը յուշերը՝ տեղաբնիկ հայերու հետ իր պաշարման 13 ամիսներուն, ցեղասպանութեան նուիրուած արաբերէն փաստաթուղթեր, Հրանդ Տինքէն խոհագրութիւններ՝ հայ-թուրք մերձեցման խնդրով, եւ լիբանահայ 9-11րդ դասարանի 101 աշակերտներու ընտանիքներուն պատմութիւնը՝ ցեղասպանութեան շրջանին:

Վերոյիշեալներուն կողքին, ՀՀՀի կողմէ ցարդ լոյս տեսած են Հայկազեան հայագիտական հանդէսի 13 հատորները՝ ԼԳ.-ԽԳ/1. (2013-2023)²:

ՀՀՀն լոյս ընծայած է նաեւ համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի կազմակերպած եւ Միջին Արեւելքի հայօճախներուն նուիրուած եօթ գիտաժողովներէն հինգին նիւթերը, «Հայկական Սփիւռք» մատենաշարով:

2019ին ՀՀՀն սկսաւ իր երկրորդ մատենաշարին՝ «Կրօնք, կրթութիւն եւ ժամանակակից հարցեր» վերնագրով: Յարդ այս մատենաշարով լոյս տեսած են երեք հատորներ, որոնք նիւթերն են համալսարանի Արուեստից եւ գիտութեանց բաժանմունքին կազմակերպած երեք խորհրդաժողովներուն: Միաժամանակ, այլ՝ «Առնչուիլ անցեալին ի յուշ ապագային» մատենաշարով, ՀՀՀն հրատարակեց Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքներուն առնչուող երեք հատորներ:

ՀՀՀն նաեւ լոյս ընծայած է անհատ հետազօտողներու եւ ուսումնասէրներու մենագրութիւններ/համադրումներ/վիճակագրութիւն-աշխատասիրութիւններ, որոնք կը վերաբերին սփիւռքահայ քաղաքական կեանքին (դոկտ. Զաւէն Մարըլեան եւ Ռուբէն Աւշարեան), Սփիւռքի համայնքներու պատմութեան (դոկտր. Վահրամ Շեմմասեան եւ Անդրանիկ Տազէսեան), սփիւռքահայ մշակոյթին եւ մշակութային բերքին (դոկտր. Անդրանիկ Տազէսեան/Արմէն Իւրնէշլեան եւ Յակոբ Եագուպեան) եւ Սփիւռքի ինքնութեան ու համարկումին (դոկտ. Յակոբ Տէր Կարապետեան):

² 2020ին Հանդէսը հրատարակեց յոբելեանական հատոր մը, իր ընթացիկ հատորին կողքին, իսկ 2022էն իվեր Հանդէսը լոյս կ'ընծայէ տարեկան երկու գիրք:

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀՀն հրատարակած է նաև հայ տպագրության 500ամեակին առթիվ Հայկազեան համալսարանի կազմակերպած ծեռնարկներու տեղեկատուական հատորը, ինչպես նաև Վահան Թեքեանի «Արև» օրաթերթին մէջ ստորագրած իր խմբագրականները:

Ցանկ Հայկազեան Հրատարակատան հրատարակած հատորներու			
SS.		Անուն	Էջ
2011	1	<i>Towards Golgotha: the memoirs of Hagop Arsenian, a Genocide survivor</i> , թարգմ. Եւ ծանօթ.՝ Արտա Արսէնեան-Էքմէքճի	238
	2	هرانت دینک، امتان قریبتان... جاران بعدان արաբերէնի թարգմ.՝ Տոքթ. Ալեքսան Քեշիշեանի	160
2013	3	<i>Լիբանանահայ գիրքը 1894-2012. մարտնադիրական ցանկ</i> , աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տագէսեան եւ Դոկտ. Արմէն Իրնէշեան	440
	4	<i>Հաճնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիւթեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ</i> , կազմ. Եւ խմբ.՝ Դոկտ. Անդրանիկ Տագէսեան (հայերէն եւ անգլերէն)	228
	5	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 33</i> (հայերէն եւ անգլերէն)	566
2014	6	<i>Dr. Zaven Messerlian, Armenian participation in the Lebanese legislative elections 1934-2009</i>	548
	7	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 34</i> (հայերէն եւ անգլերէն)	656
	8	<i>Հայկազեան Համալսարան. հայ տպագրութեան 500-ամեակի ծեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ</i>	104
	9	<i>Հայկական անդրսահմանային տարածականութիւնը եւ արդի հաղորդակցական միջոցները. Գիտաժողովի նիւթեր (15-17 Մայիս 2013)</i> , խմբ.՝ Անդրանիկ Տագէսեան, Հայկական Սփիւռք Մատենաշար Ա.	246
2015	10	<i>Dr. Vahram L. Shemmassian, The Musa Dagh Armenians: a socioeconomic and cultural history 1919-1939</i>	378

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

	11	<i>Towards Golgotha: the memoirs of Hagop Arsenian, a Genocide survivor</i> , թարգմ. եւ ծանօթ.՝ Արուս Արսէնեան-Էքմէքճի, Բ. տիպ.	238
	12	<i>Հարիրամեակ Հայոց Յեղասպանութեան. հետեանքներ եւ յտաջարկանքներ. գիտաժողովի նիւթեր (31 Յունուար-1Փետրուար 2015)</i> , խմբ.՝ Անդրանիկ Տազէսեան (հայերէն-անգլերէն)	240
	13	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 35</i> (հայերէն-անգլերէն)	944
	14	Անդրանիկ Տազէսեան, <i>Լիբանանի հայօճախը. գիրք Ա., համարկումին խաչողիները (1920-2005)</i>	174
	15	د. نورا أريسيان, <i>100 عام على الإبادة الأرمنية: 100 شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)</i>	136
2016	16	Յակոբ Ա. Եագուպեան, <i>Քենտադարական մտածողութիւնը լիբանանահայ վարժարաններու մէջ</i>	158
	17	<i>Իմ ընտանիքիս պատմութիւնը</i> , կազմ.՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւն, խմբ.՝ Ա. Տազէսեան	296
	18	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 36</i> (հայերէն եւ անգլերէն)	700
2017	19	<i>Բարսեղ Կանաչեան (1885-1967). Կեանքի մը երածշտացումը</i> , աշխ.՝ Անդրանիկ Տազէսեան	670
	20	<i>Լիբանանի հայերը (Բ.). գիտաժողովի նիւթեր (14-16 Մայիս 2014)</i> , խմբ. Անդրանիկ Տազէսեան, Հայկական Սփիւոք Մատենաշար Բ. (հայերէն եւ անգլերէն)	366
	21	Roupen Avsharian, <i>On the record. Armenian deputies in the Lebanese parliaments, Volume I, 1922-1972</i>	654
	22	Roupen Avsharian, <i>On the record. Armenian deputies in the Lebanese parliaments, Volume II, 1972-2017</i>	680
	23	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 37</i> (հայերէն եւ անգլերէն)	720
2018	24	<i>Սուրիոյ հայերը. գիտաժողովի նիւթեր (24-27 Մայիս 2015)</i> , խմբ. Անդրանիկ Տազէսեան, Հայկական Սփիւոք Մատենաշար Գ. (հայերէն եւ անգլերէն)	720
	25	Aghop Der-Karabetian, <i>Armenian ethnic Identity in context: empirical and psychosocial perspective</i>	270
	26	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 38</i> (հայերէն եւ անգլերէն)	852

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

	27	Hagop Babiguan, <i>The Adana massacres: an eyewitness account</i> , translated, foreword (and overview) and annotated by Dr. A. B. Gureghian	140
2019	28	<i>Յորդանանի հայերը. գիտաժողովի նիւթեր (22-24 Մայիս 2016)</i> , խմբ. Անդրանիկ Տազէտեան, Հայկական Սփիւռք Մատենաշար Դ. (հայերէն եւ անգլերէն)	520
	29	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 39</i> (հայերէն եւ անգլերէն)	928
	30	<i>The symbolism of water in religion, proceedings of an interreligious conference on water and religion, Religion, Education and Contemporary Concerns, vol. 1, edited by Wilbert van Saane</i>	166
2020	31	<i>ՀԲԸՄ Հածրնի որբանցը, 1919-1920</i> , ներած., թարգմ., եւ ծանօթ.՝ Անդրանիկ Տազէտեան (հայերէն եւ անգլերէն)	288
	32	<i>The relevance of intercultural studies in 21st century, proceedings of the symposium held at Haigazian University on January 25, 2019</i> , Religion, Education and Contemporary Concerns, Vol. 2, edited by Arda Ekmekji	88
	33	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 40</i> (հայերէն եւ անգլերէն)	928
	34	<i>Ալիս Քիփ Քլարք, Նամակներ Կիլիկիայէն (օրագրութիւն)</i> , ներած., թարգմ., եւ ծանօթ.՝ Անդրանիկ Տազէտեան (հայերէն եւ անգլերէն)	168
	35	<i>Իրաքի հայերը. գիտաժողովի նիւթեր (29-31 Մայիս 2017)</i> , խմբ. Անդրանիկ Տազէտեան, Հայկական Սփիւռք Մատենաշար Ե. (հայերէն-արաբերէն-անգլերէն)	660
	36	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Յոբելեանական Հատոր (1970-2020)</i> , 2020	422
2021	37	<i>Իրաքի Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (29-31 Մայիս 2017)/Armenians of Iraq: Proceedings of the Conference (29-31 May 2017)</i> , խմբ. Ա. Տազէտեան	770
	38	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԱ./Haigazian Armenological Review, Vol. 41</i>	816
	39	<i>Religion, Education, and Peace, Proceedings of an Online International Conference Held in March 2021</i> , Religion, Education and Contemporary Concerns, Vol. 3, edited by Jon Armajani and Wilbert van Saane	162

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2022	40	<i>Centennial of Greater Lebanon: Constituting the Idea of a “Lebanese Identity” Perspectives from the Lebanese Arts and Letters/ مئوية لبنان الكبير: تشكيل الهوية اللبنانية انطباعات من التراث اللبناني في الادب والعلوم (Proceedings of the Symposium Organized on the Centennial of Greater Lebanon, February 5, 2021), edited by Antranik Dakessian</i>	128
	41	Վահան Թեքէտան, <i>Արեւի խմբագրականներ, (1915-1945), կազմ. եւ խմբ.՝ Պետրոս Թորոսեան, Անդրանիկ Տազէտեան</i>	
	42	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԲ. Գիրք 1, Haigazian Armenological Review, Vol. 42/1</i>	644
	43	<i>Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր 1 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018), խմբ. Ա. Տազէտեան</i>	784
	44	<i>Dealing with the Past, Memory for the Future: A Compilation of Haigazian University Project Submissions, “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 1</i>	156
	45	Noura Amikah, <i>The Narratives of the Survivors of the Beirut Port Blast in Relation to their Recollections of Past Tragedies in Lebanon, “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 2</i>	108
	46	Reem Rehim, <i>Anxiety, Depression, and Persistent Complex Bereavement Among the Families of the Enforced Disappeared and Deceased during the Lebanese Civil War. “Dealing with the Past, Memory for the Future Series,” Book 3</i>	66
	47	<i>Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԽԲ. Գիրք 2, Haigazian Armenological Review, Vol. 42/2</i>	656
2023	48	Efronia Khatchadourian, <i>The Story of My Life, translated by Herant Katchadourian</i>	260
	49	<i>Եգիպտոսի Հայերը Գիտաժողովի Նիւթեր 2 (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018)/Armenians of Egypt Proceedings of the Conference (April 12-13 and May 29-30, 2018), խմբ. Ա. Տազէտեան</i>	350

Ամփոփում

Միջին հաշուով տարեկան 3-4 գիրքերու հրատարակման իր բերքով, այդ բերքին բնոյթով եւ ուղղութեամբ՝ ՀՀՀն ակադեմական

յատկանշական, իւրայատուկ յաւելում կը բերէ լիբանահայ գրահրատարակչութեան:

Օգտագործուած գրականութեան ցանկ

ՏԱԳԷՍԵԱՆ 2020 – Տազէսեան Ա., *Հայկազեան համալսարանի հրատարակչատունը, Հայկազեան հայագիտական հանդէս. յոբելեանական համար (1970-2020)*, Պէյրութ, 2020, 421 էջ:

DAKESSIAN 2020 – Dakessian A., *Haigazian University Press, AMAA News*, Paramus, 2020, N 4, Oct.-Nov.-Dec., p. 19.

THE HAIGAZIAN UNIVERSITY PRESS

ANTRANIK DAKESSIAN

***Director of the Armenian Diaspora Research Center
at Haigazian University***

Editor-in-Chief of

Haigazian Armenological review

Ph.D., Swansea University

Keywords: Haigazian University, Lebanese-Armenian Culture, Publishing House, History of Armenian printing, Bibliography.

Haigazian University Press brings an academically characteristic and unique addition to the Armenian book publishing industry in Lebanon, publishing an average of three to four books per year.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 90-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ*

ՀՏԴ: 027.625(479.25)

ՌՈՒՋԱՆ ՏՈՆՈՅԱՆ

*Խնկո Ապոր անվան ազգային
մանկական գրադարանի տնօրեն*

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամբարում է հայ տպագիր ժառանգության մի սրվար հատվածը և որպես Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման հարցերով զբաղվող մեթոդական կենտրոն, արդեն 90 տարի մանուկների և պատանիների շրջանում իրականացնում է ընթերցանության զարգացման քաղաքականություն:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել գրադարանի հիմնադրման պատմությունն ու 90-ամյա գործունեության ուղին՝ ընդգծելով այն կարևոր տեղն ու դիրքը, որ ունի այս մշակութային կառույցը հայ հասարակության մեջ:

Khanko Aper National Children's Library collects a large part of the Armenian print heritage and as a methodical center dealing with issues of organizing children's and youth reading in the Republic of Armenia, has been implementing reading development policy among children and adolescents for 90 years.

The purpose of this article is to present the history of the foundation of the library and the path of its 90-year activity, emphasizing the important place and position that this cultural structure has in the Armenian society.

Ինչպես հղել՝ Տոնոյան Ռ. (2023), Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի 90-ամյա ուղին, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 80-87:

* Հոդվածը ներկայացվել է 22.11.2023, գրախոսվել է 30.11.2023, ընդունվել է տպագրության 01.12.2023:

The article was submitted on 22.11.2023, reviewed on 30.11.2023, accepted for publication on 01.12.2023.

How to cite (APA style): Tonoyan R. (2023), The 90-year path of the Khnko Aper National Children's Library, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 80-87.



1933 թ. ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ հիմնադրվում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ որպես առաջին մասնագիտացված մանկական պետական գրադարան:

Գրադարանը սկզբնապես գտնվում էր Երևան քաղաքի Խ Աբովյանի անվան դպրոցի հարևանությամբ: Ի պատիվ հայ առակագիր, ՀԽՍՀ վաստակավոր մանկական գրող և ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Աթաբեկ Հովհաննեսի Խնկոյանի (գրական կեղծանվամբ՝ Խնկո Ապեր)՝ գրադարանը 1935 թ.՝ նրա մահվանից հետո, անվանակոչվեց «Խնկո Ապոր» անվամբ: 1937 թ. գրադարանը տեղափոխվեց Երևան քաղաքի Ալավերդյան փողոցի վրա գտնվող մանկատան շենք (այժմ՝ Թումանյան փողոցի թիվ 21 շենք): Գրադարանն այն ժամանակ ուներ 2000 միավոր գիրք, 800 ընթերցող և 30 տեղանոց ընթերցարահ:

Տարիների հետևողական աշխատանքի արդյունքում աստիճանաբար աճեց թե՛ գրքային հավաքածուն, թե՛ ընթերցողների թիվը: Հետագա տարիներին, գրադարանային ոլորտում ծավալած բազմաբնույթ և բազմավեկտոր գործունեության շնորհիվ, մշակութային այս կարևոր օջախը ստացավ հանրապետական (1962 թ.), գիտական (1982 թ.) առաջին կարգի նշանակության գրադարանի, ավելի ուշ՝ «Ազգային գրադարանի» կարգավիճակ (2003 թ. ապրիլից):

Արդեն 1970-ական թվականների սկզբին գրադարանի շենքային սուղ և անբարենպաստ պայմանները չէին բավարարում հան-

րապետությունում տարեցտարի աճող մանկապատանեկան ընթերցանության պահանջմունքը բավարարելու և գրադարանային բազմաբնույթ աշխատանքներն արդյունավետ ու նպատակային կազմակերպելու համար: Ընդամին՝ հանրապետությունում արագ զարգացող գրադարանային համակարգի մեթոդական աշխատանքները համակարգողի գործառույթը լիարժեք իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված՝ առաջացել էր գրադարանին նոր շենք տրամադրելու անհրաժեշտություն:

Մանկան համաշխարհային տարվա հռչակման առթիվ՝ 1979 թ., կառուցվեց գրադարանի՝ Երևան քաղաքի Տերյան 42/1 հասցեում գտնվող ներկայիս շենքը: 1980 թվականից գրադարանն իր գործունեությունն իրականացնում է ճարտարապետական հոյակերտ հորինվածքով, քառանիստ ծավալ ունեցող վեցհարկանի տիպային շենքում, ուր տարածքները միացած են ընդհանուր ճեմասրահներով:

Գրադարանի շենքը 1978 թ. նախագծել են Հայաստանի վաստակավոր ճարտարապետ Լևոն Ղալումյանը (1940-2017) և ճարտարապետ Ռուզան Ալավերդյանը (1946-2017), որի համար 1981 թ. նրանք արժանացել են Հայաստանի Լենինյան կոմերիտմության մրցանակի:

Կրթամշակութային այս կարևոր կառույցը տարբեր տարիներին ղեկավարել են Սիրուշ Սինանյանը (1933-1937), Ասյա Շաբոյանը (1937-1938), Բաբկեն Զաքարյանը (1938-1939), Անահիտ Հակոբյանը (1939-1969), Հայկուշ Դանիելյանը (1970-1996), Ռուզան Տոնոյանը (1996-ից մինչ օրս):

Այսօր Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ունի 90-ամյա պատմություն, որն ամբարում է հայ տպագիր գրքի ավելի քան հինգհարյուրամյա վերելքներով և վայրէջքներով առատ՝ պատմական դժվարին և երկար ճանապարհի գրավոր ժառանգությունը և որպես Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ընթերցանության կազմակերպման հարցերով զբաղվող մեթոդական կենտրոն, արդեն 90 տարի մանուկների և պատա-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

նիների շրջանում իրականացնում է ընթերցանության զարգացման քաղաքականություն:

Իսնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանը հանդիսանում է մանկապատանեկան գրականության ազգային պահոց, իսկ ՀՀ գրադարանների մանկապատանեկան բաժինների համար՝ գիտամեթոդական, - տեղեկատվական և կրթամշակութային կենտրոն:



Թեպետ տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքն արմատապես վերափոխեց գրադարանի գործունեության ավանդական գործիքակազմը, սակայն գրադարանի հիմնական գործառույթները մնացին անփոփոխ. գրադարանն այսօր և՛ս շարունակում է իրականացնել գրադարանագիտական, մատենագիտական, տեղեկատվական և մեթոդական գործունեությունը:

Որպես գիտամեթոդական կենտրոն՝ գրադարանը տարիներ շարունակ կազմակերպում է վարպետության դասեր, սեմինարներ, գիտագործնական կոնֆերանսներ: Կարևորելով շարունակական կրթությունն ու միջազգային փորձի փոխանակումը՝ ՀՀ գրադարանավարների համար պարբերաբար իրականացնում է վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ՝ արտերկրից հրավիրված հեղինակավոր մասնագետների մասնակցությամբ:

Այսօր գրադարանն ունի տպագիր բազմաքանակ վավերագրերի կազմակերպված հավաքածու (2023 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքածուն կազմում է 545.292 պահպանական միավոր), հայալեզու և ավելի քան 50 օտար լեզուներով գրքեր, պարբերականներ, տեսալսողական փաստավավերագրեր, երաժշտական-նոտագիր հրատարակություններ, որոնք ժամանակավոր օգտագործման է տրամադրում 3-ից 18 տարեկան մանուկներին ու պատանիներին,

Նաև՝ մանկապատանեկան գրականության և ընթերցանության խնդիրներով զբաղված անձանց:

Գրադարանի հավաքածուում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վաղ շրջանի գրքերի հավաքածուն, որը ներառում է 1845-1920 թթ. լույս ընծայված գրքերի բացառիկ և արժեքավոր հրատարակություններ: 1963 թվականից կարևոր այս կառույցն իրականացնում է հրատարակչական գործունեություն՝ մինչ օրս կազմելով և հրատարակելով շուրջ 500 անուն մեթոդական ձեռնարկներ, մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, հիշարժան տարեթվերի օրացույցներ և այլն, որոնք անվճար տրամադրվում են հանրապետության գրադարաններին:

Գրադարանից օգտվում է տարեկան շուրջ 20.000 ընթերցող, որոնց սպասարկումն իրականացվում է տարբերակված՝ տարիքային խմբերի տարանջատված ընթերցասրահների առձեռն հավաքածուների միջոցով: Գործում են նախադպրոցականների, 1-4-րդ, 5-8-րդ, 9-12-րդ դասարանցիների համար նախատեսված սպասարկման սրահներ, նաև՝ ընթերցանությունը կազմակերպողների, երաժշտական-նոտագիր վավերագրերի և օտարալեզու գրականության բաժիններ:

Գրադարանագիտական գործունեությունն իրականացնում է գրադարանի Ազգային հավաքածուի պահպանման, Համալրման ու մշակման, Մատենագիտության և էլեկտրոնային շտեմարանների ձևավորման բաժինների միջոցով: 2004 թվականից գրադարանը միացել է Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացման ցանցի ստեղծման գործընթացին և շարունակում է իրականացնել էլեկտրոնային համահավաք քարտարանի ձևավորման աշխատանքները, իսկ 2022 թվականից՝ թվային տվյալների շտեմարանը կիրառվում է ընթերցողների էլեկտրոնային սպասարկման նպատակով:

100 ընթերցողի համար նախատեսված ընթերցասրահում սպասարկումն իրականացվում է էլեկտրոնային և քարտային եղանակով, որտեղ ընթերցողները կարող են օգտվել տպագիր մամուլից

և պարբերականներից, տեղեկատվական-հանրագիտարանային բնույթի հարուստ հավաքածուից, արվեստաբանական և գիտական բազմաճյուղ գրականությունից ու ալբոմներից:



Երեխաների մտավոր զարգացմանը նպաստող մշակութային միջավայրի ստեղծումը կրթության կարևոր բաղադրիչներից է, ուստի պատահական չէ, որ ընթերցասրահում՝ մատիտով կատարված որմնանկարներում, պատկերված են Հայոց պատմության առանցքային իրադարձություններն ու ձեռքբերումները՝

հեթանոսությունից սկսած մինչև քրիստոնեություն և քրիստոնեությունից մինչև մեր ժամանակները: Որմնանկարների հեղինակն է ՀՀ վաստակավոր նկարիչ Ռուբեն Ղևոնդյանը (1942-2019): Աշխատանքները կատարվել են 1982-1984 թթ.:

Գրադարանի ձայնադարանում, խմբով կամ անհատապես, կարելի է ունենդրել տարբեր ժանրերի երաժշտություն: Մանկահասակ, նախադպրոցական և կրտսեր տարիքի ընթերցողները կարող են հյուրընկալվել հեքիաթի սրահում: Ի դեպ, վերոհիշյալ երկու սրահները և՛ս ձևավորվել է Ռուբեն Ղևոնդյանը՝ հայկական և աշխարհի ժողովուրդների հեքիաթների հերոսների կերպարներով:

Գրադարանում գործում են արտադպրոցական մանկապատանեկան խմբակներ և ստուդիաներ (նկարչական, թատերական, օտար լեզուների ուսուցման և այլն), ինչպես նաև՝ «Փաթիլ» տիկնիկային թատրոնը: Գրադարանի ճեմասրահում մշտապես ցուցադրվում են նկարչական ստուդիայի սաների աշխատանքները:

Տարիներ շարունակ գրադարանում կազմակերպվում են տարբերույթ զանգվածային միջոցառումներ՝ հանդիպումներ, կլոր սեղաններ, համագրույցներ, քննարկումներ, վարպետության դասեր, ցերեկույթներ, շնորհանդեսներ, ցուցահանդեսներ, դասախոսությ-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

յուններ, հեքիաթասացություններ և այլ հանդիսություններ: Ավանդույթ է դարձել «Մանկապատանեկան գրքի ցուցահանդես-տոնավաճառը», «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը», «Ազգային գրադարանային շաբաթը», «Գրադարանավարի օրը», «Մանկական գրքի միջազգային օրը», «Երեխաների պաշտպանության միջազգային օրը», «Հեքիաթի դեսպաններ» հեղինակային ծրագիրը, որի շրջանակում Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպաններն իրենց մայրենի լեզվով մանուկների ներկայացնում են ազգային հեքիաթներ: 2017 թվականից կազմակերպում է նաև «Ամառային ճամբար» կրթամշակութային ծրագիրը:



*Գերմանիայի
դեսպանարան
մշակույթի կցորդ
Կոստանդին Սելենդի
(2012)*

Ավանդական միջոցառումներին գրադարանը մշտապես հյուրընկալել է հայ և օտարազգի անվանի մտավորականների, գրողների, արվեստագետների /Ավ. Իսահակյան, Վ. Սարոյան, Ս. Միխայկով, Ստ.Զորյան, Դ. Դեմիրճյան, Հ. Շիրազ, Գ. Գասպարյան, Տ. Լևոնյան, Տ. Սազանդարյան, Օ. Դուրյան, Խ. Գյուլնազարյան, Էդ. Մեծելայտիս, Ա. Այվազյան, Ա. Չիլինգարով, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հ. Բաղրամյան, Հ. Իգիթյան, Հ. Չեքիջյան և այլն/: Վերջիններիս մակագրություններով գրադարանին ընծայաբերված գրքերն առանձնակի հետաքրքրություն և մշակութային արժեք են ներկայացնում:

Համագործակցությունը գրադարանի գործունեության առաջնային ուղղություններից է, որի իրականացման արդյունքում ստեղծվել և գործում են օտարալեզու գրականության անկյունները. «Իրանական ընթերցասարահը»՝ 2006 թվականից, որը համագործակցում է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության ու Իրանի մշակույթի զարգացման մանկական կենտրոնի հետ, և համալրված է պարսկերեն լեզվով մանկական, գեղարվեստական, ուսումնական գրականությամբ, տեղեկատվական և տեսալսողական վավերագրերով և տեխնիկական սարքերով, ուր պարսկերենի իրենց իմացությունն են խորացնում աշակերտները, ուսանողներն ու մասնագետները, 2014 թվականից “China Hanban” կազմակերպության հետ համագործակցությամբ գործում է «Չինական անկյունը», որից օգտվում են չինարենն ուսումնասիրող դպրոցականները, ուսանողները և մասնագետները, «Արաբական անկյունը»՝ 2018 թվականից, որ հիմնադրվել է «ԻԲԲԻ ԱՄԷ»-ի և «Կալիմաթ» հիմնադրամի միջոցներով և կահավորվել ու տեխնիկական սարքավորումներով վերագինվել ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության աջակցությամբ:

Իսնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը համագործակցում է աշխարհի մի շարք պետությունների մանկական գրադարանների, մանկապատանեկան գրականության և ընթերցանության խնդիրներով զբաղվող հայրենական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դեսպանությունների հետ՝ իրականացնելով կրթական, գիտական և մշակութային համատեղ ծրագրեր: Անդամակցում է «Մանկապատանեկան գրքի միջազգային խորհրդին» (IBBY), «Գրադարանների միջազգային ասոցիացիային» (IFLA), «Երաժշտական գրադարանների միջազգային ասոցիացիային» (IAML):

Իր բեղմնավոր գործունեության համար գրադարանը բազմիցս պարգևատրվել է շնորհակալագրերով, պատվոգրերով և մեդալներով:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ*

ՀՏԴ: 027.625(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-88

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0007-2034-8062](https://orcid.org/0009-0007-2034-8062)

Երեխային պետք է սովորեցնել գրադարանից օգտվել վաղ հասակից, քանի որ այս դեպքում հավանականությունն առավել մեծ է, որ նա կշարունակի գրադարանից օգտվել նաև հետագայում: Երեխաների ընթերցանության կազմակերպման գործընթացը գործողությունների փոխկապակցված շղթա է: Հարկավոր է ուշադրություն և հոգաբարոյություն, որպեսզի այն ճիշդ կազմակերպվի:

Սույն ուսումնասիրության մեջ կանդրադառնանք փոփոխվող և զարգացող աշխարհում մանկապարտնեկան ընթերցանության խթանմանը վերաբերող և նպաստող ծրագրերին ու միջոցառումներին, նաև՝ միջազգային համագործակցության կարևորությունը՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի փորձի օրինակով:

A child should be taught to use the library from an early age, because in this case, the it is more likely that he will continue to use the library in the future. The process of organizing children's reading is an interconnected chain of actions. It takes care and attention to get it right.

In this research, we will look at the programs and measures related to and contributing to the promotion of children's reading in the changing and

* Հոդվածը ներկայացվել է 13.11.2023, գրախոսվել է 06.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:

The article was submitted on 13.11.2023, reviewed on 06.12.2023, accepted for publication on 20.12.2023.

developing world, as well as the importance of international cooperation, on the experience of the Khnko Aper National Children's Library.

Բանալի բառեր՝ մանկական գրադարան, միջազգային համագործակցություն, մանկապատանեկան ընթերցանության խթանում, միջազգային ծրագրեր և նախագծեր:

Ինչպես հղել՝ Աճեմյան Ն. (2023), Մանկապատանեկան ընթերցանության խթանման գործում միջազգային համագործակցության դերակատարությունը, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 88–99. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-88](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-88)

How to cite (APA style): Atshemyan N. (2023), The Role of International Cooperation in Promoting Reading among Children and Young Adults, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 5-29. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-88](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-88)

Ներածություն

Կարևորելով ընթերցանության դերը կրթամշակութային համակարգը հզորացնելու գործում՝ անհրաժեշտ է ընթերցանության խթանման նախադրյալներ, հիմքեր ու սովորույթ ձևավորել դեռևս երեխայի վաղ հասակից: Երեխայի ընթերցող դառնալու իրավունքի իրացման համար կարևոր է թե՛ ընտանիքի և թե՛ մանկական գրադարանի դերը, քանի որ գրադարանը ո՛չ միայն սերմանում է ընթերցասիրություն, այլև հանդիսանում է հետաքրքիր և բազմակողմանի գիտելիքի հաղորդման աղբյուր երեխայի և նրա ընտանիքի համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում, տեղեկատվական հոսքերի ծավալների աճով պայմանավորված, թերևս, դժվարացել է ընթերցանության խթանումը մանուկների և պատանիների շրջանում, որը նոր մարտահրավերների առաջ է կանգնեցրել գրադարանավարներին: Գրադարանի ամենակարևոր գործառույթներից մեկը երեխաների ու պատանիների շրջանում նոր մեթոդներով և նորարարական սկզբունքներով ընթերցասիրության

արթնացումն է: Իսկ ինչպե՞ս մշակել այդ մեթոդները, որոնք հնարավորություն կընձեռեն երեխային դարձնելու գրքասեր և ընթերցասեր: Այստեղ կարևոր դերակատարում պետք է ունենա ընթերցանության կազմակերպումը, որը հիմնված լինի ո՛չ միայն հայրենական, այլև միջազգային փորձի ուսումնասիրման վրա:

Մանկապարտանեկան ընթերցանության և ընթերցասիրության խթանման գործում միջազգային համագործակցության դերակատարությունը՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի փորձի օրինակով

Գրադարանային հանրության հետ միջազգային համագործակցային կապերը արդի աշխարհում առավելապես նպաստում են գրադարանների զարգացմանը: Համագործակցության այս ձևաչափը թույլ է տալիս գրադարանավարներին ուսումնասիրել ոլորտի զարգացման միտումները, գնահատել սեփական գործունեությունը, ձեռքբերումներն ու խնդիրները: Գրադարանային աշխատողների համար հնարավորություն է ստեղծվում ընդլայնել իրենց մտահորիզոնը, բարելավել մասնագիտական գիտելիքներն ու մասնակցել զարգացման նոր հայեցակարգերի մշակմանը: Միջազգային փորձի փոխանակումը նաև ապահովում է հասանելիություն համաշխարհային մշակութային ժառանգությանը: Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումն արդի աշխարհում ի հայտ է բերել գրադարանային համագործակցության նոր ձևաչափեր:

Խոսելով միջազգային համագործակցության ամրապնդմանը նպատակաուղղված ջանքերի մասին՝ անհրաժեշտ է առանձին անդրադարձ կատարել միջազգային գիտաժողովներին, գրքի տոնավաճառներին, ինչպես նաև՝ գրադարանային միությունների և ասոցիացիաների հետ համագործակցային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը համագործակցում է ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային պե-

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տական-հասարակական մշակութային կազմակերպությունների հետ՝ իրականացնելով համատեղ ծրագրեր: Իր բազմամյա գործունեության ընթացքում գրադարանը աշխարհի բազմաթիվ երկրներում մասնակցել է գրքի միջազգային տարբեր փառատոնների, տոնավաճառների, գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների, մասնավորապես՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, Իտալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Իսպանիա, Ռուսաստան, Հունաստան և այլն, որոնք կարևոր հարթակ են եղել փորձի փոխանակման, նոր գործընկերների հետ հարաբերությունների հաստատման համար:

Նման ձևաչափ և լայն ընդգրկվածություն ունեցող միջոցառումներին մասնակցությունը գրադարանի համար նոր գաղափարներով և ծրագրերով ոգեշնչվելու առիթ է հանդիսացել: Այդպիսին էր իր տեսակով Հայաստանում միակը՝ «Դարձ առ գիրք» գրքարվեստի միջազգային ամենամյա փառատոնը, որի ընթացքում յուրաքանչյուր տարի կազմակերպվել են գիտագործնական համաժողովներ, սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ, գրքի տոնավաճառուցահանդեսներ, փորձի փոխանակումներ և այլն, որոնց մասնակցել են ոչ միայն գրադարանային ոլորտի հայ մասնագետները, այլև մասնագետներ ու ներկայացուցիչներ ամբողջ աշխարհից:

Գրադարանի նախաձեռնությամբ 2013 թվականից Հայաստանը անդամակցում է «Մանկապատանեկան գրքի միջազգային խորհրդին»¹: Ստեղծվել է «IBBY-Armenia» ազգային խորհուրդը, որի նպատակն է.

- համախմբել մանկապատանեկան գրքուրտի գործիչներին ընդհանուր խնդիրների շուրջ,
- նպաստել ընթերցանության խթանմանը, մանկապատանեկան գրքի հանրահռչակմանը և գրադարանային գործի բարելավմանը,

¹ IBBY, International Board on Books for Young People
<https://www.ibby.org/about/what-is-ibby> (11.11.2023)

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

➤ նպաստել գրադարանային ոլորտի մասնագետների շարունակական մասնագիտական կրթությանը,

➤ նպաստել գրահրատարակչական ոլորտի և գրքարվեստի, մասնավորապես՝ մանկագրության խթանմանը և գրքի նկարագարման մշակույթի զարգացմանը:

Շարունակական համագործակցության արդյունքում գրադարանն առ այսօր իրականացնում է վերոնշյալ նպատակների իրականացմանը միտված ծրագրեր և միջոցառումներ: Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Վերապատրաստման դասընթացներ

Կարևորելով փորձի փոխանակումը գրադարանային ոլորտի միջազգային գործընկերների հետ ընթերցանության կազմակերպման ու զարգացման գործում՝ գրադարանը 2015 թվականից սկսած յուրաքանչյուր տարի, գրողների, գրքի նկարագարողների, թարգմանիչների, գրադարանավարների և գրահրատարակիչների համար կազմակերպում և իրականացնում է վերապատրաստման դասընթացներ՝ ոլորտի օտարերկրյա համապատասխան մասնագետների ներգրավածությամբ:

Վարպետության դասընթացները վարել են՝ գրողների համար՝ Մանֆրեդ Թայզենը (Գերմանիա), նկարագարողների համար՝ Կլասս Վերպլանկը (Բելգիա), թարգմանիչների համար՝ Դանիել Հանը (Անգլիա), գրադարանավարների համար՝ Վիոլեն Կանմաչերը (Ֆրանսիա), Ջոհրե Ղայենին (Իրան), հրատարակիչների համար՝ Ֆլորիան Էնդրյուաը (Գերմանիա):

Դասընթացների հիմնական նպատակն է միջազգային փորձի փոխանակման միջոցով աջակցել ստեղծագործական աշխատանքի խթանմանը միտված մանկապատանեկան առավել հետաքրքիր և որակյալ գրքերի ստեղծմանը, որն իր հերթին ուղղակիորեն կնպաստի մանկապատանեկան ընթերցանության զարգացմանը: Վարպետության դասընթացների արդյունքում գրադարանը 6 գիրք, որոնք

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ներկայացվել են Բոլոնիայի (Իտալիա) և Շարժայի (ԱՄԷ) գրքի միջազգային տոնավաճառներում:

Գրքի ճամբարներ մարզերի երեխաների համար

Գրադարանը, IBBY-ի հետ համագործակցությամբ, 2022 թ. կյանքի կոչեց ևս մի հետաքրքիր ծրագիր՝ «Գրքի ճամբար մարզերի երեխաների համար»: Ծրագրի շրջանակում կազմակերպվեցին ճամբարներ Տավուշի, Լոռու, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի, Սյունիքի մարզերում և Երևանում, որոնց ընթացքում երեխաները մասնակցեցին գրքային ընթերցումների ու քննարկումների, հեքիաթի նկարազարդումների և տիկնիկային բեմականացումների, հանդիպեցին ժամանակակից մանկագիրների հետ, այցելեցին մշակութային հաստատություններ, ընթերցեցին գրքեր և մասնակցեցին ընթերցանության մրցույթին: «Գրքի ճամբար մարզերի երեխաների համար» ծրագրի նպատակն է նպաստել մանկապատանեկան ընթերցանության մշակույթի զարգացմանը Հայաստանի ամբողջ տարածքում և, մասնավորապես, սահմանամերձ բնակավայրերում:

Մանկապատանեկան գրողների և մանկապատանեկան գրքի նկարազարդողների մրցույթ

2019 թ. գրադարանը մանկապատանեկան գրողների և մանկապատանեկան գրքի նկարազարդողների շրջանում IBBY-ի հետ համագործակցությամբ կազմակերպեց ստեղծագործական ներուժի բացահայտմանը և դրսևորմանը նպատակաուղղված մրցույթ՝ նպաստելով մանկագրության և ընթերցանության դերակատարության բարելավմանն ու հանրահռչակմանը, հայտնաբերելով, խրախուսելով և հանրությանը ճանաչելի դարձնելով մանուկների և պատանիների համար ստեղծագործող հայ հեղինակներին:

Մանկապատանեկան ընթերցանության անկյուններ ՀՀ մարզերում

Մանկապատանեկան ընթերցանությունը խթանելու նպատակով՝ 2019 թվականից սկսած իջոցառումներ են կազմակերպվել և

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

իրականացվել Հայաստանի մարզերում. ստեղծվել են նոր ու գունազարդ գրքերով համալրված ընթերցանության անկյուններ, մարզային գրադարանավարների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ, կազմակերպվել մանուկների և պատանիների շրջանում ընթերցանությունն ու ընթերցասիրությունը խթանող միջոցառումներ, հանդիպումներ, գրքի քննարկումներ:

2020 թ. մանկապատանեկան ընթերցանության անկյուններ ստեղծվեցին Տավուշի, Սյունիքի, Լոռու, Արագածոտնի և Կոտայքի մարզերի հինգ գրադարաններում, որոնք համալրվեցին նոր ու գունազարդ գրքերով, ինչպես նաև՝ ընթերցողների համար կազմակերպվեցին գրական ընթերցումներ, քննարկումներ և հանդիպումներ ժամանակակից գրողների հետ: Ծրագրի շրջանակում տեխնիկապես վերազինվել և նոր ու գունազարդ գրքերով համալրվել է Տավուշի մարզի Աչաջուր համայնքի մշակույթի տան փոքրիկ գրադարանը, որը սպասարկում է ո՛չ միայն տեղի երեխաներին ու պատանիներին, այլև մարզի սահմանամերձ բնակավայրերի ընթերցողներին:

Մարզային վերոնշյալ միջոցառումները նպատակ ունեն Հայաստանի մարզերի և գյուղական համայնքների երեխաների և պատանիների շրջանում հետաքրքրություն և սեր առաջացնել գրքի և ընթերցանության հանդեպ՝ գրական ընթերցումների, քննարկումների, ինչպես նաև՝ գրողների հետ հադիպումների և անմիջական շփումների միջոցով:

Օտարալեզու գրականության անկյունները խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում

Գրադարանում գործում է օտարալեզու գրականության բաժին, որն սպասարկում է ավելի քան 50 լեզուներով գրականություն: Համագործակցության արդյունքում գրադարանում ստեղծվել են օտարալեզու գրականության առանձին անկյուններ.

1997-2011 թթ. գրադարանում, Գերմանիայի Գյոթեի անվան ինստիտուտի հետ համագործակցության արդյունքում, գործել է

«Գերմանական ընթերցասրահը»՝ գերմանալեզու հարուստ հավաքածուով:

2006 թվականից գրադարանում, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան աջակցությամբ, գործում է «Իրանական ընթերցասրահը»:

2014 թվականից գրադարանում, «Չայնա Հանբան» /“China Hanban”/ կազմակերպության հետ համագործակցությամբ, գործում է «Չինական անկյունը»:

2019 թվականին գրադարանում IBBY-ի, ինչպես նաև՝ IBBY UAE-ի և արաբական «Կալիմաթ» հիմնադրամի համատեղ ջանքերով և գործընկերությամբ, օտարալեզու գրականության մի քանի անկյունների կողքին բացվեց «Արաբական անկյունը», որով հնարավորություն ստեղծվեց արաբերենով հաղորդակցվող փախստական երեխաներին իրացնել գրադարանից օգտվելու իրենց իրավունքը:

«Մեծ աշխարհի մեր անկյունը» ստեղծագործական նախագիծ

2021 թ. գրադարանը մեկ այլ հետաքրքիր նախագիծ կենսագործեց՝ դարձյալ՝ IBBY-ի հետ համագործակցությամբ՝ «Մեծ աշխարհի մեր անկյունը» /վարպետության դաս՝ ստեղծագործական նախագիծ/, որի նպատակն էր Հայաստանի մարզերում ստեղծված ընթերցանության հինգ անկյունները զարգացնել ու դրանք վերածել նաև ստեղծագործական կենտրոնների, որտեղ կիրականացվեն վարպետության դասեր շնորհալի ստեղծագործող պատանիների համար, որոնք կվերարտադրեն իրենց ստացած գիտելիքը հեքիաթի, ավանդապատումի, պատմվածքի, էսսեի տեսքով: Ծրագրի նպատակն էր պատանիների ստեղծագործական ներուժն ուղղորդել գրական երկերի ստեղծմանը՝ նրանց հետագա ստեղծագործական զարգացման համար իրական նախադրյալներ ստեղծելով՝ ունենալու համար դերակատարություն ժամանակակից մշակութային կյանքում և մանկապատանեկան գրականության մեջ:

IBBY Կոնգրես

IBBY Կոնգրեսին, որ տեղի է ունենում երկու տարին մեկ անգամ և որին մասնակցում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ անդամ 80 երկրների ներկայացուցիչների հետ, մտքեր են փոխանակվում մանկապատանեկան ընթերցանության խթանմանը վերաբերող ծրագրերի, դրանց արդյունքների և առաջիկա անելիքների մասին: Գրադարանային ծրագրեր են իրականացվում միջազգային կազմակերպությունների՝ «Գրադարանային ասոցիացիաների միջազգային դաշնության» (IFLA, International Federation of Library Associations), «Երաժշտական գրադարանների միջազգային դաշնության» (IAML, International Association of Music Libraries), «Միջազգային գրական ասոցիացիայի» (ILA, International Literacy Association) հետ, որոնց հետ համագործակցությամբ իրականացվում են և շարունակվում են իրականացվել մանկապատանեկան ընթերցանությունը խթանող ծրագրեր և վերապատրաստման դասընթացներ:

Գրադարանը մասնակցել է Իսպանիայում, Ֆրանսիայում և Բելգիայում կազմակերպված «Գրադարանների համաշխարհային տեսլականը» /IFLA, “Global Vision”/ խորագրով վերապատրաստման դասընթացներին, որոնց մասնակից հայ գրադարանավարները իրենց ստացած գիտելիքով և փորձով հետագայում փոխանակվել են մարզային և համայնքային գրադարանների իրենց գործընկերների հետ:

Գրադարանը «Աշխարհը նկարազարդ գրքի միջով» /IFLA, “World through picture books”/ էլեկտրոնային գրացուցակի համար ներկայացրել է տասը հայ հեղինակի գիրք՝ նպատակ ունենալով հանրահռչակել հայ գրողներին, հայ գիրքը, մշակույթն ու պատմությունը²²:

²² The World Through Picture Books <https://shorturl.at/abguZ> (11.11.2023)

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանը, համագործակցելով IAML-ի հետ, Հայաստանում պարբերաբար կազմակերպել է գիտագործնական համաժողովներ, սեմինարներ, ինչպես նաև՝ վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է շուրջ 100 գրադարանավար՝ հանրապետության մարզերից և Երևան քաղաքից:

2018 թվականից սկսած՝ գրադարանը մասնակցել է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրին՝ տարբեր միջոցառումներով ընթերցողներին ներկայացնելով եվրոպական ժողովուրդների լեզուն, մշակույթը, պատմությունը, գրականությունն ու մշակութային ոչ նյութական ժառանգությունը: 2023 թ. «Եվրոպական ժառանգության օրերի» շրջանակում գրադարանը մասնակցեց «Եվրոպական ժառանգության պատմություններ» ծրագրին՝ ներկայացնելով «Հեքիաթի դեսպաններ» ծրագիրը: Եվ ներկայացված 120 հայտերի շարքում, գրադարանի հայտը լավագույն քսանի մեջ հայտնվելով, հնարավորություն ստացավ մասնակցելու ծրագրի երկրորդ փուլի դրամաշնորհային մրցույթին: Դրամաշնորհային մրցույթին մասնակից քսան երկրներից միայն տասը (Իտալիա [2 հայտ], Ֆրանսիա, Հունաստան, Ուկրաինա, Գերմանիա, Լիտվա, Անգլիա [2 հայտ]) կարողացան հաղթահարել մրցութային փուլը, որոնց մեջ էր նաև Հայաստանի Հանրապետությունը:

Այս ծրագրի շրջանակում նախատեսվում է ՀՀ մարզերի երեխաների համար կազմակերպել «Եվրոպական ժառանգության ճամբար» և Հայաստանի մարզերից երկուսում ստեղծել եվրոպական գրականության անկյուններ, իրականացնել «Հեքիաթի դեսպաններ» ծրագիրը և կազմակերպել եվրոպական պետությունների ազգային մշակութային ժառանգության պահպանության կարևորության վերաբերյալ վարպետության դասեր, մանկապատանեկան գրքերի ընթերցումներ և քննարկումներ: Երեխաները կմասնակցեն նաև գրքի նկարազարդման վարպետության դասընթացին և կկատարեն «Մշակութային ժառանգությունն իմ աչքերով» թեմայով նկարզարդումներ,

որոնք ծրագրի ավարտին կներկայացվեն Երևանում կայանալիք համանուն ցուցահանդեսին:

Ամփոփում

Ժողովրդավարական հասարակության զարգացման և ժողովրդավարության պահպանման մեջ կարևոր են մանուկներին և պատանիներին մատուցվող գրադարանային ծառայությունները: Սակայն պետք է նշել, որ արդի հասարակության հիմնական խնդիրներից մեկը մանուկների և պատանիների ընթերցանության և ընթերցասիրության զարգացումն է, իսկ մանկական գրադարանների առաքելությունը՝ առկա բոլոր պաշարների օգտագործմամբ, միջազգային փորձի փոխանակմամբ, գրադարանային ոլորտի միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա մասնագետների հետ համագործակցությամբ, ընթերցանության խթանմանը նպաստելն է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք հողվածում, պետք է ընթերցասիրության սովորույթ ձևավորել դեռևս երեխայի վաղ հասակից:

Մանկական գրադարանների աշյունավետ և մասնագիտական կառավարումը պահանջում է ունենալ վերապատրաստված և նվիրյալ գրադարանավարներ, որոնք կնախագծեն, կկազմակերպեն, կիրականացնեն գրադարանային ծրագրեր և ծառայություններ՝ երեխաների արտադպրոցական կրթության ապահովման և բազմակողմանի զարգացման համար, իսկ մասնագիտական շարունակական կրթության մեջ կկարևորվեն միջազգային փորձի փոխանակումն ու համագործակցության հաստատումը և զարգացումը:

Կարող ենք փաստել, որ Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը մանկապատանեկան ընթերցանության զարգացման և փորձի փոխանակման նպատակով պարբերաբար մասնակցել և մասնակցում է մանկապատանեկան գրքի միջազգային տոնավաճառների, համաժողովների, սեմինարների և այլ ծրագրերի՝ միջազգային գործընկերների հետ առավելագույնս համագործակցելով և նախագծելով ծրագրեր, որոնք նպաստում են մանկապատանեկան

նեկան ընթերցանության խթանմանը և ուղղորդված են նորարարությանը և նոր գաղափարների ձևավորմանը, ներդրմանը և արդյունավետ իրագործմանը:

THE ROLE OF INTERNATIONAL COOPERATION IN PROMOTING READING AMONG CHILDREN AND YOUNG ADULTS

NAIRA ATSHEMYAN

Khnko Aper National Children's Library

Keywords: Children's Library, International Cooperation, Promotion of Children's and Youth Reading, International Programs and Projects.

Library services to children and youth are essential in the development and maintenance of democratic society, offering them wide access and diversity of knowledge and self-education. However, it should be noted that one of the main problems of modern society is the development of reading and literacy of children and adolescents, and the mission of children's libraries is to contribute to the promotion of reading among children and adolescents using all available resources: exchange of international experience, cooperation with international organizations of the library sector and foreign specialists. Because it is necessary to form the habit of reading from the early age of the child. Library events are very important, which should be aimed at the promotion of children's book loving and reading, popularization of books and literature. Effective and professional management of children's libraries requires trained and committed librarians who will design, organize, implement library programs and services for the provision of extracurricular education and multifaceted development of children. We can state that Khnko Aper National Children's Library regularly participated and participates in international children's book fairs, conferences, seminars and other programs in order to develop children's and youth reading and exchange experience, cooperating with international partners to the maximum and designing programs that contribute to the promotion of children's and youth reading.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ*

ՀՏԴ: 027(479.25)

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0005-1779-5860](https://orcid.org/0009-0005-1779-5860)

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանն իր 90-ամյա գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր, որոնք նպաստել են գրադարան-ընթերցող կապի ամրապնդմանը, միջազգային նոր հարաբերությունների հաստատմանը և այլն: Սույն հոդվածի նպատակը այդ ծրագրերն ու դրանց արդյունքները ներկայացնելն է:

During its 90 years of activity, the Khnko Aper National Children's Library has implemented many educational and cultural programs that have contributed to strengthening the library-reader chain, establishing new international relations, etc. The purpose of this article is to present these programs and their results.

Բանալի բառեր՝ մանկական գրադարան, մանկապատանեկան ընթերցանության խթանում, միջոցառումներ, միջազգային համագործակցություն:

Ինչպես հղել՝ Ավետիսյան Ի. (2023), Կրթամշակութային ծրագրերը՝ որպես ընթերցանության խթանման միջոց, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 100-111:

How to cite (APA style): Avetisyan I. (2023), Educational Programs as a Tool for Reading Promotion, *Herald of the Armenian Library Association*, 2(2), 100-111.

* Հոդվածը ներկայացվել է 13.11.2023, գրախոսվել է 12.12.2023, ընդունվել է տպագրության 20.12.2023:

The article was submitted on 13.11.2023, reviewed on 12.12.2023, accepted for publication on 20.12.2023.

Ներածություն

2023 թ. Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը նշում է իր հիմնադրման 90-ամյակը: Ինչը տասնամյակ շարունակ գրադարանն իրականացնում է գրադարանային, տեղեկատվական, մատենագիտական, կրթամշակութային գործունեություն: Ժամանակակից գրադարանային առօրյան հնարավոր չէ պատկերացնել առանց կրթամշակութային ծրագրերի և միջոցառումների: Գրադարանում տարբեր տարիքային խմբերի երեխաների համար իրականացվող բազմաթիվ (այդ թվում՝ հեղինակային) բազմաբովանդակ ծրագրերն ու միջոցառումները միտված են մանուկների և պատանիների գիտելիքի ամրապնդմանն ու գեղագիտական ճաշակի զարգացմանը: Տարեցտարի այդ ծրագրերի աճը նպաստում է մանուկ և պատանի ընթերցողների նոր սերնդի ներգրավմանը գրքի հանրահռչակման և ընթերցանության մշակույթի ձևավորմանն ու ընթերցասիրության զարգացման մեջ:

Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ

Միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը», որը կազմակերպվում է ամեն տարի Հայաստանի գրողների միության հետ համատեղ: Շաբաթն առաջին անգամ անցկացվել է 1943 թ., Մոսկվայում: Այդ ժամանակից սկսած ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, նշվում էր այդ կարևոր հանդիսությունը: 1982 թ. Խնկո Ապոր անվան հանրապետական գրադարանը հյուրընկալեց ԽՍՀՄ 15 հանրապետություններից ժամանած մանկագիրներին, հյուրերին, ինչպես նաև՝ գրողների՝ Բուլղարիայից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից: Արդեն ավանդական դարձած «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթն» անցկացվում է մարտ ամսվա վերջերին: 2023թ. լրացավ «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթի» 80-ամյակը: Կազմակերպված միջոցառումներում կարևորվեց երեխաների կյանքում գրքի և

ընթերցանության դերը. «Ընթերցողական համաժողով–հանդիպումը», գրական և երաժշտական բազմաբովանդակ միջոցառումները երեխաներին հնարավորություն ընձեռեցին շփվել և հաղորդակցվել գրողների հետ, տեղեկություն ստանալ նոր գրքերի մասին և ընդլայնել իրենց գիտելիքները: Շաբաթվա միջոցառումները միտված են ընթերցանության խթանմանը, գրող-ընթերցող-գրադարան կապի ամրապնդմանը¹:

Ազգային գրադարանային շաբաթ

«Ազգային գրադարանային շաբաթ» Հայաստանում առաջին անգամ անցկացվել է 2002 թ.¹ «Հայկական գրադարանային ասոցիացիայի» նախաձեռնությամբ: Այն մինչ օրս իր ուրույն տեղն ունի գրադարանային կյանքում: «Ազգային գրադարանային շաբաթը» պատեհ առիթ է կարևորելու «գրադարանային աշխատողին» հանրային կյանքում և արժևորելու «գրադարանի» դերը՝ իբրև հանրային պատասխանատվություն կրող մշակութային, գիտական, տեղեկատվական, ժամանցային կազմակերպություն: Այս համատեքստում մեծ է «Ազգային գրադարանային շաբաթի» նշանակությունը մշակութային կյանքի համաչափ զարգացման գործում, քանի որ գրքի նկատմամբ սերն ու հոգատարությունը, ընթերցասիրությունը մեծ դերակատարություն ունեն հոգևոր և մշակութային դաստիարակության մեջ: «Ազգային գրադարանային շաբաթվա» ընթացքում կազմակերպվող միջոցառումները նպաստում են հանրության մեջ գրադարանների, գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության աճին, գրադարանների դերի կարևորմանը և ընթերցող-գրադարան կապի սերտացմանը: Շաբաթը ընթերցողների համար հնարավորություն է մասնակիցը դառնալու մշակութային բազմազան միջոցառումների. այդ օրերին կազմակերպվում են մանկապատանեկան և դպրոցական գրադարանների արդի խնդիրների վերաբերյալ քննարկումներ,

¹ Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ
<https://shorturl.at/djIzQ> (10.11.2023)

գրադարանային աշխատողների փորձի փոխանակումներ, մանկական գրքի ցուցահանդեսներ, խմբային երաժշտական ունկնդրումներ, տիկնիկային ներկայացումներ, հեքիաթապատումներ, ինտերակտիվ խաղ-մրցույթներ, մշակութային գործիչների հետ հանդիպումներ, այցելություններ մարզային և համայնքային գրադարաններ: «Ազգային գրադարանային շաբաթվան» մշտապես իրենց բազմաբովանդակ միջոցառումներով մասնակցում են Հայաստանի գրեթե բոլոր գրադարանները:

Մանկապարանեկան գրքի երևանյան ցուցահանդես-տոնավաճառ

Գրադարանում արդեն ավանդական է դարձել Մանկապարանեկան գրքի ցուցահանդես-տոնավաճառը, որն իր շուրջն է համախմբում բազմաթիվ գրքասերների, ընթերցողների, գրադարանի բարեկամների: Տոնավաճառին մասնակցում են հայաստանյան մի շարք գրահրատարակչություններ, գրքին և ընթերցանությանը առնչվող կազմակերպություններ, որոնք ներկայացնում են իրենց մանկապատանեկան արտադրանքը: Միջոցառումներն իրականացվում են գրադարանի ճեմասրահում, դահլիճում և սրահներում: Գրքի ցուցահանդես-տոնավաճառը կարևոր հարթակ է, որտեղ երեխաներն ու այցելուները հնարավորություն ունեն ծանոթանալու տարբեր հրատարակչությունների գրքային հավաքածուներին, նոր հեղինակների ստեղծագործություններին, ձեռք բերելու նոր գրքեր և մասնակցելու բազմաբնույթ ու հետաքրքիր միջոցառումների: Գրադարան այցելող տարբեր տարիքային խմբերի մանուկների և պատանիների համար ցուցահանդես-տոնավաճառի ընթացքում կազմակերպվում են գրքի քննարկումներ, շնորհանդեսներ, հանդիպումներ, վիկտորինաներ, համագրույցներ, գրքերի տեսություններ, զբոսարշավներ, կինոդիտումներ և այլն, ինչպես նաև՝ գրքի նվիրատվությունների ավանդական ակցիաներ: Կարևոր այս միջոցառումները մեկ անգամ ևս նշանավորում են գիրն ու գիրքը, գրականությունն ու գրքարվեստը, մա-

նուկներին և պատանիներին տեղեկացնում են մանկապատանեկան գրքի նորոյթներին, խթանում են ընթերցանությունն ու ընթերցասիրությունը, նպաստում մանուկների և պատանիների կրթությանն ու գիտելիքի ձեռքբերմանը:

Գիրք նվիրելու օր

ՀՀ կառավարության որոշմամբ 2008 թվականից յուրաքանչյուր տարի փետրվարի 19-ին՝ հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը, Հայաստանում նշվում է Գիրք նվիրելու օրը: Օրվա խորհուրդը բազմազան է. արժևորվում է գիրքը, կարևորվում է գիրք նվիրելը և գրքի դերը մարդու կյանքում՝ խթանելով գրքի և ընթերցանության տարածումը: Գրադարանում միմյանց գրքեր նվիրում են ո՛չ միայն երեխաները, այլև՝ գրադարանավարները. իրականացվում է «Քո առաջին գիրքը» ակցիան, որի ընթացքում մի շարք բժշկական կենտրոններում գրքեր են նվիրվում նորածինների մայրերին: Օրվա խորհրդին համահունչ՝ նախատեսվում են հեքիաթապատումներ, թատերական և տիկնիկային ներկայացումներ, համագրույցներ, մուլտֆիլմերի դիտումներ, գրական վիկտորիաներ և խաղեր, երաժշտական ունկնդրումներ՝ թումանյանական մոտիվներով:

Մայրենի լեզվի միջազգային օր

Փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օրն է, որը 2000 թ. ընդունել է ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ որպես մայրենի լեզուների իրավունքի ճանաչման և գործածության աջակցության օր: Այն Հայաստանի Հանրապետությունում նշվում է 2005 թվականից: Աշխարհի հնագույն լեզուներից մեկը՝ հայերենը, հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է, նրա մտածողության և հոգու արգասիքն ու արտացոլանքը: Գրադարանում կազմակերպվող ամենատարբեր միջոցառումները՝ համագրույցները, ցուցահանդեսները, գրական վիկտորիաները և խաղերը, ընթերցողական համաժողովները միտված են մայրենի լեզվի և նրա անաղարտության պահպանմանը, գրագետ և գեղեցիկ խոսքի արվեստին և հոետորաբանությանը:

Մանկական գրքի միջազգային օր

Ամեն տարի ապրիլի 2-ին՝ մեծ հեքիաթագիր Հ. Ք. Անդերսենի ծննդյան օրը, աշխարհը նշում է Մանկական գրքի միջազգային օրը: Այն 1967 թ. հիմնադրվել է Մանկական գրքի միջազգային խորհրդի («IBBY») որոշմամբ ու նախաձեռնությամբ: Նպատակ ունի ուշադրություն դարձնելու մանկական գրականության հասանելիությանը և մանկական ընթերցանության տարածմանը: Օրը հագեցած է ոչ միայն Հ. Ք. Անդերսենի, այլև շատ հեքիաթագիրների հեքիաթներով, զրույցներով, թատերական և տիկնիկային ներկայացումներով, վիկտորինաներով, որին մասնակցում են գրադարանի թատերական ստուդիայի սաները, ինչպես նաև՝ գրադարանի ընթերցողները: Ծրագիրը նպաստում է կրտսեր և միջին տարիքի դպրոցականների ծանոթացմանը հայ և աշխարհի ժողովուրդների մանկական գրականությանը, հեքիաթներին ու պատմվածքներին:

Երեխաների պաշտպանության միջազգային օր

Ամեն տարի, սկսած 1950 թվականից, աշխարհում հունիսի 1-ին նշվում է Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Այն կոչված է մարդկանց ուշադրությունը հրավիրելու այն խնդիրներին, որոնց բախվում են մոլորակի երեխաները: Օրը հիշեցնում է մարդկանց, որ երեխաները ամենօրյա ուշադրության, սիրո և պաշտպանության, երջանիկ մանկության պահանջ ունեն: Եվ գրադարանում կազմակերպվող միջոցառումները մեկ հավաքական նպատակ ունեն՝ մանուկների մեջ զարգացնել իրենց իրավունքները պաշտպանելու, առողջ և երջանիկ ապրելու բարոյական ձգտումներ: Այդ օրը գրադարանում թևածում է մանկան ուրախ երգն ու պարը, ինչպես նաև՝ կազմակերպվում են թատերական, տիկնիկային ներկայացումներ, բարձրաձայն ընթերցանություններ, գեղարվեստական խմբերի ելույթներ, իսկ գրադարանամերձ հրապարակում՝ կավճանկարչու-

թյուն, որոնց մասնակցում են նաև առողջական խնդիրներ ունեցող՝ խոցելի և ներառական խմբերում ընդգրկված երեխաները:

Արևմտահայոց գրականության միամսյակ

Արևմտահայերենը 2010 թ. փետրվարից ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի վտանգված լեզուների էլեկտրոնային քարտեզում»՝ ստանալով հաստատապես վտանգված լեզվի կարգավիճակ: Այն վերակենդանացնելու և նրա կենսունակությունը պահպանելու համար ամեն տարի գրադարանում անցկացվում է «Արևմտահայոց գրականության միամսյակ», որի ընթացում երեխաները ծանոթանում են արևմտահայ գրականությանը և գրողների ստեղծագործություններին: Կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, բանաստեղծությունների ընթերցումներ, գրական երեկոներ, ցուցադրվում են արևմտահայերեն լեզվով ֆիլմեր ու մուլտֆիլմեր, գրքերի քննարկումներ: Գրադարանում մեկ ամիս շարունակ թևածում է արևմտահայերենը՝ արևմտահայոց հեքիաթներն ու գրական գոհարները:

Միջոցառումների նպատակն է առավել մեծ ուշադրություն դարձնել արևմտահայ գրականության և լեզվի տարածմանը, հանրահոչակմանը, հաղորդակցությանը, առավել ճանաչելի դարձնել արևմտահայերեն լեզուն ընթերցողների, մանուկների և պատանիների շրջանում:

Եվրոպական ժառանգության օրեր

1954 թ. Փարիզում ընդունված «Եվրոպական մշակութային կոնվենցիան» վավերացրած 50 պետություններում ամեն տարի անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումը: Այս ծրագիրը պաշտոնապես հաստատվել է Եվրոպայի Խորհրդի կողմից 1991 թ., որին 2000 թ. միացել է նաև Հայաստանը: Գրադարանում ամեն տարի իրականացվող միջոցառումների (ցերեկույթներ, հեքիաթապատումներ, տիկնիկային ներկայացումներ, բարձրաձայն ընթերցանություններ, երաժշտական խմբային ունկնդրումներ) նպատակն

է երեխաների մոտ զարգացնել ժողովուրդների միջև փոխըմբռնումը և հարգանքը միմյանց մշակույթի և մշակութային բազմազանության նկատմամբ, հարգանք տածելով միմյանց ընդհանուր հիմնական արժեքների նկատմամբ՝ աջակցել համաեվրոպական մշակութային ժառանգության մեջ ազգային ներդրմանը, նպաստել միմյանց լեզուների, պատմության և քաղաքակրթության ուսումնասիրմանը:

Ֆրանկոֆոնիայի օրեր

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հիմնադրվել է 1970 թ.՝ ֆրանսիական համընդհանուր արժեքների ամրագրման և տարածման նպատակով:

Իսկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամեն տարի մասնակցում է Հայաստանում Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա առթիվ անցկացվող մշակութային միջոցառումներին: Ֆրանկոֆոնիայի օրերը գրադարանում բազմաբովանդակ և հետաքրքիր են: Կազմակերպվող հեքիաթապատումները, գրական և երաժշտական ցերեկոյթները, ֆրանսերեն լեզվով բարձրաձայն ընթերցանությունները, երաժշտական խմբային ունկնդրումները, ցուցահանդեսներն ու տիկնիկային ներկայացումները նպաստում են ֆրանսիական մշակույթի հետ հաղորդակցմանը, աջակցում են Հայաստանի Հանրապետությունում ֆրանսերեն լեզվի և ֆրանսիական մշակույթի տարածմանն ու ամրապնդմանը:

Բալասան

2019 թ. Իսկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, նախաձեռնեց «Բալասան» հեղինակային ծրագիրը: Ծրագրի շրջանակում Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բժշկական կենտրոնում բացվեց «Բալասան» մանկապատանեկան ընթերցանության և մտավոր ժամանցի անկյունը: Ծրագրի նպատակն է նպաստել երեխաների հոգեկան առողջությանը և ապահովել նրանց արդյունավետ զբաղվածությունը ստացիոնար բուժման ընթացքում: Նորաբաց անկյունը համալրվեց մտա-

վոր խաղերով, պատկերազարդ հրատարակություններով: Այցելությունների ընթացքում գրադարանի աշխատողներն իրականացրել են զանազան միջոցառումներ (հեքիաթապատումներ, տիկնիկային բեմադրություններ): Իրականացվել են այցելություններ նաև Հայաստանի «Կարմիր խաչ» ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն և «Հայրենիքի պաշտպան» վերականգնողական կենտրոն («Զինվորի տուն»)՝ Արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորված և այնտեղ բուժվող զինվորներին:

Ծրագրի շրջանակում գրադարանը համագործակցում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցության «Լուսե» կենտրոնի, Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող թիվ 17 հատուկ դպրոցի, Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, ՀՀ արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի, «Էկո արտթերապիա» կենտրոնի, հանրակրթական դպրոցների ներառական խմբերում ընդգրկված երեխաների հետ՝ նրանց համար կազմակերպելով գրադարանային զբոսարշավներ, զրույցներ, հեքիաթապատումներ, բարձրաձայն ընթերցանություններ, ինտերակտիվ խաղեր, տիկնիկային ներկայացումներ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում

Գրադարանում իրականացվում է նաև «Մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանում» ծրագիրը, որի շրջանակում անցկացվում են վարպետության դասեր, թեմատիկ քննարկումներ, մշակութային այցելություններ: Գրադարանի ընթերցողներն այցելել են Գյումրու «Եռանկյունի» դարբնոց, կավագործության արհեստանոց, «Միեր Մկրտչյանի», «Ասլամազյան քույրերի» թանգարաններ և շրջագայել քաղաքում: Կազմակերպվել են գորգագործության, տիկնիկագործության, ազգային պարերի վարպետության դասեր:

Ծրագրի նպատակն է մշակութային ոչ նյութական ժառանգության կարևորման և արժեվորման գիտակցության ձևավորումն ու հանրահռչակումը մանուկների ու պատանիների շրջանում:

Դպրոցական ճամբարներ

Գրադարանը 2017 թվականից գարնանը, ամռանը և աշնանը՝ դպրոցականների արձակուրդի օրերին, կազմակերպում է դպրոցական ճամբարներ՝ նպատակ ունենալով առավել հետաքրքիր դարձնել երեխաների առօրյան ու ժամանցը: Ճամբար հաճախում են 6-ից 13 տարեկան ոչ միայն հայաստանաբնակ, այլև իրենց հանգիստը Հայաստանում անցկացնող տարբեր երկրներից ժամանած երեխաները: Ճամբարի աշխատանքներին անվճար հիմունքներով մասնակցում են նաև խոցելի խմբերի երեխաները: Երեխաների համար կազմակերպվում են բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր, այցելություններ թանգարաններ, թատրոններ և այլ մշակութային կենտրոններ: Ժամանցային բնույթի հետաքրքիր դասընթացները և վարպետության դասերը, ուսուցողական, կրթական և մշակութային պարապմունքները, գրադարանային զբոսարշավները, կինոդիտումները հնարավորություն են տալիս երեխաներին ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ:

Քո մասնագիտությունը

Մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտության ընտրությունը պատանիների կյանքում կարևոր և պատասխանատու քայլ է: Կատարել ընտրություն՝ նշանակում է ընտրել մասնագիտություն, որն առավելագույնս համապատասխանում է քո ընդունակություններին, հետաքրքրություններին ու անձնական նախասիրություններին: Այս դեպքում շատ կարևոր է նաև պատանիների շրջանում մասնագիտությունների և զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության տարածումը, որի համար նախատեսվում են հանդիպումներ տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց հետ: Կազմակերպվել են հիշարժան հանդիպումներ՝ բժիշկ, համաճարակաբան

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Արման Բաղայանի, քանդակագործ Վիգեն Ավետիսի, գյուղատնտես Նվարդ Շահնուրադյանի, մեղվաբույժ Մարիաննա Ավետիսյանի և այլ անձանց՝ գրողների, հոգեբանների, գրահրատարակիչների հետ: Կազմակերպվում են նաև ցուցահանդեսներ, զրույցներ, վիկտորինաներ, որոնց նպատակն է պատանիների մեջ ձևավորել պատասխանատվություն և պարտավորվածության զգացում, ինքնուրույն որոշում ընդունելու և մասնագիտական ընտրություն կատարելու ունակություն: միջոցառումներ, որոնք կաջակցեն նրանց կողմնորոշվել իրենց նախընտրած մասնագիտության մեջ և մասնագիտական ճիշտ ընտրություն կատարել:

Հեքիաթի դեսպաններ

Հեքիաթի սրահում գրադարանի հեքիաթասացներն ամեն օր պատմում են հեքիաթներ փոքրիկ այցելուների համար: Գրադարանի նախաձեռնությամբ 2010 թվականին Հայաստանում առաջին անգամ իրականացվեց հեղինակային ծրագիր, որ կրում էր «Հեքիաթի դեսպաններ» խորագիրը: Հեքիաթները կարդում են ՀՀ-ում հավատարմագրված երկրների դեսպանները՝ իրենց մայրենի լեզվով, ինչպես նաև՝ հայ անվանի մտավորականներ և արվեստագետներ:

Այս ծրագրի նպատակն է ստեղծել միջմշակույթային կապեր, մանուկ և պատանի ընթերցողին ծանոթացնել տարբեր երկրների մանկագիրների և գրողների ստեղծագործություններին, այդ երկրների կենցաղին և մշակույթին, բարելավել ու զարգացնել օտար լեզուների իմացությունը հանդիպումների և քննարկումների միջոցով:

Բարբառագիտություն

Բարբառները հայերեն լեզվի հիմքն են, նրա հարստությունը, մեր պատմության, մեր հիշողության գանձարանը: Այս ծրագրի շրջանակում հայոց լեզվի տարբեր բարբառներով իրականացվում են հեքիաթների պատումներ և բարձրաձայն ընթերցանություն, որով նոր սերնդի համար հասանելի և ըմբռնելի են դառնում հայերեն լեզվի բարբառային առանձնահատկությունները:

Ծրագրի նպատակն է մանուկներին և պատանիներին ծանոթացնել հայերեն լեզվի բարբառներին, նրանց համար բանասիրության և գրականության միջոցով հասանելի դարձնել հայերեն բարբառները և հետաքրքրություն առաջացնել դրանց նկատմամբ:

Ամփոփում

Իսնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանում յուրաքանչյուր տարի իրականացվում է մոտավորապես 200 կրթամշակութային ծրագիր և միջոցառում, որոնք բազմապիսի և բազմաբովանդակ են: Սակայն մեկն է բոլոր ծրագրերի և միջոցառումների նպատակը՝ խթանել ընթերցանությունն ու ընթերցասիրությունը մանուկների և պատանիների շրջանում՝ նպաստելով նրանց բազմակողմանի զարգացմանն ու գիտելիքի ձեռքբերմանը:

EDUCATIONAL PROGRAMS AS A TOOL FOR READING PROMOTION

ISKUHI AVETISYAN

Khanko Aper National Children's Library

Keywords: Children's Library, International Cooperation, Promotion of Children's and Youth Reading, Events.

In the Khanko Aper National Children's Library more than 200 educational and cultural programs and events are implemented every year, which are diverse and multi-faceted. However, the goal of all programs and events is to promote reading among children and teenagers, contributing to their multifaceted development and acquisition of knowledge.

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1963-2023 թթ.)*

ՀՏԴ: 027.625(479.25)(091)

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-112

ԵԼԻԶԱՎԵՏ ԵՐԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0009-3037-0209](https://orcid.org/0009-0009-3037-0209)

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակչական գործունեությունը բխում է այն նպատակից, որ որդեգրել է գրադարանը 90 տարի շարունակ: Այսօր գրադարանն ունի հարուստ տպագիր ժառանգություն, որը խոսում է ամենօրյա կրթնաջան աշխատանքի մասին: Սույն հոդվածի շրջանակում անդրադառնում ենք գրադարանի տպագիր հրատարակությունների թեմատիկ առանձնահատկություններին:

The publishing activities of the Khnko Aper National Children's Library stems from the goal adopted by the library for 90 years. Today, the library has a rich print heritage, which is the result of the daily hard work. This article addresses the thematic features of the library's printed publications.

Բանալի բառեր՝ Խնկո Ապոր անվան մանկական գրադարան, գրադարանի հիմնադրման պատմություն, տպագիր ժառանգություն, գործառույթներ, հրատարակություններ, մատենագիտություն, թվային դարաշրջան:

Ինչպես հղել՝ Երեմյան Ե. (2023), Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1963-2023 թթ.), *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 2(2), 112-136.
[https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-112](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-112)

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2023, գրախոսվել է 08.12.2023, ընդունվել է տպագրության 22.12.2023:

The article was submitted on 01.11.2023, reviewed on 08.12.2023, accepted for publication on 22.12.2023.

How to cite (APA style): Eremyan E. (2023), Publications of the Khnko Aper National Children's Library (1963-2023), *Herald of the Armenian Library Association*, 2(2), 112-136. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.2\(2\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5)

Ներածություն

Գրադարանային համակարգում իրենց առանձնահատուկ տեղն ունեն մանկական գրադարանները, որոնց գործառույթները ինքնատիպ են՝ պայմանավորված ընթերցողական լսարանի առանձնահատկություններով:

«Ը գրադարանային համակարգում առանձնանում է Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը, որի հիմնադրման 90-ամյակը տոնեցին այս տարի: Ավանդույթներ և ինքնատիպ աշխատելաճ ունեցող մշակութային օջախը տասնամյակներ շարունակ, ի թիվս այլևայլ գործառույթների, իրականացրել է հրատարակչական աշխատանք, որի արդյունքը տեսանելի դարձավ հիմնադրման 90-ամյակի առթիվ կազմակերպված ցուցադրության ժամանակ:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանի գիտական-հրատարակչական գործունեությունը:

Համառոտ պատմական ակնարկ

Երևան քաղաքում է գտնվում հայ մանկական գրքի գլխավոր օջախը՝ Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը, որն այս օրերին նշում է իր հիմնադրման 90 ամյակը: Գրադարան, որն իր բազմաբնույթ և բազմաբովանդակ աշխատանքներով բավարարում է ոչ միայն մանուկ ու պատանի ընթերցողների պահանջները, այլև, արդեն շուրջ 60 տարի, ղեկավարում է հանրապետությունում ընթերցանության հետ կապված բազմաթիվ հարցեր ու խնդիրներ:

Գործունեության երկար տարիների ընթացքում գրադարանում կազմվել և հրատարակվել են բազմաթիվ մեթոդա-մատենագիտական նյութեր, որոնք բաշխվել են հանրապետության մանկական ու դպրոցական գրադարաններին, դարձել մասնագիտական նյութերի ներդրման, փորձի փոխանակման աղբյուր, աշխատանքների

կազմակերպման ծրագիր և ուղեցույց: Խնկո Ապոր անվան ազգային գրադարանը բավարարել է ընթերցողների տեղեկատվական պահանջները, նպաստել արտադասարանային ընթերցանության կազմակերպմանը, որի արդյունքում իր գործուն մասնակցությունն է ունեցել հանրապետության մարզերում և քաղաքներում գործող մանկական, մարզային գրադարանների մանկական բաժինների, ինչպես նաև դպրոցական գրադարանների աշխատանքների կազմակերպման գործընթացին: Գրադարանի կողմից հաճախ կազմակերպվող սեմինար պարապմունքները, կոնֆերանսները, այցերը հետևողականորեն նպաստել են գրադարանների հետազոտական, մատենագիտական, մեթոդական աշխատանքների իրականացմանը:

60-ական թվականներին հանրապետությունում ընդարձակվում է գրադարանային ցանցը. բացվում են բազմաթիվ մանկական և դպրոցական գրադարաններ, որոնք իրենց հետ բերում են աշխատանքները համակարգելու խնդիրներ: Եվ ահա այդ գրադարաններին մեթոդական-մատենագիտական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտություն է առաջացանում ունենալ հանրապետական մի գրադարան, որը պիտի ղեկավարեր այդ աշխատանքները: Այս տարիներին գրադարանը մեծ հեղինակություն է ձեռք բերում:

Իր բազմաբնույթ աշխատանքների շնորհիվ 1962 թ. ՀԽՍՀ նախարարների խորհրդի դեկտեմբերի 8-ի թ. 988 որոշմամբ գրադարանը ստանում է հանրապետական կարգ, ըստ կանոնադրության՝ համարվել է ազգային գրապահոց և մեթոդական աշխատանքների կենտրոն երեխաներին սպասարկող գրադարանների համար՝ իր վրա վերցնելով հանրապետության դպրոցական և մանկական գրադարանների մեթոդական-մատենագիտական ղեկավարման աշխատանքները:

Գրադարանի հրապարակությունները

1963 թվականից սկսած Մեթոդ-մատենագիտական միացյալ բաժինը իրականացնում է հրատարակչական աշխատանքներ. կազ-

մում և հրատարակում է բազմաբովանդակ մասնագիտական գրականություն՝ մեթոդական ձեռնարկներ, տեղեկատու-մատենագիտական ցանկեր, մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, օրացույցներ՝ նվիրված մանկապատանեկան պարբերական մամուլին, գրողներին, արվեստագետներին, մանկավարժներին:

«Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց»-ի առաջին համարը գրադարանավարների սեղանին դրվեց 1963 թ.: Այն մեքենագիր էր՝ բաղկացած 80 օրինակից: Սկզբնական շրջանում նյութերը մեքենագիր էին՝ 50-60 օրինակ տպաքանակով: 1966 թ. հրատարակվել է թիթեղատիպ՝ 400-500 օրինակով, իսկ 1967 թվականից՝ նյութերը հրատարակվել են տպարանում՝ 1000-1500 օրինակ տպաքանակով:

Գրադարանի մատենագիտական բաժինը 60 տարի շարունակ, առ այսօր, կազմում և հրատարակում է «Հիշարժան տարեթվեր» մեթոդ-մատենագիտական հանձնարարականը (օրացույցը), որի նպատակն է օգնել գրադարաններին և այլ մանկական կազմակերպություններին՝ համակարգելու իրենց աշխատանքները:

1970-ական թվականներին հանրապետությունում մշակույթի, գրահրատարակչական գործի զարգացմանը զուգընթաց՝ առավել ակտիվացան գրադարանի մեթոդական-մատենագիտական աշխատանքները:

1974 թ. Մեթոդ-մատենագիտական բաժինը տարանջատվեց երկու առանձին բաժիններ:

Հետագա տարիներին գրադարանում իրականցվող մեթոդական, մատենագիտական, գիտահետազոտական, դաստիարակության և զանգվածային միջոցառումների աշխատանքների, սոցիոլոգիական, վիճակագրական վերլուծությունների, գրքային ֆոնդերի ուսումնասիրությունների հիման վրա գիտական հիմքերի վրա դրվեցին երեխաների գրադարանային սպասարկումը, դաստիարակչական ու մեթոդական աշխատանքները: Մշակվեցին և կատարելագործվեցին գիրքը երեխային հասցնելու բազմաթիվ ձևեր և մեթոդ-

ներ: Իր իրականացրած աշխատանքների համար 1982 թ. գրադարանին շնորհվեց գիտական առաջին կարգ:

ՀՀ անկախությունից հետո՝ 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին, ոչ միայն չդադարեց «Հիշարժան տարեթվեր» օրացույցի կազմումը, այլև համակարգչի և պատճենահանման միջոցով կազմվեցին և հրատարակվեցին ժամանակի պահանջը բավարարող բազմաբնույթ հանձնարարական ցանկեր և այլ նյութեր:

1998-1999 թթ., արդեն տպարանում հրատարակվեցին գրադարանի կողմից կազմված գունազարդ «Ճոճանակ» մանկական ամսագրի երեք համարները: Հետագա տարիներին՝ 2002 թվականից սկսած, գրադարանի կողմից կազմված նյութերը հրատարակվեցին տպարանում:

Գրադարանի կողմից 1986 և 1990 թթ. հրատարակված գունազարդ «Գարնան շողեր»-ը 2002 թ. հրատարակվեց երրորդ անգամ, ուր, ինչպես նախորդ հրատարակություններում, ամփոփվեցին գրադարանի գրական և նկարչական խմբակների սաների բանաստեղծությունները, պատմվածքներն ու նկարները:

Գրադարանի նկարչական խմբակի սաների նկարազարդումներով հրատարակվեցին գունազարդ թերթվող ալբոմ-օրացույցներ՝ «2003 օրացույց» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) և «2008 օրացույց» (հայերեն, անգլերեն)՝ նվիրված գրադարանի հիմնադրման 70 և 75-ամյակներին:

2003 թ. ՀՀ կառավարության թ. 886 որոշմամբ գրադարանը վերակազմավորվեց՝ որպես Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան:

2006 թ. հրատարակվեց «Անկախության 15-ամյա ուղին», որը հանրապետության տարբեր մարզերի պատանի ընթերցողների շարադրությունների ժողովածու էր՝ նվիրված Հայաստանի անկախությանը. գրքի ձևավորումը իրականացրել էին Խնկո Ապոր ազգային մանկական գրադարանի նկարչական խմբակի սաները: Ավելի ուշ՝ 2009 թ., գրադարանի աջակցությամբ հրատարակվեց հերոսա-

մարտի 90-ամյակին նվիրված Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոնի երեխաների նկարչական ստեղծագործությունների «Սարդարապատի դողանջները» խորագրով գիրք-ալբոմը, ուր ներառվեցին հայ ժողովրդի հերոսական պայքարը ներկայացնող 16 պաննոներ:

Հայկական գրատպության 500-ամյակին ընդառաջ՝ 2010 թ. ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ և Հայկական գրատպության 500-ամյակի հոբելյանական հանձնաժողովի հովանու ներքո, ինչպես նաև «Արտերիջ» գրախանութի, «Հայ գրքի կենտրոն» ՀԿ-ի, «Անտարես հոլդինգը»-ի և Հրատարակիչների ազգային ասոցիացիայի հետ գործակցությամբ, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը կազմակերպեց «Դարձ առ գիրք» խորագրով գրքարվեստի փառատոն՝ միտված գրքի արժևորմանն ու ընթերցանության խթանմանը: Փառատոնը միջմշակութային երկխոսության, փորձի փոխանակման և համագործակցության միջոցով նպաստեց Հայաստանում ժամանակակից գրականության, թարգմանական գործի, գրքի ձևավորման մշակույթի, գրատպության զարգացմանը: Այն նպատակ ուներ հանրությանը վերադարձնել դեպի գիրքն ու ընթերցանությունը: Փառատոնին մասնակցեցին տարբեր երկրների հրատարակիչներ, գրողներ, արվեստագետներ: Ծրագիրը ներառում էր բազմաբնույթ միջոցառումներ:

Գրքի միջազգային երեք հիմնական մասնագիտական ասոցիացիաների ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախընտրական հանձնախմբի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում անցկացված նիստի ժամանակ Երևանը հռչակվեց 2012 թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այսպիսով Երևանը դարձավ Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակված 12-րդ քաղաքը: Ընդհանուր միջոցառումների շրջանակում 2012 թ. գրադարանի կողմից կազմվեցին ու հրատարակվեցին մի շարք արժեքավոր գրքեր: Նույն թվականին ՀՀ մշակույթի նախարարության և «Զանգակ» հրատարակչության հետ համատեղ իրականացվեց «Ես գիրք եմ ստեղծում» մանկական գրա-

կան-սուսուցողական միջոցառումը, որի նպատակը գրքի ստեղծման աշխատանքներին մասնակից դարձնելու միջոցով երեխաների ու պատանիների մոտ գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն և սեր ձևավորելն էր: Ծրագրի առաջին փուլում անցկացվեց «Գիրքը, որը փոխեց իմ կյանքը» խորագրով շարադրությունների մրցույթը: Ընթերցումների արդյունքում ընտրված 30 լավագույն աշխատանքներն ամփոփվեցին «Իմ ստեղծած գիրքը» ժողովածուում: Ծրագրի երկրորդ փուլում գիրքը պատկերազարդելու և պատանիների մեջ ընթերցանության նկատմամբ նոր խթաններ առաջացնելու նպատակով հայտարարվեց «Ես գիրք եմ ստեղծում» գրքի ձևավորման մրցույթը, որի արդյունքում ներկայացվեց 200 աշխատանք: Նկարազարդումների և շարադրությունների հեղինակները «Զանգակ» հրատարակչությունում մասնակցեցին գրքի ձևավորման և հրատարակման գործընթացին, ականատես եղան գրքի արարմանը:

Վերոնշյալ աշխատանքները հիմք դարձան՝ 2013 թվականից IBBY-ին՝ Մանկապատանեկան գրքի կոմիտեին անդամակցելու և լիիրավ գործընկեր դառնալու համար: Ստեղծվեց IBBY Հայաստան կոմիտեն, որի հիմնադիրներն են Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ու «Հրանտ Մաթևոսյան» հիմնադրամը: IBBY-ի անդամակցությունը հեռանկարային հնարավորություն ստեղծեց Հայաստանում IBBY-ի նախագծերի (մանկապատանեկան գրականության զարգացում և ընթերցանության խթանում) իրականացման համար, ինչպես նաև ապահովեց Հայաստանի մասնակցությունը IBBY-ի և նրա ավելի քան 80 անդամ երկրների ծրագրերին ու նախագծերին: Միջազգային այս կառույցին Հայաստանի մասնակցությունը նպաստավոր հիմք ստեղծեց՝ հանրապետությունում մանկական գրականությունը և մանկական գրքի ձևավորման մշակույթը խթանելու ու զարգացնելու համար: 2015 թ. IBBY Հայաստան կոմիտեն իրականացրեց «Պատանին և շրջակա միջավայրը» խորագրով ստեղծագործական մրցույթ-նախագիծը, որի շրջանակում գերմանացի գրող Մանֆրեդ Թայգենը եռօրյա վարպետության դաս անցկաց-

րեց հայ երիտասարդ գրողների համար: Նա հայ պատանիների համար գրեց «Ապակյա Արամը» պատմվածքը, որը թարգմանաբար հրատարակվեց հայերեն: Նույն թվականին նախագծին մասնակից հայ երիտասարդ գրողների «7 գույն» պատմվածքների ժողովածուն և Ս. Թայգենի «Ապակյա Արամը» գրքերը հրատարակվեցին «IBBY Յամանդա» հիմնադրամի «Ընթերցող դառնալու երեխայի իրավունքը» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: 2017 թ. Իտալիայի Բոլոնիա քաղաքում անցկացված մանկապատանեկան գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառում, որին մասնակցում էր ՀՀ մշակույթի նախարարության գլխավորած պատվիրակությունը («Ձանգակ-97», «Ակտուալ արվեստ» հրատարակչությունները, «Բուկինիստ» գրախանութը, «GSM» ստուդիան, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը), կայացավ «IBBY Հայաստան» ազգային կոմիտեի հրատարակած «7 գույն» պատմվածքների ժողովածուի անգլերեն տարբերակի (2016 թ.) շնորհանդեսը: Միջոցառման ընթացքում ներկայացվեց գրքի ստեղծման պատմությունը: Մանկապատանեկան գրքի միջազգային կոմիտեի (IBBY) և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի համագործակցության արդյունքում՝ իրականացվեց ևս մի հրաշալի և ուսանելի ծրագիր՝ գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ, որը վարում էր Լիոնի քաղաքային գրադարանի մանկական բաժնի վարիչ Վիոլին Կաննաչերը: Ծրագրի ավարտից հետո գրադարանավարների համար՝ որպես ուղեցույց, ամփոփվեց և հրատարակվեց «Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը» մեթոդական ձեռնարկը:

2018 թ. մարտի 7-ին գրադարանի հրավերով «Հեքիաթի դեպաններ» հեղինակային նախագծի հյուրն էր ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը (այժմ՝ ՀՀ վարչապետ), ով գրադարանի փոքրիկ ընթերցողների համար կարդաց իր հեղինակած «Չար տնակի հեքիաթը» ստեղծագործությունը, որը գրվել էր հատուկ գրադարանի ընթերցողների համար և ընթերցվում էր առաջին անգամ: 2018 թ.

գիրքը հրատարակվեց գրադարանի և «IBBY Հայաստան» նախագծի շրջանակում՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի սաների ձևավորմամբ:

2019 թ. գրադարանը և IBBY Հայաստանը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, «Արևիկ» հրատարակչության և «Արտ-բրիջ» գրախանութի գործակցությամբ, անցկացրեցին Մանկագիրների և նկարազարդողների մրցույթ, որի նպատակն էր խթանել մանկագրության զարգացումը Հայաստանում: Մանկապատանեկան արձակ անվանակարգում երկրորդ մրցանակին արժանացած Հովիկ Մխիթարյանի և Էդգար Թաթիկյանի ստեղծագործությունները հրատարակվեցին մեկ գրքով:

2019 թ. Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանը առանձին տաղավարով մասնակցեց ԱՄԷ-ի Շարժայի միջազգային գրքի ամենամյա տոնավաճառին: Տոնավաճառի շրջանակում իրականացվեց «IBBY Armenia» ՀԿ-ի հետ համագործակցությամբ հրատարակված գրքերի շնորհանդեսը:

Ամփոփում

Գրադարանը շարունակում է իր աշխատանքները նույն ոգով. կազմում և հրատարակում է «Հիշարժան տարեթվեր», «Հայ մանկական գրականության մատենագիտություն» պրակները, կենսամատենագիտություններ, հանձնարարական ցանկեր, մեթոդական նյութեր, ակտիվորեն համագործակցում է Հայաստանում IBBY-ի և այլ միջազգային նախագծերին: Գրադարանն իր հրատարակությունները առկա և առցանց տարբերակներով տրամադրում է ՀՀ մարզերի գրադարաններին՝ նպաստելով մանկապատանեկան գրականության զարգացման և ընթերցանության կազմակերպման աշխատանքներին:

**PUBLICATIONS OF
THE KHNKO APER NATIONAL CHILDREN'S LIBRARY**

ELIZAVET YEREMYAN

Khnko Aper National Children's Library

Keywords: Khnko Aper National Children's Library, History of the Foundation of the Library, Printed Heritage, Operations, Publications, Bibliography, Digital Age.

The library continues its work in the same spirit: compiles and publishes "Memorable Dates", "Bibliography of Armenian Children's Literature" books, bio-bibliographies, instruction lists, methodological materials, actively cooperates with IBBY and other international projects in Armenia. The library provides its publications in existing and online versions to the libraries of RA regions, contributing to the development of children's literature and the organization of reading.

ՀԱՎԵԼՎԱԾ

***Ցանկ խնկո Ապեր անվան ազգային
մանկական գրադարանի տպագրած գրքերի***

1965

1. Մելյան Բալաբեկ: Երբ սիրում են գործը (Ստեփանավանի շրջանային մանկական գրադարանի աշխատանքային փորձը):

2. Քաղաքային, շրջանային մանկական գրադարանների աշխատողների սեմինար պարապմունքների թեմատիկան:

1966

3. Աշխատանքը մանուկների հետ գյուղական գրադարաններում: Գործնական ձեռնարկ: Գլուխ 2. Մանուկների ընթերցանության ղեկավարումը /Կազմ.՝ Տ. Լ. Սաղոֆևա; Փոխադրեց՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբ.՝ Հ. Հ. Սիլվանյան:

4. Մանուկ ընթերցողներին՝ ՍՄԿԿ 23-րդ համագումարի մասին: Մեթոդական օգնություն մանուկներին սպասարկող գրադարաններին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Գ. Հակոբյան:

5. Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց (յուրաքանչյուր տարի առ այսօր):

1967

6. Ինչ կարդալ Վ.Ի. Լենինի մասին: 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխչյան, Ժ. Ստեփանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

7. Ինչ կարդալ քաղաքացիական կոիվների մասին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխչյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

8. Խնկո-Ապերը մանուկներին /Կազմ.՝ Բ. Գ. Մեյլան:

9. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Ինչ կարդալ (ՍՍՀՄ ժողովուրդների մանկական գրականությունից: 2-8-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

10. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Ինչ կարդալ (8-10-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

11. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Հայաստանը նոր հնգամյակում:

12. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Պատանի քննիկոսին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար):

13. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Քեզ համար պատանի ֆիզիկոս: Հանձնարարական գրականության ցանկ:

14. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին և Վ. Ի. Լենինի 100-ամյակին: Հանձնարարական գրականության ցանկ:

15. Հովհաննես Թումանյանը մանուկներին /Կազմ.՝ Է. Երիցյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

16. Ճանաչիր քո հայրենիքը և արտադրության առաջավորներին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխչյան:

17. Շրջանային, քաղաքային մանկական գրադարանների տարեկան պլանի սխեման /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

18. Վ. Ի. Լենինի անվան պիոներական կազմակերպության 45-ամյակը: Մեթոդական նամակ:

1968

19. Գիտա-հանրամատչելի գրականության պրոպագանդան մանկական գրադարանում: (Մեթոդական նամակ) / Կազմ.՝ Ա. Ամիրյան:

20. Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Բանաստեղծությունների հանձնարարական ցանկ /Կազմ.՝ Է. Երիցյան:

21. Ընթերցանության ղեկավարման մասին: (Մեթոդա-հրահանգական նամակ գրադարանավարի համար) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

22. Ինչ կարդալ կոմերիտիության մասին: Հանձնարարարական գրականության ծանոթագրված ցանկ 6-10-րդ դասարանների համար ՀամԼԿԵՄ 50-ամյակի առթիվ:

23. Խաժակ Գյուլնազարյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

24. Խնկո-Ապր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1968 թթ.) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Ս. Ամիրյան:

25. Հայրապետ Հայրապետյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական և կրտսեր տարիքի սովորողների համար /Կազմ.՝ Ա. Նիկոլյան:

26. Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ: Ինչ կարդալ գիտա-ֆանտաստիկ և արկածային գրականությունից /Կազմ.՝ Լ. Վ. Գևորգյան:

27. Հուշագրություններ: Հանձնարարական գրականության ցանկ 7-10-րդ դասարաններում սովորողների համար:

28. Ղազարոս Աղայանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Է. Երիցյան:

29. Ճանապարհորդը ավարտեց իր երթուղին: (Մեծ հոկտեմբերի 50-ամյակին նվիրված այբոմ - ճանապարհորդի երթուղին դպրոցական գրադարաններում) /Կազմ.՝ Բ. Մելյան:

30. Մանկական գրադարանի կապը ծնողների և դպրոցի հետ: Մեթոդա-հրահանգչական նամակ:

31. Մանկական գրադարանների աշխատանքի փորձից /Խմբ.՝ Ա. Ամիրյան:

32. Մելյան Բալբբեկ: Գյուղական գրադարանը և մանուկ ընթերցողը: (Գրադարանավարների աշխատանքի փորձից):

33. Մկրտիչ Կորյուն: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Է. Երիցյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

34. Պատվական Խաչատրյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան; Խմբ.՝ Վ. Վարդանյան:

35. Պարբերական մամուլի պրոպագանդան մանկական գրադարանում /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

36. Ռուբեն Ղարիբյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

37. Սողոմոն Գրիգորի Մկրտչյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

38. Սուրեն Մուրադյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

39. Վազգեն Գրիգորի Տայյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

40. Վախտանգ Անանյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Է. Երիցյան:

41. Վիկտոր Վարդանի Վարդանյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան; Խմբ.՝ Ս. Մկրտչյան:

1969

42. Աթաբեկ Խնկոյան (Խնկո-Ապեր): Կենսագրություն և մատենագիտություն /Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

43. Գուրգեն Բորյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ս. Լալախանյան:

44. Երկրագիտական աշխատանքի կազմակերպումը մանկական գրադարանում (Մեթոդա-հրահանգչական նամակ) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

45. Էդուարդ Ավագյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի դպրոցականների համար:

46. Թումանյանական օրերը մանկական գրադարանում: (Օգնություն մանուկներին սպասարկող գրադարանավարներին) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

47. Ինչ կարդալ մանուկներին: Գրականության անտագրված հանձնարարական ցանկ նախադպրոցական հասակի և I-IV դասարանների երեխաների համար: Պրակ 2. 1950-1967 /Կազմ.՝ Բ. Գ. Ջաքարյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

48. Ինչպես անցկացնել լեինյան ընթերցումները մանկական գրադարաններում: (Ծննդյան 100-ամյակի առթիվ):

49. Խնկո-Ապրր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1968 թթ.) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

50. Հայկական ՍՍՀ մանկական գրադարանների 1968 թ. հաշվետվությունների տեսություն:

51. Հենրիկ Սևան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ: Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս. Մ. Խարազյան:

52. Մատենագիտությունը ծառայում է մանուկ ընթերցողներին: (Լեւինականի քաղաքային մանկական գրադարանների աշխատանքի փորձից) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

53. Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ միջին և բարձր տարիքի սովորողների համար (Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ):

54. Վիկտոր Վարդանի Վարդանյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ (Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

1970

55. Արշավիր Դարբնի: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Յ. Սիմոնյան; Խմբ. Ա. Հակոբյան:

56. Բանաստեղծությունների ցանկ նվիրված Սովետական Հայաստանին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 4-8-րդ դասարանների համար: (50-ամյակի առթիվ) /Կազմ.՝ Մ. Մուրադյան:

57. Եղբայրական հանրապետությունների գրողները մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան:

58. Խաչիկ Հրաչյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Բ. Գ. Մելյան:

59. Խնկոյանական օրերը մանկական գրադարաններում /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

60. Հանձնարարական գրականության թեմատիկ ցանկ 2-6-րդ դասարաններում սովորողների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան:

61. Հովհաննես Ղուկասյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

62. Հովհաննես Շիրազ: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Շ. Ա. Արմենյան:

63. Մաթևոս Դարբինյան (Կենսամատենագիտություն) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս.Բ. Աղաբաբյան:

64. Մանուկ ընթերցողների ուսումնասիրության և նրանց ընթերցանության ղեկավարումը: (Մեթոդական ձեռնարկ գրադարանավարների համար) /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբագիր՝ Հ. Սիլվանյան:

65. Սիլվա Կապուտիկյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

66. Սովետական Հայաստան - երկիր հարազատ: (Հանձնարարական գրականության ցանկ 7-8-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

67. Ստեփան Զորյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հորոս-Ապեր:

68. Վ. Ի. Լենինի մասին գրականության պրոպագանդան կրտսեր տարիքի (1-4 դաս.) արճնեմենտում /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան:

1971

69. Աթաբեկ Իսկոյան: Ծննդյան հարյուրամյակի առթիվ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու: (Օգնություն մանկական գրադարանի աշխատողներին) /Խմբ.՝ Վ. Ա. Իսկոյան:

70. Արազյան Թերեզա: Արամ Սաթունց: Հանձնարարական աշխատանք ընթերցողների գեղագիտական դաստիարակության ղեկավարողներին:

71. Գրողները մանուկներին: (Գրականության հանձնարարական ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար /Խմբ.՝ Հ. Դանիելյան:

72. Լուսիկ Բառնակյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

73. Հռոս-Ապեր: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան; Խմբ.՝ Բ. Գ. Մելյան:

74. Մնացական Թարյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Ս. Մաթևոսյան:

75. Նանսեն Միքայելյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

76. Սարմեն: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր, միջին և բարձր տարիքի դպրոցականների համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

77. ՍՄԿԿ 24-րդ համագումարի նյութերի պրոպագանդումը մանկական և դպրոցական գրադարաններում (Մեթոդական նամակ մանուկների ընթերցանությունը ղեկավարողներին):

1972

78. Անահիտ Սեկոյան: Հանձնարարված գրականության ծանոթագրության ցանկ 7-9-րդ դասարանների ընթերցողների համար /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

79. Արազյան Թ. Մ. Սոֆյա Սամվելյան: Հանձնարարական աշխատանք ընթերցողների գեղագիտության դաստիարակությունը ղեկավարողներին) /Խմբ.՝ Յ. Լ. Սիմոնյան:

80. Գեղագիտական աշխատանքը մանկական գրադարանում: (Իսկոյան-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի աշխատանքի փորձից) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Է. Ս. Ավագյան:

81. Գրողները մանուկներին: (Գրական հանձնարարական ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանի աշակերտների համար) /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան; Խմբ.՝ Ե. Հ. Գրիգորյան:

82. Հայ մանկական գրականության մատենագիտություն.

Պրակ 1. 1920-1945 թթ.- Երևան, 1972: Վերահրատ.՝ Երևան, 1988:

Պրակ 2. Սովետական շրջանի հրատարակություններ (1946-1972) /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան, Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան.- Երևան, 1974:

Պրակ 3. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական հրատարակություններ /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան.- Երևան, 1975:

Պրակ 4. Սովետական շրջանի հրատարակություններ (1973-1982 թթ.) /Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.- Երևան, 1984:

Պրակ 5. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական շրջանի հրատարակություններ (1973-1982 թթ.) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.- Երևան, 1987:

Պրակ 6. 1983-1987 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2007:

Պրակ 7. 1988-1992 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2013:

Պրակ 8. 1993-1997 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2015:

Պրակ 9. 1998-2002 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2018:

83. Հեքիաթների աշխարհում: Գրականության հանձնարարականների ցանկ 1-3-րդ դասարանների ընթերցողների համար /Կազմ.՝ Ս. Զ. Ավետիսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

84. Ղազարոս Աղայան (1840-1911): Մատենագիտություն /Կազմ.՝ Փ. Հ. Խանզադյան, Գ. Ա. Աղյան; Խմբ. և առաջաբ.՝ Ա. Պ. Հակոբջանյան:

85. Ճանապարհորդություն գեղեցիկի աշխարհում: Հանձնարարական գրականության ցանկ 7-8-րդ դասարանների աշակերտների համար: Պրակ 1-4 /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.

86. Մանկական գրադարան: Գործնական մեթոդական ձեռնարկ մանուկների ընթերցանությունը ղեկավարների համար /Կազմող՝ Ն. Բ. Մեղվեղև և ուրիշն.: Ռուս. թարգմ.՝ Հր. Կոստիկյան; Խմբ.՝ Հ. Հ. Դանիելյան:

87. Մանկական գրադարանը ՍՍՀՄ-ի 50-ամյակին /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1973

88. Արեգ Լուսինյանը մանուկներին: Օգնություն գրադարաններում՝ երեխաների հետ տարվող գեղագիտական աշխատանքը ղեկավարողներին /Կազմ.՝ Թ. Մ. Արագյան:

89. Գեղունի Չթյանը մանուկներին: Օգնություն գրադարաններում երեխաների հետ տարվող գեղագիտական աշխատանքը ղեկավարողներին /Խմբ.՝ Բ. Գ. Գրիգորյան:

90. Գրողները մանուկներին: Գրականության հանձնարարված ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան:

91. Խնկո-Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1973 թթ.):

92. Մանկական գրադարանների աշխատանքի հիմնական ցուցանիշները 1972 թ. /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

93. Մկրտիչ Կորյուն /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

1974

94. Հայրապետ Հայրապետյան (1874-1962): Մատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լավախանյան, Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան:

95. Քո դասագրքից այն կողմ: Ֆիզիկայի, քիմիայի և մաթեմատիկայի հանձնարարված գրականության ծանոթագրության ցանկ 6-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1975

96. Անուշավան Գասպարյանը մանուկներին /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

97. Դանիելյան Հայկուշ: Համագումարի ուղիով: Մանուկներին սպասարկող գրադարանների աշխատանքի փորձից /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

98. Ընթերցողի ուսումնասիրումը և դաստիարակությունը մանկական գրադարանում: Մեթոդական ցուցումներ /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

99. Հայրենագիտական աշխատանքը Լենինականի մանկական գրադարաններում: Մեթոդական հանձնարարականներ երեխաների ընթերցանության ղեկավարներին /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

100. Միշտ պատրաստ: Մեթոդա-հրահանգչական նամակ մանուկների ընթերցանությունը ղեկավարողների համար /Կազմ.՝ Ա. Գ. Թադևոսյան:

101. Վախթանգ Անանյանը և մանկական գրադարանը: Մեթոդական օգնություն մանուկների ընթերցանությունը ղեկավարողներին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1976

102. Ապագան լուսավոր է և գեղեցիկ /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

103. Եղիր առողջ և առույգ: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 5-8 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

104. Հռիփսիմե Պողոսյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Խ. Մ. Գյուլնազարյան:

105. Ճանաչիր բուսական և կենդանական աշխարհը: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 4-8 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

106. Նոր գրքեր: Հանձնարարված գրականության թեմատիկ ցանկ 4-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1977

107. Արաքս: Մատենագիտություն /Կազմ.՝ Ե. Կ. Երեմյան; Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

108. Գրադարանային դասակարգման աղյուսակներ մանկական գրադարանների համար /Թարգմ.՝ Հ. Հ. Սիլվանյան:

1978

109. Խաժակ Գյուլնազարյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Լ. Կարապետյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

110. «Պիոներ» ամսագրի մատենագիտություն /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան, Ռ. Հ. Մուշեղյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան, Բ. Գ. Զաքարյան:

Պրակ 1. 1923-1955.- 1978:

Պրակ 2. 1956-1965.- 1984.:

Պրակ 3. 1966-1980.- 1988:

111. Յուցադրական աշխատանքը մանկական գրադարաններում (Մեթոդական հանձնարարականներ) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1979

112. Ամեն լավագույնը երեխաներին: Մեթոդական հանձնարարական՝ նվիրված մանկան միջազգային տարվան /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

113. Գրադարանային մատենագիտական դասակարգում: Աղյուսակներ մանկական գրադարանների համար /Թարգմ. և փոխադր.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան:

114. Կարգային գրացուցակների ձևավորումը մանկական գրադարանների ԳՄԴ աղյուսակների համաձայն (Մեթոդական-հրահանգչական նամակ) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

115. Հակոբ Աղաբաբ: Մատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Գ. Հ. Սրվանձտյան:

116. Մանկական գրադարանների ֆոնդերի և գրացուցակների փոխադրումը ԳՄԴ աղյուսակների: Մեթոդա-հրահանգչական նամակ /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան:

1980

117. Աշոտ Շայրոն: Հանձնարված գրականության ծանոթագրված ցանկ 5-8-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Ա. Աբովյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

118. Սուրեն Մուրադյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1981

119. Կամսար Ավետիսյան: Գրականության հանձնարարական ցանկ /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

120. Մատենագիտություն «Հասկեր» ամսագրի (1905-1917, 1922) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

121. Պատանին գանգրահեր: Մեթոդական հանձնարարականներ երեխաների ընթերցանությունը ղեկավարողների համար /Կազմ.՝ Գ. Լ. Ավետիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

122. Վիկտոր Վարդանյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1982

123. Գրողները մանուկներին: Հանձնարարված գրականության ծանոթագրված ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

124. Գրքեր հարազատ և մտերիմ: Մեթոդական հանձնարարական մանկական գրքի շաբաթի առթիվ /Կազմ.՝ Շ. Ս. Նալբանդյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

125. Դարաշրջանի միտքը, պատիվն ու խիղճը: Մեթոդական հանձնարություններ /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

126. Երբ միասին են բաբախում սրտերը: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

127. Մանկական գրականության հետ տարվող աշխատանքները ԳԿՀ-ում: Մեթոդական հանձնարարական մանուկներին սպասարկող գրադարանների համար /Կազմ.՝ Գ. Կ. Միրիբյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

128. Վալտեր Արամյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ 6-8-րդ դասարանների համար /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

1983

129. Ասք բուլճինկյան ընդհատակի մասին: Մեթոդական հանձնարարական՝ ՌՍԴԲԿ երկրորդ համագումարի 80-ամյակը /Կազմ.՝ Գ. Լ. Ավետիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայան:

130. Գիտելիքների աշխարհում: Գիտահանրամատչելի գրականության ծանոթագրված ցանկ 6-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Փ. Հ. Մեժլումյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

131. Մանկական գրքի առաջին օջախը (Ուղեցույց) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

132. Սովետական իրավունքը և ընթերցողը (Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Գ. Կ. Խաչատրյան:

133. Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Ֆ. Խաչատրյան:

1984

134. Գեղեցիկ և առողջ լինելու գաղտնիքը (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

135. Գիտահանրամատչելի գրականության դերը երեխայի կյանքում (Մեթոդական օգնություն գրադարանավարներին) /Կազմ.՝ Մ. Խ. Կոչկակարյան; Խմբ.՝ Ռ. Իշխանյան:

136. Գրացուցակների կազմակերպումը և պրոպագանդան գրադարանում (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ի. Ա. Ավետիսյան; Խմբ.՝ Բ. Գ. Զաքարյան:

137. Մանուկների հյուրընկալ տունը: Ուղեցույց:

138. Նորը գաղափարախոսական աշխատանքում: Մեթոդական հանձնարարական /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

139. Վազգեն Տայյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Ս. Ս. Բաբայան:

1985

140. Գարնան շողեր /Կազմ.՝ Ա. Պետրոսյան; Առաջաբ., խմբ.՝ Ա. Պողոսյան:

141. Գիտության տունը: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Ա. Նարիմանյան; Խմբ.՝ Էդ. Ավագյան:

142. Գրադարանային ակտիվ և խորհուրդ: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Հ. Բ. Հարությունյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

143. Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ... Արկածային և գիտաֆանտաստիկ գրականության ծանոթագրությունների ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Գ. Հ. Դումանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

144. Խնկո-Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1973-1983 թթ.) /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Է. Ս. Երիցյան:

145. Սխրանքդ անմահ է /Խմբ.՝ Վ. Գ. Տայյան:

146. Սողոմոն Մկրտչյան /Կազմ.՝ Գ. Ս. Մկրտչյան; Խմբ.՝ Ս. Ս. Մուրադյան:

1986

147. Աշխատանքային դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը գրադարանում: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Շ. Ս. Նալբանդյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

148. Ընդդեմ խավարի: Հակակրոնական հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 6-9 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Գ. Հ. Դումանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1987

149. Այբբենական-առարկայական ուղեցույց (Մակետ) /Կազմ.՝ Ի. Ս. Ավետիսյան; Խմբ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան:

150. Աշոտ Տեր-Գրիգորյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան, Ռ. Ա. Տեր-Գրիգորեան:

151. Բարոյագիտության այբուբենը երեխաներին: Մեթոդական հանձնարարականներ /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

152. Երեխաներին սպասարկող գրադարանների հիմնական ցուցանիշները: (1981-1985 թթ. վերլուծություն) /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Գ. Դանիելյան:

153. Համագումարի կենսահաստատ ուղիով: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

154. Հենրիկ Սևան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ս. Մկրտչյան; Խմբ.՝ Էդ. Ս. Ավագյան:

155. Հոկտեմբերին հավատարիմ: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան, Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

156. Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Գ. Դանիելյան:

157. Սոֆյա Լալախանյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ս. Ա. Մուրադյան:

1989

158. Լիպարիտ Սարգսյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան:

1990

159. Հայ պոեզիան և գեղագիտական դաստիարակությունը /Կազմ.՝ Ա. Աբովյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

160. Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի (1901-1918) /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Գ. Դանիելյան:

1991

161. Ճանապարհորդություն գեղեցիկի աշխարհում: Հանձնարարելի գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Յ. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

1992

162. Գրացուցակների կազմակերպումն ու պրոպագանդունը /Կազմ.՝ Ի. Ավետիսյան:

163. Գոյապահպանություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան:

164. Հայոց հին և միջնադարյան մեծերի մասին /Կազմ.՝ Շ. Նալբանդյան:

1998

165. Գրադարանը բարեփոխվող դպրոցում: Գիտագործնական համաժողովի նյութեր (Նոյեմբեր 1997) /Խմբ.՝ Վ. Պողոսյան:

166. Թարգմանչաց օր /Կազմ.՝ Շ. Նալբանդյան:

2001

167. Գթասրտության և միասնության շաբաթ /Կազմ.՝ Ե. Երեմյան:

168. Հովիկ Էդգարյանի հետ: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Շ. Ոսկանյան:

169. Ֆրիտյոֆ Նանսեն /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

2002

170. Գարնան շողեր: Մանկական ստեղծագործություններ /Կազմ.՝ Ռ. Տոնոյան, Մ. Հովսեփյան; Խմբ.՝ Ե. Պետրոսյան:

171. Գուրգեն Գաբրիելյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

172. Շուշանիկ: Ազոավի արցունքը: Բանաստեղծություններ /Շուշանիկ (Շ. Ս. Ոսկանյան); Խմբ.՝ Ֆ. Բախչինյան:

173. Շուշիի ազատագրման 10-ամյակը /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

174. IEARN in Armenia /Compl., edit. K. Durgaryan.

2003

175. Էդուարդ Ավագյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

176. Մենք և բնությունը: Հանձնարարական գրականության ցանկ /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

177. DEEP/iEARN in Armenia: Քաղաքացիական դաստիարակություն (միջազգային կրթություն) /Կազմ.՝ Կ. Դուրգարյան, Մ. Հովսեփյան, Շ. Ոսկանյան:

178. iEARN IN ARMEENIA: Միջազգային կրթությունը և ցանցային ռեսուրսները: [Դպրոցականների թեմատիկ շարադրությունները՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով]:

2004

179. Գեղունի Չթյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

180. Երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը Խնկո-Ապրո անվան ազգային մանկական գրադարանում (Մեթոդական օգնություն գրադարանավարին) /Կազմ.՝ Մ. Հովսեփյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

181. Խնկո-Ապրո անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1983-2003 թթ.) /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

182. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն: Մեթոդա-մատենագիտական հանձնարարական /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

183. IEARN in Armenia /Comp. K. Durgaryan, E. Simonyan, P. Mezhlumyan; Edt. K. Durgaryan.

2005

184. Գրադարան և գրադարանավարներ: (Մեթոդական ձեռնարկ) /Խմբ.՝ Ե. Հակոբյան; Կազմ.՝ Մ. Կոշկակարյան:

185. «Ծիծեռնակ» ամսագրի մատենագիտություն (1967-2002) /Կազմ.՝ Ե. Երեմյան, Գ. Մկրտչյան, Հ. Քեոյան:

186. Հնդկաստան: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Հ. Քեոյան:

187. Մաշտոցյան գրեր: Մեթոդ-մատենագիտական հանձնարարական /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

188. Սուրեն Մուրադյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

2006

189. Անկախության 15 /Խմբ.՝ Գ. Կարապետյան:

190. Արեգ Լուսինյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան, Լ. Մուսիկյան:

191. Գրադարան և գրադարանավարներ: Մեթոդական ձեռնարկ: Երկրորդ լրացված հրատ. /Խմբ.՝ Ե. Հակոբյան; Կազմ.՝ Մ. Կոշկակարյան:

192. Իրանի Իսլամական հանրապետություն: (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Հ. Քեոյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

193. Կրթադաստիարակչական աշխատանքները Խնկո-Ապրո անվան ազգային մանկական գրադարանում /Կազմ.՝ Մ. Հովսեփյան, Խմբ.՝ Ե. Հակոբյան:

194. Ռուսաստանի Դաշնություն (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Թարգմ. և խմբ.՝ Գ. Կարապետյան:

2007

195. Հայոց բանակ (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

196. Խնկո-Ապրո անվան ազգային մանկական գրադարանը մանկական ու դպրոցական գրադարանների հանգուցակետում /Կազմ.՝ Շ. Ոսկանյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

197. Մելյան Բալաբեկ: Դեպի լույս: (1963-1973 թթ. Խնկո-Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանում աշխատած տարիների մասին հուշերից պատառիկներ):

198. Использование электронных источников информации в детской библиотеке (Информационно-методическое пособие) /Сост.: Э. Симонян.

2008

199. Գրադարանի մասին հրատարակված նյութերի մատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

200. Կարապետյան Գայանե: Մանկապատանեկան ընթերցանության հիմնախնդիրները (Մեթոդական հանձնարարական):

201. Յուրի Սահակյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

202. Ոսկանյան Շուշանիկ: Համալրման արդի խնդիրներ (Գրադարանային ձեռնարկ):

2009

203. Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը: Տեղեկատու-մեթոդական ձեռնարկ /Կազմ.՝ Է. Սիմոնյան; Թարգմ. և խմբ.՝ Գ. Կարապետյան:

204. Կոչկակարյան Մանիկ: Ապրենք հավատով և հայրենասիրությամբ:

205. Սարգսրապատի դղանջները: Երեխաների նկարչական ստեղծագործությունների գիրք-ալբոմ /Խմբ.՝ Գ. Կարապետյան:

2010

206. Արեգ Լուսինյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

207. Հենրիկ Սևան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

208. Ներսիսյան Լևոն: Ultra Verba=Վերջին խոսք:

2012

209. Իմ ստեղծած գիրքը: [Շարադրություններ նկարազարդումներով]:

210. Հայտնի և անհայտ գրադարաններ, անվանի գրադարանավարներ /Կազմ.՝ Գ. Կարապետյան; Խմբ.՝ Ն. Հայրապետյան:

211. Ներսիսյան Լևոն: Ինչից եւ ումից սկսենք. անտիկ շրջան: Դասախոսություններ:

2015

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

212. 7 գույն: 7 նկարազարդ պատմվածք պատանիների համար /Ա. Սերոբյան, Կ. Աշուղյան, Լ. Հակոբյան, Է. Ջոիրաբյան, Հ. Թեքցյոզյան, Ե. Գրիգորյան, Մ. Բեյլերյան:

213. Թայզեն Մանֆրեդ: Ապակյա Արամը /Գերմ. թարգմ.' Կ. Մատինյան:

2017

214. Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը: Մեթոդական ձեռնարկ /Թարգմ.' Ն. Ղարիբյան, Ա. Շահբազյան, Ն. Աճեմյան:

2018

215. Փաշինյան Նիկոլ: Չար տնակի հեքիաթը:

2021

216. Սքանչելին: Հեքիաթ /Հ. Մխիթարյան; Ձևե մարդը /Էդ. Թաթևկյան; Խմբ.' Գ. Կարապետյան:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ



**ՀԱՅԿՈՒՇ
ԴԱԴԱՇԻ
ԴԱՆԻԵԼՅԱՆ
(1919-2005)**

**ՀՏԴ: 929:02(479.25)
Դանիեյան+02**

Հայաստանի գրադարանային ոլորտի պատմության մեջ ճանաչված և մեծ վաստակ ունեցող անուն է Հայկուշ Դանիեյանը:

Ծնվել է 1919 թ. Բաքվում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1945 թ.՝ ստանալով պատմաբանի մասնագիտություն: Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԼԿԵՄ Կենտկոմից (1945-1953 թթ.), եղել է Ղափանի /այժմ՝ Կապան/ շրջգործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ (1953-1961 թթ.), ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության կադրերի բաժնի վարիչ, երաժշտական բաժնի պետ (1961-1969 թթ.): 1969-1996 թթ. զբաղեցրել է Խնկո Ապրո անվան հանրապետական մանկական գրադարանի տնօրենի պաշտոնը, այնուհետև աշխատանքային գործունեությունը շարունակել է հարազատ գրադարանում՝ որպես փոխտնօրեն (1996-2000 թթ.), տնօրենի խորհրդական (2000-2005 թթ.): 27 տարի ղեկավարել է Խնկո-Ապրո անվան հանրապետական /այժմ՝ ազգային/ մանկական գրադարանը, 36 տարի աշխատել է նույն գրադարանում:

Աշխատանքային բեղուն գործունեության արդյունքում պարգևատրվել է «Կարմիր դրոշ», «Պատվո նշան» շքանշաններով, «Հայ-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

րենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար» մեղալով, ԽՍՀՄ և Հայաստանի Գերագույն խորհրդի և մինիստրությունների, ՀամԼԿԵՄ Կենտկոմի մեղալներով, բազմաթիվ պատվոգրերով: Մշակույթի բնագավառում երկարամյա, անբասիր աշխատանքի համար արժանացել է ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման (1972 թ.), իսկ ծննդյան 85-ամյակի առթիվ պարգևատրվել է Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» մեղալով (2004 թ.): Հիշյալ ձեռքբերումներն ու պարգևները սոսկ փաստերի թվարկում չեն. Հայկուշ Դանիելյանը հանրությանը հայտնի է իր գրադարանաշինական գործունեությամբ, գրադարանային գործի զարգացմանը նպաստող բեղուն աշխատանքով:

Նրա անմիջական ջանքերով և հետևողականությամբ 1980 թ. հանրապետության բոլոր երեխաներին մեծ նվեր մատուցվեց. շահագործման հանձնվեց գրադարանի նորակառույց տիպային շենքն՝ իր յուրահատուկ ձևավորմամբ ու կահավորանքով. այն իր տեսակով ԽՍՀՄ մյուս հանրապետությունների մանկական գրադարանների տնօրենների «բարի նախանձն» էր շարժում:

Չհանդիսանալով գրադարանային ոլորտի մասնագետ՝ ղեկավարին հատուկ վճռականությամբ ու կազմակերպվածությամբ նա կարճ ժամանակում տիրապետեց ոլորտի նրբություններին և նախաձեռնեց ծավալուն աշխատանքներ ողջ հանրապետության տարածքում՝ շրջանային, քաղաքային, հանրապետական սեմինարներ, գիտաժողովներ, հոբելյանական հանդիսություններ: Իրենց տեսակով և ծավալով հատկապես առանձնանում են Մանկապատանեկան գրքի համամիութենական շաբաթը (1982 թ.), ԽՍՀՄ և ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրությունների համագործակցությամբ անցկացված Համամիութենական գիտագործնական կոնֆերանսը (1983 թ.), ինչպես նաև Հայաստանի դպրոցական գրադարանների համար նախատեսված 5-օրյա սեմինար-խորհրդակցությունը՝ 300 մասնակցով:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Մեծ է նաև նրա ավանդը գրադարանի մեթոդական, մատենագիտական նյութերի հրատարակման գործում: Խմբագրել է մեթոդական նյութեր, հանձնարարական ցանկեր, հիշարժան տարեթվերի օրացույցներ, մատենագիտություններ. դրանց թվում հատկապես արժեքավոր են «Մանկական թարգմանական գրականության մատենագիտություն»-ը (1972 թ.), «Հասկեր» (1981 թ.), «Աղբյուր» (1987 թ.), «Պիոներ» (1978 թ.) ամսագրերի մատենագիտությունները:

Լինելով խստապահանջ ղեկավար՝ միաժամանակ հոգատար էր աշխատողների նկատմամբ, գնահատում էր բոլորի մասնագիտական հմտությունները՝ վեր կանգնելով միջանձնային տարաձայնություններից: Հարգված ու սիրված էր աշխատակազմի կողմից. բոլորը գիտեին՝ խիստ ու չոր խոսքերի ետևում բարի սիրտ էր թաքնված:

Տարիների իր գործը Հայկուշ Դանիելյանը փոխանցեց նոր տնօրեն Ռուզան Տոնոյանին, որը ոչ միայն շարունակեց, այլև ավելի ընդարձակեց ու բարեփոխեց գրադարանը ժամանակի նոր պահանջներին համաձայն: Վերջինիս նախաձեռնությամբ ու անմիջական ջանքերով 2004 թ. գրադարանում մեծ շուքով նշվեց Հայկուշ Դանիելյանի ծննդյան 85-ամյակը: Ներկա գտնվողները՝ գրողներ, արվեստագետներ, գրադարանային աշխատողներ, գնահատանքի ու շնորհավորանքի ջերմ խոսքեր հնչեցրին հոբելյարի հասցեին: Մեկ տարի անց նրա վերջին հրաժեշտը եղավ իր սիրելի գրադարանի շենքում:

Շատ բան կարելի է ասել, սակայն կարծում եմ՝ արդեն իսկ պարզ է նրա անուրանալի վաստակը մշակույթի, հատկապես գրադարանային ոլորտի զարգացման գործում:

Այդպիսին էր նա՝ գործունյա, աշխատասեր, եռանդուն, մինչև վերջ իր գործին նվիրված Հայկուշ Դադաշի Դանիելյանը:

ՄԱՂԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
*Խնկո Ապոր անվան ազգային
մանկական գրադարան*

ՀԱՎԵԼՎԱԾ

DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-1



International Federation of
Library Associations and Institutions

ԻՖԼԱ-ի ուղեցույցները
գրադարաններում հանրային
ինտերնետ հասանելիության

Մշակված է ԻՖԼԱ-ի «Տեղեկատվության հասանելիության
ազատություն և խոսքի ազատություն» (ՖԱԻՖԷ)
փորձագիտական խորհրդատվական խմբի կողմից:
Խմբագրվել է Լուիզ Կուկի կողմից,
Լաֆբորո համալսարան, Մեծ Բրիտանիա:

Առաջին հրատարակություն:

29 մայիսի 2019 թ.:

Դեռևս չի հաստատվել ԻՖԼԱ-ի մասնագիտական կոմիտեի կամ Կառավարման խորհրդի
կողմից:



Լուիզ Կուկ, 2019

Թարգմանիչ՝ Տիգրան Զարգարյան
Խմբագիրներ՝ Ռուզան Տնտյան
Գայանե Կարապետյան

© 2019 IFLA, Խմբագրվել է Լուիզ Կուկի կողմից: Այս աշխատանքը արտոնագրված է Creative Commons Attribution 4.0 International (CC BY 4.0) արտոնագրի ներքո: Սույն արտոնագրի պատճենը դիտելու համար այցելեք՝ <http://creativecommons.org/licenses/by/4.0>

IFLA
P.O. Box 95312
2509 CH Den Haag
Netherland

www.ifla.org

Բովանդակություն

Բովանդակություն.....	3
1 Ներածություն	4
2 Ուղեցույցներ	10
2.0 Տեղեկատվության հասանելիության սկզբունքները	10
2.1 Ինտերնետի օգտագործման քաղաքականությունը	11
2.2 Օգտագործման վճարներ.....	11
2.3 Թափանցիկություն.....	13
2.4 Զտող ծրագրեր	13
2.5 Բովանդակության ապաշրջափակում	15
2.6 Օգտագործման գաղտնիությունը	15
2.7 Օգտագործումը հաշմանդամություն ունեցող անձանց կողմից	17
2.8 Ինտերնետի անվտանգությունը և օգտագործումն անչափահասների կողմից	18
2.9 Օգտվողների կրթություն և համակարգչային հմտությունների ուսուցում	19
2.10 Աշխատակազմի ուսուցում	21
2.11 Սոցիալական մեդիա	23
2.12 Wi-Fi	24
2.13 Որոշումների կայացում	25
2.14 Վերանայում և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն	26
3 Հղումներ և լրացուցիչ պաշարներ.....	27
4 Հավելված.....	30
4.1 Օրինակներ Չեխիայի Հանրապետությունից	30

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն Ուղեցույցները ներկայացված են ԻՖԼԱ-ի **Տեղեկատվության հասանելիության ազատություն և արտահայտվելու ազատություն** (ՖԱԻՖԷ) խորհրդատվական կոմիտեի կողմից: ԻՖԼԱ ՖԱԻՖԷ-ի ընդհանուր նպատակն է «բարձրացնել գրադարանի հայեցակարգի և մտավոր ազատության արժեքների միջև էական հարաբերակցության մասին իրազեկվածությունը» (IFLA FAIFE, 2018): Որպես մտավոր ազատության արժեքներին խորապես հավատարիմ կազմակերպություն՝ ԻՖԼԱ-ն դեմ է ցանկացած գրաքննության, ներառյալ զտող ծրագրերի օգտագործումը:

Այնուամենայնիվ, ընդունված է, որ գրադարանավարները և տեղեկատվության բնագավառի այլ մասնագետները պետք է գործեն տեղական և ազգային իրավական սահմանափակումների շրջանակում՝ միաժամանակ տեղեկատվության հասանելիության ցանկացած սահմանափակումների դեմ ունենալով գիտակցված բարոյական դիրքորոշում:

Գրադարանավարները և տեղեկատվության բնագավառի մյուս մասնագետները եզակի առաքելություն ունեն խորհուրդներ տալու իրենց դիմող կազմակերպություններին մուտքի սահմանափակումների և դրանց անհարկի վերացման իրավական պահանջների վերաբերյալ և առաջնորդի դեր ստանձնել որոշումներ կայացնելիս:

Այսպիսով, Ուղեցույցները նպատակ ունեն ծառայելու որպես հիմնարար սկզբունքների շրջանակ՝ աջակցելու բոլոր նրանց, ովքեր հանրային ինտերնետ հասանելիության ապահովման հետ կապված պատասխանատու են որոշումներ կայացնելիս, և նրանց տրամադրելու շահերի պաշտպանության այնպիսի գործիք, որպեսզի նրանք աջակցություն ունենան մտավոր ազատությանը առաջնահերթություն տալու դժվարին գործում՝ միաժամանակ պահպանելով իրենց տրամադրված ծառայությունների պատշաճ օգտագործումը, ինչպես պահանջվում է իրենց հիմնական կազմակերպության կողմից և համայնքային նորմերով:

Ուղեցույցները մշակվել են մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ միջազգային հռչակագրերի և ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ 2015» (United Nations 2015) հիման վրա: Այս առումով, դրանք նպատակ ունեն ընդգծելու հանրային ինտերնետ հասանելիության դերը երկրների ներսում և երկրների միջև թվային անջրպետի նվազեցման գործում. խոցելի, մարզինալացված և հաշմանդամ խմբերի համար տեղեկատվության անարգել հասանելիության ապահովումը. ինչպես նաև ուժեղացնել տեղական և ազգային տնտեսությունը՝ տեղեկատվության հասանելիության, փոխանակման, ուսուցման և թվային ստեղծարարության տնտեսական արժեքի կիրառման կարողությունը բարձրացնելով:

Ուղեցույցները հիմնված են լայնածավալ հետազոտություններից հավաքագրված ապացույցների վրա, որոնք ներառում են աշխատանոցներ և հարցազրույցներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ, ինչպիսիք են

գրադարանավարները, քաղաքականություն մշակողները, մասնագիտական մարմինները, ինտերնետի անվտանգության և ինտերնետի ազատության ՀԿ-ները, SS մասնագետները և օգտվողները, ինչպես նաև աշխատանքային հետազոտությունից դեպի կիրառություն ամբողջ աշխարհում:

Ուղեցույցները մշակվել են ԻՖԼԱ-ի պատշաճ հրապարակումներին և հայտարարություններին համապատասխան, ներառյալ «Գրադարանների և մտավոր ազատության մասին» ԻՖԼԱ-ի հայտարարությունը (IFLA 1999), որը «գրադարաններին և գրադարանների աշխատակիցներին կոչ է անում հավատարիմ մնալ մտավոր ազատության, տեղեկատվության անարգել հասանելիության և խոսքի ազատության սկզբունքներին և ճանաչել գրադարանից օգտվողների գաղտնիությունը»: ԻՖԼԱ-ի «*Ինտերնետի մանիֆեստը*» (IFLA 2014a), որում ասվում է, որ «Գրադարանային և տեղեկատվական ծառայությունների կողմից ինտերնետի անխոչընդոտ հասանելիության ապահովումը կազմում է տեղեկատվության հասանելիության ազատության և խոսքի ազատության իրավունքի կենսական տարրը և աջակցում է համայնքներին և անհատներին հասնելու ազատության, բարգավաճման և զարգացման» (Բաժին 2.2); ԻՖԼԱ-ի «*էթիկայի կանոնագիրքը գրադարանավարների և տեղեկատվության այլ աշխատողների համար*» (IFLA 2012a), ԻՖԼԱ-ի հայտարարությունը «*Գրադարանային միջավայրում գաղտնիության մասին*» (IFLA 2015). ԻՖԼԱ-ի մանիֆեստը «*Թափանցիկության, լավ կառավարման և կոռուպցիայից ազատ լինելու մասին*» (IFLA 2008), IFLA-ի հայտարարությունը «*Ցանցի չեզոքության և զրոյական վարկանիշի մասին*» (IFLA 2016), ԻՖԼԱ-ի *Տեղեկատվական գրագիտության բաժինը* (IFLA 2017a), «*Գրադարաններում հանրային հասանելիության սկզբունքները*» (Dynamic Coalition on Public Access in Libraries, 2015) և «*Թվային գրագիտության վերաբերյալ*» ԻՖԼԱ-ի հայտարարությունը (IFLA 2017b), որում ասվում է, որ ազգային և տեղական կառավարությունները պետք է «Ձերժ մնան առցանց բովանդակության գրաքննությունից կամ խտրական, անհարկի կամ անհամաչափ արգելափակումից»:

Ի լրումն ֆոնային համատեքստի, Ուղեցույցները ներառում են հանրային ինտերնետ հասանելիության հետ կապված հարցեր, ինչպիսիք են.

1. Տեղեկատվության հասանելիության սկզբունքները
2. Ինտերնետի օգտագործման քաղաքականությունը
3. Օգտագործման համար վճարները
4. Թափանցիկություն
5. Զտման և արգելափակման տեխնոլոգիաների կիրառումը
6. Կայքերի ապաշրջափակում
7. Օգտագործման գաղտնիություն
8. Օգտագործում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից
9. Օգտագործում անչափահասների կողմից

10. Օգտվողների կրթություն
11. Աշխատակազմի վերապատրաստում
12. Սոցիալական մեդիա
13. Wi-Fi
14. Որոշումների կայացում
15. Վերանայում և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

1.1 ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինտերնետին միանալու հնարավորությունը մի շարք երկրներում ճանաչվել է որպես մարդու իրավունք կամ առնվազն որպես հիմնական հանրային շահի ծառայություն: Տեղեկատվական հասարակության վերաբերյալ 2003 թ. առաջին համաշխարհային գազաթնաժողովը (WSIS 2003), որը գումարվել է ՄԱԿ-ի և Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) հովանու ներքո, ընդունել է «Սկզբունքների հռչակագիրը», հավանություն տալով բոլորի իրավունքներին՝ մասնակցելու ներառական Տեղեկատվական հասարակությանը, և վկայելով առցանց խոսքի ազատության իրավունքը:

Այս սկզբունքներն հովանավորվում են ԻՖԼԱ-ի կողմից և ամրագրվել են 2014 թվականի *Լիոնի հռչակագրում* (IFLA 2014b), որտեղ նշվում է, թե տեղեկատվության հասանելիությունը ինչպես կարող է աջակցել ՄԱԿ-ի Կայուն զարգացման բոլոր նպատակներին 2015 թվականից հետո, և թե ինչու է հասանելիությունը հանդես գալիս որպես ՏՀՏ-ի հավասարաչափ զարգացման վճռորոշ մաս: Հանրային ինտերնետ հասանելիությունը, որը տրամադրվում է գրադարանների կողմից, ևս ապացուցել է, որ ունի կարևոր նշանակություն արտակարգ իրավիճակների և աղետների հետևանքով օգնության և վերականգնման դեպքերում (Bertot, McLure and Jaeger, 2008): Ինտերնետում տեղեկատվության հասանելիությունից ստացվող օգուտները շատ են, որոնք օգտվողներին հնարավորություն են տալիս տեղեկացված որոշումներ կայացնելու իրենց անձնական և մասնագիտական կյանքի բոլոր ոլորտների վերաբերյալ, միաժամանակ աջակցելով ժողովրդավարությանը, տնտեսական հնարավորություններին և էլեկտրոնային կառավարման զարգացմանը:

Այնուամենայնիվ, ամբողջ աշխարհում շատ մարդիկ դեռևս չեն կարողանում լիարժեք օգտվել տնային ինտերնետից և լայնաշերտ ծառայություններից¹: Ի հավելումն ենթակառուցվածքների հասանելիության բացակայությանը, դեռևս կա հմտությունների և վստահության բաց, որը թույլ չի տալիս հնարավոր շատ օգտվողների օգուտ քաղել հասանելիությունից: Հանրային ինտերնետ հասանելիությունը գրադարաններում, հմուտ միջնորդներ հանդիսացող

¹ 2018 թվականի հունիսի դրությամբ գնահատվում էր, որ աշխարհի բնակչության 44.9%-ը դեռևս չունեի ինտերնետ հասանելիություն (Internet World Stats 2018)

գրադարանավարներով՝ առանցքային դեր ունի այս բացը կամրջելու և թվային անջրպետը վերացնելու գործում: ԻՖԼԱ-ն մշտապես ընդգծել է գրադարանների կարևոր դերը ինտերնետ հասանելիություն ապահովելու գործում՝ գրադարաններից օգտվողների համար առանց ծախսերի կամ խտրականության:

Գրադարաններում հանրային ինտերնետի հասանելիությունը հաճախ սահմանափակվում է զտող և արգելափակող ծրագրային ապահովման և այլ միջոցների օգտագործմամբ՝ արգելելու մուտքը բովանդակության որոշակի դասերի, որոնք համարվում են վնասակար, ոչ համահունչ գրադարանի հանձնարարագրին, կամ անհամապատասխան են տվյալ գրադարանի հիմնական առաքելությանը: Նման գործողությունները կարող են հանձնարարված լինել կառավարության կողմից, կամ լինել հանրային ճնշման, կամ հենց գրադարանավարների դատողության արդյունք:

Բացի այդ, հանրային ինտերնետ հասանելիության հնարավորությունների օգտագործման նկատմամբ հսկողության կիրառումը (բացահայտ, թե քողարկված) կարող է պատճառ դառնալ, որ օգտվողներն այնպես ինքնագրաքննեն իրենց մուտքը բովանդակություն, որ վնաս հասցվի տեղեկատվության հասանելիության ազատությանը կամ հարցումների ազատությանը: Օրինակ՝ երիտասարդը կարող է վախենալ այն կայքերի ուսումնասիրությունից, որոնք խորհուրդներ են տալիս անվտանգ սեքսի կամ սեքսուալության վերաբերյալ: Միացյալ Թագավորության վերջին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Մեծ Բրիտանիայի հանրային գրադարանների 100%-ը զտող տեխնոլոգիաների կիրառմամբ սահմանափակում են մուտքը (Spacey et al, 2014), իսկ ԱՄՆ-ում Երեխաների ինտերնետի պաշտպանության ակտ 2000-ը (CIPA) պահանջում է զտող ծրագրաշարի օգտագործումը բոլոր գրադարանների համար՝ e-rate ծրագրի շրջանակում զեղչված ինտերնետ հասանելիություն ստանալու դիմաց, որը հիմնականում վերաբերում է դպրոցներին և հանրային գրադարաններին (Federal Communications Commission, 2017):

Նման արգելանքները կարող են սահմանափակել գրադարաններում ինտերնետի արդյունավետ օգտագործման հնարավոր առավելությունները և կարող են խոչընդոտել էլեկտրոնային կառավարման ռազմավարության գործարկմանը: Մինչ օրս, թեև առանձին գրադարաններ ու հանրային տեղեկատվական ծառայություններ մշակել են իրենց սեփական տեղային քաղաքականությունը, սակայն բացակայում են ազգային կամ միջազգային գործող ուղեցույցները, որոնք կաջակցեին քաղաքականության մշակման համար պատասխանատու անձնակազմին՝ հանրային ինտերնետի և Wi-Fi հասանելիության

ապահովման այնպիսի հարցերում, ինչպիսիք են բովանդակության գտումը, օգտագործման արգելափակումը և մշտադիտարկումը:

Այստեղ ընդունվում է, որ ինտերնետը պարունակում է վնասակար և անօրինական բովանդակություն, ներառյալ այն, որը հասանելի է «մութ ցանցում»: Տարբեր պատճառներով համայնքի անդամները կարող են նաև առարկել, որ գրադարաններում հասանելի լինեն այլ կայքեր կամ ծառայություններ: Կարող են նաև լինել հանրային հասանելիության գործնական սահմանափակումներ, ինչպիսիք են մտավոր սեփականության իրավունքի մասին օրենսդրությունը պահպանելու անհրաժեշտությունը և ինտերնետի ավելի մեծ պահանջարկը, քան առկա վերջնակայանների քանակն է:

Սույն Ուղեցույցները նպատակ ունեն սկզբունքների և գործնական ուղեցույցների տեսքով աջակցություն ցուցաբերելու գրադարանի և տեղեկատվության մասնագետներին, թե ինչպես արձագանքել խնդիրներին, առաջարկներ անել, թե ինչպես զարգացնել օգտվողների կարողությունները՝ վստահ և պատասխանատու կերպով ինտերնետից օգտվելու համար:

1.2 Երախտագիտություն

ԻՖԼԱ ՖԱԻՖԷ-ի փորձագիտական խորհրդատվական խումբը ցանկանում է շնորհակալություն և երախտագիտություն հայտնել բոլոր նրանց, ովքեր մասնակցել են վերանայման գործընթացին: Մասնավորապես, մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ՖԱԻՖԷ ցանցի բոլոր անդամներին, ովքեր արձագանքեցին խորհրդակցությանը՝ Սթիվեն Վայբերին և Էսմերալդա Մոսկատելին՝ ԻՖԼԱ-ի անունից. Ջոն Դոլանին՝ վարժությունների ընթացքում կառուցողական արձագանքի և ներգրավվածության համար. Մարկ Վեյլերին 7-րդ բաժնի (Օգտագործում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից) վերաբերյալ օգտակար ներդրման համար. Ուինսթոն Ռոբերթսին (ԻՖԼԱ-ի «Ազգային գրադարաններ» սեկցիա). Կանադայի գրադարանավար և արխիվագետ դոկտոր Գայ Բերթիոմի անունից՝ Ֆրանչեսկո Մանգանիելոնին. «Հանրային գրադարաններ» սեկցիայի անդամների անունից Յան Ռիչարդսին. Մայ Չանգին՝ SS սեկցիայի անունից. Լիզա Հինչլիֆին՝ «Տեղեկատվական գրագիտություն» մշտական հանձնաժողովի անունից. Ջորուն Սիտադին՝ «Մանկական և երիտասարդ չափահասների գրադարաններ» սեկցիայի անունից՝ բաժին 8-ում (Օգտագործում անչափահասների կողմից) և բաժին 11-ում (Սոցիալական լրատվամիջոցներ) ունեցած ներդրման համար. Նիկոլ Մարկոլին՝ Կոնգրեսի գրադարանի անունից. Լորեն Ուեսթոն-Վեբին՝ Նոր Զելանդիայի հանրային գրադարանների ասոցիացիայի անունից. Դեբո Նարանջոնին՝ EDRi-ի անունից (European Digital Rights). Ալեխանդրո Մոլեդոնին՝ «Հաշմանդամների եվրոպական ֆորում»-ի անունից. Դեյվիդ Ռայթին՝ Մեծ Բրիտանիայի «Ապահով ինտերնետ

կենտրոն»-ից. Վլադանա Պիլերովային, Լինդա Յանսովային և Եվա Յերնինակովային՝ Չեխիայի Հանրապետության «Գրադարանավարների և տեղեկատվության մասնագետների ասոցիացիայի» և «Գրադարանավարության ինստիտուտի» (Չեխիայի Հանրապետության Ազգային գրադարանի մաս) անունից. Ռինկե Վան Բրենքելենին՝ Ռոտերդամի հանրային գրադարանից, Հաագայի գրադարանի աշխատակազմին. և Ռոնալդ Կապելին՝ Դորդրեխտի քաղաքային գրադարանի «de Bibliotheek AanZet»-ից. և ԷԻՖԼ-ի ներկայացուցիչներին՝ իրենց խորաթափանց մեկնաբանությունների համար: Սա հանգեցրել է սկզբնական փաստաթղթի բազմակողմանի բարելավումների, ինչի համար մենք շատ երախտապարտ ենք բոլորին:

2

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

2.0 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինտերնետի օգուտները և տեղեկատվության հասանելիության ազատության օրինական և բարոյական իրավունքները, ինչպիսիք են՝ *ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հռչակագրի* 19-րդ հոդվածից (United Nations 1948) բխող իրավունքները՝ նրանք, որ բխում են 2016 թվականի հուլիսի 1-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված «*Ինտերնետում մարդու իրավունքների խթանման, պաշտպանության և բավականության մասին*» բանաձևից (United Nations 2016), և նրանք, որ բխում են մասնագիտական էթիկայի կանոններից, այդ թվում ԻՖԼԱ-ի «*Գրադարանավարների և տեղեկատվական այլ աշխատողների էթիկայի կանոնները*» (IFLA 2012), պետք է ձևավորեն գերակա այն սկզբունքները, որոնք կտեղեկացնեն հանրային ինտերնետի հասանելիության ապահովման վերաբերյալ ցանկացած ցուցման մասին:

ԻՖԼԱ-ի «*Գրադարանավարների և տեղեկատվական այլ աշխատողների էթիկայի կանոնագրքում*» (IFLA 2012a, հոդված 1) նշվում է. «*Գրադարանավարները և տեղեկատվական այլ աշխատողներ չեն ընդունում տեղեկատվության և գաղափարների հասանելիության մերժումը և սահմանափակումը, հատկապես գրաքննության միջոցով՝ լինի դա պետությունների, կառավարությունների կամ կրոնական և թե քաղաքացիական հասարակության կառույցների կողմից*»:

Հանրային ինտերնետ հասանելիության ապահովումը պետք է դիտվի որպես հնարավորություն, որը կհանգեցնի օգտվողների հզորացմանը և նրանց անձնական ու մասնագիտական կյանքի բոլոր կողմերի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու կարողության ձևավորմանը՝ միաժամանակ պահպանելով ապահով միջավայր համայնքի և խոցելի օգտվողների համար: Գրադարաններում և տեղեկատվական այլ ծառայություններում հանրային ինտերնետ հասանելիությունը պետք է լինի հնարավորինս անսահմանափակ՝ օգտագործելով հանրահայտ, հուսալի և անվտանգ սարքավորումներն ու ծրագրակազմերը:

Ամենից առաջ հարկ է ընդունել, որ գրադարանները տեղեկատվության, գաղափարների և հաղորդակցության հասանելիության եզակի պաշար են՝ ապահովելով անձնական, սոցիալական, մշակութային և տնտեսական համընդհանուր հնարավորություն բոլոր համայնքների համար: Նրանք պետք է դիտվեն որպես հանրությանը տեղեկատվություն *տրամադրողներ* և ոչ թե տեղեկատվության հասանելիությունն *արգելողներ*:

2.1 ԻՆՏԵՐՆԵՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինտերնետին հանրային հասանելիություն ապահովող գրադարաններին և այլ հաստատություններին խորհուրդ է տրվում ունենալ հստակ, արդիական և լավ գովազդվող «Ինտերնետ օգտագործման քաղաքականություն» (նաև հայտնի որպես «Ընդունելի օգտագործման քաղաքականություն»): Այն պետք է սահմանի հանրային ինտերնետ հասանելիության համար անհրաժեշտ դերերն ու պարտականությունները (ներառյալ վերջնական օգտվողների դերերը), նպատակները՝ որոնց համար տրամադրվում է մուտքը, ում համար այն նախատեսված է, և օգտագործման ցանկացած սահմանափակումները (օրինակ՝ ժամանակային սահմանափակումներ, բովանդակության անվանակարգեր, որոնք չեն համապատասխանում գրադարանի հանձնարարագրին, կամ օգտագործվող գտող ծրագրակազմ). անվտանգ մուտքի ընթացակարգերը (օրինակ՝ ամրագրման և գրանցման գործընթացներ). մուտքի չարաշահման և դրա հետևանքների կառավարման ընթացակարգերը (քաղաքականության խախտում). օգտվողներին, ներառյալ հաշմանդամություն ունեցողները, հասանելի աջակցությունը և ուղղորդումը. ծառայությանն առնչվող խնդիրների և բողոքների կառավարման ընթացակարգերը. և ծառայության իրավական համապատասխանությունը (օրինակ՝ տվյալների պաշտպանությունը և մտավոր սեփականության օրենսդրությունը):

Այն չի հավակնում լինել սպառիչ ցուցակ՝ յուրաքանչյուր ծառայություն պետք է մշակի «Ինտերնետ օգտագործման քաղաքականություն», խորհրդակցելով տեղական շահագրգիռ կառույցների հետ և նկատի ունենալով տեղական համատեքստը, բայց նաև հաշվի առնելով հանրային հասանելիության սկզբունքները, ինչպես ուրվագծված է վերևում՝ (1): Քաղաքականությունը պետք է գրված լինի մատչելի լեզվով, հստակ հայտարարվի և գովազդվի բոլոր օգտվողներին և պետք է հիմք հանդիսանա ծառայություն մատուցողի և օգտագործողի միջև «պայմանագրի» կնքման, համաձայն որի առաջարկվում է ծառայությունը:

Ռոչդեյլի ավանային խորհրդի կողմից (Մեծ Բրիտանիա), որպես «Ինտերնետ օգտագործման քաղաքականության» օրինակ, որը կենտրոնացած է կրթության և տեղեկատվության գնահատման (այլ ոչ թե դրա սահմանափակման) վրա, կարելի է տեսնել այստեղ՝ <http://www.rochdale.gov.uk/council-and-democracy/policies-strategies-and-reviews/policies/corporate-policies/Pages/acceptable-use-policy.aspx>

2.2 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Համահունչ ԻՖԼԱ-ի ձգտմանը, որ գրադարանները կարևոր դեր են խաղում իրենց օգտվողների համար առանց ծախսերի կամ խտրականության ինտերնետ հասանելիության ապահովման գործում, գրադարանները և տեղեկատվական ծառայությունները պետք է ճիգ

գործադրեն՝ տրամադրելու անվճար հանրային ինտերնետ հասանելիություն և Wi-Fi կապ օգտագործման վայրում՝ սա առանցքային է բոլոր սոցիալ-տնտեսական խմբերի մուտքն ապահովելու և թվային ու սոցիալական ներառման խթանման համար:

Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, հանրային մուտքի կիրառվող վճարները պետք է մատչելի լինեն օգտվողների համար՝ հասույթի տեղական մակարդակին համապատասխան: Հասանելիությունը առցանց տեղեկատվությանը, լինի էլեկտրոնային հղման աղբյուր, կամ թե ինտերնետ, համարժեք է սովորական տեղեկատու գրադարանին և, հետևաբար, հնարավորության դեպքում այն պետք է անվճար հասանելի լինի օգտվողներին, երբ սկզբնական գնումը (անհրաժեշտության դեպքում) կատարվել է:

Գրադարանները նաև գաղափարների փոխանակման և ուսումնառության ու ստեղծագործականության դյուրացման տարածքներ են. սա կարելի է բարելավել գաղափարների փոխանակման համար անվճար ինտերնետի միջոցով (օրինակ՝ էլեկտրոնային փոստի և սոցիալական մեդիայի օգնությամբ), տեղեկատվության և գիտելիքի տարածում (օրինակ՝ գիտելիքի տարածման հարթակներում՝ ինչպիսին Վիքիպեդիան է, ներդրում կատարելու միջոցով). ինչպես նաև մասնակցություն ընդհանուր շահերի ցանցերում: Նման մասնակցությունը կարող է կարևոր դեր խաղալ բարեկեցության և մարդկային արժանապատիվ կյանքի հիմնովին բարելավման գործում:

Նիդեռլանդների Դորդրեխտի քաղաքային գրադարանի AanZet գրադարանը նշում է. «Մեր գրասենյակներում մենք առաջարկում ենք համակարգիչներ, որոնք այցելուները կարող են օգտագործել, ինչպես նաև WiFi, որով նրանք սեփական սարքով կարող են մուտք գործել ինտերնետ: Համակարգիչների օգտագործումը և, այսպիսով, ինտերնետ մուտքն անվճար է: Առանց գրադարանի քարտի (կարդալ՝ անդամակցություն) նրանք մուտք ունեն գրադարանի հետ կապված կայքեր: Որպեսզի կարողանանք ազատորեն զննել համացանցը, մեզ անհրաժեշտ է գրադարանի քարտ/անդամակցություն: Իհարկե, երիտասարդները, որպես ստանդարտ, կարող են իրականացնել անվճար բաժանորդագրություն, կա նաև անվճար բաժանորդագրություն մեծահասակների համար: Մենք շեշտված խթանում ենք այս անվճար բաժանորդագրությունը՝ համակցված համակարգչից ազատ օգտվելու հետ, քանի որ կարծում ենք, որ բոլորի համար պետք է հնարավոր լինի անվճար օգտվել համակարգիչներից»:

2.3 ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Գրադարանները և տեղեկատվական ծառայությունները պետք է թափանցիկ լինեն մուտքի ցանկացած սահմանափակումների և պահվող անձնական տվյալների վերաբերյալ, ներառյալ ինտերնետի օգտագործման հետ կապված տվյալները: Այս դրույթները պետք է հստակ բացատրվեն «Ինտերնետ օգտագործման քաղաքականության» և «Դրույթների ու Պայմանների» ցանկացած գործառնության մեջ, և գրադարանի աշխատակիցները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն, որպեսզի կարողանան օգտվողներին տեղեկացնել և բացատրել նման խնդիրները:

Օրինակ, եթե գրադարանային ծառայությունն օգտագործում է զտող ծրագրակազմ և վերահսկում է օգտագործումը, «Ինտերնետ օգտագործման քաղաքականությունը» պետք է պարունակի հստակ հայտարարություն այդ մասին, ինչպես օրինակ՝ «*Էնիթաունի գրադարանի բոլոր ծառայությունները զտված են, որպեսզի արգելափակեն մուտքը դեպի կայքեր, որ հայտնի են, թե պարունակում են անպաշտ, վնասակար կամ անօրինական բովանդակություն: Այնուամենայնիվ, զտող ծրագրակազմն անսխալական չէ, և երբեմն օրինական բովանդակությունը կարող է արգելափակվել, իսկ որոշ անպաշտ բովանդակությունը կարող է չզտվել: Օգտվողները պետք է նաև տեղյակ լինեն, որ ինտերնետի օգտագործումը կարող է մշտադիտարկվել*»:

2.4 ԶՏՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքների խոցելի օգտատերերի համար, ինչպիսիք են երեխաները, անվտանգ միջավայր ապահովելու անհրաժեշտությունը կարող է պահանջել յուրահատուկ բովանդակության արգելափակում: Սա սկզբունքորեն ընդունելի է, սակայն գրադարանները, տեղական ստանդարտների, օրենսդրության և իրենց մայր կազմակերպությունների դրույթների շրջանակում պետք է ձգտեն հնարավորինս քիչ սահմանափակել բովանդակությունը:

Բովանդակությունը զտելու որոշումները պետք է հիմնված լինեն բովանդակության օրինականության և սոցիալական ու մշակութային համատեքստում, որում հասանելի է բովանդակությունը, համապատասխանության վրա: Զտող ծրագրակազմը ոչ ճշգրիտ և անկատար լուծում է, որը կարող է հանգեցնել չափից ավելի կամ պակաս արգելափակման և հանրային ինտերնետ հասանելիության կառավարման հիմնախնդրում պետք չէ ապավինել դրան որպես միակ լուծում:

Օրինակ՝ նկատի ունեցեք երեխաներին սպառնացող վտանգը, որոնց ամենօրյա այցելությունը դպրոց ներառում է չցանկապատված լողավազանի մոտով անցնելը: Մենք կարող ենք փորձել կանխել երեխաների խեղդվելը՝ ցանկապատեր տեղադրելով լողավազանների շուրջը, բայց միշտ կա վտանգ, որ ավելի արկածախնդիր երեխան կմագլցի ցանկապատի վրայով և կխեղդվի: Որպես այլընտրանք, մենք կարող ենք սովորեցնել նրանց լողալ և նրանց տալ հմտություններ՝ պաշտպանվելու ոչ միայն այս լողավազանից, այլև ջրի հետ այլ հանդիպումներից: (National Research Council, 2001, մեջբերված Kranich, 2004, էջ 17):

Զտող ծրագրակազմի օգտագործման դեպքում (կամ երբ այն պարտադիր է օրենքով), տեղեկատվական մասնագետները պետք է պաշտպանեն ամենալավ համակարգը, որը բավական ճկուն է՝ առանձին օգտվողների կարիքներին լավագույնս համապատասխանող մուտքի մակարդակներ ապահովելու հրեց իսկ համատեքստի համար: Նրանք նաև պետք է իրավական համապատասխանության պահպանման համար պաշտպանեն բովանդակության ամենացածր մակարդակի գտումը:

Ռոտերդամի հանրային գրադարանն օրինակ է գրադարանի, որն իր հանրային տերմինալներում չի օգտագործում գտում, ինչի արդյունքում բոլոր օգտվողներին հնարավորություն է ընձեռում իրենց հետաքրքրությունների ոլորտում օգտվել թեմաների վերաբերյալ առկա տեղեկատվության ամբողջ շրջանակից՝ օրենքի և ընդհանուր պարկեշտության չափանիշներին համաձայն: Ներքին կանոնակարգում ասվում է, որ «Արգելվում է խտրական, դաժան և պոռնոգրաֆիկ ինֆորմացիային կայքեր այցելելը», և օգտվողներին խորհուրդ է տրվում, որ «Ռոտերդամի գրադարանը նաև իրավունք ունի օգտվողին հեռացնել ցանցից, եթե նա իրեն ճիշտ չի պահում կամ չի ենթարկվում ներքին կանոններին»:

Նմանատիպ մեկ այլ օրինակ, նույնպես Նիդեռլանդներից, Հաագայի հանրային գրադարանից է, որը նշում է. «Սկզբունքորեն, յուրաքանչյուր օգտվող ունի ինֆորմացիայի լիարժեք մուտք, միայն պապանեկան բաժնում են որոշ կայքեր/թեմաներ գտված (Cisco Web Usage Controls-ի միջոցով): Ցանկացած չարդարացված արգելափակում կարող է վերացվել միայն SS բաժնի միջոցով: Գրադարանը կարծում է, որ ամբողջ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ամենքին: Դա է պատճառը, որ գրադարանի աշխատակալաններում գրաքննություն չկա: Պատանհիների պարագայում դա հանգեցրեց որոշ բարդ առճակատումների և անապահով միջավայրի: Ուստի գրադարանը որոշել է պապանեկան բաժնում գտել անօրինական բովանդակությունը»:

2.5 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Պետք է լինեն հստակ ուղեցույցներ և թափանցիկ գործընթաց անտեղի արգելափակված ցանկացած օրինական բովանդակության ապաշրջափակման համար: Գրադարանի աշխատակիցներին պետք է տրվեն հմտություններ և գիտելիքներ, որպեսզի կարողանան հասկանալ և բացատրել, թե ինչու է արգելափակվել տվյալ կայքը. կարողանան որոշումներ կայացնել կայքերի ապաշրջափակման նպատակահարմարության վերաբերյալ. և որտեղ անհրաժեշտ է, կարողանան ապաշրջափակել կայքերն առանց ծանր բյուրոկրատական ձևականությունների:

Օրինակ՝ նկատի առեք այն օգտվողին, ով ցանկանում է դիմել հագուստի հանրահայտ մանրածախ վաճառակետին՝ վաճառողի պաշտոնի համար: Նա փորձում է մուտք գործել մանրածախ վաճառողի կայք, սակայն հանդիպում է տեղեկատվական հաղորդագրության՝ «Մուտքն այս կայք չի թույլատրվում»: Զգալով, որ ինչ-որ սխալ բան արած կլինի, նա շատ շփոթված է դիմելու գրադարանի աշխատակիցներին: Նա հուսահատ հեռանում է գրադարանից՝ չհասնելով իր այցելության նպատակին:

Մեկ այլ սցենար, որը կարելի է նախատեսել, այն է, երբ նույն օգտվողը հանդիպում է հաղորդագրության, որտեղ ասվում է. «Եթե ցանկանում եք շարունակել այցելել այս կայք, խնդրում ենք մոտենալ աշխատակցին, որը ուրախությամբ խորհուրդներ կտա ձեզ»: Նա մոտենում է տեղեկատու գրասեղանի աշխատակցին, որը, ծանոթ լինելով մանրածախ վաճառքի կայքին և հասկանալով, որ այն արգելափակվել է ներքնազգեստով կանանց տեսողական պատկերներ պարունակելու պատճառով, կարող է կարգավորել զտող ծրագրաշարի կարգավորումները՝ հնարավորություն տալով օգտվողին մուտք գործելու կայք և շարունակել՝ աշխատանքի դիմելու համար: Նա հեռանում է գրադարանից ուրախ, հասնելով իր այցի նպատակին և առանց որևէ անօրինականության զգացման:

(Հիմնված է MAIPLE նախագծի իրական օրինակի վրա, Spacey et al, 2014)

2.6 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Պետք է հարգել օգտվողների անձնական գաղտնիության իրավունքները: Հնարավորության դեպքում հյուրի կարգավիճակով մուտքը դեպի հանրային ինտերնետ հասանելիություն՝ առանց նույնացնելի մուտքի, պետք է հասանելի լինի՝ թույլ տալու առանց միջամտության հարցումների ազատությունը: Բացի այդ, որտեղ հնարավոր է, գրադարանները պետք է տեղադրեն գաղտնիության էկրաններ, որպեսզի օգտվողները կարողանան օգտվել այնպիսի ծառայություններից, ինչպիսին է ինտերնետ-բանկինգը՝ զերծ այլ օգտվողների կողմից ոչ պատշաճ դիտումից:

AanZet գրադարանը Դորդրեխտի քաղաքային գրադարանում օրինակ է, որի նպատակն է պաշտպանել համակարգչից օգտվողների գաղտնիությունը՝ մոնիտորները վահաններով միջնորմելով:

Գաղտնիության նման պարզ միջոցները նաև վերացնում են գտման ավելի բարձր մակարդակների անհրաժեշտությունը, որը հիմնավորվում է այլ օգտվողներին վիրավորելուց խուսափելու նկատառումով: Թեև օգտագործման մշտադիտարկումը կարող է կարևոր ցուցանիշ ապահովել կատարման նպատակների չափման համար, օգտվողների մուտքի հսկողությունը և մշտադիտարկումը պետք է պահվեն բացարձակ նվազագույնի վրա, որն անհրաժեշտ է արդյունավետ կառավարում և իրավական համապատասխանություն ապահովելու համար: Բացի այդ, բոլոր օգտվողները պետք է տեղյակ լինեն տեղում առկա հսկողության ցանկացած միջոցի մասին:

Հանրային գրադարանները նաև պարտականություն ունեն ապահովելու, որ օգտվողները տեղյակ լինեն գաղտնիության հնարավոր վտանգների մասին՝ բնորոշ հանրային հասանելի համակարգիչներ օգտագործելու հետ, հստակ և տեսանելի նախազգուշացումներով՝ չնչել «Պահպանել իմ գաղտնաբառը», «Պահպանել իմ տվյալներն այս համակարգչում» ընտրանքային տուփերը, և հետևել, որ էլեկտրոնային առևտրի, բանկային և պետական ծառայությունների կայքերից օգտվելուց հետո նրանք ամբողջությամբ դուրս են գալիս: Սա նույնպես պետք է ներառվի օգտվողների կրթական ծրագրերում:

Գաղտնիության բարելավման այլ միջոցառումների օրինակ է Հաագայի հանրային գրադարանը. «Օգտվողի համակարգից դուրս գալուց հետո անհատական համակարգիչը վերագործարկվում է, որպեսզի այն վերադարձվի հիմնական կազմաձևին՝ պահպանված տվյալները, զննարկման պատմությունը, մուտքերը և այլն, ջնջվում են: Եթե օգտվողը դուրս չի եկել, համակարգիչը ինքնաբերաբար վերագործարկվում/մաքրվում է քառորդ ժամ հետո»:

Ազգային (օրինակ՝ ազգային մասնագիտական մարմինների միջոցով) և միջազգային (ԻՖԼԱ-ի միջոցով) մակարդակներում գրադարանային և տեղեկատվական մասնագիտությունը պետք է ներգրավված լինի և ակտիվորեն մասնակցի խորհրդակցություններին և զրույցներին, որոնք վերաբերում են մարդկանց ինտերնետ հասանելիության մշտադիտարկմանը, վերահսկմանը և կարգավորմանը տեղական, կազմակերպության, ազգային և վերազգային մակարդակներում:

2.7 ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ

Երաշխավորելու համար, որ հանրային ինտերնետ հասանելիության ծառայությունը մատչելի է օգտվողների համայնքի բոլոր անդամներին և առաջարկում է արդար ու հավասար հասանելիություն: Գրադարանները պետք է հանձն առնեն, որ օգտվողների համայնքների իրենց անդամներն ունեն տարաբնույթ կարողությունների լայն շրջանակ և, հետևաբար, պետք է նպատակաուղղված լինեն ձեռք բերելու տեխնոլոգիա, որը ներառում է մատչելիության առանձնահատկությունները: Հաշմանդամություն ունեցող անձանց գործառական կարիքները պետք է հիշվեն՝ համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի *կոնվենցիայով ճանաչված իրավունքների* (United Nations, 2006):

Սա կարող է հանգեցնել, օրինակ, օժանդակ տեխնոլոգիաների օգտագործմանը, ինչպիսիք են հատուկ ծրագրաշարերը և սարքերը՝ օգտագործելու համար համակարգիչները կամ տրամադրված այլ սարքը, ինչպես նաև գրադարանների կայքերն ու հավելվածները: Կույր կամ թույլ տեսողություն ունեցողներին կարող է անհրաժեշտ լինել էկրանի հատուկ ընթերցիչներ և խոշորացույցներ, իսկ սահմանափակ շարժունակություն ունեցող մարդկանց՝ ձայնը ճանաչող ծրագրակազմ: Բացի այդ, գրադարաններում պետք է հասանելի լինեն ստեղնաշարեր, որոնք նախատեսված են թույլ տեսողությամբ մարդկանց կամ նրանց համար, ովքեր չեն կարողանում մկնիկ օգտագործել (օրինակ՝ Պարկինսոնի հիվանդության պատճառով): Համակարգչային սեղանները պետք է ըստ բարձրության կարգավորելի լինեն հաշմանդամի, անվասայլակով մարդկանց համար: Երրորդ կողմից բաժանորդագրվելիս կամ գնում կատարելիս գրադարանները պետք է փնտրեն վեբ հասանելիության չափանիշներին համապատասխանող բովանդակություն (օրինակ՝ WCAG 2.1, որը մշակվել է W3C-ի կողմից (2018թ.) և օգտակար է կայքերի ու հավելվածների համար): Գրադարանի առցանց հրապարակած բոլոր փաստաթղթերը պետք է համապատասխանեն մատչելիության պահանջներին:

Սա պահանջների սպառիչ ցանկը չէ. բոլոր ծառայությունները պետք է ներգրավված լինեն և կանոնավոր խորհրդակցեն օգտվողների իրենց համայնքի հետ և համապատասխան միջոցներ ձեռք առնեն, երաշխավորելով, որ ծառայությունն իրոք հասանելի է բոլոր օգտվողներին, ներառյալ հաշմանդամություն ունեցողներին:

Մատչելիության տեխնոլոգիաների որդեգրման լավ պրակտիկայի օրինակներ՝ երաշխավորելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք վայելեն ինտերնետի հավասար հասանելիությունը, կարելի է գտնել Չեխիայի Հանրապետության նախաձեռնություններում: Դրանց թվում են *Friendly Vox-ը*՝ ծայնային հնարավորությամբ վեբ-հանգույցը, որը լուծում է տալիս տեղեկատվության և կապի ծառայություններին հասանելիություն տրամադրելուն՝ առանց տեսողությունն օգտագործելու անհրաժեշտության; *Biblioweb-ը*, որը մրցույթ է գրադարանների համար, կենտրոնանում է նրանց կայքերի գնահատման վրա և մրցանակ է շնորհում խոչընդոտներից զերծ լավագույն վեբ էջեր ունեցող գրադարանին; *Handicap Friendly-ն*, որը վկայագիր է գրադարանների համար, որոնք գերազանց ծառայություններ են մատուցում (ներառյալ թվային) հաշմանդամություն ունեցող անձանց; և *Daleth-ը*, որը նաև հայտնի է որպես «*Գրադարանային դարպաս տեսողության խնդիրներ ունեցողների համար*»՝ հասանելի նյութերի համազգային գրադարան է, ներառյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մատերի շոշափումով տպագրությունները և աուդիո կամ հիբրիդային հրատարակությունները: Այս նախագծերի մասին ավելին կարելի է գտնել Հավելված Ա-ում:

2.8 ԻՆՏԵՐՆԵՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան ((United Nations 1989, հոդված 17) հայտարարում է, որ «Կառավարությունները պետք է օգնեն պաշտպանելու երեխաներին նյութերից, որոնք կարող են նրանց վնասել»: Մինչ գիտակցվում է անչափահասների պաշտպանության կարևորությունը, դա չպետք է օգտագործվի որպես զտման ծայրահեղ մակարդակների հիմնավորում: Թեև ընդունված է, որ առաջարկելով զտված մուտք կարող է որոշակի տարիքային խմբի համար դիտվել որպես տեղին, ծնողների և անձնակազմի ուսուցումը և օգտվողների կրթությունը հավասարապես կարևոր և պատշաճ դեր ունեն՝ օգնելով անչափահասներին՝ սովորելու գնահատել տեղեկատվությունը և անվտանգ օգտագործել ինտերնետը՝ խուսափելով վնասից: Մասնավորապես, ԻՖԼԱ-ի «Մանկական և երիտասարդ չափահասների գրադարաններ»-ի սեկցիայի «*Social Media, Children and Young Adults @ the Library*» վերաբերյալ հայտարարությունն առաջարկում է օգտակար ուղեցույց գրադարանավարների, ծնողների, երեխաների և երիտասարդների համար անվտանգության, գաղտնիության և առցանց վարքագծի վերաբերյալ (IFLA Section for Libraries for Children and Young Adults, 2015): Ի հավելումն, պետք է ընդունել, որ ինտերնետի անվտանգության վերաբերյալ օգտվողների կրթությունը հավասարապես կարևոր է առաջին անգամ և քիչ փորձառու ինտերնետ օգտագործողների համար:

Չեխիայի Հանրապետության Կարլովի Վարիի համայնքային գրադարանը համագործակցում է ինտերնետի անվտանգության փորձագետների հետ և մասնակցում է [Internetem bezpečně](#) (Անվտանգ ինտերնետի օգտագործում) նախագծին: Նրանք ստեղծել են ձեռնարկներ և թուղթեր առցանց միջավայրում երեխաների և մեծահասակների անվտանգության մասին և դրանք [ազատորեն հասանելի են դարձրել ներքերոնման համար](#): Նրանք այս ոլորտում կազմակերպում են աշխատանոցներ և այլ միջոցառումներ, և առկա է նաև առցանց օգնություն:

[Պլզենի հանրային գրադարանը](#) չեխական գրադարաններից մեկն է, որը պարբերաբար միանում է «[Ավելի ապահով ինտերնետի օր](#)»՝ ինտերնետի անվտանգության միջազգային օրվան: Ներկայացնում է ծրագրեր իր օգտվողների համար՝ սովորաբար դրանք աշխատանոցներ և մրցույթներ են երեխաների և երիտասարդների համար:

Լիտվայում, *Մարտինաս Մաժվիդասի* անվան Լիտվայի ազգային գրադարանը և քաղաքային հանրային գրադարաններն այն շահագրգիռ կողմերից են, որոնք հրավիրված են «Համազգային առավել անվտանգ ինտերնետ» կոնսորցիումի Խորհրդատվական վարչություն, որը 2006 թվականից ղեկավարում է «Safer Internet Centre Lithuania: draugiskasinternetas.lt» նախագիծը: Ամեն տարի, ի նշանավորումն Անվտանգ ինտերնետի օրվա, Լիտվայի հանրային գրադարանների ցանցը օգտվողներին հրավիրում է ինտերնետում անվտանգության և հարակից խնդիրների վերաբերյալ դիտել ուսուցողական ֆիլմեր, անցնել ինտերնետի անվտանգ օգտագործման թեստեր և մասնակցել մրցույթների, հանելուկախաղերի և աշխատանոցների: (Safer Internet Centre Lithuania 2019)

2.9 ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Գրադարանավարներն ու տեղեկատվական մասնագետները առանցքային դեր են խաղում օգտվողներին ինտերնետում հասանելի տեղեկատվությունից առավելագույն օգուտ քաղելու հնարավորություն տալու գործում:

Գրադարանի հանձնագրին և միջոցներին համաձայն՝ կրթությունը պետք է շարունակական լինի բոլոր օգտատերերի համար, և պարապմունքները, որոնք նախատեսված են հատկապես ծնողների և այլ խնամակալների համար, պետք է կանոնավոր կերպով անցկացվեն՝ օգնելու նրանց աջակցել իրենց երեխաներին ինտերնետի և տեխնոլոգիաների անվտանգ օգտագործման հարցում:

Ի հավելումն ինտերնետից անվտանգ օգտվելու կրթության, գրադարանները կարող են համակարգչային հիմնական հմտությունների ուսուցման միջոցով օգնել համակարգչից և ինտերնետից առաջին անգամ օգտվողներին: Հանրային հասանելիության համակարգիչներ տրամադրող հանրային գրադարանները եզակի դիրքավորված են թվային անջրպետի խնդիրները թվային հմտությունների զարգացման միջոցով լուծելու համար: Սա ՏԱՍՁԱ-ի կողմից ճանաչվել է որպես գրադարաններում հանրային հասանելիության «ավելացված արժեք»՝ ինտերնետ սրճարանների կամ հանրային մուտքի այլ կետերի համեմատ (Sey et al. 2013):

ԷԻՖԼ-ը (Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար, www.eifl.net) մշակել է կարողությունների զարգացման նախաձեռնություն Աֆրիկայի հանրային գրադարանների համար՝ կապակցելու ցանցերին չմիացած մարդկանց և ներգրավելու նրանց, ովքեր երբեք առցանց չեն օգտվել ինտերնետից: (EIFL n.d.)

Ի հավելումն համակարգչային հիմնական հմտությունների ուսուցումանը, օգտվողների կրթությունը պետք է ներառի մեդիա և տեղեկատվական գրագիտության հմտություններ, այսինքն՝ կարողանալ գնահատել տեղեկատվության և հաղորդակցության համապատասխանությունը, որակը և իսկությունը (ներառյալ սխալ մեկնաբանումն ու ապատեղեկատվությունը՝ ինչպիսիք են «կեղծ լուրերը» տարբերակելը) և գնահատել տեղեկատվության արդիականությունը, մտավոր սեփականության իրավունքները հասկանալը և հարգելը. ինչպես նաև որոնման տեխնիկային տիրապետելը: Արտաքին գործակալությունների կողմից, ինչպիսիք են Childnet International-ի (2018) տրամադրած առցանց պաշարները, կարող են օգտագործվել այս կարողությունների ձևավորմանն օգնելու համար, նման կազմակերպություն է նաև ԷԴՐԻ-ի «Թվային պաշտպանների ձեր ուղեցույցը ընդդեմ փոկալներ ներխուժողների – գաղտնիություն երեխաների համար» (EDRI 2016):

Հաագայի գրադարանը Նիդեռլանդներում գրեթե 20 տարի համակարգչային և ինտերնետի դասընթացներ է առաջարկում: Դեռևս 2019 թվականին կար տարրական հմտությունների կարիք, սակայն վերջին տարիներին նաև անցկացվում են ինտերնետում անվտանգության և գաղտնիության դասընթացներ: Այդ դասընթացներից մեկը (Կիբերանվտանգության ներածություն) վերաբերում է CISCO-ի հետ համագործակցությանը: Սովորական դասընթացների առաջարկից բացի, «Ծերերը հարևանությամբ» եվրոպական նախագիծը ևս իրագործվում է մի քանի մասնաճյուղերում: Այն առաջարկում է նաև դասախոսություններ, քննարկումներ, հանդիպումներ: Հնարավոր է նաև միասին թերթ կարդալը: Նպատակն այն է, որ տարեց մարդիկ կարողանան ուժեղացնել իրենց սոցիալական ցանցերը և հնարավորինս երկար մնան ինքնաբավ ու ինքնավստահ:

Էլեկտրոնային կառավարման դասընթացում աշխատելիս, մարդիկ սովորում են, թե ինչպես փոխգործակցել քաղաքապետարանի և կառավարության կայքերի հետ: Այս դասընթացն անցկացնող ուսուցիչները հատուկ պատրաստվածություն ունեն, և ի թիվս այլ արժեքների, պարտավորվում են երաշխավորել մասնակիցների գաղտնիությունը: Այս նպատակով կարող են օգտագործվել նաև գաղտնիության էկրաններ՝ աշխատանքային կայանները միմյանցից առանձնացնելու համար:

2.10 ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հասկանալու համար ինտերնետի օգտագործման իրավական, բարոյական, հասարակական և քաղաքական հիմնական հետևանքները և օգտագործման սահմանափակումները, օգտվողների հետ շփվող ամբողջ անձնակազմը պետք է պարբերաբար վերապատրաստվի: Սա վերաբերում է գրադարանների ղեկավարներին, կառավարիչներին, ծառայություններ մատուցող անձնակազմին և կամավորներին:

Անձնակազմը պետք է նաև կանոնավոր և հաճախակի վերապատրաստում անցնի օգտագործման քաղաքականության առնչությամբ և պատկերացում ունենա մուտքի ցանկացած սահմանափակման և սահմանափակումների արգելանքը վերացնելու ձևերի վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես կազմակերպել մեդիա և տեղեկատվական գրագիտության և ինտերնետի անվտանգ օգտագործման կրթական դասընթացներ օգտվողների, ծնողների և խնամակալների համար: Համայնքները լավագույնս հզորացնելու, նրանց աջակցելու համար անձնակազմը օգտվողների կրթության և մանկավարժական արդյունավետ պրակտիկայի լավագույն փորձի

հիման վրա պետք է վերապատրաստվի՝ օգտվողներին ուսուցանելով ինտերնետ հասանելիության և տեղեկատվության ազատ հասանելիության կարողություններ:

«Գրադարանի վերապատրաստված անձնակազմն օգնում է օգտվողներին գտնել և կիրառել առցանց տեղեկատվությունը որպես զարգացման, առողջապահական, կրթական, գյուղատնտեսական, շրջակա միջավայրի և եկամտի գեներացման կարողությունների և գիտելիքի բարելավման գործիք: Օրինակ, հանրային գրադարանները սուրճի ֆերմերներին և ձկնորսներին սովորեցնում են օգտվել ինտերնետից՝ իրենց ապրանքներն ավելի լավ գովազդելու և շուկայական գներին ծանոթանալու համար: Նրանք օգնում են մարդկանց տեղեկություններ ստանալ վաղ մանկության շրջանի զարգացման ու սննդակարգի, կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մայրական առողջության վերաբերյալ: Դրանք մարդկանց հասանելիություն են տալիս օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ տեղեկատվությանը և ցույց տալիս, թե ինչպես պայքարել կլիմայի փոփոխության և անտրառահատումների դեմ»: (IFLA, 2012b, էջ 2)

Հասցայի հանրային գրադարանում, Թվային տեղեկատվական կենտրոնը աշխատակիցներին համակարգիչների, ինտերնետի և մեդիա գրագիտության ոլորտում տեղեկացված պահելու նպատակով ամեն ամիս տարածում է (թվային) Գրանցամատյան թերթ, որը պարունակում է համապատասխան հոդվածների ընտրանի: Բացի այդ, թվային հմտությունների ոլորտում գործընկերների արդիականությունն ապահովելու համար կանոնավոր վերապատրաստումներ են կազմակերպվում:

Անձնակազմը պետք է նաև վերապատրաստվի՝ պատասխանելու համար զտող ծրագրերի օգտագործման, մուտքի ցանկացած զտման հիմնավորման, արգելափակված բովանդակության անվանակարգերի և կայքերի ապաշրջափակման ընթացակարգերին վերաբերող հարցերին: Ավելի բարձրաստիճան անձնակազմը պետք է վերապատրաստվի շահերի պաշտպանության հմտություններ ձեռք բերելու և հանրային քաղաքականության խնդիրների ու հատուկ օրենսդրության ավելի խորը ըմբռնման համար, որոնք վերաբերում են գաղտնիությանը, մտածողության ազատությանը, մտավոր սեփականության իրավունքներին (հատկապես բովանդակության խեղաթյուրման վերաբերյալ գործողություններին), մարդու իրավունքներին, անչափահասների պաշտպանությանը, ռասայական ատելության հրահրմանը, կիբերանվտանգությանը և ցանցային չեզոքությանը:

Սա սպառիչ ցանկ չէ, քանի որ վերապատրաստման պահանջները շարունակական են և փոփոխվում են՝ տեխնոլոգիական, սոցիալական և իրավական նոր զարգացումներին համապատասխան:

2.11 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱ

Սոցիալական մեդիայի բովանդակությանը պետք է վերաբերվել այնպես, ինչպես ինտերնետում առկա ցանկացած բովանդակության, այնուհետև օրենքի սահմաններում հնարավորինս թույլատրել ամբողջական հասանելիության սկզբունքը: Ծնողները և խնամակալները պետք է առաջնային պատասխանատվություն ստանձնեն իրենց երեխաների կողմից սոցիալական մեդիայի օգտագործման համար: ՏԱՍԶԱ-ի 2012 թվականի հանրային հաշվողական հասանելիության հետազոտությունն ընդգծում է, որ գրադարաններում քաղաքացիների համար սոցիալական մեդիայի պատասխանատու օգտագործման թույլտվությունն ու խրախուսումը հնարավորություններ է ստեղծում «մասնակցելու ցանցային լրատվության թողարկմանը և տնտեսական մոբիլիզացմանը ներքևից» (Walton and Donner 2012:2):

Երիտասարդների համար մեդիա գրագիտության կրթության ապահովումը կարող է օգտակար միջոց լինել առանց վնասելու իրենց անվտանգությունը վայելելու, հաղորդակցվելու, հաճույք ստանալու և նոր լրատվամիջոցներից սովորելու համար: Գրադարանները կարող են աջակցություն առաջարկել՝ ներառելով հղումներ և օժանդակություն՝ վնասակար և վիրավորական բովանդակության մասին զեկուցելու առումով, ինչպես նաև ուղեցույց, թե որտեղից հետազայում կարելի է օգնություն ստանալ: Այս առումով, IFLA Section for Libraries for Children and Young Adults (2015) հայտարարությունը «*Social Media, Children and Young Adults @ the Library*»-ի վերաբերյալ առաջարկում է օգտակար ուղեցույց, ինչպես նշված է 2.8 բաժնում:

Հաագայի գրադարանն ունի 50 մեդիա-հրահանգիչ, ովքեր օգնում են գործընկերներին և առաջարկում վերապատրաստում մեդիա գրագիտության ոլորտում: Բացի այդ, նրանք պարտավորվում են քաղաքացիներին կողմնորոշել այս ոլորտում, օրինակ՝ տեղեկատվական հանդիպումների (մեդիասրճարանների), դպրոցներում աջակցություն ցուցաբերելու և այլ միջոցներով: Ի թիվս այլ բաների, դասեր են տրվում վլոգինգի, կեղծ լուրերի պատրաստման (և ճանաչման), 3D տպագրության, Կանաչ էկրանով աշխատանքի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս Կենտրոնական գրադարանը կազմակերպում է Coderclub-ը: 7-ից 17 տարեկան երեխաները խաղերի միջոցով սովորում են ծրագրավորել (ներառյալ Scratch, HTML, Microbit): Ամեն ամսվա տեղերը սպառվում են՝ 50 երեխա, գումարած նրանց ծնողները:

Պատասխանատվություն են կրում նաև պետական մարմինները, սոցիալական մեդիա ընկերությունները և ինտերնետ ծառայություններ մատուցողները, ինչպես նաև ոչ կառավարական նախաձեռնությունները, որոնք պատասխանատու են ինտերնետի բովանդակության կարգավորման համար:

2.12 WI-FI

Շարժական սարքերի տիրապետման էքսպոնենցիալ աճը ենթադրում է, որ ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում գրադարանների համար ավելի խնայող և ծախսարդյունավետ ուղղությունը կլինի տրամադրման հավասարակշռությունը փոխել դեպի Wi-Fi՝ ի լրում անհատական համակարգիչների տրամադրմանը: Wi-Fi-ի տրամադրումը դառնում է ավելի շատ քաղաքային կամ տարածաշրջանային նախաձեռնություն, այլ ոչ թե գրադարանի իրավասության խնդիր, և Wi-Fi տեխնոլոգիայի զարգացումները նվազեցրել են թողունակության սահմանափակումների ազդեցությունը:

Շոտլանդական գրադարանային և տեղեկատվական խորհրդի (ULHՔ) հաշվետվության մեջ գրադարանավարը, մեկնաբանելով շոտլանդական գրադարաններում Wi-Fi-ի տրամադրումը, հայտնել է. *«Անձնակազմը, որը նախկինում շատ ժամանակ էր ծախսում բողոքների, կապի խնդիրների և սարքավորումների խափանումների առնչությամբ, այժմ ավելի շատ ժամանակ տրամադրեց օգտվողներին գրադարանային մեր ծառայությունների ամբողջական շրջանակի հասանելիությանն աջակցելուն»:* (Robertson, 2015, էջ 33)

Wi-Fi-ի կարևորության մեկ այլ օրինակ բերված է Նիդեռլանդների Դորդրեխտի քաղաքային գրադարանի «de Bibliotheek AanZet»-ի կողմից, ուր նկատել են, որ *«Wi-Fi-ի արագության օպտիմալացումը՝ աշխատանք, որը տեղի է ունեցել 2018 թվականին, մեծ ազդեցություն է ունեցել աշակերտների և ուսանողների կողմից դասասենյակների և աշխատանքային տարածքների օգտագործման վրա: Առանց որոշակի մարքեթինգային հաղորդակցության՝ միայն բանավոր գովազդի միջոցով, նրանք միմյանց պատմում են գրադարանների բարելավված պայմանների մասին: Սա նշանակում է, որ մենք ունենք ավելի շատ աշակերտներ և ուսանողներ, ովքեր գրադարանն օգտագործում են որպես աշխատավայր»:*

Նմանապես, և նույնպես Նիդեռլանդներից, Հաագայի հանրային գրադարանը բոլոր մասնաճյուղերում յուրաքանչյուրի համար առաջարկում է անվճար անսահմանափակ Wi-Fi հասանելիություն , որը մարդիկ կարող են օգտագործել իրենց դյուրակիր համակարգիչների, պլանշետների և սմարթֆոնների միջոցով: Օգտվողները, մինչ օգտագործելը, պետք է ընդունեն քաղաքապետարանի օգտագործման պայմանները: Միայն Կենտրոնական գրադարանում, ամեն օր հարյուրավոր մարդիկ օգտվում են դրանից: Ցածր եկամուտ ունեցող անձնաց տեղեկատվությանը և դասընթացներին հասանելիության հնարավորություն տալու նպատակով Գրադարանը զեղչեր է առաջարկում Stork անցաթղթով (զեղչի քարտ սահմանափակ միջոցներ ունեցողների համար) մարդկանց համար:

Անխոչընդոտ մուտքի հետ կապված ևս պետք է կիրառվեն նույն սկզբունքները, ինչպես ստատիկ մուտքի համար է, Wi-Fi-ի տրամադրման դեպքում, հատկապես հաշվի առնելով, որ մուտքը սովորաբար իրականացվում է օգտվողի սեփական շարժական սարք(եր)ի միջոցով: Wi-Fi մուտքի սահմանափակումների վերաբերյալ որոշումները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սա, և պետք է ներառեն հնարավորինս քիչ արգելքներ, ինչը միանշանակ անհրաժեշտ է օրինականության, ապահովության և անվտանգության համար:

2.13 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

Անվիճելի է, որ հանրային ինտերնետ հասանելիության կառավարման վերաբերյալ որոշումները զգայուն են և կախված են համատեքստից: Ընդունված է, որ տեղական հանգամանքները և համայնքային նորմերն անխուսափելիորեն դեր կխաղան որոշելու, թե որն է լավագույնս աշխատելու կոնկրետ միջավայրում: Գրադարանի մասնագիտացված ամբողջ անձնակազմը, ներառյալ գրադարանավարները, տեղեկատվական մասնագետները, SS անձնակազմը և ադմինիստրատորները, դերակատարություն ունեն գրադարանում տեղեկատվության հասանելիության մշակույթի ձևավորման գործում և պետք է միավորեն իրենց հավաքական փորձը՝ դրական, համագործակցային մոտեցմամբ որոշումների հանդեպ, որոնք ապահովում են գրադարանի բոլոր օգտվողներին բաց տեղեկատվության և ինտերնետ հասանելիության տրամադրումը:

2.14 ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային ինտերնետ հասանելիություն ապահովող տեղեկատվական յուրաքանչյուր ծառայություն պետք է օգտագործման հասանելիության և մշտադիտարկման համար ունենա արդյունավետություն ու համապատասխանություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, ցանկացած սահմանափակումների ստուգման կանոնավոր ժամանակացույց:

Համայնքային նորմերը և չափորոշիչները ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխման, և հասանելիության վերաբերյալ որոշումները պետք է ենթարկվեն կանոնավոր մշտադիտարկման:

Նման վերանայում իրականացնելիս՝ գրադարանի ծառայությունները պետք է համագործակցեն և խորհրդակցեն տեղական և ազգային համապատասխան գործակալությունների հետ, ինչպիսիք են մասնագիտական մարմինները, ԻՖԼԱ-ն, ինտերնետի անվտանգության ՀԿ-ները, ինտերնետի ազգային մարմինը (եթե կիրառելի է), ինչպես նաև հիմնական շահագրգիռ կողմերի և վերջնական օգտվողների հետ՝ նպատակ ունենալով պահպանել համապատասխան հավասարակշռություն սույն ուղեցույցներում ուրվագծված բարոյական սկզբունքների և առանձին շահագրգիռ կողմերի կարիքների միջև:

Քաղաքականության մշակման համար օգտակար ապացույցներ տրամադրելու և վնասակար բովանդակության դեպքում միջոցներ ձեռնարկելու համար գրադարանային-տեղեկատվական ծառայությունների ոլորտը պետք է պահպանի բարձր մակարդակի աշխատանքային հարաբերություններ համապատասխան ազգային ինտերնետ ցանկացած մարմնի, դոմեյնային անունները կարգավորող մարմնի և կիբեռանվտանգության գործակալության հետ:

Տեղեկատվության հասանելիության ազատության, ինչպես նաև խոսքի ազատության վերաբերյալ գրադարանային-տեղեկատվական աշխատանքի բարոյական և մասնագիտական սկզբունքներով առաջնորդվելու կարևորությունը պետք է հանրային ինտերնետ հասանելիության ապահովման հետ կապված քաղաքականության և պրակտիկայի հետագա զարգացման հիմքում լինի:

3 ՀՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՇԱՐՆԵՐ

Bertot, J C, McLure, C R and Jaeger, P T (2008) The Impacts of Free Public Internet Access on Public Library Patrons and Communities. *The Library Quarterly: Information, Community, Policy*, 78(3) 285-301.

Childnet International (2018) *Resources*. Հասանելի է՝
<https://www.ifla.org/publications/node/11092> (դիտվել է՝ 29.06.2018)

Cooke, L, Spacey, R, Muir, A & Creaser, C (2014) Filtering access to the internet in public libraries: an ethical dilemma? IN: Preisig, A.V., Rosch, H. and Stuckelberger, C. (eds.) *Ethical Dilemmas in the Information Society Codes of Ethics for Librarians and Archivists Papers from the IFLA/FAIFE Satellite Meeting 2014*. Geneva: Globethics.net, pp. 179 - 190. Հասանելի է՝
https://www.globethics.net/documents/4289936/13403236/GE_Global_11_web_final.pdf
(դիտվել է՝ 18.01.2019)

Dynamic Coalition on Public Access in Libraries (2015) *Principles on Public Access in Libraries*. Հասանելի է՝ <https://www.ifla.org/publications/node/10328> (դիտվել է՝ 04.09.2018)

EDRi (2016) *Your Guide to Digital Defenders vs. Data Intruders – Privacy for Kids!* Հասանելի է՝
<https://edri.org/privacy-for-kids-digital-defenders/> (դիտվել է՝ 04.09.2018)

EIFL (n.d.) *Capacity Building of Public Librarians in Africa*. Հասանելի է՝ <https://www.eifl.net/eifl-in-action/capacity-building-public-librarians-africa> (դիտվել է՝ 13.05.2019)

Federal Communications Commission (2017) *Children's Internet Protection Act (CIPA)*. Հասանելի է՝
<https://www.fcc.gov/consumers/guides/childrens-internet-protection-act> (դիտվել է՝ 11.01.2019)

IFLA (1999) *IFLA Statement on Libraries and Intellectual Freedom*. Հասանելի է՝
<https://www.ifla.org/publications/ifla-statement-on-libraries-and-intellectual-freedom> (դիտվել է՝ 13.08.2018)

IFLA (2008) *IFLA Manifesto on Good Governance, Transparency and Freedom from Corruption*. Հասանելի է՝
<https://www.ifla.org/publications/ifla-manifesto-on-transparency-good-governance-and-freedom-from-corruption> (դիտվել է՝ 13.08.2018)

IFLA (2012a) *IFLA Code of Ethics for Librarians and other Information Workers*. Հասանելի է՝
<https://www.ifla.org/publications/node/11092> (դիտվել է՝ 28.06.2018)

IFLA (2012b) *Providing Internet Access Through Public Libraries: An Investment in Digital Inclusion and Twenty-First Century Skills. Beyond Access Issue Brief*, November 2012. Հասանելի է՝
https://www.ifla.org/files/assets/clm/WSIS/libraries_public_access.pdf
(դիտվել է՝ 08.02.2019)

IFLA (2014a) *Internet Manifesto 2014*. Հասանելի է՝
<https://www.ifla.org/publications/node/224?og=30> (դիտվել է՝ 13.08.2018)

- IFLA (2014b) *The Lyon Declaration on Access to Information and Development*. Lyon. Հասանելի է՝ <https://www.lyondeclaration.org/> (դիտվել է՝ 28.06.2018)
- IFLA (2015) *IFLA Statement on Privacy in the Library Environment*. Հասանելի է՝ <https://www.ifla.org/files/assets/hq/news/documents/ifla-statement-on-privacy-in-the-library-environment.pdf> (դիտվել է՝ 04.09.2018)
- IFLA (2016) *IFLA Statement on Net Neutrality and Zero-Rating*. Հասանելի է՝ <https://www.ifla.org/publications/node/10700> (դիտվել է՝ 13.08.2018)
- IFLA (2017a) *IFLA Section on Information Literacy*. Հասանելի է՝ <https://www.ifla.org/information-literacy> (դիտվել է՝ 16.08.2018)
- IFLA (2017b) *IFLA Statement on Digital Literacy*. Հասանելի է՝ https://www.ifla.org/publications/node/11586#_ftn19 (դիտվել է՝ 13.08.2018)
- IFLA FAIFE (2018) *Freedom of Access to Information and Freedom of Expression (FAIFE) Advisory Committee*. Հասանելի է՝ <https://www.ifla.org/faife> (դիտվել է՝ 28.06.2018)
- IFLA Section for Libraries for Children and Young Adults (2015) *Social Media, Children and Young Adults @ the Library - Safety, Privacy and Online Behavior*. Հասանելի է՝ <https://www.ifla.org/publications/node/9961?og=51> (դիտվել է՝ 27.07.2018)
- Internet World Stats (2018) *Internet World Stats: Usage and Population Statistics*. Հասանելի է՝ <https://www.Internetworldstats.com/stats.htm> (դիտվել է՝ 11.01.2019)
- Kranich, N. (2004). Why filters won't protect children or adults. *Library Administration and Management*, 18(1) 14-18.
- National Research Council (2001). Tools and Strategies for Protecting Kids from Pornography and their Applicability to Other Inappropriate Internet Content. Washington, DC: NRC.
- Robertson, I. (2015) *Wi-Fi Projects in Scottish Libraries: Final Report*. Scottish Libraries and Information Council. Հասանելի է՝ <https://scottishlibraries.org/media/1219/wifi-project-final-report.pdf> (դիտվել է՝ 08.02.2019)
- Safer Internet Centre Lithuania (2019) *Draugiskasinternetas.lt Final Public Report 2016-2018*. Հասանելի է՝ https://www.draugiskasinternetas.lt/wp-content/uploads/2019/04/D1-4_draugiskasinternetas_viesoji_LT_final.pdf (դիտվել է՝ 13.05.2019)
- Sey, A., Coward, C., Bar, F., Sciadas, G., Rothschild, C., & Koepke, L. (2013). *Connecting people for development: Why public access ICTs matter*. Seattle: Technology & Social Change Group, University of Washington Information School.
- Spacey, R, Cooke, L, Muir, A and Creaser, C (2014) *Managing Access to the Internet in Public Libraries [MAIPLE]*. End of award report submitted to the Arts and Humanities Research Council (AHRC) Grant AH/J005878/1. Loughborough: LISU. Հասանելի է՝ <https://www.lboro.ac.uk/microsites/infosci/lisu/maiple/downloads/maiple-report.pdf> (դիտվել է՝ 18.01.2019)
- Spacey, R, Cooke, L, Creaser, C and Muir, A. (2015) Regulating Internet Access and Content: Findings from the MAIPLE Project. *Journal of Librarianship and Information Science*, 47(1) 71-84.

Հասանելի է՝ <http://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0961000613500688> (ղիտվել է՝ 28.06.2018)

Sturges, P (2002) *Public Internet access in libraries and information services*. London: Facet.
United Nations (1989) *United Nations Convention on the Rights of the Child*. Հասանելի է՝ <https://www.unicef.org.uk/what-we-do/un-convention-child-rights/> (ղիտվել է՝ 17 September 2018)

United Nations (1948) *Universal Declaration of Human Rights*. Paris. Հասանելի է՝ <http://www.un.org/en/universal-declaration-human-rights/> (ղիտվել է՝ 28.06.2018)

United Nations (2006) *Convention on the Rights of Persons with Disabilities*. New York. Հասանելի է՝ <https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities-2.html> (ղիտվել է՝ 27.07.2018)

United Nations (2015) *Sustainable Development Goals*. Հասանելի է՝ <https://sustainabledevelopment.un.org/?menu=1300> (ղիտվել է՝ 16.08.2018)

United Nations (2016) *The promotion, protection and enjoyment of human rights on the Internet : resolution adopted by the Human Rights Council on 1 July 2016*. Հասանելի է՝ <https://digitallibrary.un.org/record/845727?In=en> (ղիտվել է՝ 13.05.2019)

W3C (2018) *Web Content Accessibility Guidelines (WCAG) 2.1*. Հասանելի է՝ <https://www.w3.org/TR/WCAG21/> (ղիտվել է՝ 04.09.2018)

Walton, M. & J. Donner. (2012). *Public access, private mobile: The interplay of shared access and the mobile internet for teenagers in Cape Town*. Global Impact Study Research Report Series. Cape Town: University of Cape Town. Հասանելի է՝ <https://tascha.uw.edu/publications/public-access-private-mobiles/> (ղիտվել է՝ 13.05.2019)

WSIS (2003) *World Summit on the Information Society: Declaration of Principles*. Geneva. Հասանելի է՝ <https://www.itu.int/net/wsis/docs/geneva/official/dop.html> (ղիտվել է՝ 28.06.2018)

Դիտելու և խորհրդատվության համար կապ հաստատեք՝ Prof Louise Cooke:
l.cooke@lboro.ac.uk

4 ՀԱՎԵԼՎԱԾ

4.1 Օրինակներ Չեխիայի Հանրապետությունից

Մատչելիության տեխնոլոգիաների կիրառման լավ փորձի օրինակներ՝ վստահ լինելու, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ վայելում են ինտերնետի հավասար հասանելիություն

- [Friendly Vox](#)-ը ձայնային հնարավորություն ունեցող վեբ հանգույց է, որը տեղեկատվության և կապի ծառայություններին հասանելիություն տրամադրելու լուծում է՝ առանց տեսողությունն օգտագործելու անհրաժեշտության: Friendly Vox-ը ստեղծվել է՝ հաշվի առնելով տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց հատուկ կարիքները: Հանգույցը կարելի է ամբողջությամբ կառավարել ստեղնաշարի միջոցով, և անհրաժեշտ ամբողջ տեղեկությունները փոխանցվում են ձայնային ելքի միջոցով: FriendlyVox-ի անբաժանելի մասն է օգնությունը, որի շնորհիվ հանգույցը հեշտ է օգտագործել նույնիսկ ոչ փորձառու օգտվողների համար: Չեխիայի բազմաթիվ հանրային գրադարաններում համակարգիչները հագեցած են Friendly Vox ծառայությունով և հասանելի են տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար: Գրադարանավարները պատրաստված են, որպեսզի օգնեն մարդկանց օգտագործելու այն: Friendly Vox-ն անվճար է: Գրադարանների օրինակներ, որոնք առաջարկում են Friendly Vox իրենց օգտվողներին՝ [Վիստիսկա երկրամասի գրադարանը](#), [Պետեր Բեգրուկի անվան գրադարանը Օպրավայում](#) և [Հոդոնին քաղաքի հանրային գրադարանը](#):
- [Biblioweb](#)-ը գրադարանների մրցույթ է, որը կենտրոնանում է նրանց կայքերի գնահատման վրա: Մրցանակներից մեկը խոջընդոտներից գերծ լավագույն վեբ էջ ունեցող գրադարանի մրցանակն է: Տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար ժյուրին գնահատում է էջերի հասանելիությունը (անցկացնում է վեբ էջերի էվրիստիկ թեստ՝ օգտագործելով մատչելիության չեխական և WCAG 2.0 մեթոդոլոգիայից ընտրված կանոնները, ինչպես նաև օգտվողների հասանելիության լրացուցիչ թեստ): 2018 և 2017 թվականներին [Բիլովեցի գրադարանը](#) ստացավ հասանելիության մրցանակ, իսկ 2016 թվականին [Չիլնի Ֆրանտիշեկ Բարտոշի անվան տարածաշրջանային գրադարանը](#) հաղթող էր ճանաչվել՝ անվանակարգում հետևելով [Լիտվինովի քաղաքային գրադարանին](#), որը հաղթել էր 2015 թվականին:
- Handicap Friendly-ը վկայական է չեխական գրադարանների համար, որոնք հաշմանդամների համար ապահովում են գերազանց ծառայություններ (ներառյալ թվային): [Օստրավայի քաղաքային գրադարանը](#), [Հրադեց Կրալովեի քաղաքային գրադարանը](#) և [Բոնո քաղաքի Ջիրի Մահենի անվան գրադարանն](#) արդեն ստացել են վերոնշյալ վկայականը:
- [Daleth](#)-ը, որը նաև հայտնի է որպես «Գրադարանային դարպաս տեսողության խնդիրներ ունեցողների համար», համազգային գրադարան է մատչելի այնպիսի նյութերով, ինչպիսիք են էլեկտրոնային փաստաթղթերը, մատների շոշափումով տպագրությունները և աուդիո կամ հիբրիդային հրատարակությունները: Միջերեսը (կայք կամ բջջային հավելված) թույլ է տալիս օգտվողներին

միանգամից որոնումներ կատարել բազմաթիվ գրադարանների քարտարաններում, այնպես որ կարիք չկա նույն առաջադրանքը կատարելու համար օգտագործել տարբեր միջերեսներ կամ գործիքներ: Ծրագրին մասնակցում են ինչպես ակադեմիական, այնպես էլ ոչ ակադեմիական գրադարաններ:

9. Գրադարանային նախագծերի օրինակներ, որոնք օգնում են երիտասարդներին առցանց ռիսկերի մասին լինել ավելի իրազեկված և այդպիսով խուսափել դրանցից

- Կարլովի Վարի երկրամասի գրադարանը համագործակցում է ինտերնետի անվտանգության մասնագետների հետ և մասնակցում է [Internetem bezpečně](#) (Անվտանգ ինտերնետի օգտագործում) խորագրով նախագծին: Նրանք ստեղծել են առցանց միջավայրում երեխաների և մեծահասակների անվտանգության մասին ձեռնարկներ և թուուցիկներ՝ դրանք դարձնելով [ազատորեն հասանելի ներքեռնման համար](#): Նրանք կազմակերպում են այս ոլորտին առնչվող աշխատանոցներ և այլ միջոցառումներ, ինչպես նաև հասանելի է առցանց օգնությունը:

Գրադարանների օրինակներ, որոնք ներգրավված են ինտերնետային ավելի լայն նախաձեռնություններում

- [Պլզենի հանրային գրադարանը](#) չեխական գրադարաններից մեկն է, որը պարբերաբար միանում է «[Ավելի ապահով ինտերնետի օր](#)» ինտերնետի անվտանգության միջազգային օրվան: Ներկայացնում է ծրագրեր իր օգտվողների համար, որոնք, սովորաբար, աշխատանոցներ և մրցույթներ են երեխաների և երիտասարդների համար:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում Վլադանա Պիլլերովային (Չեխիայի Հանրապետության Ազգային գրադարան, vladana.pillerova@nkp.cz), Լինդա Յանսովային (Չեխիայի Հանրապետության Ազգային գրադարան, linda.jansova@nkp.cz, linda.jansova@gmail.com) և Եվա Յերնինսկովային (Ջարոկի գրադարան, cernin@jabok.cz) այս օրինակները կազմելու համար:

Հապավումներ²

ԷԴՌԻ	Եվրոպական թվային իրավունքներ (European Digital Rights)
ԷԻՖԼ	Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարաններին (Electronic Information for Libraries)
ԻՖԼԱ	Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնություն (International Federation of Library Associations and Institutions)
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՍԼԻՔ	Շոտլանդական գրադարանային և տեղեկատվական խորհուրդ (Scottish Library and Information Council)
ՏԱՍՉԱ	Տեխնոլոգիաների և սոցիալական փոփոխության խումբ (Technology & Social Change Group)
ՏՀՏ	Հեռահաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաներ (Telecommunication and Information Technologies)
ՖԱԻՖԷ	Տեղեկատվության հասանելիության ազատություն և խոսքի ազատություն (Freedom of Access to Information and Freedom of Expression) խորհրդատվական կոմիտե

² «Հապավումներ» բաժինն ավելացվել է թարգմանչի կողմից, տեքստի բնօրինակում օգտագործված որոշ կառույցների անգլերեն անվանումների հայերեն համարժեքները ներկայացնելու նպատակով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Մխիթարեան միաբանության Վիեննայի մենաստանում պահվող պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում..... 5

ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մատենագիտությունը թվային դարաշրջանում.
«Թարգմանչաց արվեստ» շտեմարան..... 30

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՍՊՐԱՄ ԱՇՈՒՂՅԱՆ

Սոցիալական մեդիան և գրադարանները..... 39

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

Մատենագիտական ճշգրտումներ Շուշիում 1832–1833 թվականներին տպագրված երկու հրատարակությունների վերաբերյալ..... 49

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ տպագիր ժառանգության հետքերով..... 57

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

Հայկազեան համալսարանի հրատարակչատունը..... 69

ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

90 ՏԱՐԵԿԱՆ Է

ՌՈՒԶԱՆ ՏՈՆՈՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի
90-ամյա ուղին..... 80

ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ

Մանկապատանեկան ընթերցանության խթանման գործում միջազգային համագործակցության դերակատարությունը 88

ԻՍԿՈՒՇԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կրթամշակութային ծրագրերը՝ որպես ընթերցանության խթանման միջոց..... 100

ԵԼԻՉԱՎԵՏ ԵՐԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1963-2023 թթ.)..... 112

ՄԱՂԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայկուշ Դադաշի Դանիելյան..... 137

ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՖԼԱ-ի ուղեցույցները գրադարաններում հանրային ինտերնետ հասանելիության

CONTENTS

Editor-in-Chief's Column 3

THEORY AND PRACTICE

TIGRAN ZARGARYAN

Digitalization of the periodicals being preserved in the Mekitarist Monastery of Vienna. presentation of first phase results 5

MERY MANUKYAN

The bibliography in the digital era. "Art of Translation" Database..... 30

21ST CENTURY LIBRARY

ASPRAM ASHUGHYAN

Social media and libraries 39

CULTURAL HERITAGE

STYOPA PETOYAN

Bibliographical corrections on two publications printed in Shushi in 1832–1833..... 49

MAYA GRIGORYAN

Following traces of Armenian printed heritage..... 57

BOOK PUBLISHING

ANTRANIK DAKESSIAN

The Haigazian University Press 69

KHNKO APER NATIONAL CHILDREN'S LIBRARY IS 90 YEARS OLD

ՌՈՒՉԱՆ ՏՈՆՈՅԱՆ

On the 90th anniversary of the Khnko Aper National Children's Library..... 80

NAIRA ATSHEMYAN

The role of international cooperation in promoting reading among children and young adults..... 88

ISKUHI AVETISYAN

Educational programs as a tool for reading promotion..... 100

ELIZAVET YEREMYAN

Publications of the Khnko Aper National Children's Library..... 112

MADLEN HOVSEPYAN

Haykush Danielyan..... 137

APPENDIX

IFLA Guidelines on Public Internet Access in Libraries